ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՃԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔ

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝
որպես դասագիրք ավագ դպրոցի 10–րդ դասարանի հումանիտար հոսքի համար

ՀՏԴ 373.167.1:930.9(075)
ԳՄԴ 63.3(0) g72
Ք 845

Գլխավոր խմբագիր՝ Արամ Քոսյան
Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր

Խմբագիր՝ Արամ Նազարյան
Պատմագիտության թեկնածու

Հեղինակներ՝ Արամ Քոսյան
Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր
(Ներածություն, Մաս 1. Բաժին Բ, Բաժին Գ–ի թեմա 5, Բաժին Դ)
Երվանդ Գրեկյան
Պատմագիտության թեկնածու
(Մաս 1. Բաժին Ա, Բաժին Գ–ի թեմա 6)
Գագիկ Հարությունյան
Պատմագիտության թեկնածու, դոցենտ
(Մաս 2. Բաժին Ա)

Մեթոդական մասի հեղինակ՝ Արմինե Սարգսյան
Պատմաբան, մանկավարժ

Քոսյան Ա. և ուրիշ.
Ք 845 Համաշխարհային պատմություն: 10–րդ դաս.: Հումանիտար հոսքի դասագիրք/ Ա. Քոսյան, Ե. Գրեկյան, Գ. Հարությունյան.– Եր.: Զանգակ–97, 2009.– 224 էջ:

ԳՄԴ 63.3(0) g72

ISBN 978–99941–1–633–1

© Քոսյան Ա., Գրեկյան Ե., Հարությունյան Գ., 2009 թ.
© «Զանգակ–97» հրատարակչություն, 2009 թ.

Ա. ՔՈՍՅԱՆ, Ե. ԳՐԵԿՅԱՆ, Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

10

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔ

ԵՐԵՎԱՆ 2009

ՆԱԽԱԲԱՆ

Պատմագիտությունը ուսումնասիրում է մարդկության անցած ուղին բանական մարդու ձևավորումից մինչև մեր օրերը: Անցյալի գիտական իմաստավորումը անհրաժեշտ է ոչ միայն մեր նախնիների պատմության լուսաբանման առումով: Մարդկային հասարակությունը արդյունք է հասարակական–քաղաքական, տնտեսական, հոգևոր–մշակութային և այլ օրինաչափ զարգացումների և դրանց փոխազդեցությունների: Պատմագիտության նպատակն է վերհանել այդ օրինաչափությունները, բացատրել պատմական տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած իրադարձությունները: Պատմական գործընթացի օրինաչափությունների իմացությունը թույլ կտա իրատեսորեն գնահատելու ներկան և կանխատեսելու ապագայի հեռանկարները:

Ավագ դպրոցի հումանիտար հոսքի «Համաշխարհային պատմություն» առարկայի դասավանդման նպատակներն են.

1. սովորողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ պատմական զարգացման ընթացքի և դրա կարևոր օրինաչափությունների վերաբերյալ,

2. ըստ առանձին տարածաշրջանների ու երկրների՝ տալ մարդկային հասարակության զարգացման կոնկրետ–պատմական այն առանձնահատկությունների իմացությունը, որոնք վճռորոշ դեր են ունեցել քաղաքակրթական նվաճումների ձեռքբերման մեջ,

3. սովորողների մեջ դաստիարակել տարբեր ժողովուրդների պատմամշակութային ավանդույթների նկատմամբ հարգանք, մարդասիրական գաղափարներ և ժողովրդավարական արժեքներ:

Վերոհիշյալ նպատակներից ելնելով՝ անհրաժեշտ է.

- սովորողներին տեղեկություններ տալ մարդկության պատմության կարևորագույն իրադարձությունների, գործընթացների, գաղափարների մասին,
- սովորողների մեջ զարգացնել ընդհանուր ուսումնական և պատմության ուսումնասիրությանն ուղղված կարողություններ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ կլինեն պատմությունից ինքնուրույն կերպով գիտելիքների ձեռքբերման համար,
- նպաստել սովորողի՝ իբրև անհրաժեշտ սոցիալական որակներ ունեցող անձի կայացմանը, ով գիտակցում է հիմնարար հոգևոր արժեքների առաջնայնությունը և ձգտում իր կրթվածության բարձրացմանը,
- սովորեցնել պատճառահետևանքային կապեր գտնել պատմական գործընթացներում, բացատրել տարբեր երկրների ու ժողովուրդների զարգացման առանձնահատկությունները պայմանավորող գործոնները,
- սովորեցնել գնահատել ու արժևորել համաշխարհային քաղաքակրթության գանձարանում հայ ժողովրդի ներդրումը:

«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Պատմական անցյալը վեր է հանվում տարաբնույթ սկզբնաղբյուրների և դրանց հիման վրա կատարված ուսումնասիրությունների միջոցով: Հեռավոր անցյալում պատմությունն ուսումնասիրում էին գրավոր մատյանների, վիմագիր արձանագրությունների, բանավոր ավանդազրույցների, ականատեսների հուշերի հիման վրա: Ներկայումս պատմական սկզբնաղբյուրների քանակը և բնույթը մեծապես աճել են: Պատմագիտությունը տարաբաժանված է մի շարք ուղղությունների, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է ինքնուրույն բնագավառ:

Հնագիտությունն ուսումնասիրում է անցյալում կառուցված բնակավայրերը, տարբեր ճարտարապետական հուշարձաններ, դամբարաններ և այլ շինություններ: Արդի հնագիտությունը տիրապետում է այնպիսի մեթոդների, որոնց միջոցով բացահայտվում են հասարակության քաղաքական, սոցիալ–տնտեսական և հոգևոր–մշակութային զարգացման աստիճանը, միջտարածաշրջանային առնչությունները և այլն:

Ազգագրությունն ուսումնասիրում է ժողովուրդների սովորույթները, կրոնական հավատալիքները, ծեսերը, կենցաղը, հագուստը և այլն:

Դրամագիտությունը, կնիքագիտությունը, զինանիշագիտությունը պատմական սկզբնաղբյուրներ և ինքնուրույն գիտություններ են:

Պատմական անցյալի ուսումնասիրման բնագավառում ներկայումս ավելի ու ավելի է կարևորվում գիտության այլ բնագավառների դերը:

Լեզվաբանությունը, լեզուների զարգացման օրինաչափություններից զատ, ուսումնասիրում է տարբեր լեզուների միջև հեռավոր անցյալում տեղի ունեցած փոխշփումները: Լեզվաբանական տվյալների հիման վրա պարզվում են ժողովուրդների ծագումնաբանությունը, նրանց միջև եղած հարաբերությունները:

Առասպելաբանությունն ուսումնասիրում է ժողովուրդների կրոնական հավատալիքները, դրանցում ամփոփված աշխարհընկալման և աշխարհաստեղծման գաղափարները:

Հնաերկրաբանություն, հնակլիմայաբանություն, հնաջրաբանություն, հնաբուսաբանություն, հնակենդանաբանություն և այլն՝ բնագիտական ուղղությունը ներկայացնող այս գիտությունները, թույլ են տալիս վերականգնելու պատմական այս կամ այն դարաշրջանում երկրագնդի ռելիեֆային, կլիմայական, ջրային ռեսուրսների, բուսական և կենդանական միջավայրը:

Այսպիսով՝ ժամանակակից պատմագիտությունը բազմագիտակարգ (բազմադիսցիպլին) գիտություն է, որը հնարավորություն է ընձեռում համակողմանիորեն ուսումնասիրելու մարդկային հասարակության անցյալը:

2. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Պատմական գործընթացի բազմազանությունը և միասնականությունը

Մարդկային հասարակությունը անցել է երկարատև զարգացման գործընթաց: Պայմանավորված տեղական առանձնահատկություններով՝ այն ընթացել է տարբեր եղանակնե-

րով: Շրջակա միջավայրի ազդեցությամբ ձևավորվել են տեղական քաղաքակրթական տարբերակներ, օրինակ՝ արևելյան, եվրոպական, աֆրիկյան, ամերիկյան: Սրանցից յուրաքանչյուրն ունի իր տարատեսակները:

Սակայն վերոհիշյալ քաղաքակրթությունները, տարբերությունների հետ մեկտեղ, ունեն զարգացման ընդհանուր օրինաչափություններ: Վերջիններս դրսևորվում են յուրովի՝ կապված շրջակա միջավայրի ազդեցության հետ: Այդ հանգամանքով է պայմանավորված համաշխարհային պատմական գործընթացի միասնականությունը:

Հասարակության զարգացման ընդհանուր օրինաչափություններից են հասարակության կազմակերպման եղանակը (պետություն), բնակչության տարաբաժանումը սոցիալական խմբերի և այլն: Սրանցից յուրաքանչյուրը յուրովի է դրսևորվում տարբեր երկրներում: Օրինակ՝ գետահովտային քաղաքակրթություններում (Հին Եգիպտոս, Միջագետք) պետության վաղ կազմավորումը և կենտրոնացումը պայմանավորված էին հասարակության ողջ մարդկային ներուժի նպատակասլաց աշխատանքի անհրաժեշտությամբ: Այստեղ առանց ոռոգման համակարգի ստեղծման և մշտական վերահսկման հնարավոր չէր մարդու կյանքը: Դրան հակառակ՝ Արևելամիջերկրածովյան ավազանում (փյունիկյան քաղաք–պետություններ) պետությունը հանդես էր գալիս որպես հասարակության կենսագործունեության գերակա ուղղության՝ առևտրաարհեստագործական ոլորտի կարգավորող: Այդ է պատճառը, որ այստեղ պետական կառույցը անհամեմատ ավելի ապակենտրոնացված բնույթ ուներ:

Պատմության փուլաբաժանումը

Համաշխարհային պատմությունը մարդկային հասարակության առաջընթացի միասնական շղթա է: Հասարակությունը իր զարգացման ընթացքում անցել է մի շարք փուլեր, որոնցից յուրաքանչյուրին հատուկ են սեփական օրինաչափությունները և միտումները:

Ներկայումս պատմագիտության մեջ գերիշխում է պատմության փուլաբաժանման քաղաքակրթական մոտեցումը: Ըստ դրա՝ մարդկության անցած ուղին իր սկզբնավորման պահից մինչև մեր օրերը ստորաբաժանվում է երեք փուլերի՝ 1) մինչարդյունաբերական (հին և միջին դարեր), 2) արդյունաբերական (նոր դարեր՝ XVII– XX դդ. կեսեր) և 3) հետարդյունաբերական (XX դ. երկրորդ կեսից մինչև մեր օրերը): Քաղաքակրթական մոդելի հիմքում ընկած են համաշխարհային պատմության մեջ համընդհանուր զարգացման միտումներ, քաղաքակրթական արժեքներ, որոնք բնորոշ են բոլոր երկրներին և ժողովուրդներին տվյալ պատմական դարաշրջանում:

«Քաղաքակրթություն» բառը ծագում է լատիներենից. այն նախապես նշանակում էր քաղաքային, պետական, քաղաքացիական (civis): Հին հռոմեացիները քաղաքակիրթ էին համարում նստակյաց, քաղաքային կենցաղով ապրող հասարակությունը, որը նրանք հակադրում էին հետամնաց, բարբարոսական հասարակությանը: *Քաղաքակրթություն* եզրույթը (տերմինը) սկսեց լայնորեն կիրառվել XVIII դարից, երբ առաջ եկան պատմական անցյալի գնահատման վերաբերյալ տեսակետներ: Այսօր գոյություն ունեն պատմության փուլաբաժանման տարբեր մոտեցումներ:

Առաջինը **փուլային տարաբաժանումն է**, ըստ որի՝ քաղաքակրթությունը մարդկային հասարակության զարգացման միասնական գործընթացն է իր տարբեր փուլերով: Այն սկսվում է տոհմատիրական հասարակարգի քայքայումով, երբ մարդկության մի մասն անցնում է նստակյաց կյանքի և ստեղծում է քաղաքակրթական արժեքներ (հոգևոր մշակույթ, պետականություն և այլն): Փուլային բաժանման հիմքում ընկած են մարդկության պատմության մեջ ընդհանուր երևույթները՝ արտադրության եղանակ, սոցիալ–քաղաքական հաստատություններ և այլն:

Երկրորդը **տեղական քաղաքակրթությունների** մասին տեսությունն է, ըստ որի՝ մարդկության պատմությունը բաղկացած է ինքնուրույն քաղաքակրթություններից: Դրանցից յուրաքանչյուրը ձևավորվել է մի որոշակի աշխարհագրական շրջանում և ունի իր քաղաքական, սոցիալ–տնտեսական և հոգևոր–մշակութային զարգացման առանձնահատկությունները: Օրինակ՝ հին հնդկական, հին եգիպտական, միջնադարյան եվրոպական, ամերիկյան և այլն: Այդ բոլորի միասնությունից էլ բաղկացած է համաշխարհային պատմությունը: Տեղական քաղաքակրթություններից յուրաքանչյուրը ազդել է իր հարևանների զարգացման վրա: Այդ փոխշփումների միջոցով էլ քաղաքակրթական արժեքները, փոխանցվելով մեկից մյուսին, հասել են մինչև մեր օրերը: Տեղական քաղաքակրթությունը հազարամյակներով պահպանում է իր ինքնատիպությունը: Դրա վառ օրինակներից է չինական քաղաքակրթությունը, որը նույնիսկ մեր օրերում չի կորցրել հնագույն ժամանակներում ձևավորված ավանդույթները:

Տեղական քաղաքակրթությունների զարգացումը կարող է ընթանալ մեկուսացված: Այդ պարագայում քաղաքակրթությունը դարերով պահպանում է իր նախնական տեսքը՝ չընդունելով իր մեջ օտար արժեքներ: Այդպիսի քաղաքակրթությունները անվանում են **ավանդական:**

Տարբեր քաղաքակրթությունների միջև փոխշփումները պատմական գործընթացի կարևոր բաղկացուցիչ մասն են: Դրանց բացակայության դեպքում թե՛ առաջատար, թե՛ հետամնաց քաղաքակրթական կենտրոնի զարգացումը սկսում է դանդաղել, նույնիսկ լճանալ: Օրինակ՝ մինչև Կոլումբոսի ճանապարհորդությունը և իսպանական նվաճումը ամերիկյան ժողովուրդները ծանոթ չէին մետաղամշակությանը, հայտնի չէին անիվը և այլ քաղաքակրթական արժեքներ:

Պատմության վերոհիշյալ փուլաբաժանմանը զուգահեռ ընդունված է դրա պայմանական տարաբաժանումը չորս խոշոր դարաշրջանների, որոնցից յուրաքանչյուրը բնորոշվում է հասարակության պատմության որոշակի իրադարձությամբ: Այսպես՝ ա) Հնագույն և հին շրջան (հնագույն ժամանակներից մինչև Ք.հ. V դար՝ Արևմտյան Հռոմեական կայսրության անկումը), բ) Միջին դարեր (Հռոմեական կայսրության անկումից մինչև XVII դարի Անգլիական հեղափոխությունը), գ) Նոր շրջան (Անգլիական հեղափոխությունից մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը) և դ) Նորագույն շրջան (Առաջին աշխարհամարտի ավարտից մինչև մեր օրերը): Այս սկզբունքով են կազմված մեր հանրապետության հանրակրթական դպրոցներում գործող պատմության դասագրքերը:

Քաղաքակրթության տիպերը

Քաղաքակրթությունը պայմանականորեն բաժանվում է երեք տիպի: Առաջին՝ ամենավաղ տիպը նախնական, առաջնային քաղաքակրթությունն է, որ ձևավորվեց նեոլիթյան հեղափոխության ավարտին Եգիպտոսի, Հայկական լեռնաշխարհի, Միջագետքի, Հնդկաստանի և Չինաստանի վաղ երկրագործական կենտրոններում: Ժամանակի ընթացքում այս կենտրոնները սկսում են ծավալվել տարբեր ուղղություններով՝ իրենց ազդեցությունը տարածելով հարևանների վրա: Քաղաքակրթական արժեքների ազդեցության տակ հարևանների մոտ էլ սկսվում է նույն գործընթացը, որի արդյունքում ձևավորվում են տեղական քաղաքակրթություններ, որոնք կոչվում են «քույր» քաղաքակրթություն: Վերջինս իր զարգացման արդյունքում հետագայում սկսում է զգալիորեն տարբերվել առաջնային քաղաքակրթությունից՝ ինքն էլ դառնալով քաղաքակրթություն տարածող իր հարևանների վրա: Այդպիսիք էին, օրինակ՝ արևելյան Միջերկրականի փյունիկյան քաղաք–պետությունները, որոնք հետագայում քաղաքակրթությունը տարածեցին արևմտյան Միջերկրականում, կամ Ք.ա. II–I հազ. միջագետքյան քաղաքակրթության ազ-

դեցությունը Իրանական բարձրավանդակի վրա և վերջիններիս ազդեցությունը իրենցից արևելք՝ դեպի Կենտրոնական Ասիա:

Քաղաքակրթության երրորդ տիպը երկրորդային քաղաքակրթությունն է, որը պատմական զարգացման ինչ–որ փուլում առաջ է գալիս «նախնական» կամ «քույր» քաղաքակրթության անկման կամ վերածնավորման հետևանքով: Առաջ են գալիս մեկ կամ ավելի քաղաքակրթություններ, որոնք նախորդի ժառանգորդներն են, սակայն այլ մակարդակով: Օրինակ՝ Արևմտյան Հռոմեական կայսրության անկմանը հաջորդած Եվրոպայի «բարբարոսական» պետությունները:

Ժամանակակից փուլում տեղի են ունենում նոր պատմական գործընթացներ: Համաշխարհային մակարդակով քաղաքական, տնտեսական և մշակութային կառույցների գոյությունը, տեղեկատվական դաշտի ձևավորումը ընդլայնել են տարբեր երկրների և ժողովուրդների փոխհարաբերությունները: Այսօր ընթացող համահարթեցման (գլոբալացում) գործընթացները համակել են ողջ երկրագունդը: Ժամանակակից աշխարհի զարգացման գլխավոր բնորոշ առանձնահատկությունը միասնացումն է (ինտեգրում) բոլոր մակարդակներով:

3. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ. ՆՈՐՔԱՐԻԴԱՐՅԱՆ (ՆԵՈԼԻԹՅԱՆ) ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Քաղաքակրթության սկիզբը

Մինչև Ք.ա. XI–X հազարամյակները երկրագնդի բնակչությունը ապրում էր յուրացնող տնտեսավարման պայմաններում: Այսինքն՝ մարդը իր գոյությունը պահպանում էր բնության ստեղծած պատրաստի բարիքների հաշվին, այն է՝ որսորդություն, հավաքչություն, ձկնորսություն: Մարդկանց փոքրաթիվ խմբերի գոյատևման համար անհրաժեշտ էր բավական մեծ տարածք, քանի որ միևնույն վայրում սնունդը ժամանակի ընթացքում սպառվում էր: Մարդիկ ստիպված էին շարունակ տեղաշարժվել գոյության միջոցներ փնտրելու նպատակով: Այս շրջանին բնորոշ էր մարդկանց շարժունակությունը: Գոյություն չունեին մշտական բնակավայրեր, սննդի պակասը արգելակում էր մարդկանց թվաքանակի աճը:

Նոր քարի դարում մարդկանց կյանքում տեղի ունեցան կարևոր փոփոխություններ: Բարենպաստ պայմաններ ունեցող շրջաններում մարդիկ սկսեցին անցնել նստակեցության՝ դրա համար օգտագործելով քարանձավները և լավ պաշտպանված տեղանքները: Սկսվեց կենդանիների ընտելացումը: Սկիզբ դրվեց երկրագործությանը, որին նպաստեց Առաջավոր Ասիայում վայրի հացահատիկի առկայությունը: Ձևավորվեցին առաջին երկրագործական կենտրոնները, որոնց քանակը հետագայում մեծապես աճեց: Առաջ եկավ արհեստագործությունը: Երկրագնդի բնակչությունը աճեց գրեթե 5–6 անգամ:

Այս շրջանում առաջ եկավ փոխանակային առևտուրը: Ձևավորվեցին առևտրական ուղիներ, որոնցով իրականացվում էր նյութական բարիքների (մետաղներ, թանկարժեք քարեր և այլն) ստացումը հեռավոր շրջաններից: Առևտուրը նպաստում էր մարդկային խմբերի միջև կայուն հարաբերությունների ձևավորմանը:

Նստակեցությունը, արտադրող տնտեսությունը և կայուն կենցաղավարումը մարդկության ամենակարևոր ձեռքբերումներն էին, որոնցով պայմանավորվեց նրա հետագա պատմությունը: Էականորեն փոխվեցին հասարակության և բնության փոխհարաբերությունները, հարստացավ մարդու հոգևոր աշխարհը:

Այդ է պատճառը, որ այս դարաշրջանը ստացել է **«նորքարիդարյան հեղափոխություն»** անվանումը: Ընդհանուր առմամբ՝ մարդկային հասարակության ներսում ձևավորվեց հարաբերությունների նոր համակարգ, որը և կոչվում է **քաղաքակրթություն:**

Համակեցություն և սոցիալ–քաղաքական կյանք

Նստակեցությունը, արհեստների և առևտրի զարգացումը սերտացրին մարդկային խմբերին: Նրանց միջև ձևավորվեց համակեցության անհրաժեշտությունը: Վերջինս արագացավ արյունակից և ոչ արյունակից տոհմերի միավորման հետ մեկտեղ: Տոհմերի համագործունեությունը թույլ էր տալիս հաջողությամբ պաշտպանվել թշնամուց և արդյունավետ տնտեսավարում իրականացնել:

Տոհմերի միավորումով ձևավորվեցին ցեղեր, ստեղծվեցին հասարակական կյանքի կազմակերպման սոցիալ–քաղաքական հաստատություններ: Ցեղում միավորված տոհմերի ընդհանուր խնդիրները լուծվում էին տոհմավագների խորհրդի կողմից: Այն ընտրում էր ցեղապետ, որի գործը պատերազմի ժամանակ ցեղակիցներին առաջնորդելն էր, վիճելի հարցերը կարգավորելը: Ցեղի համար կարևոր խնդիրները քննարկվում և լուծվում էին արական սեռի բոլոր հասուն անդամների մասնակցությամբ: Մարդկային կոլեկտիվի կառավարման այս եղանակը պահպանվեց նաև հետագա հազարամյակներում՝ ի դեմս ժողովրդական ժողովի:

Մարդկային պատմության ցեղային փուլի գլխավոր առանձնահատկություններից մեկն այն էր, որ դեռևս գոյություն չուներ հողի նկատմամբ մասնավոր սեփականություն: Հողը համարվում էր ցեղի ընդհանուր սեփականությունը և վիճակահանությամբ տրվում էր ընտանիքներին՝ օգտագործման համար: Այն չէր կարելի վաճառել կամ նվիրել:

Համակեցության գաղափարը մարդկության վերընթաց զարգացման ամենակարևոր պայմաններից է: Այն ենթադրում է ընդհանուր և անձնական շահերի համատեղում, զուգորդում, ներդաշնակեցում: Համակեցությունը օտարի՝ ոչ արյունակցի նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքն է, որը քաղաքակրթության գլխավոր պայմաններից է:

Հոգևոր կյանքը

Նորքարիդարյան հեղափոխության ընթացքում մարդկության ձեռքբերումներից էր նրա հոգևոր պահանջմունքների բավարարումը: Հազարամյակների փորձը մարդուն թույլ տվեց գիտակցելու, որ աշխարհում ամեն ինչ փոխկապակցված է: Եվ այդ ամենը կառավարվում է գերբնական ուժերի կողմից, որոնցից կախված է նաև իր կյանքը: Այդ իսկ պատճառով մարդը հանգեց այն համոզմունքին, որ անհրաժեշտ է սիրաշահել այդ ուժերին: Այսպես առաջ եկավ հավատը գերբնականի հանդեպ, սկսեց ձևավորվել պաշտամունքը:

Առաջացան կրոնական հավատալիքների տարբեր դրսևորումներ՝ տոտեմապաշտությունը, ոգեպաշտությունը, ֆետիշապաշտությունը և հմայապաշտությունը: Կրոնի այս հնագույն դրսևորումները պահպանվել են մինչև օրս:

Նախնադարյան հավատալիքների շարքում մեծ տեղ ուներ հավատը բնության վերարտադրության հանդեպ: Կենդանական և բուսական աշխարհի վերարտադրությունը համարվում էր ի վերուստ տրված շնորհ: Այսպես ստեղծվեց մայր աստծո և մեռնող–հարություն առնող աստծո գաղափարը:

Պետականության սկիզբը

Արդեն Ք.ա. IV հազարամյակի երկրորդ կեսին Եգիպտոսում և Հարավային Միջագետքում սկսեցին կազմավորվել առաջին պետությունները: Այս շրջաններում մարդկանց կենսագործունեությունը կախված էր ողջ կոլեկտիվի համախմբված աշխատանքից: Նեղոսի և Եփրատի ափերին գտնվող բնակավայրերի բնակչությունը ի վիճակի չէր լինի զբաղվելու երկրագործությամբ առանց ոռոգման համակարգի ստեղծման: Իսկ դա պա-

հանջում էր հասարակության բոլոր անդամների համագործակցություն և կառավարման մարմինների առկայություն: Այդ գործառույթը իրականացնում էին ցեղապետը, քրմերը և տոհմավագները:

Վաղ պետությունների տարածքը փոքր էր և ընդգրկում էր մի քանի հարակից բնակավայրեր: Այդպիսի պետությունները կոչվում են **քաղաք–պետություններ**: Պետական բոլոր պաշտոններն ընտրովի էին՝ մեկ տարի ժամկետով: Աշխատանքը հասարակական բնույթ ուներ և չէր վարձատրվում, քանի որ համարվում էր հասարակականորեն անհրաժեշտ ու պատվավոր գործ: Գերագույն օրենսդիր մարմինը ժողովրդական ժողովն էր: Քաղաք–պետությունները գոյատևեցին հազարամյակներ: Նույնիսկ Առաջավոր Ասիայում կենտրոնացված խոշոր տերությունների գոյության շրջանում բնակավայրերը պահպանում էին իրենց ներքին ինքնավարությունը:

Պետականության ծնունդը իր հետ բերեց քաղաքակրթական նաև այլ երևույթների ձևավորում: Դրանց շարքում հատկապես կարևոր էր գիրը: Արդեն Ք.ա. IV հազարամյակի վերջերին Միջագետքում և Եգիպտոսում առաջ եկավ պատկերային գիրը: Այն հետագայում պարզեցվեց, և ստեղծվեց սեպագիրը: Ծնունդ առան նաև կոթողային ճարտարապետությունն ու քանդակագործությունը:

Այսպիսով՝ նեոլիթյան հեղափոխությունը շրջադարձային փուլ էր երկրագնդի բնակչության հետագա զարգացման համար: Մի քանի հազարամյակներում հիմնավորապես փոխվեց մարդկանց կենսաձևը, նշանակալից զարգացում ապրեց տնտեսությունը, որը յուրացնողից վերածեց արտադրողի: Իսկ Ք.ա. IV հազարամյակի վերջերից Առաջավոր Ասիայում սկսվեց պետականությունների ձևավորումը, որը հետագայում ընդգրկեց այն ժամանակվա ողջ քաղաքակիրթ աշխարհը՝ Միջերկրական ծովի ավազանից, Հայկական լեռնաշխարհից, Միջագետքից մինչև Հնդկաստան և Չինաստան: Սկսվեց մարդկության պատմության քաղաքակրթական ժամանակաշրջանը:

ՀԻՆ ԾՐՋԱՆ

ԲԱԺԻՆ Ա ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թեմա 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

§1. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ԵՎ ՇՈՒՄԵՐՈՒՄ

Պետականության սկիզբը Եգիպտոսում

Եգիպտական քաղաքակրթությունը ձևավորվել է Աֆրիկայի հյուսիս–արևելքում՝ Նեղոս գետի ստորին հոսանքի շրջանում: Աշխարհագրական առումով երկիրը բաժանվում է երկու մասի՝ Վերին և Ստորին Եգիպտոս: Վերին Եգիպտոսը ձգվում է Նեղոսի հովտով, այն գետի երկու ափերին ընկած՝ միջինը 5–10 կմ լայնությամբ գոտի է: Ստորին Եգիպտոսը Նեղոսի դելտայի շրջանն է: Այս տարածքն ունի համեմատաբար մեղմ կլիմա՝ ի տարբերություն Վերին Եգիպտոսի, որտեղ շոգ և չորային կլիմա է: Մշտական հոսք ունեցող ջրի միակ աղբյուրը Նեղոսն է: Ոռոգում ապահովելու դեպքում հնարավոր է բերք հավաքել տարին մի քանի անգամ: Նեղոսի հովտում օգտակար հանածոներ չկան, սակայն փոխարենը հարևան շրջանները հարուստ են մետաղահանքերով:

«Եգիպտոս» անունը ծագում է այս երկրին հույների տված **Ագյուպտոս** անվանումից: Վերջինս ծագում էր Եգիպտոսի խոշորագույն քաղաքներից մեկի՝ Մեմֆիսի **Խեթ–կա–Պտահ** անվանումից: Իրենք՝ եգիպտացիները, իրենց երկիրն անվանում էին **Կեմետ**, որը նշանակում էր Սև (երկիր)՝ ի տարբերություն Կարմիրի, այն է՝ անապատի:

Առաջին երկրագործական բնակատեղիները Եգիպտոսում առաջացել են Ք.ա. VI հազարամյակում: Քիչ ավելի ուշ մարդիկ սկսում են կառուցել առաջին ջրանցքները, օգտագործել պղնձե գործիքներ: Բարձր զարգացման է հասնում խեցեգործությունը, սկիզբ է դրվում միջազգային առևտրին:

Ք.ա. IV հազարամյակի առաջին կեսին արմատական փոփոխություններ արձանագրվեցին հասարակության մեջ: Ի հայտ եկան առաջին պարսպապատ բնակավայրերը և խոշոր դամբարանները: Դա վկայում է հասարակության ներսում գույքային անհավասարության առկայության մասին: Այդ պահից արագանում է պետականության ձևավորումը, որը շուտով հանգեցնում է տասնյակ մանր պետությունների կազմավորմանը:

Եգիպտոսի Վաղ թագավորությունը

Առաջին պետականությունները ծնունդ առան խոշոր բնակավայրերի և դրանց հարող երկրագործական շրջանների հիմքի վրա: Դրանք հունարեն կոչվում էին **նոմեր**: Վերին Եգիպտոսում հաշվվում էր 22, Ստորին Եգիպտոսում՝ 20 նոմ: Ավելի մեծ կենսատարածքի և պաշարների տիրելու նպատակով նոմերը շարունակ պատերազմում էին միմյանց դեմ: Ի վերջո՝ Ք.ա. XXXIV–XXXIII դդ. ռազմական կամ խաղաղ ճանապարհով նոմերը միավորվեցին, և կազմավորվեցին երկու խոշոր թագավորություններ՝ Վերին և Ստորին Եգիպտոսներ: Վերին Եգիպտոսի մայրաքաղաքը **Նեխենն** էր, իսկ Ստորինի մայրաքաղաքը՝ **Բուտոն**:

Երկու թագավորություններն առժամանակ գոյակցում էին կողք կողքի՝ շարունակ պատերազմելով միմյանց դեմ: Միայն մեկ արշավանքի ընթացքում Վերին Եգիպտոսի արքան գերեվարել էր 120000 մարդու: Ի վերջո հաղթանակ տարավ Վերին Եգիպտոսը: Երկու թագավորությունները միավորվեցին, և կազմավորվեց համաեգիպտական պետություն, որը ձգվում էր Միջերկրական ծովից մինչև Նեղոսի առաջին սահանքը: Միացյալ Եգիպտոսի առաջին արքան՝ **Մինաան**, հիմք դրեց համաեգիպտական I հարստու-

թյանը: Եգիպտոսի պատմության այս ժամանակաշրջանը կոչվում է Վաղ թագավորություն (Ք.ա. XXXI–XXIX դդ.):

Երկու Եգիպտոսների միավորումը շրջադարձային նշանակություն ունեցավ: Դադարեցին պատերազմները երկրի ներսում, հնարավոր դարձավ վերականգնել տնտեսությունը, միավորել ուժերը ոռոգման առավել կատարյալ համակարգեր անցկացնելու համար, ինչը նախկինում հնարավոր չէր:

Մինայից սկսվեց նորաստեղծ պետության քաղաքական, տնտեսական և հոգևոր–պաշտամունքային հիմքերի ամրապնդումը: Եգիպտոսի արքաները կրում էին **փարավոն** տիտղոսը, որը ծագում է հին եգիպտերեն **պեր–օ**՝ «մեծ տուն» (այսինքն՝ պալատ) անվանումից: Արքայական իշխանությունը և արքայի անձը աստվածացվեցին: Փարավոնը համարվում էր **Հոր** աստված երկրային մարմնավորումը:

Մինայի կարևոր քայլերից էր նոր մայրաքաղաքի՝ **Մեմֆիսի** կառուցումը Նեղոսի դելտայի շրջանում:

I հարստության արքաները արշավանքներ ձեռնարկեցին դեպի պղնձահանքերով հարուստ **Սինայի թերակղզի**: Արշավանքներ իրականացվեցին նաև դեպի արևմուտք՝ **Լիբիա**, և հարավ՝ **Նուբիա**, որտեղ կային ոսկու հարուստ հանքավայրեր: Այս շրջանում է սկսվում խոշոր դամբարանների կառուցումը **Աբիդոս** քաղաքի մոտ՝ Նեղոսի ափին:

Վաղ թագավորության ավարտին Եգիպտոսն արդեն ձևավորված ամուր պետություն էր: Հենց այս շրջանում հիմք դրվեց նրա հետագա հզորացմանը և միջազգային ասպարեզ դուրս գալուն:

Միջագետքը քաղաքակրթության շեմին

Միջագետքը քաղաքակրթության հնագույն կենտրոններից է: Այն ընդգրկում է Եփրատ և Տիգրիս գետերի միջին և ստորին հոսանքի ավազանը: Հյուսիսից հարավ այն ձգվում է Հայկական լեռնաշխարհից մինչև Պարսից ծոց, արևելքից արևմուտք՝ Արևմտյան Իրանի լեռներից մինչև Սիրիական տափաստան և արաբական անապատներ:

Միջագետքի կլիման շոգ է և չորային, մթնոլորտային տեղումների քանակն անչնչան է: Հիմնական տեղումները լինում են ձմռանը, այն էլ՝ գերազանցապես հյուսիսում: Կենտրոնական և Հարավային Միջագետքն աչքի են ընկնում չոր կլիմայով: Այդ պատճառով երկրագործությամբ հնարավոր է զբաղվել միայն այն շրջաններում, որոնք հնարավոր է ոռոգել Եփրատի և Տիգրիսի ջրերով:

Միջագետքում օգտակար հանածոները քիչ էին: Այդ իսկ պատճառով բնակիչները ստիպված էին դրանք հայթայթել հարևան երկրներից՝ առևտրի կամ ռազմական արշավանքների օգնությամբ:

Միջագետքի բնակեցումը սկսվել է դեռևս հին քարի դարում: Ք.ա. IX հազարամյակում այստեղ սկիզբ է առնում պարզունակ երկրագործությունը: Իսկ Ք.ա. VII հազարամյակում Միջագետքի հյուսիս–արևելքում՝ **Զագրոսյան լեռների** փեշերին, ի հայտ են գալիս առաջին վաղ երկրագործական կենտրոնները: Այստեղ մարդիկ աճեցնում էին հացահատիկային որոշ մշակաբույսեր, ընտելացնում էին կենդանիներ, պատրաստում էին կավե անոթներ:

Աստիճանաբար Միջագետքից հյուսիս ընկած Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններից վաղ երկրագործական համայնքները սկսեցին շարժվել հարավ: Երկրագործությամբ զբաղվելու համար անհրաժեշտ էր արհեստական ոռոգում: Ահա այս շրջանում՝ Ք.ա. VI հազարամյակի սկզբին, մարդիկ սկսեցին անցկացնել առաջին ոռոգող առուները: Յուրացվեցին նոր հողեր, ի հայտ եկան նոր բնակատեղիներ: Քիչ ավելի ուշ սկսվեց Հարավային Միջագետքի բնակեցումը: Առաջ եկան երկրագործական հարյուրավոր փոքր բնակատեղիներ՝ մի քանի հարյուր մարդու հասնող բնակչությամբ:

Միջագետքում ապրում էին տարբեր լեզուներով խոսող ժողովուրդներ: Հարավային Միջագետքի հնագույն բնակիչները **շումերներն** էին: Ք.ա. III հազարամյակից սկսած՝ Միջագետք են ներթափանցում **սեմալեզու ցեղեր**: Վերջիններս խոսում էին մի լեզվով, որին անվանում ենք **աքքադերեն** կամ **ասուրա–բաբելերեն**: Ք.ա. III հազարամ-

յակին Հյուսիսային Միջագետք և Հյուսիսային Սիրիա ներթափանցեցին **խուռիական** ցեղերը, որոնք հիմնեցին պետական կազմավորումներ: Ավելի ուշ եկան **կասիտական ցեղերը**: Միջագետքում տարբեր ժամանակներում հաստատվել են շատ այլ ժողովուրդներ:

Շումերի քաղաք-պետությունները

Դեռևս Ք.ա. V հազարամյակին Հարավային Միջագետքում առաջացան խոշոր բնակավայրեր՝ մինչև տասը հեկտար տարածքով և շուրջ հինգ հազար բնակչությամբ: Բնակավայրի կենտրոնում գտնվում էր տաճարը, վարչա-

ՀՆԱԳՈՒՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅՈՒՄ ԵՎ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ (Ք.Ա. III–II ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐ)

կան կառույցներ, որոնց շուրջը սփռված էին բնակելի թաղամասերը:

Հասարակության՝ նոր հողերի տիրելու աճող պահանջները առաջ բերեցին մշտական ընդհարումներ հարևան համայնքների միջև: Բնակավայրերը սկսեցին պատել պարիսպներով: Նկատվում էր հասարակության ռազմականացում: Միաժամանակ դիտվում էր արտադրողական ուժերի բուռն աճ, համայնքի քայքայմանը զուգընթաց առանձնանում էր իշխող խավը: Համայնքի առաջնորդների ձեռքում կենտրոնացան նյութական մեծ միջոցներ: Մեծ ծավալներ ընդունեց հատկապես առևտուրը:

Մինչև Ք.ա. III հազարամյակի սկիզբը Միջագետքը քաղաքական առումով միավորված չէր: Այստեղ գոյություն ունեին մի քանի տասնյակ քաղաք–պետություններ: Դրանցից առավել հայտնի էին **Քիշը, Ուրը, Լագաշը, Ումման, Ուրուկը** և այլն: Սրանք մշտական պայքար էին մղում միմյանց դեմ՝ հողատարածությունների և քաղաքական գերիշխանության համար:

Սկզբում նշանակալից վերելք ապրեց Քիշ քաղաքը, որի կառավարիչ **Էտանայի** անվան շուրջ հետագայում ստեղծվեցին առասպելական պատմություններ: Ըստ դրանց՝ Էտանան համարվում էր Շումերում թագավորության հիմնադիրը:

Շուտով վերելք է ապրում Ուրուկը: Ուրուկի կառավարիչներից առավել հայտնի է **Գիլգամեշը**, ով շումերական առասպելների գլխավոր

Աքքադական զարդեր

Շումերական բարձրաքանդակ

հերոսներից է: Գիլգամեշը ոչ միայն ազատագրեց քաղաքը Քիշի գերիշխանությունից, այլև իր իշխանությունը հաստատեց Հարավային Միջագետքում:

Կենտրոնացված համաշումերական պետություն ստեղծելու ջանքերը շարունակվեցին հետագայում ևս: Առաջնությունը նախ անցավ Ուր քաղաքին, այնուհետև՝ Լագաշին: Վերջինս հաղթանակներ տարավ շումերական քաղաքների նկատմամբ, արշավեց Էլամ: Ուրի իշխանության ներքո միավորվեց գրեթե ողջ Շումերը: Սակայն շուտով Լագաշի հզորությունը սասանվեց: Լագաշում ապստամբության միջոցով տեղի ունեցավ իշխանափոխություն: Նոր կառավարիչը իրականացրեց մի շարք բարեփոխումներ: Նա պակասեցրեց հարկերը, վերականգնեց տաճարների իրավունքները: Ավելացվեց Լագաշի լիիրավ քաղաքացիների թիվը: Նա իրեն հռչակեց արքա, ինչն առաջացրեց հարևան քաղաք–պետությունների դժգոհությունը: Հարևան պետություններից Ումմայի կառավարիչը ստեղծեց հակալագաշյան դաշինք, արշավեց և գրավեց Լագաշը: Նրան հաջողվեց շուտով միավորել ողջ Շումերը:

Միավորված Շումերի պետությունը, սակայն, կարճատև գոյություն ունեցավ: Մի քանի տարի անց այն նվաճվեց իր հյուսիսային հարևան Աքքադի կողմից:

Ամփոփում: *Այսպիսով՝ արդեն Ք.ա. IV հազարամյակի վերջերին Եգիպտոսում և Շումերում կազմավորվեցին առաջին պետությունները: Եթե Եգիպտոսում գոյություն ունեցող շուրջ չորս տասնյակ մանր իշխանությունները՝ նոմերը, Ք.ա. XXXI դարում միավորվեցին մեկ միասնական պետականությունում, ապա Շումերի քաղաքական զարգացումը այլ էր: Այստեղի մեծաքանակ քաղաք–պետությունները դարեր շարունակ պահպանում էին հարաբերական ինքնուրույնություն: Միայն ժամանակ առ ժամանակ դրանցից որևէ մեկին հաջողվում էր գերիշխանություն ստանալ մյուսների նկատմամբ: Շումերի քաղաքական միավորումը տեղի ունեցավ Ք.ա. XXIV դարում՝ նորաստեղծ Աքքադի պետության կողմից նվաճվելու հետևանքով:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Նկարագրե՛ք Եգիպտոսի աշխարհագրական պայմանները: Ի՞նչ ազդեցություն են ունեցել դրանք եգիպտական քաղաքակրթության ձևավորման վրա: Որտեղի՞ց է ծագել «Եգիպտոս» անունը:
2. Ի՞նչ է նշանակում նոմ, որքա՞ն էր դրանց թիվը Ք.ա. IV հազարամյակի վերջերին: Ինչպե՞ս ձևավորվեց Վաղ թագավորությունը: Ի՞նչ նշանակություն ունեցավ համաեգիպտական պետության ստեղծումը:
3. Բնական պայմանների ի՞նչ առանձնահատկություններ ուներ Միջագետքը: Ե՞րբ է սկսվել այս տարածաշրջանի բնակեցումը: Ե՞րբ են Միջագետքում առաջին անգամ ոռոգման համար արհեստական կառույցներ ստեղծել: Ի՞նչ ցեղեր և ժողովուրդներ էին ապրում Միջագետքում:
4. Թվարկե՛ք Միջագետքի հայտնի քաղաք–պետությունները: Ո՞ր քաղաքները հաջորդաբար գլխավորեցին համաշումերական պետության ստեղծման գործընթացը:

§2. ԱՐԵՎԵԼԱՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ ՔԱՂԱՔ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջին քաղաք-պետությունները

Միջերկրական ծովի արևելյան ավազանը երկրագործության հնագույն օջախներից է: Վաղ երկրագործական առաջին բնակատեղիներից էր **Երիքովը** (Ք.ա. VIII հազ.): Նստակեցության և պետականության ձևավորմանը նպաստեց նաև առևտուրը: Այստեղով էին անցնում Միջագետքից և Փոքր Ասիայից Եգիպտոս տանող առևտրական ուղիները: Ոչ պակաս կարևոր էր նաև քաղաքային կենտրոնների մեծ մասի ծովափնյա դիրքը: Ծովը այստեղի երկրների կենսագործունեության մեջ միշտ առաջատար տեղ է զբաղեցրել: Արևելյան Միջերկրականի ժողովուրդների զարգացման մյուս կարևոր առանձնահատկությունը քաղաքական մասնատվածությունն էր, որ բացատրվում է մեծ թվով տարբեր ժողովուրդների առկայությամբ: Կարևոր էր նաև աշխարհագրական դիրքը ժամանակի հզոր պետությունների քաղաքական շահերի հանդիպավայրում:

Երկրագործության զարգացման և առևտրական հարաբերությունների աճին զուգընթաց ձևավորվեցին խոշոր քաղաքային կենտրոններ, ինչպիսիք էին **Էբլան**, **Բիբլոսը**, **Տյուրոսը**, **Սիդոնը**, **Ուգարիտը** և այլն:

Ալալախը գոյություն ուներ արդեն Ք.ա. IV հազարամյակում: Քաղաքը շարունակ ընդարձակվում էր, կառուցապատվում նոր տաճարներով և պալատներով: Երկիրը սերտ հարաբերություններ ուներ Եգիպտոսի և Միջագետքի հետ:

Այս նույն ժամանակներում սկսվեց Էբլայի վերելքը: Արդեն Ք.ա. III հազարամյակի կեսերին այն խոշոր պետական կազմավորում էր: Առևտրական ճանապարհներին տիրելու և տարանցիկ առևտուրը վերահսկելու համար Էբլան պայքարում էր **Աքքադի տերության** դեմ: Էբլան ժամանակավոր անկում ապրեց **Նարամսինի** կողմից նվաճվելուց հետո, սակայն Ք.ա. II հազ. սկզբին քաղաքը նոր վերելք ապրեց: Վերակառուցվեց արքայական պալատը, քաղաքը շրջապատվեց 20 մետր բարձրությամբ հզոր պարիսպներով, սակայն նախկին բարձունքներին Էբլան այլևս չհասավ:

Սիրիայի և Փյունիկիայի պետությունները

Աքքադի տերության կործանումից հետո Ասորիքում գերիշխող դարձան ամորեական ցեղերը, որոնք այստեղ հիմնեցին բազմաթիվ իշխանություններ: Հյուսիսային Սիրիայում ձևավորված խոշորագույն պետությունը **Յամհադն** էր: Սկզբնապես այն կիսաքոչվոր ցեղերի միություն էր և չուներ մշտական քաղաքական կենտրոն: Հետագայում պետության մայրաքաղաք դարձավ **Խալպան** (ներկայիս **Հալեպը**): Յամհադը շուտով վերածվեց քաղաքական հզոր ուժի, որի վերահսկողության տակ հայտնվեցին Միջագետքը Փոքր Ասիային կապող առևտրական ճանապարհները:

Ք.ա. XVIII դ. Յամհադի պետությանը սկսեց սպառնալ Ասորեստանում ամորեական հարստության հիմնադիր **Շամշի-Ադդուն**: Վերջինիս, սակայն, չհաջողվեց հասնել վերջնական հաղթանակի: Ավելի ուշ Յամհադը կրկին վերաճեց Ասորիքի հզորագույն պետության: Նա գրավեց **Կարքեմիշը**:

Հյուսիսային Ասորիքի մյուս քաղաքական կազմավորումը **Ուգարիտն** էր: Քաղաքը ծաղկում էր շնորհիվ միջազգային լայնածավալ

Նարամսինի հուշակոթողը

առևտրի: Այն քաղաքական և առևտրական լայն կապեր ուներ Միջագետքի, Փոքր Ասիայի և Եգիպտոսի հետ: Սակայն Ք.ա. XII դ. սկզբներին Ուգարիտը ենթարկվեց «**ծովի ժողովուրդների**» հարձակումներին և ավերվեց: Վերջիններս Էգեյան ծովի ավազանի և հարակից շրջանների բնակիչներն էին: Կորցնելով իր տնտեսական հզորությունը՝ այնուհետև Ուգարիտը կործանվեց երկրաշարժի հետևանքով:

«Ծովի ժողովուրդների» արշավանքներից շատ չանցած՝ Միջերկրական ծովի արևելյան ափի փյունիկյան քաղաքներում կյանքը սկսեց վերստին աշխուժանալ: Այդ վերելքին նպաստեց Եգիպտոսի թուլացումը:

Փյունիկյան քաղաքների վերելքի վկայությունն է Ք.ա. XII դ. սկսված **փյունիկյան մեծ գաղութացումը**: Փյունիկյան ծովագնացները ներթափանցեցին Միջերկրական ծովի արևմուտք և հիմնեցին գաղութներ: Այստեղի խոշորագույն գաղութներն էին **Կարթագենը**՝ Հյուսիսային Աֆրիկայում, **Գադիրը**՝ ներկայիս Իսպանիայում: Գաղութացման խնդրում հատկապես գործուն էր Տյուրոսը, որն իրեն ենթարկեց նաև **Սիդոնն** ու այլ ծովափնյա քաղաքներ: Ստեղծվեց ընդարձակ պետություն՝ **Տյուրոս–սիդոնյան թագավորությունը**:

Միջերկրականի ծովափից հեռու՝ Ասորիքի խորքերում, հիմնական դերակատարությունը պատկանում էր **արամեացիներին**: Արամեացիների խոշորագույն պետությունը **Դամասկոսն էր** (կոչվում է նաև **Արամ**): Ք.ա. X–IX դդ. Դամասկոսը վերածվեց տարածաշրջանի ամենահզոր պետության՝ գլխավորելով 17 երկրներ ընդգրկող միություն:

Միտաննի

Ք.ա. III հազարամյակի սկզբներին Հայկական լեռնաշխարհից Հյուսիսային Սիրիա տեղաշարժվեցին **խուռիական** ցեղերը: Նրանք այստեղ հիմնեցին մանր պետություններ: Խուռիական ցեղերի ներհոսքը Սիրիա և Միջագետք շարունակվեց հետագա դարերում ևս: Ընդ որում՝ նրանց հետ միասին այս տարածքներ ներթափանցեցին **հնդարիական** ծագում ունեցող ռազմունակ ցեղեր: Վերջիններիս գլխավորությամբ խուռիները **Ք.ա. XVI դ.** հիմնեցին **Միտաննի թագավորությունը**: Միտաննիի մայրաքաղաքն էր **Վաշուգանեն**:

Միտաննիի կազմավորումն ու վերելքը համընկան Եգիպտոսի XVIII հարստության հզոր փարավոնների արշավանքների հետ: Մի պահ անգամ վտանգված էր նորաստեղծ թագավորության գոյությունը: Սակայն **Սաուսադատար** արքային հաջողվեց վերամիավորել պետությունը, ընդարձակել երկրի սահմանները: Հենվելով մարտունակ բանակի վրա, որի հիմքը կազմում էին երկանիվ թեթև մարտակառքերի ջոկատները՝ նա իր տիրապետությունը հաստատեց Աշուրում: Արևմուտքում Միտաննիի ազդեցությունը տարածվեց ընդհուպ մինչև Ուգարիտ՝ Միջերկրական ծովի ափին: Միաժամանակ նա պայքար էր մղում Խեթական թագավորության դեմ: Այս պայքարում Միտաննին պարտվեց և առժամանակ զրկվեց իր գերիշխանության տակ գտնվող մի քանի երկրներից:

Խեթերի հարձակման վտանգը ստիպեց հաջորդ արքա **Արտադամա I**-ին խաղաղություն հաստատել Եգիպտոսի հետ, որն ամրապնդվեց արքայատոհմական ամուսնությամբ: Եգիպտա–միտաննական բարեկամական հարաբերությունները շարունակվեցին հետագայում ևս:

Թիգլաթպալասար III

Միտաննիի քաղաքական ազդեցությունը Առաջավոր Ասիայում սասանվեց Ք.ա. XIV դ., որը կապված էր Խեթական տերության և Ասորեստանի հզորացման հետ: Եգիպտոսն այլևս ի վիճակի չէր աջակցելու Միտաննիին: Ստեղծված իրավիճակում Միտաննիում սկսվեց պայքար գահի համար:

Օգտվելով առիթից՝ խեթական բանակը ներխուժեց Միտաննի: Միտաննական արքայատոհմի երկու ներկայացուցիչներ պայքար սկսեցին միմյանց դեմ, և թագավորությունը տրոհվեց երկու մասի: Դրա մեծ մասում հաստատվեց խեթական դրածոյի իշխանությունը, և Միտաննին վերածվեց խեթերից կախյալ թագավորության:

Իր հերթին, Ասորեստանը ևս փորձում էր նվաճել Միտաննին: Ք.ա. XIII դարում Միտաննին բազմիցս ենթարկվեց Ասորեստանի արշավանքներին: Այն առժամանակ գոյատևում էր միայն խեթական օգնության շնորհիվ: Վերջապես՝ Սալմանասար I–ը վերջ տվեց Միտաննիի թագավորությանը: Երկրի լեռնային շրջաններում շարունակեցին գոյատևել առանձին խուռիական իշխանություններ:

Արևելամիջերկրածովյան ավազանը Ք.ա. X–VI դարերում

Ք.ա. XII դ. ներկայիս Պաղեստինի տարածքում ձևավորվեց **12 ցեղերից** կազմված իսրայելական միությունը: Իսկ ավելի ուշ ստեղծվեց **Իսրայելի** միասնական պետությունը: Ըստ ավանդության՝ առաջին թագավորն էր **Սավուղը**: Երբ վերջինս պարտվեց **փղշտացիների** դեմ պայքարում և ինքնասպանություն գործեց, նրան հաջորդեց **Դավիթը** (Ք.ա. մոտավորապես 1000–965 թթ.): Նա ստեղծեց կենտրոնացված պետություն և ընդարձակեց երկրի սահմանները: Իսրայելի մայրաքաղաք դարձավ **Երուսաղեմը:** Նրա գահը ժառանգեց որդին՝ **Սողոմոնը** (Ք.ա. մոտ 965–928 թթ.): Սողոմոնը հայտնի էր իր շինարարական գործունեությամբ: Նա **Երուսաղեմում** կառուցեց **Յահվե** աստծուն նվիրված տաճարը (**Սողոմոնի տաճարը**):

Սողոմոնից հետո, արտաքին վտանգի պայմաններում, Իսրայելի թագավորությունը տրոհվեց, իսկ մայրաքաղաքը տեղափոխվեց **Սամարիա**: Իսրայելից առանձնացավ **Հուդան**՝ Երուսաղեմ կենտրոնով: Հյուսիսից սպառնում էր Դամասկոսի թագավորությունը, իսկ հարավից՝ Եգիպտոսը: Ք.ա. մոտ **925 թ.** եգիպտացիները գրավեցին և թալանեցին Երուսաղեմը:

Ք.ա. XI դ. Սիրիան ու փյունիկյան ծովեզերքը պատված էին տարբեր պետական կազմավորումների խիտ ցանցով: Երբեմն այս երկրները միավորվում էին դաշինքների մեջ՝ համատեղ նվաճումներ իրագործելու կամ հակառակորդին դիմագրավելու նպատակով: Նրանց գլխավոր հակառակորդը Ասորեստանն էր: Ասորեստանյան վտանգը սպառնալից չափեր ընդունեց հատկապես Թիգլաթպալասար III–ի օրոք: Սիրիայի և Փյունիկիայի իշխանությունները ճանաչեցին Ասորեստանի գերիշխանությունը: Ավելի ուշ ասորեստանցիները գրավեցին փյունիկյան ծովափը և Իսրայելի մայրաքաղաք Սամարիան:

Ք.ա. VII դ. վերջերին, երբ Ասորեստանը սկսեց անկում ապրել, նվաճված երկրները մեկը մյուսի հետևից թոթափեցին ասորեստանյան գերիշխանությունը: Դրանից ամենաշատն օգտվեց Տյուրոսը, որը վերստանձնեց փյունիկյան ծովափի առաջատարի դերը: Վերելք ապրեց նաև Հուդայի թագավորությունը: Ասորեստանի կործանումից հետո Արևելյան Միջերկրականը վերածվեց կռվախնձորի Բաբելոնիայի և Եգիպտոսի միջև: Այդ պայքարում հաղթեց Բաբելոնիան: **Ք.ա. 587 թ. Նաբուգոդոնոսոր II**–ը գրավեց Երուսաղեմը, իսկ հետո Տյուրոսը ճանաչեց նրա գերիշխանությունը:

Այս տարածքները հետագայում անցան Աքեմենյան տերությանը: Մի շարք քաղաքներ ստացան որոշ ինքնավարություն: Նրանք նույնիսկ հանդես էին գալիս որպես տերության դաշնակիցներ: Մասնավորապես հույն–պարսկական պատերազմներում պարսկական նավատորմի մեծ մասը փյունիկյան նավերից էր կազմված:

Աքեմենյան տերության անկումից հետո՝ հելլենիստական դարաշրջանում, փյունիկյան քաղաքները շարունակեցին պահպանել իրենց տնտեսական ներուժը: Նրանք ակտիվորեն մասնակցում էին Առաջավոր Ասիայի և Արևելյան Միջերկրականի ավազանի երկրների միջև իրականացվող միջազգային առևտրին:

Ամփոփում: *Արևելամիջերկրածովյան ավազանի երկրները Առաջավոր Ասիայի հնագույն քաղաքակրթական կենտրոններից էին: Պետականության վաղ կազմավորմանը նպաստեցին ինչպես երկրագործության համար խիստ նպաստավոր պայմանները, այնպես էլ ժամանակի այստեղով անցնող առևտրական ուղիները: Կարևոր դեր ուներ նաև ծովափնյա դիրքը, որը հնարավորություն էր տալիս առևտրական կապեր հաստատելու ողջ Միջերկրական ծովի ավազանի հետ:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ են Միջերկրական ծովի արևելյան ավազանում առաջացել առաջին քաղաք–պետությունները. թվարկե՛ք դրանք:
2. Ո՞ր ցեղերը գերիշխեցին Ասորիքում, ի՞նչ պետականություններ նրանք ստեղծեցին: Ո՞րն էր դրանցից ամենահզորը: Ե՞րբ և ինչո՞ւ տեղի ունեցան «ծովի ժողովուրդների» արշավանքները: Ի՞նչ հետևանքներ ունեցան դրանք Արևելքում:
3. Պատմական ի՞նչ պայմաններ նպաստեցին փյունիկյան քաղաքների վերելքին: Ներկայացրե՛ք «փյունիկյան մեծ գաղութացման» գործընթացը և դրա արդյունքները:
4. Ովքե՞ր էին արամեացիները: Պետական ի՞նչ կազմավորում նրանք ստեղծեցին:
5. Ո՞ր տարածքներն էին զբաղեցնում խուռիական ցեղերը, և որտեղի՞ց էին նրանք եկել: Ո՞ւմ օրոք հզորացավ Միտաննին: Ինչո՞ւ անկում ապրեց այս պետությունը:
6. Պաղեստինի տարածքում ի՞նչ քաղաքական ուժեր էին ձևավորվել: Թվարկե՛ք Իսրայելի նշանավոր թագավորներին: Ինչո՞ւ տրոհվեց Իսրայելի թագավորությունը:
7. Ներկայացրե՛ք Ասորիքը և փյունիկյան ծովեզերքի պետական կազմավորումների քաղաքական ընթացքը Ք.ա. IX–VI դարերում: Ո՞վ էր նրանցից առաջատարը փյունիկյան ծովափում:

§3. ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՎԱՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խառապպայի քաղաքակրթությունը

Հնդկաստանը աչքի է ընկնում բերրի հողով և ջրի առատությամբ (այստեղով են հոսում ջրառատ **Ինդոս**, **Գանգես**, **Բրահմապուտրա** և այլ գետեր): Որոշ շրջաններում հնարավոր է տարվա ընթացքում մի քանի անգամ բերք հավաքել: Հնդկաստանի հնագույն բնակիչները **դրավիդյան ժողովուրդներն** էին: Ք.ա. II հազարամյակում այստեղ մուտք գործեցին **հնդարիական ցեղերը**: Վերջիններիս տիրապետության հետևանքով տեղի ժողովուրդները յուրացրին նրանց լեզուն:

Հնդկաստանը քաղաքակրթության հնագույն կենտրոններից է: **Ք.ա. XXXIII դարից** սկսած՝ Հյուսիսարևմտյան Հնդկաստանում՝ Ինդոս գետի հովտում, նկատվում է արտադրողական ուժերի բուռն աճ, յուրացվում է բրոնզի ձուլման տեխնիկան: Ընդարձակվում է գյուղատիպ բնակավայրերի տարածքը, և շուտով ի հայտ են գալիս առաջին քաղաքները: Դրանցից մեկի անունով այս դարաշրջանը ստացավ **Խառապպայի մշակույթ** անվանումը: Այդ մշակույթը իր բարձրակետին հասավ Ք.ա. մոտ **2600–1900 թթ.**:

Երկրագործության, արհեստների և առևտրի բուռն զարգացումը Խառապպայի դարաշրջանի հասարակության կյանքում առաջ բերեց փոփոխություններ: Կանոնավոր հատակագծով քաղաքների գոյությունը, դրանցում խոշոր շտեմարանների առկայությունը վկայում են հասարակության կենտրոնացվածության մասին: Սակայն, ի տարբերություն հին առաջավորասիական պետությունների, տեղի չունեցավ հասարակության այնպիսի խոր շերտավորում, ինչպես Շումերում էր կամ Եգիպտոսում: Այստեղ այդպես էլ չձևավորվեց արքայական հզոր իշխանություն:

Խառապպայի դարաշրջանի բնորոշ կողմերից մեկը քաղաքային մշակույթի աննախադեպ բարձր մակարդակն էր: Խոշոր և փոքր քաղաքների թիվը հասնում էր մի քանի հարյուրի: Միայն Խառապպան ուներ քսան հազարից ավելի բնակչություն:

Խառապպայի քաղաքակրթության կարևորագույն ձեռքբերումներից մեկը մի քանի հարյուր պատկերանշանից կազմված **Ինդոսյան գիրն է** (ստեղծվել է մոտ Ք.ա. 3000 թ.):

Մոտ Ք.ա. 1800 թ. սկսած՝ Խառապպայի մշակույթը սկսեց անկում ապրել: Բնակիչները սկսում են լքել խոշոր քաղաքների մեծ մասը: Պատճառը կլիմայական փոփոխություններն էին, երբ տաք ու խոնավ եղանակային պայմաններին փոխարինեց չորային և համեմատաբար ցուրտ կլիման: Խառապպայի մշակույթի ավանդույթները միառժամանակ շարունակվեցին՝ հարատևելով մինչև Ք.ա. II հազ. վերջը:

Հնդկաստանը արիական ցեղերի տիրապետության շրջանում

Սկսած մոտ **Ք.ա. 1700 թ.՝** Հնդկաստան ներթափանցեցին արիական ցեղերը և տիրեցին Հյուսիսային Հնդկաստանին:

Արիացիները հիմնականում անասնապահ ժողովուրդներ էին և միայն հետագայում յուրացրին երկրագործությունն ու քաղաքային կենցաղը: Արդեն Ք.ա. XV–XIII դդ. ձևավորվեցին մի շարք պետություններ, որոնք ղեկավարվում էին արիացիների կողմից: Արքաները կոչվում էին **ռաջա**, նրանց իշխանությունը ժառանգական էր:

Արիական պետություններում, պայմանավորված մեծաքանակ նվաճված ժողովուրդների նկատմամբ գերիշխանությունը պահպանելու ցանկությամբ, ձևավորվեց խոր անջրպետ արիացիների և նվաճվածների միջև: Բնակչությունը ստորաբաժանվեց դասերի (**վարնաներ**): Դրանք էին արտոնյալ խավը ներկայացնող **բրահմանները** (քրմեր), **քշատրիները** (ռազմիկներ), **վայշիները** (երկրագործներ, արհեստավորներ և առևտրականներ) և անազատների խավը ներկայացնող **շուդրաները** (ծառաներ, համայնքի իրավազուրկ անդամներ), ինչպես նաև ստրուկները (**դասա** կամ **դասյու**): Պատկանելությունը այս կամ այն վարնային ժառանգական էր, և խառը ամուսնությունը արգելված էր: Այս համակարգի հիման վրա միջնադարում և նոր ժամանակներում ձևավորվեց Հնդկաստանի հասարակության **դասային** (կաստայական) կառուցվածքը:

Ք.ա. 517 թ. Հյուսիսային Հնդկաստանը նվաճվեց Աքեմենյան արքա Դարեհ I–ի կողմից: Այն մնաց նրա կազմում ընդհուպ մինչև

ՀՆԱԳՈՒՅՆ ԴԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՄԻԱՅՈՒՄ



Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները: Իսկ Հնդկաստանի արևելքում շարունակում էր գոյատևել **Մագադհա** պետությունը: Հենց այստեղ էլ մակեդոնական տիրապետության ավարտից հետո վերելք ապրեց **Մաուրյան** հարստության Հնդկաստանը:

Առաջին պետությունները Չինաստանում

Չինաստանում վաղ երկրագործական հասարակության ձևավորումը տեղի ունեցավ նորքարիդարյան հեղափոխության շրջանում: Արդեն Ք.ա. VIII–VI հազարամյակներում **Յանցզի** գետի ավազանում գոյություն ունեին մի շարք մշտական բնակավայրեր: Իսկ Ք.ա. IV–III հազարամյակներում սկսվում են այդ կենտրոնների խոշորացումը և վաղ պետականությունների ձևավորումը: Ամենուրեք կառուցվում են պալատական շինություններ: Հայտնագործվում է չինական հիերոգլիֆային գիրը:

Ք.ա. XVI դ. **Հուանհե** գետի միջին հոսանքի շրջանում ստեղծվեց առաջին խոշոր պետությունը՝ **Ին** հարստության գլխավորությամբ: Արքայական իշխանությունը աստվածապետական էր: Արքան միաժամանակ գերագույն հոգևոր առաջնորդն էր: Ին հարստության դարաշրջանը քաղաքային մշակույթի ծաղկման փուլ էր: Հիմնվեցին բազմաթիվ պարսպապատ քաղաքներ՝ կանոնավոր հատակագծով: Լայն կիրառում ստացավ գիրը: Ծաղկում ապրեց տնտեսությունը, մասնավորապես մետաղագործությունը: Յուրացվել էր բրոնզի ձուլման տեխնիկան: Հատկապես տարածված էին բրոնզե անոթները: Որոշ անոթներ կշռում էին մի քանի հարյուր կիլոգրամ: Բրոնզը օգտագործվում էր նաև զենքի արտադրության մեջ:

Ք.ա. XI դ. Ին հարստությանը սկսեցին սպառնալ **չժոու** ցեղերը, որոնք մինչ այդ գտնվում էին նրա տիրապետության տակ: Չժոուների առաջնորդ **Ու Վանը** գրավեց նրանց տարածքները և հիմնեց **Չժոու** հարստությունը (Ք.ա. 1046–249 թթ.):

Չժոուի դարաշրջանը բաժանվում է երկու փուլի՝ **Արևմտյան Չժոուի** և **Արևելյան Չժոուի** տիրապետության շրջան:

Չժոու ցեղերը արագորեն յուրացրին տեղի մշակույթը: Նոր հարստության օրոք բուռն զարգացում ապրեց տնտեսությունը: Երկրում անցկացվեց ջրանցքների միասնական համակարգ: Բրոնզին զուգահեռ լայն տարածում է ստանում երկաթը: Ծաղկում են արհեստները, գիտությունը, հատկապես փիլիսոփայական միտքը: Պատահական չէ, որ Չինաստանի պատմության այս շրջանը կոչվում է նաև **Մտքի հարյուր դպրոցների** դարաշրջան:

Արևմտյան Չժոուն հզոր պետություն էր և վարում էր ակտիվ նվաճողական քաղաքականություն: Նրա արքաներն իրենց արշավանքների ժամանակ երբեմն հասնում էին մինչև Կենտրոնական Ասիա: Արքայական իշխանությունը սկզբնական շրջանում ամուր էր: Արքան (չինարեն՝ **վան**) ուներ գերագույն ռազմական և հոգևոր իշխանություն: Նա համարվում էր «Երկնքի որդին», որի հեղինակությունը չէր վիճարկվում:

Չժոուի պետությունը սկսեց անկում ապրել Ք.ա. IX–VIII դդ.: **Ք.ա. 771 թ.** սկսվեց գահակալական պայքար, ինչի արդյունքում գահ բարձրացավ **Պին վանը**: Դժվարանալով դիմագրավել քոչվոր ցեղերի ճնշմանը՝ նա պետության մայրաքաղաքը տեղափոխեց արևելք՝ **Լոյան**, որով էլ սկսվում է Արևելյան Չժոուի դարաշրջանը:

Արևելյան Չժոուի գոյության առաջին տասնամյակներում Հուանհեի ավազանում գոյություն ունեին վաների գերիշխանությունը թոթափած բազմաթիվ մանր պետություններ (շուրջ 150): Գերիշխանության համար ընթացած պայքարի արդյունքում **Ք.ա. 722 թ.** ձևավորվեցին մոտ 10 խոշոր պետություններ: Չժոուի արքաների գերիշխանությունը սրանց մեծ մասի նկատմամբ ձևական էր: Ռազմական առումով և տնտեսապես մի շարք թագավորություններ նույնիսկ գերազանցում էին Չժոուին: Այս իրավիճակը շարունակվեց նաև հետագայում: Մշտական պայքարի հետևանքով սկսում են հզորանալ **Ցի, Ցզին, Չժաո թագավորությունները:**

Թագավորությունների միջև պատերազմները, որին գումարվում էին բախումները հյուսիսի և արևմուտքի քոչվորների դեմ, թույլ չէին տալիս դրանցից որևէ մեկի հզորացումը: Քիչ չէին այն դեպքերը, երբ միմյանց դեմ պատերազմներում նրանք օգնության էին հրավիրում քոչվորներին: Դրա արդյունքում Ք.ա. 249 թ. Արևելյան Չժոուն անկում ապրեց:

Ամփոփում: *Նորքարիդարյան հեղափոխության ընթացքում Հնդկաստանում և Չինաստանում ձևավորվեցին առաջին քաղաքակրթական կենտրոնները: Հնդկաստանում Ք.ա. IV–III հազարամյակներում, իսկ Չինաստանում ավելի ուշ կազմավորվեցին առաջին պետությունները: Ինչպես Հնդկաստանում, այնպես էլ Չինաստանում ընդհուպ մինչև Ք.ա. I հազարամյակի վերջին դարերը չձևավորվեցին միասնական պետություններ: Գոյություն ունեին բազմաթիվ ինքնուրույն քաղաքական կենտրոններ, որոնց միջև ընթանում էին մշտական պատերազմներ գերիշխանության և տարածքների համար:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ն են եղել Հնդկաստանի բնակության պայմանները, ի՞նչ դեր են ունեցել դրանք վաղ երկրագործական քաղաքակրթությունների ձևավորման գործում: Ովքե՞ր էին Հնդկաստանի հին բնակիչները:
2. Բնութագրե՛ք Խառապպայի մշակույթը, համեմատե՛ք այն Շումերի կամ Հին Եգիպտոսի հասարակությունների հետ:
3. Արիական ցեղերը ե՞րբ ներթափանցեցին Հնդկաստան, ի՞նչ հետևանքներ ունեցավ դա: Ներկայացրե՛ք հնդկական հասարակության սոցիալական կառուցվածքը:
4. Ե՞րբ է ձևավորվել վաղ երկրագործական հասարակությունը Չինաստանում: Ի՞նչ տարածք էր զբաղեցնում Ին հարստության թագավորությունը: Ի՞նչն էր բնորոշ այս պետությանը:
5. Ո՞վ և ե՞րբ հիմնադրեց Չժոու հարստությունը: Ներկայացրե՛ք հասարակական զարգացման արդյունքները Արևմտյան Չժոու հարստության օրոք: Ի՞նչ անունով է հայտնի այս դարաշրջանը:
6. Ո՞վ էր Արևելյան Չժոու պետության հիմնադիրը: Ցո՛ւյց տվեք այս նոր դարաշրջանի քաղաքական զարգացման բնորոշ կողմերը Չինաստանում: Ինչո՞ւ և ե՞րբ անկում ապրեց Արևելյան Չժոու պետությունը:

Թեմա 2. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԵԼՔԸ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

§ 1. ՀԱՄԱԵԳԻՊՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հին թագավորություն

Վաղ թագավորության ավարտին Եգիպտոսում իշխանության եկավ III հարստությունը, որով սկսվում է Հին թագավորության դարաշրջանը (Ք.ա. XXVIII–XXIII դդ.): Հարստության հիմնադիր փարավոն **Ջոսերի** հիմնական նպատակներից էր Վերին և Ստորին Եգիպտոսների միավորումն ամրապնդելը: Նա կատարեց վարչաքաղաքական բարեփոխում՝ իշխանությունից հեռացնելով նոմերում ժառանգաբար իշխող ազնվականությանը: Վերջիններս փոխարինվեցին նշանակովի պաշտոնյաներով (հուն.՝ **նոմարքոսներ**): Ձևավորվեց կառավարման կուռ համակարգ:

Փարավոնի իշխանությունը հայտարարվեց աստվածատուր, իսկ փարավոնը՝ մարդ–աստված: Արքայական իշխանության առանձնահատուկ դերն ընդգծելու նպատակով փարավոնի համար կառուցում էին վիթխարի դամբարաններ (բուրգեր):

Հին թագավորությունն իր հզորության բարձրակետին հասավ IV հարստության օրոք: Եգիպտացիները սկսեցին արշավանքներ ձեռնարկել հարևան երկրների դեմ՝ դեպի հարավ՝ **Նուբիա**, դեպի արևմուտք՝ **Լիբիա**, և հյուսիս–արևելք՝ **Սինայի թերակղզի** և **Պաղեստին**:

IV հարստությանը հաջորդած նոր արքայատոհմը երկրին համակած ճգնաժամի պայմաններում ստիպված էր զիջումներ անել նոմային ազնվականությանն ու քրմությանը: Արդյունքում արքայական իշխանությունը հեղինակազրկվում էր: Երկրում փաստացի իշխանությունն անցավ նոմարքոսներին ու բարձրաստիճան քրմությանը: Ի վերջո երկիրը տրոհվեց մի քանի տասնյակ ինքնուրույն իշխանությունների:

Միջին թագավորություն

Եգիպտոսի տրոհումը հանգեցրեց նոմերի միջև պատերազմների և ավերածությունների: Իրավիճակը որոշ կառավարողների ստիպեց մտածել վերականգնելու միասնական պետությունը: Այդ շարժումը գլխավորում էին **Հերակլեոպոլիս** և **Թեբե** քաղաքները: Պայքարն ավարտվեց Թեբեի հաղթանակով, և Ք.ա. XXI դ. հիմնադրվեց համաեգիպտական նոր՝ **XI հարստությունը**: Սկսվեց Եգիպտոսի պատմության նոր դարաշրջան, որը հայտնի է **Միջին թագավորություն** անվամբ:

Համաեգիպտական թագավորության վերականգնումը նպաստեց տնտեսության զարգացմանը, կառուցվեցին ջրանցքներ, քաղաքներ: Տնտեսության ծաղկումը Եգիպտոսում ուղեկցվում էր տեխնիկական նորամուծություններով: Եգիպտացիները յուրացրին բրոնզի ձուլման տեխնիկան: Եգիպտոսը սկսեց աշխույժ առևտուր իրականացնել Փոքր Ասիայի, Սիրիայի և Միջագետքի երկրների հետ:

Միջին թագավորությունն իր հզորության բարձրակետին հասավ XII հարստության օրոք: Նուբիան, որը հարուստ էր ոսկով, վերածվեց եգիպտական նահանգի: Եգիպտոսի իշխանությունը տարածվում էր Պաղեստինի և Փյունիկիայի մի մասի վրա: Այս շրջանում Եգիպտոսը ժամանակի խոշորագույն պետություններից մեկն էր:

XII հարստության անկումից հետո սկսվեցին երկպառակչական պատերազմներ, բնակչության ապստամբություններ: Ստեղծված իրավիճակից օգտվեցին արտաքին թշնամիները՝ **հիքսոսների** ցեղերը: Հիքսոսները նվաճեցին Դելտայի շրջանը, որտեղ հիմնեցին իրենց մայրաքաղաքը՝ **Ավարիսը**: Հիքսոսների իշխանությունը Եգիպտոսում տևեց շուրջ մեկ դար:

Նոր թագավորություն

Հիքսոսների դեմ պայքար սկսեցին Թեբեի շուրջ համախմբված հարավի նոմերը: Երկարատև պայքարից հետո Թեբեի փարավոն **Յահմոս I**–ը (**մոտ Ք.ա. 1540–1517 թթ.**) գրավեց Ավարիսը և վտարեց հիքսոսներին: Նա հիմնադրեց նոր՝ XVIII հարստությունը, որով սկսվեց Եգիպտոսի պատմության **Նոր թագավորության** դարաշրջանը:

Նոր հարստության փարավոնները մեծ ուշադրություն դարձրին բանակի վերակազմավորմանը: Հիքսոսյան օրինակով ստեղծվեցին մարտակառքային զորամասեր, զորքերը զինվեցին նոր և կատարելագործված զենքերով, այդ թվում՝ մանգաղանման թրերով: Ներմուծվեց զորահավաքի նոր համակարգ, բանակում աճեց նաև վարձկան զորքերի թվաքանակը: Եգիպտոսն արդեն ուներ խոշոր մարտունակ բանակ, որը թույլ տվեց փարավոններին վարելու գործուն արտաքին քաղաքականություն:

Թութմոս I–ի օրոք (**Ք.ա. 1508–1493 թթ.**) Եգիպտոսի սահմանները հարավում հասան մինչև Նեղոսի երրորդ սահանք, իսկ հյուսիսում՝ մինչև Եփրատ, ուր եգիպտական բանակը ջախջախեց այնպիսի հզոր պետության, ինչպիսին էր **Միտաննին**: Առաջին անգամ եգիպտական բանակը դուրս եկավ Եփրատի ափ: Եփրատը նրանք անվանեցին **շրջված ջուր**, քանի որ այն հոսում էր Նեղոսին հակառակ ուղղությամբ՝ հյուսիսից հարավ:

Եգիպտոսն աննախադեպ հաջողություններ արձանագրեց հատկապես **Թութմոս III** փարավոնի ժամանակ (**Ք.ա. 1468–1434 թթ.**): Հաղթելով արևելամիջերկրածովյան ավազանում իր հակառակորդներին՝ փարավոնը տեր դարձավ Սիրիայի և Պաղեստինի մեծ մասին՝ հյուսիսում հասնելով մինչև Կարքեմիշ քաղաքը: Հարավում սահմանը հասցվեց մինչև Նեղոսի չորրորդ սահանք: Թութմոս III–ը ստեղծեց մի տերություն, որը հյուսիսից հարավ ձգվում էր մոտ **3200 կմ:** Թութմոսի հաջորդներն արդեն ստիպված էին մտածել ոչ թե նոր տարածքներ նվաճելու, այլ եղածը պահպանելու մասին:

Փարավոնը ստեղծեց հատուկ գաղութային վարչակազմ, որը պետք է իրագործեր նորանվաճ երկրների նկատմամբ տարվող քաղաքականությունը: Թութմոսը Եգիպտոսի պատմության մեջ առաջինն էր, ով նվաճվածների վրա սահմանեց հստակ հարկային և այլ պարտավորություններ:

Տասնամյակներ տևած պատերազմների ընթացքում ձեռք բերված ռազմավարը, ինչպես նաև խոշոր հարկերի մուտքը երկիր մեծապես նպաստեցին տնտեսության տարբեր ճյուղերի զարգացմանը, երկրում սկսվեց լայն շինարարական գործունեություն:

Էխնաթոնի կրոնաքաղաքական բարեփոխումները

Նվաճված երկրներից ստացվող միջոցների մի մասը տրվում էր տաճարներին, առաջին հերթին՝ մայրաքաղաք Թեբեի հովանավոր աստված Ամոնի տաճարին: Տա-

Փարավոն Ամենհոտեպ IV

Փարավոն Մինայի հաղթանակը խորհրդանշող տախտակը

ձարի քրմերը շուտով այնքան ազդեցություն ձեռք բերեցին, որ միջամտում էին նույնիսկ պետության աշխարհիկ գործերին:

Ամոնի քրմության հզորացումը թշնամաբար էր ընդունվում հատկապես արքունիքում ծառայող ազնվականության կողմից: Իրավիճակը լարվեց **Ամենհոտեպ IV**–ի (**Ք.ա. 1352–1336 թթ.**) կառավարման տարիներին:

Փարավոնը վճռեց հարցին տալ արմատական լուծում: Նա դիցարանում առաջ մղեց նախկինում երկրորդական դեր ունեցող **Աթոն** աստծուն, որը մարմնավորում էր **Արևի սկավառակը**: Աթոնը հռչակվեց Եգիպտոսի միակ աստվածը: Մյուս բոլոր աստվածությունները, ներառյալ նաև Ամոնը, վերածվեցին Աթոնի սպասավորների: Աթոնն ընկալվում էր որպես աշխարհի միակ աստված, որն արարել էր Եգիպտոսը և մնացյալ երկրները:

Ամենհոտեպն իրեն հռչակեց Աթոնի միակ որդի, հրաժարվեց իր գահակալական անունից և ընդունեց նոր անուն՝ **Էխնաթոն** («Աթոնին հաճելի»): Նա լքեց Թեբեն և տեղափոխվեց նոր հիմնադրված մայրաքաղաք՝ Ախետաթոն («Աթոնի հորիզոն»):

Էխնաթոնի բարեփոխումները հանդիպեցին քրմության և նոմային ազնվականության դիմադրությանը: Բնակչությունը նույնպես հավատարիմ մնաց հին աստվածներին: Էխնաթոնի մահից հետո նրա հաջորդները վերականգնեցին Ամոնի և մյուս աստվածների պաշտամունքը, քրմությանը վերադարձվեցին նրա իրավունքները:

XVIII հարստության վերջին փարավոնների իշխանության տարիներին կտրուկ վատթարացավ Եգիպտոսի ներքին և արտաքին դրությունը: Եգիպտոսի ազդեցությունը Արևելամիջերկրածովյան ավազանում գործնականում վերացավ:

Ռամզես II–ի կառավարումը

Եգիպտոսը սկսեց նորից վերելք ապրել՝ իր հզորության բարձրակետին հասնելով **Ռամզես II**–ի իշխանության տարիներին (**Ք.ա. 1279–1213 թթ.**):

Ռամզես II–ը վերստին ձեռնամուխ եղավ Արևելամիջերկրածովյան ավազանում Եգիպտոսի կորսված դիրքերը վերականգնելու խնդրին: Դա նրանից պահանջեց ուժերի հսկայական լարում, քանի որ այստեղ եգիպտացիների հակառակորդը Առաջավոր Ասիայի հզորագույն Խեթական տերությունն էր: Երկարատև հակամարտությունն ի վերջո ավարտվեց հաշտությամբ: **Ք.ա. 1259 թ.** Ռամզեսի և խեթական արքա **Խաթթուսիլիս III**–ի միջև կնքվեց պայմանագիր, որով կողմերը պարտավորվում էին բոլոր վիճելի հարցերը լուծել բացառապես խաղաղ միջոցներով, իսկ երրորդ կողմի դեմ պատերազմի ժամանակ պետք է օգնեին միմյանց: Խեթա–եգիպտական պայմանագիրը դիվանագիտության պատմության մեջ եզակի օրինակ է, որի մի շարք սկզբունքներ ընկած են արդի դիվանագիտության հիմքում:

Աբու–Սիմբելի ժայռակերտ տաճարը

Հաստատված խաղաղությունը թույլ տվեց փարավոնին իրականացնելու հսկայածավալ շինարարություն: Հիմնվեցին նոր քաղաքներ, այդ թվում՝ փարավոնի նստավայր **Պեր–Ռամզես** քաղաքը: Կառուցվեցին բազմաթիվ տաճարներ, որոնցից նշանավոր է **Աբու–Սիմբելի** ժայռակերտ տաճարը՝ Ռամզեսի 20–մետրանոց չորս հսկայական արձաններով: Դելտայում հազարավոր հեկտար հողատարածություններ դարձան ոռոգելի:

Ռամզես II–ի կառավարման շրջանը եգիպտական պետության և քաղաքակրթության ծաղկման տարիներն էին:

Ուշ թագավորությունը

Ռամզեսի հաջորդների օրոք Եգիպտոսը սկսեց կորցնել իր ազդեցությունը արտաքին աշխարհում: Դա կապված էր Արևելյան Միջերկրականում և հարևան շրջաններում սկսված ձգնաժամի հետ, որի ընթացքում դադարեցին գոյություն ունենալուց Խեթական տերությունը և այլ երկրներ: Փարավոնները դժվարությամբ էին դիմագրավում դեպի Եգիպտոս արշավող լիբիական ցեղերին և «ծովի ժողովուրդներին»: XX հարստության անկումից հետո (Ք.ա. XI դար) Եգիպտոսը վերստին տրոհվեց:

Եգիպտոսն այլևս ի վիճակի չեղավ վերականգնելու իր ռազմաքաղաքական և տնտեսական ներուժը: Այս պահից սկսած՝ **Ուշ թագավորության** շրջանում՝ մի քանի դար շարունակ, Եգիպտոսում իշխում էին օտար ծագման հարստություններ, կամ երկիրը օտարների տիրապետության տակ էր: Ք.ա. X դ. Եգիպտոսում հաստատվեց լիբիական ցեղապետերից մեկի իշխանությունը: Ք.ա. VIII դ. Եգիպտոսն ընկավ իր հարավային հարևան **Քուշի** (այժմ՝ Եթովպիա) տիրապետության տակ: Ք.ա. VII դ. երկիրը մի կարճ ժամանակով նվաճվեց Ասորեստանի կողմից: Թեև շուտով երկիրն ազատագրվեց, սակայն նախկին բարձունքներին այդպես էլ չհասավ: Ի վերջո **Ք.ա. 525 թ.** Եգիպտոսը նվաճվեց Կյուրոս Մեծի որդի Կամբիսի կողմից: Աքեմենյան տիրապետությունը Եգիպտոսում շարունակվեց մինչև **Ք.ա. 332 թ.**, երբ երկիրը նվաճեց Ալեքսանդր Մակեդոնացին:

Ամփոփում: *Հին և Միջին թագավորությունների օրոք Եգիպտոսում ստեղծվեց ամուր պետականություն՝ ձյուղավորված կառավարման մարմիններով, ինչպես նաև միասնական ոռոգման համակարգ, որը երկրի տնտեսության զարգացման կարևորագույն պայմանն էր: Հաստատվեց արքայի բացարձակ իշխանության գաղափարը, որի անձը աստվածացվում էր: Նոր թագավորությունը եգիպտական ինքնուրույն պետականության ամենանշանակալից փուլն էր: Նոր թագավորության անկմանը հաջորդեց մի ժամանակաշրջան, որի մեծ մասի ընթացքում Եգիպտոսը կառավարում էին օտարերկրացիները: Ք.ա. 525 թ. Եգիպտոսը նվաճվեց պարսիկների կողմից և վերածվեց սատրապության:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին հզոր պետականության ստեղծման նախադրյալները Եգիպտոսում: Ե՞րբ և ո՞ւմ օրոք այն բռնեց հզորացման ուղին: Վերջինս ի՞նչ քայլեր էր ձեռնարկում պետությունը հզորացնելու համար:
2. Ապացուցե՛ք, որ IV հարստության օրոք Հին թագավորությունը հասավ իր հզորության գագաթնակետին: Ի՞նչն էր խորհրդանշում այդ հզորությունը:
3. Որո՞նք էին համաեգիպտական պետության վերականգնման պատճառները: Ո՞ր քաղաքները գլխավորեցին այդ գործընթացը: Ինչո՞վ ավարտվեց այդ պայքարը: Նկարագրե՛ք Միջին թագավորության տնտեսական և քաղաքական զարգացման արդյունքները:
4. Ո՞ր հարստության օրոք Միջին թագավորությունը հասավ իր հզորության բարձրակետին: Ո՞րն էր դրա պատճառը: Նշե՛ք Եգիպտոսի սահմանները այդ շրջանում:
5. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ հիքսոսներին հաջողվեց արագորեն նվաճել Եգիպտոսը: Որքա՞ն տևեց նրանց գերիշխանությունը Եգիպտոսում: Ո՞վ գլխավորեց հիքսոսների դեմ պայքարը: Ի՞նչ ավարտ ունեցավ այն:
6. Ի՞նչ փոփոխություններ կատարեցին եգիպտական բանակում XVIII հարստության ներկայացուցիչները: Ի՞նչ նորամուծություն մտցրեց Թութմոս III–ը նվաճված երկրների նկատմամբ իր քաղաքականության մեջ:
7. Ինչո՞ւ էր Ամենհոտեպ IV փարավոնը փորձում բարեփոխումներ իրականացնել, ո՞րն էր եգիպտական դիցարանը բարեփոխելու նպատակը:
8. Ո՞ր հարստության օրոք Եգիպտոսը կրկին սկսեց վերելք ապրել: Ո՞ր պետությունն էր եգիպտացիների հիմնական հակառակորդը այդ ժամանակ, ինչո՞վ ավարտվեց այդ հակամարտությունը: Ներկայացրե՛ք Ռամզես II–ի իրականացրած բարեփոխումները:
9. Նկարագրե՛ք իրավիճակը Եգիպտոսում Նոր թագավորության անկումից հետո:

§ 2. ՄԻՋԱԳԵՏՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

Աքքադ

Ք.ա. III հազարամյակի կեսերից արևմուտքից Միջագետք ներթափանցեցին սեմական ցեղեր: Նրանք աստիճանաբար ձեռք բերեցին որոշակի ազդեցություն և սկսեցին գործուն դեր խաղալ միջագետքյան երկրների քաղաքական կյանքում: Որոշ շրջաններում սեմական առաջնորդները հասան իշխանության: Դրանցից էր Աքքադի թագավորության հիմնադիր **Սարգոնը** (**Ք.ա. 2330–2295 թթ.**): Սկզբում Սարգոնը հասավ իշխանության Քիշ քաղաքում: Այնուհետև Կենտրոնական Միջագետքում նա հիմնադրեց նոր քաղաք՝ **Աքքադը** (կամ Ագադե), որի անունով էլ կոչվեց պետությունը:

Սարգոնն իրականացրեց մի շարք բարեփոխումներ: Նրան է վերագրվում աշխարհում առաջին մշտական բանակի կազմավորումը՝ բաղկացած 5400 զինվորներից, որոնց միակ գործը պատերազմելն էր: Ընդ որում՝ այդ բանակը պահվում էր բացառապես պետության հաշվին: Ի տարբերություն շումերական քաղաքների ծանրազեն հետևազորի՝ նա շեշտը դրեց նետաձիգներից կազմված թեթևազեն զինվորների վրա: Հենվելով նոր բանակի վրա՝ Սարգոնը նվաճեց Ուրը, Ումման, Լագաշը, այնուհետև ողջ Շումերը: Շումերի նվաճումն ավարտելուց հետո Սարգոնն արշավեց դեպի **Էբլա** և **Մարի** (ներկայիս Սիրիայում), **Սուբարտու** (Հյուսիսային Միջագետք և Հայկական լեռնաշխարհի հարավ) և **Էլամ** (Հարավարևմտյան Իրան): Սարգոնի երկարամյա կառավարման արդյունքը եղավ Աքքադի ընդարձակ տերության կազմավորումը: Աքքադը դարձավ Առաջավոր Ասիայի հզորագույն պետությունը:

Ուրից հայտնաբերված զարդաքանդակ

Սարգոնն ամրապնդեց արքայական իշխանությունը, սկսեց կառավարել միանձնյա, ինչն առաջ բերեց տոհմային ավագանու դժգոհությունը: Կենտրոնախույս միտումներ էին դրսևորում նաև նվաճված երկրները, որոնք հաճախակի ապստամբում էին: Դրանցից մեկի ժամանակ ապստամբներն անգամ պաշարեցին մայրաքաղաքը, և Սարգոնը դժվարությամբ կարողացավ փրկել իր գահը:

Արքայական իշխանության դեմ սկսվեցին խռովություններ, որոնք դաժանաբար ճնշվում էին: Սակայն խռովություններն ու դավադրությունները չդադարեցին, որոնց զոհ գնացին Սարգոնին հաջորդած նրա երկու որդիները:

Աքքադի թագավորությունն իր հզորության բարձրակետին հասավ Սարգոնի թոռան՝ **Նարամսինի** գահակալության տարիներին: Նարամսինը ձեռնարկեց արմատական քայլեր՝ արքայական իշխանությունն ամրապնդելու նպատակով: Մասնավորապես նա իշխանությունից հեռացրեց մի շարք քաղաքների կառավարիչների, որոնք իշխում էին ժառանգաբար՝ նրանց փոխարեն նշանակելով իր որդիներին: Նա հատկապես հենվում էր քրմության վրա: Վերջիններիս տալիս էր ընդարձակ հողատարածքներ և ստրուկներ, կառուցում էր տաճարներ՝ դրանց նվիրաբերելով մեծարժեք ընծաներ: Դրա դիմաց Նարամսինին սկսեցին մատուցել աստվածային պատիվներ և նրան հռչակեցին Աքքադի աստված:

Նարամսինն իրականացրեց մի շարք նվաճումներ: Ծովային արշավանքի ընթացքում նա հասավ մինչև Արաբական թերակղզու արևելք և Հյուսիսարևմտյան Հնդկաստան: Իր արձանագրություններում Նարամսինն իրեն համարում էր «աշխարհի չորս կողմերի» թագավոր:

Քրմության մի մասը դժգոհ էր Նարամսինին աստված հռչակելու փաստից: Արքայից դժգոհ էր նաև տոհմային ավագանին, որը ձգտում էր վերականգնել իր դիրքերը երկրում: Նարամսինի կառավարման վերջին տարիներն անցան այս ուժերի դեմ մղված լարված պայքարում: Դրան շուտով գումարվեց արտաքին վտանգը: Աքքադի թագավորությանը սկսեցին սպառնալ լեռնական կուտիների ցեղերը, որոնք պարբերաբար ներխուժում էին Միջագետք, ավերում և թալանում երկիրը: Արձանագրությունները կուտիների արշավանքները ներկայացնում են որպես աստվածների ուղարկած պատիժ: Նարամսինի կառավարումից որոշ ժամանակ անց Միջագետքը նվաճվեց կուտիների կողմից:

Չնայած Աքքադի թագավորությունը կարճատև կյանք ունեցավ, սակայն պատմության մեջ թողեց խոր հետք: Նույնիսկ ավելի քան հազար տարի անց Միջագետքի և հարևան երկրների ժողովուրդները հիշում էին Սարգոն Աքքադացուն՝ որպես մեծ և խիզախ արքայի ու նվաճողի: Իսկ Ք.ա. VII–VI դդ. այս անունով էր հանդես գալիս նաև Բաբելոնիայի թագավորությունը: Աքքադի անունով է կոչվում նաև միջագետքյան սեպագիր արձանագրությունների լեզուն՝ աքքադերենը:

Ուրի III հարստությունը

Կուտիները Հայկական Տավրոսի և Զագրոսի լեռների բնակիչներն էին, ովքեր գտնվում էին հասարակական–տնտեսական զարգացման ցածր մակարդակի վրա: Այդ էր պատճառը, որ վերացնելով Աքքադի թագավորությունը՝ նրանք չկարողացան ստեղծել այստեղ իրենց ամուր պետականությունը: Նրանք Միջագետքի քաղաքներից հարկ էին ստանում տեղական կառավարիչների միջոցով: Կուտիական տիրապետությունը մեծ վնասներ չպատճառեց այստեղի տնտեսապես զարգացած քաղաքներին:

Միջագետքում կուտիների իշխանությունը շարունակվեց մոտ մեկ դար: **Ք.ա. 2109 թ.** Ուրուկ քաղաքից ոմն **Ուտուխեգալ**, որը հասարակ ձկնորս էր, համախմբեց բնակչությանը, դաշնակցեց Ուր քաղաքի հետ և կուտիներին վտարեց Միջագետքից: Կուտիների տիրապետությունը՝ որպես երկրին պատուհասած աննախադեպ աղետ, դեռ երկար ժամանակ մնալու էր միջագետքցիների հիշողության մեջ:

Կուտիների վտարումից ոչ շատ անց Միջագետքում գերիշխանությունն անցավ Ուրի տիրակալ **Ուր–Նամմուին**: Վերջինս հիմք դրեց **Շումերա–աքքադական միացյալ թագավորությանը**, որը կոչվում է նաև **Ուրի III հարստության** պետություն:

Այս երկիրը հին արևելյան պետության դասական օրինակ էր: Տեր ու տնօրենը երկրում արքան էր, որի անձն աստվածացված էր: Նա ուներ անսահմանափակ իշխանություն, կառավարում էր բազմաստիճան պաշտոնեության միջոցով: Արդարություն ապահովելու և արդարադատություն իրականացնելու նպատակով կազմավորվեց արքայական դատարան, որի գործունեության համար հիմք էին ծառայում Ուրի արքա **Շուլգիի** հրապարակած օրենքները:

Երկրում հողերի մեծ մասը պատկանում էր արքայական և տաճարային տնտեսություններին: Դրանցում աշխատում էին գրեթե ստրկական կարգավիճակում գտնվող վարձու աշխատողներ՝ այսպես կոչված **գուրուշները**, որոնք իրենց աշխատանքի դիմաց ստանում էին վարձավճար բնամթերքով: Օրավարձը տղա-

Ուրից հայտնաբերված բարձրաքանդակ

մարդու համար կազմում էր 1,5 լ, իսկ կնոջ համար՝ 0,75 լ գարի: Աշխատում էին նաև ստրուկներ և իրենց հողը կորցրած համայնականներ: Վերջիններիս թվաքանակը շարունակ աճում էր, ինչը ստիպում էր արքաներին քայլեր ձեռնարկել՝ թույլ չտալու համայնքի ամբողջական քայքայումը: Դրա համար նրանք անգամ արգելեցին համայնական հողատարածքների առք ու վաճառքը:

Ուրի արքա Շուլգին և նրան հաջորդած որդիները մի շարք արշավանքներ ձեռնարկեցին դեպի հարևան երկրներ:

Շումերի և Աքքադի միացյալ թագավորությունը Առաջավոր Ասիայի խոշորագույն պետություններից մեկն էր, որի սահմանները ձգվում էին Պարսից ծոցից մինչև Սիրիա և Հայկական լեռնաշխարհի հարավ: Ուրի III հարստության շրջանում ծաղկում ապրեց տնտեսությունը, անցկացվեցին նոր ջրանցքներ, զարգացման բարձր մակարդակի հասավ մշակույթը, հատկապես գրականությունը:

Սակայն Ուրի թագավորությունն ունեցավ կարճատև կյանք: Դրա պատճառը դեռևս Ք.ա. XXI դ. վերջերից Միջագետք ներթափանցող քոչվոր **ամորեական ցեղերի** հարձակումներն էին: Ամորեացիների հարձակումների հետևանքով Ուրի III հարստության ենթակայությունից դուրս եկան բազմաթիվ քաղաքներ: Վերջին հարվածը Ուրին հասցրին հարևան էլամցիները: Օգտվելով երկրում ստեղծված տնտեսական ծանր իրավիճակից՝ **Ք.ա. 2003 թ.** էլամցիները պաշարեցին և գրավեցին Ուրը՝ գերեվարելով հարստության վերջին արքային և ողջ ազնվականությանը, տանելով մեծաքանակ ավար, այդ թվում՝ շումերա–աքքադական աստվածների արձանները:



Ուրի հարստության ժամանակաշրջանի քանդակներ

Ամփոփում: *Այսպիսով՝ Ք.ա. XXIV դարի երկրորդ կեսին Աքքադի պետության հիմնադրումով ավարտվեց շումերական քաղաքակրթական աշխարհի քաղաքական տրոհվածության դարաշրջանը: Առաջին անգամ ողջ Միջագետքը միավորվեց մեկ միասնական պետականության մեջ: Աքքադը Սարգոնի և նրա թոռան՝ Նարամսինի օրոք դուրս եկավ արտաքին աշխարհ՝ իրականացնելով նվաճումներ արևմուտքում, հյուսիսում և հարավ–արևելքում: Կուտիների մեկդարյա տիրապետությունից հետո Աքքադի քաղաքական ավանդույթները շարունակվեցին ի դեմս Շումերա–աքքադական միացյալ պետության: Այս երկու պետությունների գոյության շրջանում դրվեցին կենտրոնացված պետականության ձևավորման հիմքերը: Այն դրսևորվեց արքայական իշխանության ամրապնդումով, արքայի անձի աստվածացումով: Կենտրոնացման միտումը առկա էր նաև երկրի տնտեսական կյանքում:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Որտեղի՞ց և ե՞րբ Միջագետք ներթափանցեցին սեմական ցեղերը: Ո՞վ էր Սարգոնը: Ի՞նչ բարեփոխումներ իրականացրեց նա: Ո՞ր պետությունները նվաճեց Սարգոնը:
2. Ո՞ւմ օրոք Աքքադի թագավորությունը հասավ իր հզորության բարձրակետին: Ի՞նչ քայլեր ձեռնարկեց նա արքայական իշխանությունն ամրապնդելու նպատակով:
3. Ովքե՞ր էին կուտիները, որքա՞ն տևեց նրանց իշխանությունը Միջագետքում:
4. Ներկայացրե՛ք Շումերա–աքքադական թագավորության կառավարման համակարգը: Ի՞նչ տարածք էր զբաղեցնում այդ թագավորությունը: Թվարկե՛ք Ուրի III հարստության անկման պատճառները:

§ 3. ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Հին խեթական թագավորությունը

Նորքարիդարյան հեղափոխության ավարտից հետո Փոքր Ասիայի տարբեր շրջաններում արդեն կային բազմաթիվ քաղաքակրթական կենտրոններ, որոնց բնակչության հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր, արհեստները, առևտուրը: Վերջիններիս զարգացման համար նպաստավոր պայմաններ էին ապահովում օգտակար հանածոների, հատկապես մետաղների հարուստ պաշարները:

Արդեն Ք.ա. III հազ. կեսերից փոքրասիական հասարակությունը թևակոխեց վաղ պետականության փուլ, առաջ եկան քաղաք–պետություններ: Ք.ա. II հազ. սկզբներին Փոքր Ասիան պատված էր նման պետական կազմավորումների խիտ ցանցով, որոնցից աչքի էին ընկնում **Քանեսը**, **Կուսսարը**, **Խաթթուսասը** և **Պուրուսխանդան**: Այս քաղաք–պետությունները միավորելու նպատակով Ք.ա. XVIII դարում **Կուսսարի** տիրակալ **Անիտտան** գրավեց Նեսան՝ այն դարձնելով իր նստավայրը: Այնուհետև նա գրավեց **խաթական ցեղերի** քաղաք **Խաթթուսասը**: **Պուրուսխանդայի** կառավարիչն ինքնակամ հպատակվեց Անիտտային՝ նրան զիջելով իր գլխավոր հարստությունը՝ երկնաքարային երկաթից պատրաստված գահն ու գայիսոնը:

Հին խեթական թագավորության ժամանակաշրջանում պետության մեջ պահպանվել էին դեռևս տոհմատիրական կարգերից եկող բազում սովորույթներ: Կառավարման գործում մեծ էր ժողովրդական ժողովի՝ **պանկուսի** դերը:

Անիտտայի ժառանգներին վիճակված չէր երկար իշխել, և շուտով նրանց փոխարինեց նոր հարստությունը, որը ծագում էր **Կուսսարից**: Այս արքայատան ներկայացուցիչներից **Լաբարնա I**–ը ավարտին հասցրեց պետության կազմավորումը, որի սահմաններն արդեն ձգվում էին Կիլիկիայից մինչև Հալիսի գետաբերան: Նա արշավանքներ ձեռնարկեց դեպի Արևմտյան Փոքր Ասիա՝ մինչև Էգեյան ծովափ: Լաբարնայի անունը դարձավ պատվանուն բոլոր թագավորների համար, որոնք սկսեցին այդպես կոչվել:

Լաբարնա I–ի զարմիկը՝ **Խաթթուսիլիս I**–ը, մայրաքաղաքը փոխադրեց Խաթթուսաս, որը այդուհետև դարձավ Խեթական պետության մշտական մայրաքաղաքը: Նա հաղթական պատերազմներ մղեց Հայկական լեռնաշխարհի և Սիրիայի մի շարք երկրների դեմ:

Խեթական բարձրաքանդակներ

Խաթթուսիլիսի վարած գործուն արտաքին քաղաքականությունը շարունակեց նրա հաջորդ **Մուրսիլիս I**–ը (**Ք.ա.** մոտ **1540–1530 թթ.**): Վերջինս նվաճեց Յամհադի թագավորությունը, ջախջախեց Հյուսիսային Միջագետքի խուռիներին, հաղթական արշավանք կատարեց դեպի Բաբելոնիա (**Ք.ա. 1531 թ.**): Գրավելով Բաբելոն քաղաքը՝ նա վերջ տվեց ամորեական արքայատան իշխանությանը և հսկայական ռազմավար ձեռք բերեց, այդ թվում՝ Բաբելոնի գլխավոր աստված Մարդուկի արձանը:

Սակայն խեթական տոհմային ազնվականությանը ձեռնտու չէր արքայական իշխանության ամրապնդումը, և շուտով Մուրսիլիսը դարձավ դավադրության զոհ:

Երկրում սկսվեց մի քանի տասնամյակ տևող ներքին անկայունության շրջան: Խաթթիում տիրող իրավիճակից օգտվեցին խուռիները՝ հետ գրավելով Սիրիան: Մյուս կողմից՝ հյուսիսիրքբասիական **կասկերի** ցեղերը գրավեցին Սև ծովին հարող խեթական տիրույթները՝ նրանց մեկընդմիշտ կտրելով ծովից: Խեթերը կորցրին իրենց տարածքների մեծ մասը, այդ թվում՝ Կիլիկիան, ուր կազմավորվեց պետություն՝ **Ադանիյա** (այժմ՝ Ադանա) կենտրոնով:

Երկրում խիստ թուլացավ արքայական իշխանությունը: Այդ իսկ պատճառով խեթական արքա **Տելեպինուսը** ընդունեց մի օրենք, ըստ որի՝ այսուհետ գահն անցնելու էր միայն արքայի որդիներին՝ ըստ ավագության: Խեթական վերնախավը զրկվեց իր՝ նախկինում ունեցած ազդեցությունից: Սրանով ծանր հարված հասցվեց տոհմատիրական կարգերի մնացուկներին և ամրապնդվեցին միապետության հիմքերը:

Խեթական տերությունը

Ք.ա. մոտ 1450 թ. խեթական գահն անցավ ծագումով խուռի ազնվականական տոհմերից մեկի ներկայացուցիչ **Թուդխալիաս II**–ին:

Նոր հարստության արքաներն անմիջապես վերսկսեցին արշավանքները դեպի Արևմտյան Փոքր Ասիա և Սիրիա՝ փորձելով հետ բերել կորցրածը: Արքան իր հեռավոր արշավանքի ընթացքում նվաճեց Էգեյան ծովափի 22 երկրներ, այդ թվում՝ **Տարուիսա** քաղաք–պետությունը, որը հոմերոսյան նշանավոր **Տրոյան** է: Թուդխալիասը պարտության մատնեց Միտաննիին: Այս արշավանքների արդյունքում խեթերը ստեղծեցին լայնածավալ տերություն, որի իսկական վերելքը սկսվեց XIV դ. կեսերից և կապված է **Սուպիլուլիումաս I**–ի գործունեության հետ:

Սուպիլուլիումաս I–ը մի շարք արշավանքներով իր տիրապետությունը հաստատեց գրեթե ողջ Փոքր Ասիայի վրա՝ Էգեյան ծովից մինչև Եփրատ գետ: Նա վճռական պարտության մատնեց Միտաննիին՝ այն դարձնելով կախյալ թագավորություն: Այնուհետև Սիրիայի տարածքներում ստեղծեց **Կարքեմիշի** և **Խալպայի** թագավորությունները՝ դրանց գահին բազմեցնելով իր որդիներին: Եգիպտոսը նույնիսկ չփորձեց օգնել իր դաշնակից Միտաննիին: Ավելին՝ խեթական բանակը մուտք գործեց Եգիպտոսին պատկանող Հարավային Սիրիա:

Այսպիսով՝ Սուպիլուլիումասը ստեղծեց մի տերություն, որը ձգվում էր Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածներից մինչև Պաղեստին, Էգեյան ծովից և Կիպրոսից մինչև Բաբելոնիայի սահմաններ:

Սուպիլուլիումասի գործը շարունակեց նրա որդիներից **Մուրսիլիս II–ը** (**մոտ Ք.ա. 1318–1290 թթ.**): Դրությունը փոխվեց նրա հաջորդների օրոք: Ռամզես II–ի օրոք վերստին հզորացած Եգիպտոսը ձգտում էր վերահաստատվել Փյունիկիայում և Սիրիայում: Չնայած **Ք.ա. 1274 թ. Քադեշի** ճակատամարտում խեթերը պարտության մատնեցին Ռամզեսին, սակայն վերջինս չէր հրաժարվում իր ծավալողական նկրտումներից: Փոքր Ասիայի արևմուտքում խեթերը ստիպված էին դիմագրավել **Ախխիյավա** երկրի (Միկենյան Հունաստան) և նրա դաշնակիցների՝ խեթական տիրույթների վրա հարձակումներին: Փոքր Ասիայի արևմուտքում ծավալված իրադարձությունների արձագանքները պահպանվել են Հոմերոսի «Իլիական» պոեմում: Լարված էին հարաբերությունները Ասորեստանի հետ: Այսպիսով՝ խեթական պետությունը ներքաշվեց պատերազմների մի շրջափուլի մեջ, որը թեև դանդաղ, բայց ուժասպառ էր անելու երկիրը:

Խեթական տերությունը բաղկացած էր քաղաքակրթական ամենատարբեր մակարդակների վրա գտնվող երկրներից և ժողովուրդներից: Խեթերը չէին փորձում վերակազմավորել նվաճված երկրներում գոյություն ունեցող քաղաքական և տնտեսական կացութաձևը: Այդ երկրների վրա դրված պարտավորությունները վերաբերում էին հավատարմությանը, ռազմական ջոկատներ տրամադրելուն և հարկերին: Այդպիսի տերությունը կարող էր գոյատևել միայն ուժեղ ռազմական մեքենայի առկայության դեպքում: Միաժամանակ մի քանի հակառակորդների հարձակումների պայմաններում այն կարող էր փլուզվել:

Խեթական տերության տրոհումը

Իրավիճակն առավել բարդացավ երկրում տեղի ունեցող գահակալական պայքարի հետևանքով: Խեթական արքայատունը տրոհվեց երկու ճյուղի, որոնք զուգահեռաբար կառավարում էին երկիրը:

Իշխանության եկած **Խաթթուսիլիս III**–ը (մոտ **Ք.ա. 1265–1240 թթ.**) Եգիպտոսի հետ կնքեց հաշտության պայմանագիր և իր ողջ ուժերն ուղղեց Ասորեստանի դեմ: Սակայն նրան այդպես էլ չհաջողվեց Ասորեստանին դուրս մղել Հյուսիսային Սիրիայից:

Խաթթուսիլիսի հաջորդների օրոք Ասորեստանի, միկենյան հույների և մյուս հակառակորդների դեմ մղվող պայքարում, ինչպես նաև ներքին երկպառակչական պատերազմներում վերջնականապես սպառվեցին խեթերի ուժերը: Իրավիճակը բարդանում էր նաև Փոքր Ասիայում տևական երաշտի պատճառով: Նրանք կորցրին ողջ Արևմտյան Փոքր Ասիան, Կիպրոսը: Ք.ա. XII դ. սկզբին Խեթական տերությունը տրոհվեց: Պահպանվեցին միայն տերության առանձին շրջաններ՝ **Թարխունտասան** և **Կարքեմիշը**:

Այդ պահից սկսվում է հին փոքրասիական քաղաքակրթության պատմության նոր փուլ, որ կոչվում է **ուշ խեթական** կամ **լուվիական:** Սակայն վերոհիշյալ արքայատոհմերը չկարողացան երկար պահպանել իրենց տարածքը: Դրանք նույնպես տրոհվեցին ավելի մանր պետական կազմավորումների: Սրանք սեպագրական աղբյուրներում հանդես են գալիս **Խաթթի** ընդհանրական անունով: Ք.ա. VIII դարի վերջերին՝ Ասորեստանի կողմից նվաճվելուց հետո, «Խաթթի» անվանումը դարձավ զուտ աշխարհագրական հասկացություն:

Ամփոփում: *Այսպիսով՝ Ք.ա. III հազ. կեսերից Փոքր Ասիայում պետականության ձևավորման գործընթացն ավարտվեց Ք.ա. XVII դարում Հին խեթական թագավորության ստեղծմամբ: Այն շուտով վերածվեց թերակղզու ամենահզոր պետության, իսկ Ք.ա. XV դարից սկսած՝ ակտիվորեն մուտք գործեց նաև Սիրիա՝ վերածվելով առաջատար ռազմաքաղաքական ուժի: Իր գոյության վերջին երկու դարերի ընթացքում Խեթական տերությունը Առաջավոր Ասիայի ամենախոշոր պետական կազմավորումն էր:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ պետական կազմավորումներ էին ստեղծվել Փոքր Ասիայում Ք.ա. II հազ. սկզբներին: Ո՞ւմ օրոք ավարտվեց Փոքր Ասիայի միավորումը:
2. Ո՞ր ուղղություններով էր Մուրսիլիս I–ը արշավանքներ իրագործում: Ի՞նչ նպատակ էր հետապնդում Տելեպինուսի՝ գահաժառանգման մասին օրենքը:
3. Ե՞րբ է սկսվել Խեթական տերության վերելքը, ո՞ւմ հետ է կապված այն: Նշե՛ք նրա ստեղծած տերության սահմանները:
4. Ներկայացրե՛ք Խեթական տերության անկման պատճառները:

§ 4. ԱՍՈՐԵՍՏԱՆԸ Ք.Ա. III–I ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ

Ասորեստանյան պետության ծնունդը

Աշուր քաղաքը Տիգրիս գետի և նրա վտակ Մեծ Զաբի միախառնման վայրում էր: Քաղաքի անվանումը ծագում է **Աշուր** աստծո անունից: Վերջինս այն լեռան աստվածն էր, որի վրա հիմնվել էր բնակավայրը:

Ք.ա. XX դ. սկզբներին Աշուրում սկսում են մեծ դեր խաղալ աքքադացիները, և այստեղ հաստատվում է աքքադական հարստություն:

Աշուրի պետության (Ասորեստան) վերելքը նախ և առաջ պայմանավորված էր առևտրի և արհեստների զարգացումով: Աշուրով էին անցնում Արևելամիջերկրածովյան ավազանը, Փոքր Ասիան, Հայկական լեռնաշխարհն ու Կովկասը Սիրիային և Միջագետքին կապող առևտրական գլխավոր մայրուղիները: Աշուրն իր առևտրական գաղութները հիմնեց հենց այդ մայրուղիների հանգուցակետերում՝ հումքի աղբյուրներին առավել մոտ, հատկապես Փոքր Ասիայում: Աշուրցի առևտրականները գլխավորապես զբաղվում էին մետաղի հումքի ներմուծմամբ (պղինձ, բրոնզի համաձուլվածք, արծաթ և այլն), ինչից Միջագետքը զուրկ էր: Արտահանում էին գերազանցապես արհեստագործական արտադրանք, ինչպես նաև անագ, որը բերվում էր հեռավոր Աֆղանստանից:

Ք.ա. XIX դ. արևմուտքից դեպի Միջագետք սկսվեց սեմախոս ամորեական ցեղերի (աքքադ. ամուրրու՝ «արևմուտք» բառից) ներհոսքը: Կարճ ժամանակում եկվորները տիրեցին Միջագետքի բերրի հողերին և այստեղ ստեղծեցին իրենց իշխանությունները: Ամորեացիների հարձակումները առևտրական ուղիների և բնակավայրերի վրա խափանեցին առևտուրը, ինչը ծանր անդրադարձավ Աշուրի տնտեսական հզորության վրա: Այդ է պատճառը, որ Աշուրի ազնվականությունը հրավիրեց ամորեական ցեղերից մեկի առաջնորդ **Շամշի-Ադդուին**, որը հռչակվեց Աշուրի արքա:

Նրա իշխանության օրոք Աշուրը նոր վերելք ապրեց՝ ձեռնամուխ լինելով տարածքային

Սալմանասար I–ը կենաց ծառի մոտ

նվաճումների: Շամշի-Ադդուն գրավեց գրեթե ողջ Սիրիան, իսկ արշավանքներից մեկի ժամանակ նրա զորքը դուրս եկավ Միջերկրականի ծովափ: Արևմուտքում տերության սահմանները հասնում էին մինչև **Զագրոսյան լեռներ**:

Սակայն Շամշի-Ադդուի տերությունը կարճատև կյանք ունեցավ: Ամորեացիներն ի վիճակի չեղան յուրացնելու գրավված երկրները, և Շամշի-Ադդուի մահից հետո նրա կերտած տերությունը սկսեց քայքայվել: Շուտով Աշուրը կտրվեց իր փոքրասիական գաղութներից, որոնք քիչ ավելի ուշ դադարեցին գոյություն ունենալուց: Իսկ բուն Աշուր քաղաքը նվաճվեց Բաբելոնիայի արքա Համմուրապիի զորքերի կողմից:

Բաբելոնյան տիրապետությունը ևս երկար չշարունակվեց: Հաջորդ դարում Աշուրը նվաճվեց նորաստեղծ Միտաննիի կողմից և մնաց վերջինիս գերիշխանության տակ մինչև Ք.ա. XIV դ. կեսերը:

Միջին ասորեստանյան պետությունը

Ք.ա. XV դարի սկզբներին Ասորեստանը փորձեր ձեռնարկեց անկախանալու ուղղությամբ: Այդ նպատակով ասորեստանյան արքաները ձգտում էին հենվել Եգիպտոսի վրա: Օգտվելով Միտաննիի ծանր վիճակից՝ Ասորեստանը գրավեց միտաննական որոշ տարածքներ: Ասորեստանի ռազմաքաղաքական վերելքը շարունակվեց հատկապես **Սալմանասար I**-ի օրոք (**Ք.ա. 1263–1234 թթ.**): Նրա զորքերն արևմուտքում հասան մինչև **Կարքեմիշ**: Նա նաև արշավանքներ իրագործեց դեպի Հայկական լեռնաշխարհ՝ բախվելով **Ուրուատրի** միության հետ:

Միջին ասորեստանյան պետությունն իր հզորության բարձրակետին հասավ **Թուկուլթի-Նինուրտա I**-ի իշխանության տարիներին (**Ք.ա. 1233–1197 թթ.**): Նա հերթական անգամ արշավեց Սիրիա՝ այստեղից վերադառնալով հարուստ ռազմավարով և տանելով մոտ 30000 ռազմագերի: Բացի այդ, նրան հաջողվեց անգամ նվաճել Բաբելոնը: Ասորեստանյան արքան արշավանքներ ձեռնարկեց դեպի Հայկական լեռնաշխարհ՝ բախվելով **Նաիրի միության** հետ:

Թուկուլթի-Նինուրտա I-ը դավադրության զոհ դարձավ, և երկիրը, ուր բռնկվել էին գահակալական կռիվներ, առժամանակ նահանջ ապրեց: Ասորեստանը կորցրեց իր նվաճած երկրների մեծ մասը:

Ասորեստանը կարճատև վերելք ապրեց Թիգլաթպալասար I-ի օրոք **Ք.ա. XI դարի** սկզբներին: Նվաճելով Հյուսիսային Սիրիան՝ նա ներխուժեց Հարավարևելյան Փոքր Ասիա: Թիգլաթպալասարը նոր հաղթանակներ տարավ Նաիրյան երկրների նկատմամբ՝ իր արշավանքներից մեկի ժամանակ դուրս գալով Վանա լճի ափեր:

Թիգլաթպալասարի օրոք երկրի առջև ծառացած հիմնական խնդիրը արևմուտքից և հյուսիսից զանազան ցեղերի պարբերական շարժումներն էին դեպի Ասորեստան: Մասնավորապես արամեացիների դեմ պայքարում Ասորեստանը կորցրեց կենսական տարածքներ և գրեթե մեկուկես դար հազիվ էր պահպանում իր գոյությունը:

Ասորեստանի արքա Սարգոն II–ը արքայազն Սինաքերիբի հետ

Նոր ասորեստանյան տերությունը

Տևական անկումից հետո՝ Ք.ա. IX դարի սկզբներին, Ասորեստանը սկսում է վերականգնել ազդեցության նախկին գոտիները: Այս առումով մեծ հաջողությունների հասավ Նոր ասորեստանյան տերության կերտող **Աշուրնաձիրպալ II**-ը (**Ք.ա. 884–858 թթ.**):

Նրա օրոք արևմուտքում Ասորեստանը նվաճեց մինչև Կարքեմիշ ձգվող տարածքը՝ հերթական անգամ հասնելով Եփրատ գետի ափ: Արշավանքներից մեկի ժամանակ նրա զորքերը անգամ դուրս եկան Միջերկրական ծով: Նա հաղթանակներ տարավ նաև Բաբելոնիայի նկատմամբ՝ նրանից նվաճելով բազմաթիվ սահմանային քաղաքներ: Ասորեստանի նվաճողական քաղաքականությունը շարունակեց որդին՝ **Սալմանասար III**-ը:

Իր կառավարման ընթացքում նա տարբեր ուղղություններով ձեռնարկեց ավելի քան 30 արշավանք: Նրա առաջին արշավանքներից մեկն ուղղված էր դեպի Հայկական լեռնաշ-

խարի՝ նորաստեղծ **Ուրարտական պետության** դեմ: Ասորեստանը ստիպված էր նաև ծանր պայքար մղել Սիրիայում:

Սալմանասար III–ի կառավարման վերջին տարիներն անցան ներքաղաքական լարված պայքարում, ինչը կապված էր գահաժառանգության խնդրի հետ: Ասորեստանյան արքան, շրջանցելով ավագ որդուն, գահաժառանգ էր հռչակել իր կրտսեր որդիներից մեկին: Արդյունքում արքայի ավագ որդու գլխավորությամբ բռնկվեց ապստամբություն, որն արագորեն տարածվեց ողջ երկրում: Միայն վեցամյա ծանր պայքարից հետո իրավիճակը կարգավորվեց:

Ք.ա. VIII դարի առաջին կեսին Ասորեստանը կտրուկ անկում ապրեց և մի պահ կանգնեց գրեթե կործանման եզրին: Դա պայմանավորված էր ինչպես տասնամյակներ տևող պատերազմներով, այնպես էլ Վանի թագավորության վերելքով, հատկապես **Արգիշտի I**–ի և **Սարդուրի II**–ի օրոք:

Իրավիճակը փոխվեց **Թիգլաթպալասար III**–ի (**Ք.ա. 744–727 թթ.**) օրոք:

Թիգլաթպալասարը **Ք.ա. 743 թ.** պարտության մատնեց ուրարտական արքա Սարդուրի II–ին, նվաճեց Ուրարտուի գերիշխանության տակ գտնվող մի շարք երկրներ:

Այս հաղթանակները հնարավորություն տվեցին Թիգլաթպալասարին ազատորեն գործելու այլ ուղղություններում: Դեպի արևմուտք ուղղված արշավանքներով նա նվաճեց փյունիկյան ծովափն ու Պաղեստինը՝ հասնելով մինչև Եգիպտոսի սահման: Անգամ եգիպտական փարավոնը ստիպված էր հարկ տալ Թիգլաթպալասարին:

Նրա նվաճումների արդյունքում Ասորեստանի տարածքները կրկնապատկվեցին: Միջագետքի մյուս խոշոր պետությունը՝ Բաբելոնիան, հայտնվեց ասորեստանյան փաստացի շրջափակման մեջ: Բաբելոնիան ապրում էր խոր ճգնաժամ այստեղ ծավալված գահակալական պայքարի պատճառով: Դրանից չհապաղեց օգտվել ասորեստանյան արքան: **Ք.ա. 729 թ.** Թիգլաթպալասարը գրավեց **Բաբելոնը** և հռչակվեց բաբելոնյան արքա:

Ասորեստանի գործուն արտաքին քաղաքականությունը շարունակեց **Սարգոն II**–ը (**Ք.ա. 721–705 թթ.**): Իր կառավարման տարիները նա անցկացրեց՝ պատերազմելով բոլոր ճակատներում: Նա գրավեց Սամարիան և շարժվեց դեպի եգիպտական սահման: Հետագայում Ասորեստանը նույնիսկ իր գերիշխանությունը հաստատեց **Կիպրոսում**: Օգտվելով այն հանգամանքից, որ ուրարտական արքան ծանր պարտություն էր կրել **կիմերական ցեղերից**՝ Սարգոնը **Ք.ա. 714 թ.** խոշոր արշավանք ձեռնարկեց դեպի Ուրարտու, որն ավարտվեց հաղթանակով:

Ասորեստանյան արքան էապես ընդարձակեց երկրի սահմանները նաև Հարավարևելյան Փոքր Ասիայում ի հաշիվ լուվիական պետությունների: Այստեղ, սակայն, **Ք.ա. 705 թ.** տեղի ունեցած ճակատամարտում ասորեստանյան բանակը պարտվեց, զոհվեց նաև Սարգոնը: Գահն անցավ նրա որդի **Սինաքերիբին**:

Հետագա տարիներին ասորեստանցիներից ավելի ու ավելի մեծ ջանքեր էին պահանջվում նվաճված երկրները վերահսկողության տակ պահելու համար: Թեև ասորեստանյան որոշ արքաներ շարունակում էին վարել գործուն նվաճողական քաղաքականություն, սակայն դա նրանց վերջին հաջողությունն էր: Լարված իրավիճակ ստեղծվեց հատկապես ասորեստանյան տիրապետության տակ գտնվող Բաբելոնում, որը մեկ անգամ չէ, որ փորձել էր ապստամբելով հասնել անկախության:

Օգտվելով Ասորեստանում սկսված գահակալական պատերազմներից՝ քաղդեացի ցեղապետ Նաբոպալասարը գրավեց Բաբելոնը և **Ք.ա. 626 թ.** թագադրվեց որպես Բաբելոնիայի արքա: Ծանր պայքարով ազատագրելով իր երկիրը՝ **Նաբոպալասարը** պատերազմը տեղափոխեց ասորեստանյան տարածք: Այս շրջանից սկսած՝ Ասորեստանը ստիպված էր պարզապես գոյության պայքար մղել: **Ք.ա. 612 թ.** մայրաքաղաք Նինվեի անկումից հետո Ասորեստանը, ըստ էության, դադարեց գոյություն ունենալուց, թեև տերության արևմուտքում առժամանակ շարունակում էին պահպանվել ասորեստանյան պետականության ավանդույթները:

Ամփոփում: *Այսպիսով՝ Ք.ա. X դարի վերջերից Ասորեստանը սկսում է աստիճանաբար դուրս գալ շուրջ 150 տարի տևած խոր ճգնաժամից և արդեն հաջորդ դարում տարածապես ընդարձակվում է: Սալմանասար III–ից սկիզբ է առնում Ասորեստանի ծավալման քաղաքականությունը, որն իր բարձրակետին հասավ Թիգլաթպալասար III–ի և Սարգոն II–ի օրոք: Ստեղծվեց մի լայնածավալ տերություն, որը ձգվում էր Իրանական բարձրավանդակից մինչև Միջերկրական ծով և Արևելյան Փոքր Ասիայից ու Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան սահմաններից մինչև Պարսից ծոց: Ասորեստանյան արքաները ձգտում էին այս ընդարձակ տերությունը միավորել մեկ միասնական պետական կառույցում: Ք.ա.VII դարում տերությունը ձեղքեր տվեց, որ պայմանավորված էր նաև նվաճված երկրների ապստամբություններով և ներքաղաքական բարդություններով:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞վ էր պայմանավորված Աշուրի պետության վերելքը: Ի՞նչ էին ներմուծում և արտահանում աշուրցի առևտրականները: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Շամշի–Ադուի մահից հետո նրա կերտած տերությունը սկսեց քայքայվել:
2. Ի՞նչ նպաստավոր պայմաններ էին ստեղծվել Ասորեստանի վերելքի համար: Ո՞ր արքայի օրոք այն հասավ իր հզորության գագաթնակետին:
3. Ե՞րբ է սկսվել Ասորեստանի նոր վերելքը, ո՞ւմ անվան հետ է կապված այն: Ասորեստանի թագավորներից ո՞վ էր փորձում կասեցնել Ուրարտուի վերելքը:
4. Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Թիգլաթպալասար III–ը արքայական իշխանությունն ամրապնդելու նպատակով: Ինչո՞վ ավարտվեց Ասորեստանի և Ուրարտուի հակամարտությունը Թիգլաթպալասար III–ի օրոք: Ներկայացրե՛ք Ասորեստանի արտաքին քաղաքականությունը Սարգոն II–ի օրոք:
5. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Ասորեստանը կործանվեց: Ե՞րբ և ո՞վ հասցրեց Ասորեստանին վերջին հարվածը:

§ 5. ԲԱԲԵԼՈՆԻԱՆ Ք.Ա. II–I ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ

Բաբելոնիան ամորեացիների և կասիտների օրոք

Ք.ա. XX դարում ամորեական ցեղերի մի մասը սկսեց զանգվածաբար հաստատվել Կենտրոնական Միջագետքում: Այստեղ՝ Եփրատ և Տիգրիս գետերի առավելագույն մերձեցման վայրում, նրանք հիմնեցին իրենց թագավորությունը, որի կենտրոն դարձավ **Բաբելոն** քաղաքը:

Սկզբնապես Բաբելոնիան քաղաքական թույլ կազմավորում էր և Միջագետքի կյանքում չուներ էական դերակատարություն: Բաբելոնիայի ռազմաքաղաքական վերելքը սկսվեց **Համմուրապի** արքայի օրոք (**Ք.ա. 1792–1750 թթ.**): Վերջինս նախ և առաջ նվաճեց մի շարք ամորեական ցեղապետություններ և Հարավային Միջագետքի քաղաքներ: Այնուհետև բաբելոնյան զորքերը գրավեցին Աշուրը և հաղթական արշավանքներ կատարեցին դեպի Էլամ: Համմուրապին իր տիրապետությունը հաստատեց ողջ Միջագետքի վրա:

Նա ձգտում էր ռազմական ուժով նվաճված պետությունը ամրապնդել նաև ներսից: Այդ նպատակով նրա հրամանով հավաքվեցին Միջագետքում նախորդ դարաշրջաններում ստեղծված օրենքների ժողովածուները, դրանք հիմնավորապես վերամշակվեցին, և կազմվեց միասնական օրենսգիրք: Դա **միջազգային իրավունքի պատմության մեջ առաջին հիմնավոր փորձն էր իրավական պետության** ստեղծման ճանապարհին:

Համմուրապիի որդու օրոք Բաբելոնիան բախվեց լուրջ խնդիրների հետ: Շուտով Էլամի արքայի արշավանքի հետևանքով Բաբելոնիայի վերահսկողությունից դուրս եկավ Հարավային Միջագետքը: Մինչ այդ նրան մեծ դժվարությամբ էր հաջողվել ճնշել երկրում սկսված ապստամբությունները: Բաբելոնիան աստիճանաբար զիջում էր իր դիրքերը տարածաշրջանում:

Բաբելոնիայի ամորեական հարստությունը անկում ապրեց Ք.ա. **1531 թ.**, երբ խեթական արքա Մուրսիլիս I–ը մտավ Միջագետք և գրավեց Բաբելոնը:

Ամորեական հարստության անկումից հետո քաղաքական գերիշխանությունն անցավ **կասիտական ցեղերին**:

Կասիտներից զգալի ժամանակ և ջանքեր պահանջվեցին՝ երկրում իրենց տիրապետությունը հաստատելու համար: Ամրապնդելով իրենց իշխանությունը՝ կասիտական արքաները իրականացրին շինարարական լայն գործունեություն. վերականգնվեցին կիսավեր տաճարները, կառուցվեցին նորերը: Կասիտ արքա **Կուրիգալզու I**–ը Բաբելոնից ոչ հեռու կառուցեց նոր մայրաքաղաք: Կասիտներն արագորեն ձուլվեցին Միջագետքի բնակչության հետ՝ ընդունելով նրանց մշակույթն ու լեզուն:

Բաբելոնիան կասիտների օրոք վարում էր գործուն արտաքին քաղաքականություն, մի պահ նրանց իշխանությունը տարածվեց նաև Աշուրի վրա: Կասիտ արքա **Կուրիգալզու II**–ը



Համմուրապիի օրենսգրքի քարի վերին հատվածը

հաղթեց Էլամին և գրավեց Սուսան (հետագայի Շոշը): Սակայն վերելքը երկար չշարունակվեց: Հզորացող Ասորեստանը պայքար սկսեց Բաբելոնիայի դեմ, որը վերաճեց տևական հակամարտության: Երկրի գլխին մշտապես կախված էր ասորեստանյան սպառնալիքը: Դրությունը բարդանում էր նաև էլամցիների ձեռնարկած արշավանքների պատճառով: Կասիտները դժվարանում էին անխախտ պահել երկրի սահմանները, ապահովել Բաբելոնիան միջազգային առևտրական ուղիներին կապող ճանապարհների անվտանգությունը:

Ք.ա. XIII դ. խորացավ Բաբելոնիայի քաղաքական անկումը: Ասորեստանի արքա **Թուկուլթի-Նինուրտա I**-ը պարտության մատնեց կասիտ արքային և գրավեց Բաբելոնը:

Սակայն Բաբելոնիային սպառնացող գլխավոր վտանգը ոչ թե Ասորեստանն էր, այլ Էլամը: Բաբելոնիայի վերջին արքան պարտություն կրեց էլամցիներից և գերեվարվեց Էլամ: Բաբելոնը վերածվեց էլամական նահանգի:

Նորբաբելոնյան թագավորության կազմավորումն ու վերելքը

Ք.ա. VIII դ. երկրորդ կեսին Բաբելոնիան նվաճվեց Ասորեստանի արքա Թիգլաթպալասար III-ի կողմից: Դրանից հետո շուրջ հարյուր տարի երկիրը Ասորեստանի տիրապետության տակ էր: Սակայն ասորեստանցիներին չհաջողվեց լիակատար վերահսկողություն սահմանել Բաբելոնիայի նկատմամբ: Բաբելացիներն օգտագործում էին ամեն հարմար առիթ՝ անկախությունը վերականգնելու համար: Այդ պայքարում առաջատար ուժը դարեր առաջ Բաբելոնիայում հաստատված քաղդեական ցեղերն էին: Սովորաբար նրանք դաշնակցում էին Ասորեստանի հակառակորդ Էլամի հետ:

Ք.ա. 626 թ. Նաբոպալասարի գլխավորած պայքարն ավարտվեց Ասորեստանի կործանմամբ: Սկսվեց Առաջավոր Ասիայում նորբաբելոնյան գերիշխանության դարաշրջանը: Բաբելոնիան իր հզորության բարձրակետին հասավ **Նաբուգոդոնոսոր II**-ի օրոք (**Ք.ա. 605-562 թթ.**):

Նաբուգոդոնոսոր II-ը վարում էր ակտիվ արտաքին քաղաքականություն: Նա ձգտում էր դուրս գալ Միջերկրական ծով՝ տիրելու Ասորեստանի նախկին՝ արևմտյան նահանգները: Այստեղ նրա գլխավոր հակառակորդը Եգիպտոսն էր, որը ևս փորձում էր տիրել ասորեստանյան ժառանգությանը: Պայքարն ընթանում էր Սիրիայի, Փյունիկիայի և Պաղեստինի տարածքներում:

Պատերազմն այստեղ ընթանում էր փոփոխակի հաջողությամբ: Միայն **Ք.ա. 597 թ.** բաբելոնյան զորքերը գրավեցին Հուդայի թագավորության մայրաքաղաք **Երուսաղեմը**: Նաբուգոդոնոսորը հրեաների նոր թագավոր նշանակեց և վերադարձավ՝ տանելով հարուստ ռազմավար և շուրջ 10000 գերիների:

Պարսիկ զինվորներ

Եգիպտոսը, սակայն, չէր հաշտվում Բաբելոնիայի հզորության հետ և նրա դեմ էր դրդում պաղեստինյան ու փյունիկյան իշխանություններին: Արդյունքում Բաբելոնիայի տիրապետությունն արևմուտքում ըստ էության վերացվեց: Դրան գումարվեց Հուդայի թագավորության նոր ապստամբությունը:

Նաբուգոդոնոսորը ստիպված էր հերթական անգամ արշավել Պաղեստին: Նրա զորքերը կարողացան այստեղից դուրս մղել եգիպտացիներին, պաշարել Երուսաղեմը և **Ք.ա. 587 թ.** գրավել այն: Նաբուգոդոնոսորը հրամայեց կուրացնել հրեաների թագավորին, նրա որդիները մահապատժի ենթարկվեցին, ազնվականությունը բնաջնջվեց: Հուդայի թագավորությունը վերացվեց և որպես նահանգ կցվեց Բաբելոնիային: Նաբուգոդոնոսորի հրամանով ավերվեցին քաղաքի պարիսպներն ու Երուսաղեմի տաճարը, իսկ բազմահազար բնակիչներ գերեվարվեցին Բաբելոնիա: Բաբելոնյան արքան նաև վերականգնեց իր իշխանությունը փյունիկյան ծովափում:

Նաբուգոդոնոսոր II–ի օրոք Բաբելոնիան ապրում էր ծաղկուն օրեր: Երկրում իրականացվեցին խոշոր շինարարական աշխատանքներ: Դրանց գլուխգործոցը Բաբելոնի պարիսպներն էին և քաղաքի գլխավոր տաճարային համալիրը, ուր վեր էր հառնում **զիկկուրատը** (Բաբելոնյան աշտարակը): Նաբուգոդոնոսորը հիմնեց նաև նշանավոր Կախովի այգիները, որը հետագա ավանդությունը վերագրում էր **Շամիրամին**: Բաբելոնը վերածվեց Առաջավոր Ասիայի խոշորագույն քաղաքի՝ շուրջ 200000 բնակչությամբ:

Բաբելոնիան հետագա արքաների օրոք

Նաբուգոդոնոսորի մահից հետո Բաբելոնիայի խոշոր վաճառականական տները և քրմությունը սկսեցին միջամտել գահակալության խնդրին՝ ձգտելով իշխանության բերել իրենց դրածներին: Ի վերջո գահն անցավ ծագումով արամեացի **Նաբոնիդին** (**Ք.ա. 556–539 թթ.**):

Նաբոնիդը սկսեց բարեփոխել բաբելոնյան դիցարանը: Նա գերագույն Մարդուկ աստծո փոխարեն դիցարանում առաջ էր մղում Լուսնի աստված Սինին, միջամտում էր տաճարների գործերին, քրմապետ էր կարգում իր մերձավորներին: Ժամանակի ընթացքում նա դադարեց մասնակցել Մարդուկ աստծո հետ կապված կարևորագույն ծեսերին:

Նաբոնիդի գործողությունները թշնամաբար ընդունվեցին հատկապես Մարդուկ աստծո քրմերի կողմից: Սակայն նրան աջակցում էր երկրի առևտրական վերնախավը, ինչը հավասարակշռում էր քրմության ընդդիմությանը: Ինքը՝ Նաբոնիդը, վարում էր հենց այս խավի շահերից բխող արտաքին քաղաքականություն:

Ք.ա. 553–552 թթ. նա արշավանքներ ձեռնարկեց դեպի Լիբանան և Պաղեստին: Բաբելոնյան զորքերը Արաբական թերակղզում՝ **Հիջազում**, գրավեցին քարավանային ճանապարհների երկայնքով ընկած մի շարք օազիսներ: Դրանց թվում էին **Տեյման** և **Յաթրիբը** (վերջինս հետագայի **Մեդինան** է՝ իսլամի սրբազան քաղաքներից մեկը): Այստեղով էին անցնում առևտրական կարևոր մայրուղիները, որոնց վերահսկողությունը շահավետ էր Բաբելոնիայի համար: Նաբոնիդը հաստատվեց Տեյմայում՝ այստեղ անցկացնելով տասը տարի: Բաբելոնի կառավարումը նա հանձնարարեց որդուն:

Մինչ արքան գտնվում էր Տեյմայում, լարվեցին Բաբելոնիայի հարաբերությունները պարսկական տերության հետ, որը գրավել էր հարակից երկրները և շրջափակման մեջ վերցրել Բաբելոնիան: Բաբելոնիայի շրջափակումը դժգոհություն առաջացրեց խոշոր վաճառականության մոտ: Մարդուկ աստծո քրմերը ևս միացան դժգոհներին՝ փորձելով իրավիճակն օգտագործել իրենց դիրքերը վերականգնելու համար:

Նաբոնիդի դեմ կազմակերպվեց դավադրություն: Իսկ այդ ժամանակ՝ **Ք.ա. 539 թ.**, Կյուրոսի բանակը ներխուժեց Բաբելոնիա:

Բաբելոնյան զորքերը չկարողացան դիմագրավել պարսիկներին: Շուտով առանց մարտի գրավվեց նաև Բաբելոնը: Գերի ընկած Նաբոնիդը աքսորվեց: Կյուրոսը Բաբելոնիան միացրեց իր տերությանը:

Սրանով ավարտվեց նոր Բաբելոնյան տերության անկախ գոյությունը: Պարսիկները պահպանեցին բաբելոնյան թագավորությունը: Տարիներ անց այն վերածվեց Աքեմենյան տերության սատրապության:

Ամփոփում: *Ուրի III հարստության անկումից հետո Միջագետքում քաղաքական գերիշխանությունը սկսեց անցնել արևմուտքից եկած ամորեական ցեղերի ձեռքը: Վերջիններիս ստեղծած պետություններից էր Բաբելոնիան: Ք.ա. XVIII դ. Բաբելոնիան ռազմաքաղաքական վերելք ապրեց շնորհիվ արքա Համմուրապիի: Ք.ա. XV–XIV դդ. սկսվում է Բաբելոնիայի նոր վերելքը այստեղ հաստատված կասիտական հարստության օրոք: Կասիտական հարստության անկումից հետո Բաբելոնիան ընկավ Ասորեստանի տիրապետության տակ: Ք.ա. 626 թ.՝ անկախանալուց հետո, Բաբելոնիան արագ վերելք ապրեց: Շնորհիվ Նաբուգոդոնոսոր II–ի նվաճումների՝ այն վերածվեց Առաջավոր Ասիայի հզորագույն տերության: Բաբելոնիայի հզորությունը սկսեց տեղի տալ ներքին երկպառակությունների և պարսկական պետության հզորացման պատճառով: Ք.ա. 539 թ. պարսից արքա Կյուրոս Մեծը գրավեց Բաբելոնիան:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ վերականգնվեց Բաբելոնիայի անկախությունը և ո՞ւմ գլխավորությամբ: Ինչի՞ շնորհիվ Բաբելոնիան հաջողության հասավ Ասորեստանի դեմ պայքարում:
2. Ներկայացրե՛ք Նաբուգոդոնոսոր II–ի արտաքին քաղաքականության արդյունքները: Փաստերով հիմնավորե՛ք, որ նրա օրոք Բաբելոնիան իրոք վերելք էր ապրում:
3. Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Նաբոնիդը՝ իր իշխանությունն ամրապնդելու համար: Ինչո՞ւ քրմերի մի մասը թշնամաբար ընդունեց նրա գործողությունները:
4. Որո՞նք էին Բաբելոնիայի անկախության վերացման պատճառները:

§ 6. ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿԸ Ք.Ա. III–I ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ

Էլամը Ք.ա. III–I հազարամյակներում

Ք.ա. III հազ. Իրանական բարձրավանդակի արևմուտքում ձևավորվեցին առաջին քաղաք–պետությունները: Միավորվելով նրանք կազմեցին **Էլամական համադաշնությունը**:

Էլամը առաջիններից էր, որ ենթարկվեց Սարգոն Աքքադացու արշավանքներին: Դրանց արդյունքում Էլամը գրավվեց, երկրում հաստատվեց աքքադական իշխանություն: Աքքադի գոյության շրջանում Էլամը նրա քաղաքական և մշակութային հզոր ազդեցության ներքո էր:

Միջագետքում Ուրի III հարստության պետության ստեղծմամբ սերտ հարաբերություններ հաստատվեցին էլամական պետությունների հետ: Նրանց միջև նույնիսկ կնքվեցին դինաստիական ամուսնություններ:

Իրավիճակը փոխվեց Ուրի III հարստության վերջին շրջանում: Հզորացած Էլամը սկսեց անցնել տարածքային նվաճումների: Հենց Էլամի դեմ պատերազմում անկում ապրեց Ուրի պետությունը: Էլամական աշխարհի վերելքը շարունակվեց նաև հետագայում:

Էլամը սկսեց վարել ակտիվ արտաքին քաղաքականություն: Վերսկսվեցին ռազմական արշավանքները: Էլամի հեղինակությունն էին ընդունում ժամանակի խոշոր պետությունները, այդ թվում՝ Բաբելոնը: Արքա **Ունտաշ–Նապիրիշան** միավորեց էլամական տարածքների մեծ մասը, կառուցեց նոր նստավայր: Սերտ հարաբերություններ հաստատվեցին էլամական և կասիտական արքայատների միջև, կնքվեցին դինաստիական ամուսնություններ:

Երկիրն իր հզորության բարձրակետին հասավ **Շուտրուկ–Նախունտե I** արքայի օրոք: Էլամական արշավանքների թիրախը կասիտական Բաբելոնիան էր: **Ք.ա. 1158 թ.** նա ներխուժեց Բաբելոնիա և գահընկեց արեց բաբելոնյան արքային: Նրա արձանագրությունները հայտնում են բաբելոնյան ավելի քան 700 քաղաքների նվաճման և երկրից տարված հսկայական ռազմավարի մասին: Դեպի Բաբելոն նոր արշավանքի ժամանակ գերի տարվեց կասիտական վերջին արքան: Գերեվարվեց բազմահազար բնակչություն, ավարառության ենթարկվեցին սրբազան քաղաքները: Գերի տարվեցին աստվածների արձանները, այդ թվում՝ Բաբելոնի հովանավոր Մարդուկ աստծո արձանը, ինչպես նաև Համմուրապիի հուշակոթողը, որի վրա արձանագրված էր նրա օրենսգիրքը:

Սակայն Էլամի վերելքը ժամանակավոր էր: Հարավային Միջագետքի Իսսին քաղաքի արքա **Նաբուգոդոնոսոր I**–ը գլխովին ջախջախեց էլամցիներին, վերադարձրեց Բաբելոնիայի գերեվարված աստվածներին:

Էլամական պետության կտրուկ անկումը պայմանավորված էր նաև իրանախոս ցեղերի ներխուժումներով դեպի երկիր: Այնուամենայնիվ, Ք.ա. VIII դ. Էլամը մի վերջին անգամ վերելք ապրեց: Էլամցիներին հաջողվեց ընդարձակել երկրի սահմանները, նաև օժանդակել **քաղդեական ցեղերին**՝ ընդդեմ Ասորեստանի նրանց պայքարում:

Հաջորդ արքաները նույնպես վարում էին հակաասորեստանյան քաղաքականություն՝ շարունակ միջամտելով բաբելոնյան գործերին: Սակայն այս միջամտությունները հիմնականում ձախողվում էին: Ասորեստանի քաղաքականությունը՝ մասնատել Էլամը մի քանի թագավորությունների և կառավարել երկիրը դրածո արքաների միջոցով, ցանկալի արդյունքներ չտվեց: Միայն **Ք.ա. 646 թ.** Ասորեստանը հասավ հաջողության: Գրավվեց մայրաքաղաք **Սուսան**, քանդվեց գլխավոր զիկկուրատ–տաճարը, գերեվարվեց քրմությունը և մեծաքանակ բնակչություն: Դրանից հետո Էլամական համադաշնությունը դադարեց գոյություն ունենալուց:

Պղնձե անոթ էլամի ժամանակաշրջանից

ԱՐԱՄԵՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ



Այդ արշավանքից հետո երկրի լեռնային շրջաններում իրենց գոյությունը պահպանեցին էլամական թագավորության բեկորները: Իսկ Ք.ա. VI դ. կեսերին էլամական վերջին պետական կազմավորումները նվաճվեցին Կյուրոս II–ի կողմից:

Պարսիկները Աքեմենյան տերության կազմավորումից առաջ

Մոտ **Ք.ա. 1000 թ.** Հարավային Իրան մուտք գործեցին հին պարսկական ցեղերը՝ այստեղ հիմնելով իրենց ցեղապետությունները: Դրանցից առավել հզորը **Անշան** և **Պարսումաշ** երկրներն էին: Սկզբնապես սրանք Էլամի գերիշխանության տակ էին: Էլամի անկումից հետո նրանք ճանաչեցին Ասորեստանի գերիշխանությունը: Ասորեստանի անկումից հետո պարսկական ցեղամիություններն ընկան մարական տիրապետության տակ:

Անշանում գահ բարձրացած **Կյուրոս II Մեծը** (պարսկ.՝ **Կուրաշ, Ք.ա. 558–529 թթ.**) պայքար սկսեց մարական գերիշխանությունից ազատագրվելու համար: Երեք տարի տևած պատերազմներում նա պարտության մատնեց մարերին և գրավեց Մարաստանի մայրաքաղաք **Էքբատանը**:

Ազատվելով մարական գերիշխանությունից՝ Կյուրոսը անցավ նոր նվաճումների: Նա գրավեց գրեթե ողջ **Փոքր Ասիան,** հետո՝ նաև **Բաբելոնիան:** Կյուրոսը ստեղծեց Էգեյան ծովից մինչև Հնդկաստան ձգվող աշխարհակալ տերություն: Նա պատրաստվում էր նվաճել նաև Եգիպտոսը, սակայն **Ք.ա. 529 թ. մասագետների** ցեղի դեմ ճակատամարտում պարսկական զորքերը կրեցին ծանր պարտություն, իսկ Կյուրոսը սպանվեց:

Կյուրոսին փոխարինած Կամբիզը շարունակեց հոր նվաճողական քաղաքականությունը՝ **Ք.ա. 525 թ.** գրավելով Մեմֆիսը և Ստորին Եգիպտոսը: Եգիպտոսը վերածվեց պարսկական սատրապության, թեև թագավորական իշխանությունն այստեղ ձևականորեն պահպանվեց. Կամբիզն իրեն հռչակեց նաև Եգիպտոսի փարավոն:

Ք.ա. 522 թ. Կամբիզի դեմ ապստամբեց նրա կրտեր եղբայր **Բարդիան**: Կամբիզը շտապեց հայրենիք, սակայն ճանապարհին մահացավ:

Աքեմենյան առաջին արքաները

Կամբիզի մահից հետո կարճ ժամանակ անց Բարդիան դավադրաբար սպանվեց: Գահին անցավ դավադրության ակտիվ մասնակից, պարսկական ազնվականական խոշոր տներից մեկի ներկայացուցիչ **Դարեհին** (**Ք.ա. 522–486 թթ.**):

Ձգտելով օրինական տեսք հաղորդել իր իշխանությանը՝ Դարեհը հայտարարեց իր նախնիների և Կյուրոսի՝ իբր թե միևնույն տոհմին պատկանելու մասին: Սակայն նրա իշխանությունը պարսիկներից զատ ոչ ոք չճանաչեց: Ենթակա երկրները սկսեցին ապստամբել: Դարեհը ստիպված էր ծանր պատերազմների գնով ճնշել ապստամբությունները: Դարեհ I–ի գահակալությամբ սկսվեց Աքեմենյան տոհմի իշխանության դարաշրջանը:

Ամրապնդելով իր իշխանությունը՝ Դարեհը ձեռնամուխ եղավ բարեփոխումների: Տերությունը բաժանվեց 20 սատրապությունների, որոնցում կառավարում էին արքայատոհմի անդամները կամ նրա մերձավորները: Երկրում ներդրվեց հարկային և դրամական միասնական համակարգ: Կառուցվեց **«Արքայական ճանապարհը»,** որը Էգեյան ծովափի քաղաքները կապում էր մայրաքաղաք Շոշի հետ: Վերակազմավորվեց նաև բանակը, որի հիմքը այսպես կոչված «Անմահների գունդն» էր՝ բաղկացած 10000 մարտիկներից:

Դարեհը ձգտում էր համաշխարհային տիրապետության: Չբավարարվելով տերության սահմաններով՝ նա արշավանք ձեռնարկեց դեպի Հնդկաստան և գրավեց նրա մի մասը: Աքեմենյան զորքերը սկսեցին գրավել Էգեյան ծովի կղզիները, ապա մտան եվրոպական մայրցամաք, ուր նվաճեցին Թրակիան: Պարսիկներին հպատակվեց նաև Մակեդոնիան: Դարեհը, սակայն, անհաջողության մատնվեց սկյութների դեմ ձեռնարկած իր արշավանքում:

Անհաջող էին նաև նրա երկու արշավանքները դեպի մայրցամաքային Հունաստան:



Աքեմենյան արքա Դարեհ I–ը

Աքեմենյան արքան սկսեց նախապատրաստվել նոր արշավանքի, սակայն **Ք.ա. 486 թ.** մահացավ:

Դարեհին հաջորդեց նրա որդիներից Քսերքսես I–ը (**Ք.ա. 486–465 թթ.**): Վերջինս համաշխարհային տիրապետության հասնելու իր ծրագրերով հետ չէր մնում Դարեհից: Արշավելով դեպի մայրցամաքային Հունաստան՝ Քսերքսեսը կարողացավ հասնել մինչև Աթենք, սակայն դրանից հետո նախ ջախջախվեց պարսկական նավատորմը, ապա և ցամաքային բանակը: Քսերքսեսը հրաժարվեց Հունաստանը նվաճելու ծրագրերից:

Քսերքսեսին հաջորդած Արտաքսերքսես I–ը ստիպված էր ընդհատել հույն–պարսկական պատերազմները և կնքել ոչ նպաստավոր հաշտություն, որով աքեմենյան արքան փաստացի կորցնում էր իր գերիշխանությունը Արևմտյան Փոքր Ասիայի նկատմամբ և զրկվում Էգեյան ծովում նավատորմ պահելու իրավունքից:

Աքեմենյան տերության թուլացումը և անկումը

Արդեն Արտաքսերքսեսից հետո պարզորոշ նկատվում էր, որ տերությունը լուրջ խնդիրներ ուներ իր տարածքային ամբողջականության պահպանման հարցում: **Ք.ա. 404 թ.** աքեմենյան նոր արքայի՝ Արտաքսերքսես II–ի դեմ ապստամբեց նրա եղբայր, Փոքր Ասիայի սատրապ Կյուրոս Կրտսերը: Թեև ապստամբությունը ճնշվեց, սակայն տերությունը շարունակում էր ցնցվել առանձին սատրապների և ենթակա երկրների ապստամբություններից: Այս շրջանում աքեմենյաններից անջատվեցին Եգիպտոսը, Կիպրոսը, Խորեզմը և Սոգդիանան: Տերության արևմուտքում բռնկված «**սատրապների մեծ ապստամբության**» ժամանակ Փոքր Ասիան գրեթե տասը տարի անկախ էր աքեմենյան արքայից:

Փլուզվող տերությունը փրկելու մի վերջին ջանք գործադրեց **Արտաքսերքսես III–ը:** Թեև նրան առժամանակ հաջողվեց վերականգնել փլուզվող տերությունը, սակայն հնարավոր չեղավ երկիրը զերծ պահել նոր ցնցումներից: Ինքը՝ արքան, զոհ գնաց պալատական դավադրությանը: **Ք.ա. 336 թ.** գահին բազմեց աքեմենյանների կողմնային ճյուղերից մեկի ներկայացուցիչ, Հայաստանի սատրապ Արշամը՝ ընդունելով տոհմական Դարեհ անունը:

Դարեհ III–ը (**Ք.ա. 336–330 թթ.**) իր կառավարման սկզբում ստիպված էր մեկ անգամ ևս արշավել Եգիպտոս և ճնշել այստեղ բարձրացած ապստամբությունը: Թեև Եգիպտոսը վերանվաճվեց, սակայն Դարեհին վիճակված չէր շարունակել Արտաքսերքսեսի գործը: Աքեմենյան տերությանը սպառնում էր վերելք ապրող Մակեդոնիան:

Աքեմենյան արքան ի վիճակի չեղավ լուրջ դիմադրություն կազմակերպելու Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքի դեմ: Վերջապես **Ք.ա. 331 թ.** Միջագետքի Գավգամելա բնակավայրի մոտ նա ջախջախիչ պարտություն կրեց և փախուստի դիմեց: Շուտով նա սպանվեց իր մերձավորներից մեկի՝ Բակտրիայի սատրապ **Բեսի** կողմից: Դրանից հետո երեք տարում Ալեքսանդրը նվաճեց տերության մնացած տարածքները: Աքեմենյան տերությունը կործանվեց:

Ամփոփում: *Միջագետքին արևելքից հարող բարեբեր շրջաններում Ք.ա. III–I հազ. կազմավորվեցին երկու կարևոր քաղաքակրթական կենտրոններ՝ Էլամը և Աքեմենյան Պարսկաստանը: Էլամը Իրանական բարձրավանդակի առաջին խոշոր պետականությունն էր, որի քաղաքական և մշակութային հենքի վրա Ք.ա. I հազ. ձևավորվեց Աքեմենյան տերությունը: Հին առաջավորասիական պետականությունների նվաճման հետևանքով Աքեմենյան տերությունը դարձավ ժամանակի խոշորագույն պետությունը, որի սահմանները սկսվում էին Էգեյան և Միջերկրական ծովերից և հասնում մինչև Հնդկաստան ու Կենտրոնական Ասիա: Առաջին անգամ ողջ Մերձավոր և Միջին Արևելքը ներառվեցին մեկ պետականության մեջ: Սակայն Աքեմենյաններին չհաջողվեց երկար ժամանակ պահպանել իրենց տերությունը, քանի որ նրանք այդպես էլ չկարողացան ստեղծել քաղաքական, տնտեսական և մշակութային ամենատարբեր կացութաձևերով բնորոշվող երկրների և ժողովուրդների օրգանական միասնություն:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Մինչև ո՞ւր էր ձգվում Կյուրոսի ստեղծած աշխարհակալ տերությունը, ո՞ր երկրներն էին մտնում նրա մեջ: Ինչպե՞ս ավարտվեց Կամբիզի եգիպտական արշավանքը:
2. Ի՞նչ բարեփոխումներ իրականացրեց Դարեհ I–ը: Ներկայացրե՛ք Դարեհ I–ի արշավանքները և դրանց հետևանքները: Ինչպե՞ս ավարտվեցին հույն–պարսկական պատերազմները:
3. Ներկայացրե՛ք իրավիճակը Պարսկաստանում Արտաքսերքսես II–ի կառավարման շրջանում: Ի՞նչ քաղաքականություն էր իրականացնում Արտաքսերքսես II–ը իր թշնամիներին հաղթելու համար: Ինչպե՞ս ավարտվեց Պարսկաստանի բախումը Մակեդոնիայի հետ:

ԲԱԺԻՆ Բ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թեմա 3. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՋՄԱՎՈՐՈՒՄԸ ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ

§1. ՀՈՒՆԱՍՏԱՆԸ ԿՐԵՏԵ-ՄԻԿԵՆՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Մինոսյան Կրետեն

Միջերկրական և Էգեյան ծովերի հանդիպավայրում գտնվող հունական այս ամենախոշոր կղզին ունի նպաստավոր աշխարհագրական դիրք՝ մի կողմից՝ մայրցամաքային Հունաստանի, մյուս կողմից՝ Եգիպտոսի ու Արևելյան Միջերկրականի ծովափի միջև: Արդեն Ք.ա. II հազարամյակի սկզբներին Կրետեի բնակիչները կանոնավոր առևտրական հարաբերություններ ունեին Եգիպտոսի և փյունիկյան քաղաք–պետությունների հետ:

Կրետեն բնականից պաշտպանված էր ծովով և գրեթե անխոցելի էր հակառակորդների համար: Մերձարևադարձային մեղմ կլիման և բերրի հողը լայն հնարավորություններ էին ընձեռում կղզու բնակչության բնականոն զարգացման և տնտեսական վերելքի համար: Դրա շնորհիվ արդեն Ք.ա. III հազ. վերջերին այստեղ ձևավորվեցին մի շարք մանր քաղաք–պետություններ (**Կնոսոս, Մալիա** և այլն):

Կրետեի քաղաքական մասնատվածությունը շարունակվեց մի քանի դար՝ մինչև Ք.ա. XVII–XVI դդ., երբ վերոհիշյալ քաղաք–պետությունները միավորվեցին մեկ պետականության մեջ՝ **Կնոսոսի** գլխավորությամբ: Այս ժամանակաշրջանի Կրետեի պետության պատմության վերաբերյալ պահպանվել են հունական առասպելական պատմություններ, ինչպես նաև նյութական մշակույթի հուշարձաններ: Երկու աղբյուրները լրացնում են միմյանց այն հարցում, որ Կրետեում այս ժամանակաշրջանում գոյություն ուներ հզոր պետականություն, որի ռազմաքաղաքական ազդեցությունը տարածվում էր Էգեյան ծովի շատ կղզիների, ինչպես նաև մայրցամաքային Հունաստանի որոշ շրջանների վրա:

Մայրաքաղաք Կնոսոսի արքայական պալատը առնվազն երկհարկ վիթխարի կառույց էր՝ ընդհանուր շուրջ **16000 քառ. մետր** տարածքով: Միայն առաջին հարկի սենյակների և այլ հարկաբաժինների թիվը հասնում էր **300–ի**: Պալատն ուներ վարչական, բնակելի և տնտեսական հատվածներ: Կնոսոսի պալատի մասին պահպանվել է հունական մի առասպել («**Թեսևսի և Արիադնայի մասին**»), որտեղ այն կոչվում է **Լաբիրինթոս**:

Կրետեի բոլոր բնակավայրերը մեկը մյուսի հետ հաղորդակցվում էին բարեկարգ ճանապարհներով, որոնց մի մասը պատված էր քարե տաշած սալերով: Հատկանշական է, որ Կրետեի ոչ մի քաղաք, այդ թվում՝ Կնոսոսը, չուներ քաղաքային պարիսպներ: Դա վկայում է այն մասին, որ կրետացիները իրենց գոյության համար ներքին կամ արտաքին սպառնալիք չէին տեսնում, այդ պատճառով քաղաքներն ամրացնելը անիմաստ էր:

Հունական առասպելներում որպես Կրետեի հզորագույն արքա է հիշատակվում **Մինոսը**: Ըստ դրանց՝ **Մինոսն** ուներ խոշոր ռազմական նավատորմ, որի օգնությամբ նա վերացրել էր ծովահենությունը, ինչպես նաև տիրել էր Էգեյան ծովին: **Մինոսի** գերիշխանությունը ծովում հույներն անվանում էին **թալասսոկրատիա** (նշանակում է «ծովատիրություն»): Էգեյան ծովի շատ կղզիներում կրետացիները հիմնել էին գաղութներ (օրինակ՝ **Կիկլադյան կղզիներում, Հռոդոսում** և փոքրասիական **Միլեթում**): Իսկ ըստ **Թեսևսի** մասին առասպելի՝ **Մինոսին** հարկատու էր նաև **Աթենքը**:

Կրետեի արքան ուներ անսահմանափակ իշխանություն՝ լինելով միաժամանակ պետության աշխարհիկ և հոգևոր գերագույն ղեկավարը: Արքայական իշխանության այս տեսակը ընդունված է համարել **թեոկրատական** (աստվածապետական):

Կրետեի պետությունը անսպասելիորեն անկում ապրեց: Ք.ա. XV դ. կեսերին Կրետեից հարյուրավոր կիլոմետրեր հեռու ընկած **Սանտորինի** (այժմ՝ **Թերա**) կղզում սկսված վիթխարի ուժգնության հրաբխից դուրս ժայթքած փոշին, տարածվելով դեպի հարավ, հաստ շերտով ծածկեց Կրետեն՝ պատճառելով մարդկային և նյութական խոշոր վնաս: Այդ պահից Կրետեն կտրուկ անկում ապրեց, իսկ որոշ ժամանակ անց նվաճվեց մայրցամաքային Հունաստանից հարձակված **աքայացիների** կողմից:

Միկենյան աշխարհը

Առաջին հունալեզու ցեղերը՝ **աքայացիները**, Հունաստան եկան Ք.ա. XVII–XVI դդ. Փոքր Ասիայից: Աքայացիները մարտունակ էին, տիրապետում էին մարտակառքային ռազմարվեստին և հեշտությամբ իրենց ենթարկեցին այստեղ ապրող ցեղերին: Նրանք հաստատվեցին Կենտրոնական և Հարավային Հունաստանում: Շուտով աքայացիները նվաճեցին Էգեյան ծովի կղզիները, այդ թվում՝ Կրետեն:

Աքայացիները ստեղծեցին մանր պետություններ, որոնցից հատկապես աչքի էին ընկնում **Միկենքը** (սրա անունից էլ այս դարաշրջանը անվանում են «միկենյան»), **Պիլոսը**, **Տիրինթոսը** (բոլորն էլ՝ Պելոպոնեսում) և **Օրքոմենը**: Ի տարբերություն Կրետեի՝ աքայացիների բոլոր բնակավայրերն ամրացված էին հզոր կիկլոպյան պարիսպներով: Օրինակ՝ **Տիրինթոսի** պարսպի մեջ դրված որոշ քարերի քաշը հասնում էր **12 տոննայի**, իսկ արտաքին պարսպի հաստությունը՝ **4,5 մետրի**:

Կազմավորման պահից մինչև միկենյան դարաշրջանի ավարտը մայրցամաքային Հունաստանի քաղաքական կացությունը բնորոշվում է որպես քաղաքական մասնատվածության փուլ: Այստեղ կային տասնյակ խոշոր և մանր պետություններ, որոնց միջև հաճախ պատերազմներ էին ծագում՝ տարածք կամ ռազմավար ձեռք բերելու նպատակով: Միայն հազվադեպ՝ արտաքին վտանգին դիմագրավելու կամ դեպի արտաքին աշխարհ կազմակերպվելիք արշավանքների ժամանակ, միկենյան պետությունները միավորում էին իրենց ուժերը՝ ստեղծելով ժամանակավոր դաշինքներ: Այդպիսին էր նշանավոր Տրոյական պատերազմը, երբ, ըստ Հոմերոսի, ամբողջ միկենյան աշխարհը միավորվեց՝ դեպի Փոքր Ասիա արշավանք ձեռնարկելու նպատակով: Ընդհանրապես, քաղաքական մասնատվածությունը հունական աշխարհի պատմության բնորոշ առանձնահատկությունն էր, որ կապված էր երկրի աշխարհագրական և բնակլիմայական պայմանների հետ:

Միկենյան պետությունները ոչ միայն ուժեղ էին ռազմական առումով, այլև կարողացան ստեղծել ամուր, կենտրոնացված պետական կառավարման համակարգ, ինչպես նաև զարգացած գյուղատնտեսություն, արհեստագործություն և միջազգային առևտրական ցանց: Պելոպոնեսի արևմուտքում գտնվող **Պիլոսի** արքայական պալատի դիվանից հայտնաբերված տեքստերը թույլ են տալիս պատկերացում կազմելու միկենյան պետությունների կառուցվածքի և տնտեսության մասին:

Պետության գլուխ կանգնած էր արքան, որը կոչվում էր **վանակա**: Բնակչության վերնախավը կազմում էին տոհմային ավագանին, քրմությունը և պետական պաշտոնյաները:

Պիլոսի տարածքը բաղկացած էր **16 մարզերից**, որոնք կառավարում էին **վանակայի** նշանակած անձինք: Սրանց հիմնական գործը հարկերի հավաքումն էր: Նրանց էին ենթարկվում բնակավայրերի ղեկավարները՝ գյուղապետերը, որոնք կոչվում էին **բասիլևսներ**:

Արքայապատկան հողերից զատ, գոյություն ունեին նաև տաճարապատկան, ինչպես նաև տոհմային ավագանուն պատկանող հողեր:

Միկենյան պետությունների տնտեսության հիմքը կազմում էր արքայական–տաճարային համակարգը: Սրանցից յուրաքանչյուրում աշխատում էին գյուղական համայնքների հազարավոր բնակիչներ, որոնք զբաղվում էին երկրագործությամբ և արհեստներով: Արհեստավորները գտնվում էին արտոնյալ վիճակում: Նրանք իրենց աշխատանքի համար անհրաժեշտ հումքը ստանում էին պետությունից կամ տաճարից, որոնց էլ

հանձնում էին իրենց արտադրանքը: Պետությունը առանձնահատուկ վերաբերմունք ուներ տնտեսության որոշ ճյուղերի նկատմամբ: Օրինակ՝ մետաղագործությունը համարվում էր պետության մենաշնորհը: Արքայական արհեստանոցներում պատրաստվում էին պատկերազարդ և գունազարդ խոշոր սափորներ (**ամֆորա**), որոնք հիմնականում նախատեսված էին արևելքի երկրներ արտահանելու համար:

Միկենյան պետությունների համար արտաքին առևտուրը տնտեսական մեծ եկամտի աղբյուր էր: Արևելքի երկրների շատ վայրերում միկենցիները հիմնում էին գաղութներ, իսկ արդեն գոյություն ունեցող բնակավայրերում՝ առևտրական կետեր, որոնց միջոցով իրականացվում էր արտաքին առևտուրը:

Միկենյան դարաշրջանի հունական քաղաքակրթության զարգացման բարձր մակարդակի վկայությունն է Կրետեում ստեղծված պատկերային գիրը, որը հետագայում փոխ առան աքայացիները: Դա **գծային** գիրն էր, որը լայնորեն կիրառվում էր պետական և տաճարային վարչակազմերի կողմից:

Լրացուցիչ նյութ

Թուկիդիդես. «Պատմություն»
(հատվածներ)

«Տրոյական պատերազմից առաջ Հելլադան, ակնհայտորեն, համատեղ ուժերով ոչ մի նշանակալից բան չի արել: Ես ենթադրում եմ, որ երկիրը այն ժամանակ դեռևս այդ անունը չէր կրում, իսկ Դևկալիոնի որդի Հելլենից առաջ այն ընդհանրապես գոյություն չուներ, այլ առանձին ժողովուրդներ (ինչպես պելասգները, այնպես էլ ուրիշները) նրան իրենց անունով էին կոչում: Այն բանից հետո, երբ Հելլենը իր որդիների հետ միասին զավթեց իշխանությունը Ֆտիոտիդայում, իսկ մյուս քաղաքները նրան օգնության էին կանչում, առանձին ցեղեր, մեկը մյուսի հետևից արդեն սերտորեն հարաբերվելով, աստիճանաբար սկսեցին հելլեններ կոչվել, սակայն համընդհանուր կիրառում այն ստացավ միայն վերջերս: Դրա լավագույն ապացույցը տալիս է Հոմերոսը: Չէ՞ որ Հոմերոսը, չնայած ապրել է Տրոյական պատերազմից շատ հետո, ոչ մի տեղ բոլոր ցեղերին միևնույն՝ հելլեն անունով չի նշում և ոչ ոքի այդպես չի անվանում, բացի Ֆտիոտիդայից եկած Աքիլլեսի ջոկատից. հենց նրանք էին առաջին հելլենները: Մյուսներին Հոմերոսը իր պոեմներում անվանում է դանայացիներ, արգոսցիներ կամ աքայացիներ: Նա չի օգտագործում նաև «բարբարոսներ» բառը. ակնհայտորեն այն պատճառով, որ հելլենները այն ժամանակ դեռ չէին անջատվել նրանցից և միավորվել միևնույն անունով»:

«Ինչպես մեզ հայտնի է ավանդությունից, Մինոսը տիրակալներից առաջինն էր, ով կառուցեց նավատորմ և իշխանություն ստացավ այսօրվա Հելլենական ծովի (Էգեյան ծով) մեծ մասի նկատմամբ: Նա դարձավ Կիկլադյան կղզիների տիրակալը և այնտեղ առաջին գաղութների հիմնադիրը ու, վտարելով կարիացիներին, այնտեղ կառավարիչներ նշանակեց իր որդիներին: Հենց նա էլ սկսեց ոչնչացնել ծովահեններին, որպեսզի ավելացնի իր եկամուտները, որքան որ նրա ուժերը կներեին»:

Կրետե-միկենյան դարաշրջանի ավարտը. Տրոյական պատերազմը

Հոմերոսի պոեմներում («Իլիական» և «Ոդիսական») նկարագրվող աքայացիների պատերազմն ընդդեմ Տրոյայի իրականում արտացոլում է միկենյան աշխարհի և Փոքր Ասիայի պետությունների միջև տևական հակամարտությունը:

Այդ իրադարձությունների հավաստիությունը ապացուցվում է Ք.ա. XV–XIII դդ. խեթական սեպագիր աղբյուրների տեղեկություններով: Տրոյական պատերազմի բարձրակետը Ք.ա. XIII դ. կեսերին թերակղզու արևմուտքում ծավալված պատերազմներն էին, որոնցից քիչ անց միկենյան պետությունները սկսեցին անկում ապրել:

Միկենյան աշխարհի անկման պատճառը ոչ այնքան հյուսիսից հունալեզու ռազմատենչ դորիական ցեղերի հարձակումներն էին, որքան այս շրջանում Էգեյան ծովի ավազանում և Առաջավոր Ասիայում կլիմայի աստիճանական տաքացումը: Առանց այդ էլ ջրային ռեսուրսներով աղքատ մայրցամաքային Հունաստանում իրար հաջորդեցին չորային տարիները, որոնց հետևանքով բնակչության զգալի մասը ստիպված էր լքել իր բնակավայրերը: Աղետից գերազանցապես տուժեց Հարավային Հունաստանը՝ Պելոպոնեսը:

Միկենցիները սկսեցին զանգվածաբար հեռանալ դեպի Փոքր Ասիա, Սիրիա և Պաղեստին, ինչպես նաև Եգիպտոս: Նրանց մի մասը հեռացավ նաև Ապենինյան թերակղզի և Սիցիլիա կղզի, նույնիսկ Իսպանիա:

Վերոհիշյալ իրադարձությունների հետևանքով միկենյան քաղաքակրթությունը անկում ապրեց: Վերացան պետականությունը, զարգացած քաղաքները, աշխույժ միջազգային առևտուրը և դրա հիմքը կազմող՝ կատարելության հասած արհեստագործության շատ ճյուղեր: Մոռացվեց նաև գծային գիրը: Հունական աշխարհը ընկղմվեց շուրջ երեք դար տևած խոր քաղաքական, տնտեսական և մշակութային ճգնաժամի մեջ:

Մայրցամաքային Հունաստանի բնակչության արտագաղթը ունեցավ նաև այլ հետևանքներ: Այն նպաստեց մի կողմից՝ վաղ հունական քաղաքակրթության, մյուս կողմից՝ Առաջավոր Ասիայի և Արևմտյան Միջերկրականի ժողովուրդների միջև անմիջական տնտեսական և մշակութային շփումների ձևավորմանը և խորացմանը:



Հոմերոս

Բարձրաքանդակ Տրոյական պատերազմի թեմաներով

Ամփոփում: *Այսպիսով՝ Ք.ա. II հազ. մայրցամաքային Հունաստանում և Էգեյան ծովի կղզիներում տեղի ժողովուրդների և եկվոր վաղ հունական ցեղերի մասնակցությամբ ստեղծվեցին առաջին պետականությունները: Դրանք տարածքով փոքր, սակայն ռազմական և տնտեսական առումներով հզոր պետություններ էին, որոնք ակտիվորեն փոխհարաբերվում էին Արևելամիջերկրածովյան ավազանի երկրների հետ: Կրետե–միկենյան դարաշրջանում այդպես էլ չձևավորվեց միասնական պետականություն:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Բնակլիմայական և աշխարհագրական ինչ առանձնահատկություններ ուներ Էգեյան ծովի ավազանի տարածաշրջանը քաղաքակրթության անցման շեմին:
2. Երբ են Կրետե կղզում ձևավորվել առաջին պետականությունները: Ո՞ր պետությունը և երբ քաղաքականապես միավորեց Կրետե կղզին: Ի՞նչ աղբյուրներից ենք մենք իմանում Կրետեի՝ ժամանակին ունեցած ռազմաքաղաքական հզորության մասին:
3. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Կրետեի քաղաքները պարսպապատ չէին: Ո՞վ էր Կրետեի ամենահզոր արքան: Ի՞նչ է նշանակում՝ ա) թալասսոկրատիա, բ) թեոկրատական պետություն: Երբ և ինչո՞ւ անկում ապրեց Կրետեի պետությունը:
4. Երբ և որտեղի՞ց աքայացիները եկան Հունաստան: Ի՞նչ տարածքներում նրանք հաստատվեցին: Որո՞նք էին նրանց ստեղծած պետությունները:
5. Նկարագրե՛ք միկենյան պետությունների կառավարման համակարգը: Նրանց տնտեսության ի՞նչ առանձնահատկություններ կարող եք նշել:
6. Ո՞ր իրադարձությունների պատճառով անկում ապրեց միկենյան քաղաքակրթությունը: Ի՞նչ հետևանքներ ունեցավ այն Հունաստանի համար:

§ 2. ՊՈԼԻՍ

Հոմերոսյան դարաշրջանը

Միկենյան պետությունների անկմանը հաջորդեց շուրջ 300 տարի տևած մի ժամանակաշրջան, որը կոչվում է **Հոմերոսյան դարաշրջան**: Սկսվեց երկարատև ձգնաժամ: Նախկին պետությունների տարածքում բնակություն հաստատած դորիացիները, գտնվելով զարգացման ավելի ցածր աստիճանի վրա, ի վիճակի չէին շարունակելու աքայացիների մշակութային ավանդույթները:

Այս դարաշրջանը Հոմերոսյան է կոչվում Ք.ա. VIII դարում ապրած պոետի անունով: Չնայած իր ստեղծագործությունները նա նվիրել է Տրոյական պատերազմի իրադարձություններին, սակայն շատ հաճախ նկարագրում է տոհմատիրական կարգերին հատուկ կենցաղ: Շատ հերոսներ, Հոմերոսի ներկայացմամբ, ընդամենը գյուղական պարզ կենցաղով ապրող տոհմապետեր են (օրինակ՝ Ոդիսևսը, ով իր հովվի հետ միասին արածեցնում է ընտանի կենդանիներին, ապրում է հողե հատակ ունեցող տան մեջ, այլ ոչ պարսպապատ միջնաբերդերում, որոնք բնորոշ էին միկենյան քաղաք–պետություններին): Այսինքն՝ Հոմերոսը շատ աղոտ պատկերացում ուներ միկենյան դարաշրջանի մասին:

Հոմերոսյան դարաշրջանում Հունաստանը սակավաբնակ երկիր էր, բնակչությունը ապրում էր հիմնականում գյուղական բնակավայրերում: Բնակչության հիմնական զբաղմունքը երկրագործությունն ու անասնապահությունն էին, արհեստները և առևտուրը թույլ էին զարգացած: Արտաքին աշխարհի հետ հարաբերությունները հազվադեպ էին և երկրորդական դեր էին խաղում բնակչության գործունեության մեջ:

Պոլիսի կազմավորումը

Ք.ա. IX դ. վերջերից Հունաստանում նորից սկսում են ձևավորվել պետականություններ, որոնք արդեն հին հույն հեղինակների մոտ ստացել էին **պոլիս** անվանումը (հուն.՝ «քաղաք»): Հունական պոլիսը ավելի լայն իմաստ ուներ: Քաղաք էր կոչվում բուն բնակավայրը և բնակչության կենսագործունեության ոլորտում գտնվող տարածքը: Պոլիսի զարգացման հետ մեկտեղ վերջինս վերածվում է բավական մեծ տարածք ընդգրկող վարչական միավորի՝ պահպանելով այդ անվանումը: Այսպիսով՝ պոլիսը թե՛ քաղաք էր, թե՛ պետություն: Պոլիսի այդ առանձնահատկությունն է պատճառը, որ դրա փոխարեն հաճախ կիրառվում է «քաղաք–պետություն» անվանումը:

Հունական պոլիսները, որպես կանոն, ծագում էին Հոմերոսյան դարաշրջանի ամրացված բնակավայրերից: Հոմերոսյան պոլիսը տվյալ տարածքի միակ բնակավայրն ու վարչական կենտրոնն էր: Բնակչության աճին զուգահեռ հիմնվում են մանր բնակավայրեր, որոնք կոչվում էին **կոմե** (գյուղ): Վերջիններս կամավոր, երբեմն նաև հարկադրաբար կապվում էին պոլիսի հետ (հուն.՝ **սինոյկիզմ**– «համակեցություն»): Պոլիսը վերածվում էր մի քանի բնակավայրերից բաղկացած փոքր պետության: Պոլիսի բնակչությունը սովորաբար քիչ էր. խոշոր քաղաքներ Հունաստանում չկային:

Պոլիսը ինքնակառավարվող ներփակ համայնք էր, որի բնակչությունը բաղկացած էր մեկ կամ մի քանի ցեղերից (Աթենական պետությունում չորս ցեղեր): Այստեղ պետության կառավարմանը՝ տարբեր ընտրովի մարմինների միջոցով մասնակցում էր արական սեռի ողջ ազատ բնակչությունը (հուն.՝ **դեմոս** «ժողովուրդ»): Դեմոսից կազմված ժողովրդական ժողովն էր իրականացնում պոլիսի գերագույն օրենսդիր իշխանությունը: Վերջինիս որոշումները պարտադիր էին բոլորի համար: Այսինքն՝ այստեղ գործում էր հետևյալ սկզբունքը՝ փոքրամասնության ենթարկում մեծամասնության կամքին: Դրա վառ արտահայտությունն էր Աթենքում Կլիսթենեսի մտցրած օրենքը օստրակիզմի մասին, ըստ որի՝ ժողովրդական ժողովի վճռով մարդը կարող էր վտարվել պետությունից, եթե նույնիսկ նա անմեղ էր: Պոլիսը անվերապահորեն տնօրինում էր յուրաքանչյուր քաղաքացու կյանքը և կենցաղը:

Հունական պոլիսում ժամանակի ընթացքում ձևավորվեցին քաղաքային մշակույթի նորմեր, որոնք առանձին փոփոխություններով գոյատևեցին Հունաստանի հետագա պատմության ընթացքում:

Քաղաքի կենտրոնում էր գտնվում հրապարակը՝ ագորան, որտեղ հավաքվում էր ժողովրդական ժողովը: Մնացած ժամանակ գյուղացիների և արհեստավորների համար այն օգտագործվում էր որպես շուկա: Մարդիկ իրենց ազատ ժամանակն անց էին կացնում ագորայում: Ժամանակի ընթացքում ագորայում կառուցվում էին նստարաններ, այունաշար ծածկ: Ագորայի եզրերին կառուցվում էին քաղաքային խորհրդի շենքը և դատարանը:

Քաղաքի կարևորագույն մասն էր համարվում ամրացված միջնաբերդը՝ **ակրոպոլիսը** (հուն.՝ «վերին քաղաք»): Այստեղ էին գտնվում պոլիսի հովանավոր աստծո տաճարը և պոլիսի գանձարանը: Ակրոպոլիսը միաժամանակ ծառայում էր որպես ամրոց, ուր ապաստանում էր բնակչությունը թշնամու հարձակման ժամանակ:

Հունական պոլիսի բնակչության կարևոր զբաղմունքներից էին մարզական խաղերը, որոնց անցկացման համար ստեղծվում էին հատուկ հրապարակներ (**գիմնասիաներ** և **պալեստրաներ**): Համահունական խաղերը սկզբնավորվեցին **Ք.ա. 776 թ.** և անցկացվում էին չորս տարին մեկ անգամ օլիմպիական Զևս աստծո տաճարի հարևանությամբ: Մարզիկի հաղթանակը այդ խաղերում համարվում էր մեծագույն պատիվ ինչպես իր, այնպես էլ իր պոլիսի համար: Օլիմպիական խաղերի ժամանակ դադարում էին պոլիսների միջև մղվող պատերազմները:

Կապված տեղական առանձնահատկությունների հետ՝ Հունաստանում ձևավորվեցին երկու տիպի պոլիսներ, որտեղ ստեղծվեցին պետական կառավարման տարբեր համակարգեր: Դրանց միջև տարբերությունն այն էր, թե հասարակության որ խավի ձեռքում էր իրական իշխանությունը:

Առաջինը **ժողովրդավարական** պոլիսներն էին, որտեղ կառավարման համակարգը ապահովում էր պոլիսի ազատ բնակչության անվերապահ իշխանությունը: Որպես կանոն՝ այդպիսի պոլիսները Հունաստանի առավել զարգացածներն էին: Դա բացատրվում է ավանդական երկրագործական տնտեսավարման հետ մեկտեղ արագ տեմպերով աճող արհեստագործության և առևտրի տեսակարար կշռի աճով: Նրանց հատուկ էր ձեռներեցությունը, տոհմատիրական կարգերի մնացուկների հաղթահարումը և ժողովրդավարական ինստիտուտների մշտական կատարելագործումը: Ժողովրդավարական պոլիսի լավագույն օրինակը Աթենական պետությունն էր:

Ի հակակշիռ դրան՝ Հունաստանում առկա էր խմբիշխանական՝ **օլիգարխիական** (հուն.՝ **օլիգոս՝** «քիչ» և **արխե՝** «իշխանություն» բառերի համադրմամբ, նշանակում է «քչերի իշխանություն») կամ ազնվապետական՝ **արիս-**

Պարթենոն.
Աթենաս աստվածուհու տաճարն Աթենքում

տոկրատական (հուն.՝ **արիստոս**՝ «լավագույն», և **կրատոս**՝ «ուժ, իշխանություն» բառերից) կառավարման համակարգը: Չնայած այստեղ պահպանվում էին ժողովրդավարական հաստատությունները, սակայն ուժեղ էին տոհմատիրական կարգերից պահպանված ավանդույթները: Դրանք ապահովում էին երկրագործության վրա հիմնված տոհմային ավագանու իշխանությունը: Օլիգարխիական պոլիսներից էին Սպարտան, Բեոտիայի պոլիսները իրենց գոյության մեծ մասի ընթացքում, Էվբեայի և որոշ այլ շրջանների պոլիսները:

Ք.ա. VIII–VI դդ. հունական աշխարհից տարբեր ուղղություններով սկսված գաղութացման ընթացքում Միջերկրական և Սև ծովերի ավազաններում կազմավորվեցին հունական հարյուրավոր խոշոր և մանր քաղաքներ: Սրանք ստեղծվում էին իրենց հիմնադիր պոլիսի օրինակով:

Լրացուցիչ նյութ

Թուկիդիդես. «Պատմություն» (հատված)

«Հունական պետությունների բոլոր տիրանները իրենց հոգածությունը բացարձակապես ուղղում էին սեփական շահերին, իրենց անձի անվտանգությանը և իրենց տան բարձրացմանը: Այդ պատճառով պետության կառավարման ընթացքում նրանք գերազանցապես, որքան հնարավոր էր, մտահոգված էին անձնական անվտանգությանն ուղղված ձեռնարկումներով: Նրանք ոչ մի արժանահիշատակ գործ չարեցին, բացի որոշ տիրաններից, ովքեր կռվում էին սահմանամերձ բնակչության դեմ»:

Տիրանիա

Պոլիսի զարգացման սկզբնական շրջանում տոհմատիրական կարգերի քայքայման հետևանքով բնակչության մի զգալի մասի ունեզրկումը հանգեցնում էր ընկերային (սոցիալական) ընդվզումների: Դրա հետ մեկտեղ դեռևս չէին ամրապնդվել կառավարման ժողովրդավարական հաստատությունները, որոնք կպաշտպանեին բնակչության շահերը: Այդ է պատճառը, որ որոշ պոլիսներում ժամանակավորապես առաջ է գալիս միանձնյա կառավարման եղանակ: Դա Հունաստանում ստացել է **տիրանիա** անվանումը: **Տիրան** բառը հույները փոխ էին առել Առաջավոր Ասիայից: Օգտվելով բնակչության ստորին խավերի դժգոհությունից՝ առանձին մարդիկ զենքի ուժով գրավում էին իշխանությունը և սկսում կառավարել միանձնյա՝ հաշվի չնստելով գոյություն ունեցող կառավարման մարմինների հետ:

Տիրանության հաստատմանը հետևում էին տիրանների քաղաքական հակառակորդների ֆիզիկական բնաջնջումը կամ վտարումը, նրանց գույքի բռնագրավումը: Որպես կանոն՝ դրանք հասարակության առավել կազմակերպված խավի ներկայացուցիչներն էին՝ տոհմային ազնվականությունը: Իրենց դիրքերն ամրապնդելու նպատակով տիրանները որոշ քայլեր էին անում դեմոսի պահանջների կատարման ուղղությամբ, որի շնորհիվ էլ եկել էին իշխանության: Օրինակ՝ Աթենքի տիրան **Պիսիստրատը** վտարված ազնվականների հաշվին հող տվեց Ատտիկայի շատ հողազուրկների: Բնակչության համար մշտապես կազմակերպվում էին զանազան միջոցառումներ՝ հասարակական տոնախմբություններ, հյուրասիրություններ, ոմանց տրվում էին նվերներ և այլն:

Տիրանները փորձում էին ամրապնդել իրենց դիրքերը պոլիսում և ստեղծել ժառանգական իշխանություն: Նրանք ձգտում էին ապրել արքայավայել, իրենց շրջապատում էին մշակույթի նշանավոր գործիչներով, ակտիվորեն զբաղվում էին շինարարական գործունեությամբ: Հենց տիրանների տիրապետության շրջանում մի շարք առաջատար պոլիսներ (Աթենք, Կորնթոս, Սամոս, Միլեթ) վերածվեցին բարգավաճող պետությունների: Կորնթոսի տիրան **Պերիանդրոսը** (Ք.ա. 627–585 թթ.) ստեղծեց գաղութային համակարգ: Կորնթոսի գերիշխանության տակ ընկան Էգեյան ծովի կղզիների մեծ մասը, ինչպես նաև Հոնիական և Ադրիատիկ ծովերի շատ կղզիներ:

Տիրանիան հունական հողի վրա ամուր արմատներ չուներ: Հազվադեպ էր տիրաններին հաջողվում միանձնյա կառավարման համակարգը պահպանել իր սերունդների համար: Պատճառն այն էր, որ տիրանիան հունական պոլիսներում ընկերային ամուր հենարան չուներ: Տիրանները հենվում էին միայն դեմոսի ստորին խավի վրա, հակամարտության մեջ էին տոհմային ազնվականության հետ: Տիրանը կարող էր իրեն ամուր զգալ միայն այն դեպքում, երբ պոլիսի քաղաքական և տնտեսական դրությունը բարվոք էր: Արտաքին վտանգի դեպքում այդ համակարգը ձեղք կտար, ինչը և եղավ: Հույն պատմիչները և փիլիսոփաները նշում էին տիրանիայի անհեռանկարայնության մասին: Նրանց կարծիքով՝ տիրանիան անբնական երևույթ է, հիվանդություն, որն առաջ էր եկել քաղաքական և սոցիալական վայրիվերումների հետևանքով: Տիրանիան ավարտվեց Ք.ա. VI դ. վերջերին՝ հույն–պարսկական պատերազմների նախօրեին:

Ամփոփում: *Ք.ա. IX դարում Հունաստանում ավարտվում է Հոմերոսյան դարաշրջանը, և հունական աշխարհը վերստին մուտք է գործում պետականության փուլ: Մայրցամաքային Հունաստանում և Էգեյան ծովի կղզիներում սկսում են կազմավորվել մեծաքանակ փոքր քաղաք–պետություններ՝ պոլիսներ: Կապված տվյալ շրջանի տեղական առանձնահատկությունների հետ՝ պոլիսները, ըստ կառավարման համակարգի, երկու տիպի էին՝ ժողովրդավարական և օլիգարխիական: Որոշ դեպքերում ժամանակավորապես առաջ էր գալիս միանձնյա կառավարման եղանակ՝ տիրանիա:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Բնութագրեք Հոմերոսյան դարաշրջանի Հունաստանը: Որտեղի՞ց է առաջացել անվանումը:
2. Ի՞նչ է պոլիսը: Ե՞րբ է այն առաջացել: Կառավարման ի՞նչ համակարգ ունեին պոլիսները: Ներկայացրեք պոլիսի կառուցվածքը, բնակչության կազմը: Պոլիսի բնակչության համար ի՞նչ նշանակություն ունեին ագորան, ակրոպոլիսը:
3. Մարզական խաղերը ի՞նչ դեր ունեին հույների կյանքում: Ե՞րբ են անցկացվել օլիմպիական առաջին խաղերը:
4. Պոլիսի ի՞նչ տիպեր կային: Բացատրեք «օլիգարխիա» բառի իմաստը: Թվարկեք երկու տիպի պոլիսները:
5. Ինչպե՞ս է առաջացել տիրանիան: Ինչո՞ւ էին տիրանները դեմոսի կարիքներից բխող որոշակի քայլեր անում: Տիրանիան ունեցե՞լ է արդյոք դրական հետևանքներ պոլիսների կյանքում. հիմնավորեք պատասխանը:
6. Որո՞նք էին տիրանիայի անկման պատճառները: Ովքե՞ր են քննադատել տիրանիան և ինչո՞ւ. օգտագործեք նաև լրացուցիչ նյութը:

§ 3. ԱԹԵՆՔ ԵՎ ՍՊԱՐՏԱ

Աթենական պետականության սկիզբը

Մինչև Ք.ա. VIII դ. Աթենքում կառավարում էին ժողովրդական ժողովի կողմից ընտրված և սահմանափակ իշխանություն ունեցող արքաները՝ **բասիլևսները**: Բասիլևսը ընդամենը ցեղապետ էր և կառավարում էր տոհմացեղային սովորութային օրենքներով: Վերջին արքա **Կոդրոսի** մահից հետո աթենական ժողովրդական ժողովը այլևս արքա չընտրեց, այլ ստեղծեց պետական կառավարման նոր համակարգ:

Պետության գլխավոր գործադիր պաշտոնյան կոչվում էր **արքոնտ**, որը կառավարում էր ցմահ: Հետագայում նրա պաշտոնավարման ժամկետը սահմանափակվեց 10 տարով, իսկ ավելի ուշ՝ մեկ տարով: Ավելացվեց նաև արքոնտների թվաքանակը: Պաշտոնավարման ավարտից հետո արքոնտները դառնում էին **արեոպագոսի** անդամներ: Վերջինս ավագների խորհուրդն էր և պետության իրական տերը: Արքոնտներ և արեոպագոսի անդամներ կարող էին լինել միայն **էվպատրիդները** (հուն.՝ «ազնվածիններ»): Աթենքում կար նաև ժողովրդական ժողով՝ **էկլեսիա**, որի դերը այս շրջանում մեծ չէր:

Կառավարման այս համակարգը շարունակում էր տոհմատիրական ժամանակաշրջանում ձևավորված իրողությունները: Փաստացի իշխանությունը էվպատրիդների ձեռքում էր:

Սոլոն

Աթենական պոլիսի ժողովրդավարացման գործընթացը սկսվեց Ք.ա.VI դ. սկզբին և կատարվեց երկու փուլով:

Այդ պահին Ատտիկայի բնակչության սոցիալական և գույքային շերտավորումը հանգեցրել էր բնակչության մի մասի սնանկացման, որը դեմոսի ընդվզումների պատճառ դարձավ: Գիտակցելով վտանգը՝ էվպատրիդները փորձում էին միջոցներ ձեռնարկել անառողջ մթնոլորտի բարելավման ուղղությամբ:

Առաջին փորձը արքոնտ **Դրակոնի** կողմից սովորութային ուժ ստացած բանավոր



Արքոնտ Սոլոն

օրենքների գրի առնումն էր: Սակայն այս ձեռնարկումը սպասվող արդյունքը չտվեց, քանի որ օրենքները վերաբերում էին միայն կենցաղային բնագավառին և չէին առնչվում պետության հիմնախնդիրներին:

Ք.ա. 594 թ. արքոնտ **Սոլոնը** առաջին լուրջ քայլը ձեռնարկեց պետության գոյությանը սպառնացող վտանգը վերացնելու ուղղությամբ:

Նա առաջին հերթին վերացրեց պարտային ստրկությունը: Նույնիսկ Ատտիկայից դուրս ստրկության վաճառված աթենացիները պետական միջոցների հաշվին հետ գնվեցին: Արգելվեց այդուհետև աթենացու ստրկացումը: Այս միջոցառման շնորհիվ օրինականացվեց աթենական քաղաքացու անձնական ազատությունը: Ավելին՝ Սոլոնը քաղաքացիություն շնորհեց Ատտիկայում մշտապես բնակվող օտար պոլիսների շատ ներկայացուցիչների: Սրանով աճեց աթենական քաղաքացիների թվաքանակը:

Մտցվեց գույքային ցենզ, որով բնակչությունը բաժանվեց 4 գույքային խմբերի: Այդուհետև գնահատվելու էին ոչ թե մարդու ծագումը, այլ նրա անձնական արժանիքները: Յուրաքանչյուր ոք հասարակական–պետական սանդուղքով բարձրանալու համար պետք է հենվեր ոչ թե իր նախնիների դիրքի, այլ սեփական աշխատանքի վրա. որքան ավելի շատ արտադրանք, այնքան ավելի բարձր դիրք ու հնարավորություններ:

Սոլոնը ստեղծեց էկլեսիայի կողմից ընտրվող **400-ի խորհուրդ** (**բուլե**), որի կազմում Ատտիկայի 4 ցեղերից յուրաքանչյուրից ներառվեցին 100-ական ներկայացուցիչ: Բուլեն պետք է նախնական քննության ենթարկեր էկլեսիա մտնող բոլոր օրենքների նախագծերը:

Սոլոնը ստեղծեց **ատենակալների դատարան**: Այդ պահից սկսած՝ դատավորները պետք է վերջնական վճիռը թողնեին 12 ատենակալների հայեցողությանը: Այն վերածվեց Ատտիկայի գերագույն դատական մարմնի: Դատական համակարգի այս նորույթը աշխարհի շատ երկրներում գործում է նաև մեր օրերում:

Սոլոնի բարեփոխումները աթենական պետության հետագա զարգացման առումով վիթխարի նշանակություն ունեցան: Դրանք ծանր հարված հասցրին տոհմատիրական կարգերին:

Կլիսթենեսի բարեփոխումները

Աթենական պետության ժողովրդավարացման հաջորդ փուլում կատարվեցին Կլիսթենեսի բարեփոխումները: Դրանցից կարևորագույնը գործադիր իշխանության մարմիններում ընտրության կարգի հիմնավոր ձևափոխումն էր, որը թույլ տվեց ապահովել բոլոր քաղաքացիների մասնակցությունը պետական կառավարմանը:

Այդ նպատակով ողջ Ատտիկան բաժանվեց երեք վարչական շրջանների՝ **ա) Աթենքը՝ իր արվարձաններով, բ) ծովեզերքը** և **գ) ներքին շրջանները**: Սրանցից յուրաքանչյուրը իր հերթին բաժանվում էր թվով **10 տրիտիաների** (մաս): Յուրաքանչյուր երեք շրջանից մեկական տրիտիա միասին կազմում էին **1 ֆիլ** (հուն.՝ «ցեղ»): Այսպես՝ նախկին չորս ցեղային ֆիլերի փոխարեն կազմվեցին **10 տարածքային ֆիլեր**, որոնք էլ (յուրաքանչյուրն առանձին) մասնակցում էին ընտրություններին:

Այս միջոցառման նպատակն էր խառնել բնակչությունը, որպեսզի էվպատրիդները չկարողանային ազդել բնակավայրերի ներքին գործերի վրա:

Տրիտիան իր հերթին բաժանվում էր մի քանի **դեմոսների**: Դեմոսը տնտեսական, վարչական, ռազմաքաղաքական և ծիսական ինքնուրույն միավոր էր, որը ղեկավարում էր ընտրովի **դեմարքոսը**:

Կլիսթենեսը բարելավեց օրենսդիր մարմինների գործունեությունը: **400-ի խորհուրդը** դարձավ **500-ի խորհուրդ**, որում ներգրավվեցին **50-ական ներկայացուցիչ յուրաքանչյուր ֆիլից**: Տարին բաժանվեց 10 մասի, և դրանցից յուրաքանչյուրի ընթացքում էկլեսիա մտնելիք բոլոր օրինագծերը քննարկվում և նախապատրաստվում էին տվյալ 50 անձանց կողմից:

Կլիսթենեսը ստեղծեց **10 ստրատեգոսների կոլեգիա**, որոնք հերթով ղեկավարում էին աթենական աշխարհազորը:

Նա մտցրեց օրենք **օստրակիզմի** մասին: Ըստ դրա՝ յուրաքանչյուր տարվա սկզբին էկլեսիան որոշում էր Ատտիկայից **10 տարի ժամկետով** վտարել այն քաղաքացիներին, ում գործունեությունը կարող էր վնաս հասցնել պետությանը:

Կլիսթենեսի բարեփոխումները կարևորագույն նշանակություն ունեցան աթենական ժողովրդավարության զարգացման համար՝ դառնալով հետագայում Պերիկլեսի օրոք ստեղծված աթենական ժողովրդավարության հիմքը:

Սպարտա

Հունական պոլիսների շարքում Սպարտան ուներ խիստ ընդգծված օլիգարխիական տիպի քաղաքական կառույց: Դրանում վառ արտահայտված էր տոհմատիրական կարգերի վերջին փուլին բնորոշ տոհմային ավագանու անվերապահ իշխանությունը:

Սպարտայում այդպիսի կառույցի առկայությունը պայմանավորված էր հետևյալ հանգամանքով: Կրետե-միկենյան դարաշրջանից հետո Պելոպոնես եկած փոքրաթիվ դորիացիները նվաճել էին տեղի աքայացիներին: Իրենց իշխանությունը պահպանելու համար դորիացիները ստիպված էին մեկուսանալ պետության մնացյալ բնակչությունից, անխախտ պահել սեփական շարքերը: Այդ էր պատճառը, որ Սպարտայում, սպարտիատներից (դորիացիների հետնորդները) բացի, ոչ ոք իրավունք չուներ մասնակցելու պետական կառավարմանը: Պետության բնակչությունը կազմում էին երեք սոցիալական խմբեր:

1) **Սպարտիատներ** — պետության իրավահավասար քաղաքացիներ: Պետության ողջ հողային ֆոնդը համարվում էր սպարտիատների սեփականությունը: Սակայն այդ հողը սպարտիատի մասնավոր սեփականությունը չէր, այլ պատկանում էր պետությանը: Այն տրվում էր օգտագործման համար և կարող էր հետ վերցվել հակապետական արարքի պատճառով: Սպարտիատը իրավունք չուներ հողը վաճառելու, մասնատելու կամ նվիրելու:

2) **Հելոտներ** — դորիացիների կողմից նվաճված աքայացիներ: Նրանց մի քանի ընտանիքներ կցված էին սպարտիատների հողակտորներին: Հելոտներն աշխատում էին սպարտիատի հողի վրա և պարտավոր էին նրան տալ բնամթերային հարկ: Բերքի մյուս մասը հելոտը կարող էր վաճառել, ինչի հաշվին էլ գոյատևում էր նրա ընտանիքը: Հելոտը նույնպես համարվում էր պետության, այլ ոչ սպարտիատի սեփականությունը: Նրանք բացարձակապես իրավազուրկ էին:

3) **Պերիօյկոսներ** — նույնպես աքայացիների հետնորդներ, որոնք ապրում էին պետության սահմանամերձ շրջաններում: Սրանք անձնապես ազատ էին, զբաղվում էին արհեստներով և առևտրով, սակայն զուրկ էին քաղաքացիական իրավունքներից:

Սպարտան ուներ երկու արքա, որոնց գործառույթները հիմնականում ընդգրկում էին ռազմական և ծիսական բնագավառները: Պատերազմի ժամանակ արքաներից մեկը ղեկավարում էր զորքը, իսկ մյուսը մնում էր երկրում: Նրանց իշխանությունը սահմանափակ էր: Իրական իշխանությունն իրականացնում էր 30 հոգուց բաղկացած ավագների խորհուրդը՝ **գերուսիան** (**գերաս՝** «ծերունի» բառից). արքաները նույնպես գերուսիայի անդամներ էին:

Սպարտայի բարձրագույն օրենսդիր մարմինը համարվում էր **ապելլան** (ժողովրդական ժողով), սակայն նրա դերը հասցված էր նվազագույնի: Ապելլան ընդամենը կարող էր հավանություն տալ կամ չտալ գերուսիայի ներկայացրած առաջարկություններին: Ընդհակառակը՝ գերուսիան կարող էր չեղյալ հայտարարել ապելլայի որոշումները:

Սպարտայի գործադիր իշխանության համակարգի կարևոր մասն էին **Էֆորները**: Թվով 5 էֆորներն (ըստ պետության մարզերի քանակի) ունեին գերագույն վերահսկիչ գործա-

Սպարտացիներ. բարձրաքանդակ

ռույթներ: Էֆորներին հաշվետու էին հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչները, այդ թվում՝ արքաները: Նրանք վերահսկում էին ֆինանսները, դատական և ռազմական գործերը: Էֆորները հետևում էին սպարտացիների կենցաղին ու բարքերին, ընդունված սովորույթների պահպանմանը (օրինակ՝ ավելորդ շռայլությունը, մեծամտությունը, անվայել պահվածքը հասարակական վայրերում և այլն):

Պոլիսային համակարգի քաղաքական առանձնահատկությունները

Հունական պոլիսները, անկախ դրանց կառավարման եղանակից (ժողովրդավարական կամ օլիգարխիական), ունեին մի կարևոր առանձնահատկություն: Դա պոլիսի ներսում ազատ, իրավահավասար քաղաքացիների և դրանցից դուրս գտնվող բնակչության հակադրությունն էր, որն արտահայտվում էր պետության քաղաքական կառուցվածքում: Պոլիսի հիմքը կազմում էր մեկ կամ ավելի ցեղերի բնակչությունը, որը իշխանության կրողն էր: Նրանք էին, որ կարող էին ընտրել և ընտրվել պետական պաշտոններում, պատերազմների ժամանակ մասնակցել աշխարհազորին: Օրենքի առջև բոլոր քաղաքացիները հավասար էին: Երկու տիպի պոլիսների միջև տարբերությունը հետևյալն էր: Ժողովրդավարական պոլիսներում ժամանակի ընթացքում ընդարձակվում էին քաղաքացիների իրավունքները և մասնակցությունը պետական կառավարմանը, ինչպես եղավ Աթենքում: Հակառակ դրան՝ օլիգարխիական պոլիսներում փաստացի (սակայն ոչ իրավական) իշխանությունը իրականացնում էր տոհմային ազնվականությունը:

Վերոնշյալ քաղաքական կառուցվածքի գոյությունը հնարավոր էր միայն սահմանափակ տարածք ունեցող պետություններում: Պոլիսի չափից ավելի խոշորացման, դրանում օտար, հավելյալ բնակչություն ներառելու դեպքում պոլիսային կառույցը չէր կարող գործել: Այդ էր պատճառը, որ պոլիսային համակարգին բնորոշ էր պահպանողականությունը: Ավելի ուշ՝ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո, երբ հունական աշխարհը լայնորեն ներթափանցեց Առաջավոր Ասիա, հիմնավորապես փոխվեց պոլիսի բնույթը:

Հին Սպարտայի թատրոնի ավերակները

Ամփոփում: *Ք.ա. IX–VIII դարերում հունական աշխարհում սկսվում է պետությունների՝ պոլիսների ձևավորման գործընթացը: Կապված օբյեկտիվ հանգամանքների հետ՝ առաջ եկան երկու տիպի պոլիսներ, որոնք տարբերվում էին միմյանցից կառավարման եղանակով: Այդ երկու տիպի պոլիսների վառ օրինակն են Աթենքը և Սպարտան: Պոլիսային համակարգի գլխավոր առանձնահատկությունը բնակչության երկու խմբերի՝ քաղաքացիների և ոչ քաղաքացիների հակադրությունն է իրավական առումով:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ն էր Աթենքում կառավարման համակարգը Ք.ա. VIII դարում: Ովքե՞ր էին էվպատրիդները, և կառավարման ի՞նչ համակարգ ստեղծվեց:
2. Ո՞րն էր Ք.ա. VI դարի սկզբում Աթենքի ժողովրդի հաճախակի ելույթների գլխավոր պատճառը: Դրակոնի հրամանով գրի առնված բանավոր օրենքները ինչո՞ւ սպասվող արդյունքը չտվեցին:
3. Վերհանե՛ք Սոլոնի բարեփոխումների նշանակությունը Աթենքի համար: Ի՞նչ էր բուլեն, ովքե՞ր ներառվեցին նրա կազմում: Դատական համակարգի ի՞նչ նորույթ է պահպանվել մինչ օրս:
4. Ի՞նչ բարեփոխումներ իրականացրեց Կլիսթենեսը: Ձեր կարծիքով՝ ո՞րն է դրանցից ամենակարևորը:
5. Բացատրե՛ք էկլեսիա, ֆիլ, դեմոս, դեմարքոս, ստրատեգոս, օստրակիզմ տերմինների նշանակությունը:
6. Ինչո՞վ էին պայմանավորված Սպարտայի քաղաքական կառուցվածքի առանձնահատկությունները: Որո՞նք էին բնակչության երեք հիմնական խմբերը Սպարտայում: Հողի սեփականության ի՞նչ յուրահատկություն կար սպարտացիների պետությունում:
7. Ներկայացրե՛ք Սպարտայի պետական կառավարման մարմինները և դրանց հիմնական գործառույթները:
8. Ո՞րն է պոլիսային համակարգի գլխավոր հակադրությունը: Ինչո՞ւ է այս համակարգը բնութագրվում որպես պահպանողական:

Թեմա 4. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԵԼՔԸ ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ

§ 1. ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԵՎ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՌԱՋԻՆ ԲԱԽՈՒՄԸ

Հոնիական Հունաստանը

Արևմտյան Փոքր Ասիայի առափնյա շրջանները կարևոր տեղ ունեին հունական քաղաքակրթության ձևավորման և զարգացման գործում: Այստեղ առաջին աքայական քաղաքները հիմնվել էին դեռևս Ք.ա. II հազարամյակում և շարունակում էին գոյատևել նաև հետագայում: Դրանք փոքրասիական և հունական աշխարհների հանդիպավայրում էին՝ առևտրական ուղիների վրա, հարուստ էին օգտակար հանածոներով, ունեին բերրի հողեր: Հոնիական քաղաքներից հատկապես աչքի էին ընկնում **Միլեթը, Եփեսոսը** և այլն: Այդ պետությունները արևելյան աղբյուրներում կոչվում էին Հոնիա (այստեղից է հայերենում հույների անվանումը):

Ք.ա. VI դ. վերջերին աքեմենյան արքա Դարեհ I–ը նվաճեց Փոքր Ասիան, մուտք գործեց Բալկանյան թերակղզու հյուսիս և փակեց **Հելլեսպոնտոսով** Էգեյան ծովից դեպի Սև ծով տանող ջրային ուղին: Չնայած Դարեհը անհաջողության մատնվեց սկյութական ցեղերի դեմ արշավանքի ժամանակ, սակայն դա նրան հետ չպահեց Էգեյան ծովի կղզիները և բուն Հունաստանը նվաճելու ծրագրերից: Հունական պոլիսների նվաճումը բխում էր նաև պարսիկների դաշնակից փյունիկյան քաղաքների շահերից: Հույները փյունիկեցիների գլխավոր մրցակիցներն էին Միջերկրածովյան ավազանի միջազգային առևտրում:

Սևծովյան ջրային ուղու փակումը և հոնիական պոլիսների անկումը ծանր հարված էին մայրցամաքային և կղզիական պոլիսների համար, քանի որ դրանով դադարում էր արևելքի երկրների հետ եկամտաբեր առևտուրը, կրճատվում էր նրանց արտաքին շուկան: Դրանից օգտվեցին հույների գլխավոր մրցակիցները՝ փյունիկեցիները:

Հոնիական պոլիսներում Դարեհը ավելացրեց հարկերը, քաղաքներում կառավարող տիրանները փաստորեն վերածվեցին աքեմենյան կառավարիչների: Պոլիսները հատկապես դժգոհ էին աքեմենյան սատրապների ռազմական արշավանքներին պարտադիր մասնակցելուց և հարկադիր աշխատանքներ կատարելուց:

Օգտվելով սկյութական պատերազմում Դարեհի անհաջողությունից՝ հոնիական պոլիսներն ապստամբեցին: **Ք.ա. 499 թ. միլեթցի Արիստագորասը** ապստամբություն բարձրացրեց և օգնության համար դիմեց մայրցամաքային Հունաստանի պոլիսներին: Սակայն նրանցից միայն երկուսը արձագանքեցին. **Աթենքը ուղարկեց 20**, իսկ **Էրետրիան՝ 5 ռազմանավ**: Ապստամբած պոլիսներում վերացվեց տիրանիան, և մտցվեց կառավարման ժողովրդավարական համակարգ:

Հոնիացիների ապստամբությունը անհաջողության մատնվեց, քանի որ հույները չկարողացան միավորել իրենց ուժերը: Յուրաքանչյուր պոլիս մարտնչում էր ինքնուրույն: **Ք.ա. 498 թ.** ապստամբները պարտվեցին **Եփեսոսի**, իսկ **494 թ.՝ Միլեթի** մոտ տեղի ունեցած ճակատամարտերում: **Միլեթ քաղաքը** գրավվեց և ավերվեց: Ապստամբության ճնշումից հետո պարսիկները հնարավորություն ստացան ձեռնարկելու բուն հունական պոլիսների նվաճումը, մանավանդ որ **Աթենքը** և **Էրետրիան** աջակցել էին հոնիական ապստամբությանը: Եվ Դարեհն օգտագործեց այդ առիթը:

Պարսիկների առաջին երկու արշավանքները

Ք.ա. 492 թ. պարսկական բանակը Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան ծովեզերքից նավերով շարժվեց դեպի Հունաստան: Սակայն ճանապարհին ուժեղ փոթորիկը խորտակեց նավատորմի մեծ մասը (**շուրջ 300 նավ**), և պար-

սիկները հետ դարձան: Այս անհաջողությունը չկանգնեցրեց Դարեհին: Նախապատրաստվելով նոր արշավանքի՝ նա դեսպանություն ուղարկեց Հունաստանի առաջատար պոլիսներ՝ պահանջելով ճանաչել իր իշխանությունը: **Թեսալիայի և Բեոտիայի** մի շարք պոլիսներ հնազանդվելու պատրաստակամություն հայտնեցին: Սակայն Աթենքը և Սպարտան կտրուկ մերժեցին և նույնիսկ սպանեցին պարսից դեսպաններին:

Այս անգամ Դարեհը որոշեց անմիջապես հարվածել Աթենքին և Սպարտային: Երկու առաջատար պոլիսների հնազանդեցումը կստիպեր մյուսներին առանց դիմադրության ընդունել Դարեհի գերիշխանությունը: **Դարեհի** նավատորմը, **Ք.ա. 490 թ.** անցնելով Էգեյան ծովը, զորք իջեցրեց Ատտիկայի ափին՝ **Մարաթոնի դաշտում** (Աթենքից շուրջ 40 կմ հեռու):

Պարսիկներին շտապ կերպով ընդառաջ գնաց հունական 11–հազարանոց զորքը: Մի քանի օր հակառակորդները կանգնած էին դեմ դիմաց, սակայն չէին սկսում ճակատամարտը: Աթենացիները սպասում էին օգնական ուժերի Սպարտայից, իսկ պարսիկները՝ Ատտիկայում իրենց կողմնակիցների ապստամբությանը: Ի վերջո պարսիկները որոշեցին իրենց զորքը նավերով փոխադրել Աթենք և գրավել այն, քանի դեռ աթենական զորքը Մարաթոնում էր: Երբ զորքի մի մասը արդեն նավերի վրա էր, աթենացիները հարձակվեցին և պարտության մատնեցին պարսիկներին: Պարսիկների այս արշավանքն էլ անհաջողությամբ ավարտվեց:

Պարսիկների երրորդ արշավանքը

Պարսկական երկու արշավանքները ստիպեցին հունական պոլիսներին համաձայնության գալ միասնաբար պայքարելու պարսիկների նոր արշավանքի դեպքում: **Ք.ա. 481 թ. Իսթմոսում** 31 պոլիսների ներկայացուցիչներ ստեղծեցին ռազմական միություն: Որոշվեց պարսիկների արշավանքի դեպքում միացյալ ուժերի ղեկավարությունը հանձնել Սպարտային՝ որպես ռազմական գործում անվերապահ հեղինակություն վայելող պետության:

Աթենացի զորավար **Թեմիստոկլեսը** կազմեց «ծովային ծրագիրը»: Հաշվի առնելով Ատտիկայի խոցելի դիրքը ցամաքից՝ նախատեսվում էր, որ պարսկական ներխուժման դեպքում Ատտիկայի բնակչությունը պետք է տեղափոխվեր կղզիներ, մինչև նավատորմը և մյուս պոլիսների ուժերը կկարողանային հաջողության հասնել: Այդ նպատակով ստեղծվեց խոշոր ռազմական նավատորմ (**180 ռազմանավ**), ինչպես նաև վերակառուցվեց Աթենքի նավահանգիստ **Պիրևսը**:

Պարսիկների արշավանքը սկսվեց **Ք.ա. 480 թ.**: Աքեմենյան արքա **Քսերքսեսը** հավաքել էր տերության բոլոր ժողովուրդների ռազմական ուժերը, որոնք ավելի քան **1000** փոխադրանավերով և ռազմանավերով ափ իջեցվեցին Բալկանյան թերակղզում: Պարսկական բանակի թիվը շուրջ **300** հազար էր:

Պարսիկները Հունաստանի հյուսիսային առափնյա գոտով ընթացան դեպի **Թերմոպիլյան կիրճ**, որը միջին Հունաստան տանող միակ ճանապարհն էր: Մինչև հունական պոլիսները կհասցնեին հավաքել իրենց ուժերը և դիմադրություն կազմակերպել, Սպարտայի արքա **Լեոնիդասը** իր թիկնապահ գնդով (**300 զինվոր**) ընդառաջ գնաց պարսիկներին և փակեց Թերմոպիլյան կիրճը: Երկօրյա մարտերից հետո սպարտական ջոկատը հերոսաբար զոհվեց, և պարսիկները շարունակեցին իրենց երթը:

Նրանք հասան Ատտիկա, որի բնակչությունը հասցրել էր հեռանալ կղզիներ: Ավերելով Ատտիկայի երկրագործական շրջանները՝ նրանք մտան Աթենք: Հունական միացյալ ուժերի հրամանատարությունը ամուր պատնեշ ստեղծեց **Իսթմոսյան պարանոցում**՝ Պելոպոնեսը պաշտպանելու նպատակով: Ծրագրվում էր այստեղ հավաքել բոլոր ուժերը և վճռական հարված հասցնել հակառակորդին: Նույն թվականին Ատտիկայի ափերին՝ **Սալամին կղզու** մոտ, **Թեմիստոկլեսը** ջախջախեց պարսկական նավատորմը: Այդ պարտությունից հետո **Քսերքսեսը** վերադարձավ Փոքր Ասիա՝ Հունաստանում թողնելով զորքի հիմնական մասը՝ **Մարդոնիոսի** գլխավորությամբ: Վերջինս իր հիմնական ուժերը կենտրոնացրել էր Հյուսիսային Հունաստանում՝ Թեսալիայում:

ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԸ

ՍԱԼԱՄԻՍԻ ԵՎ ՄԱՐԱԹՈՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԵՐԸ
42 կմ 196 մ
Մարաթոն
Աթենք
Սալամին
Պիրեա
Մարաթոնի կզ.
Էգինա կզ.
Մակեդոնիա
Սալոնիկ
Պելլա
Փաստոս կզ.
Ամոս կզ.
Իմբրոս կզ.
Լեմնոս կզ.
Տրոյա (Իլիոն)
Դարդանելներ
Պրոպոնտիս
Սև ծով
Էգեյան ծով
Ամբրակիա կզ.
Էվբեա կզ.
Քիոս կզ.
Սամոս կզ.
Եփեսոս
Միլետոս
Հալիկարնասոս
Արտեմիսի դամբարան
Մաւսոլոսի դամբարան
«Հոլոդների հանգիստ»
Հոռոդոս կզ.
Կոս կզ.
Կրետե կզ.
Կնոսոս
Ֆեստոս
Ռոդոս կզ.
Թեբեն
Դելֆի
Ամֆիպոլիս
Թեսալոնիկ
Ամֆիսա
Ամֆիարեոն
Ամֆիարեոն
Ամֆիարեոն

ռապը ապստամբել էր Աքեմենյան արքայի դեմ: Աթենքի այս ձեռնարկումը նշանակում էր, որ հույները արդեն իրենք էին միջամտում Աքեմենյան տերության ներքին գործերին:

Վերջապես **Ք.ա. 449 թ.** Աքեմենյան տերության մայրաքաղաք **Շուշում** պարսից արքայի և Աթենքի դեսպան **Կալիասի** միջև կնքվեց հաշտության պայմանագիր, որով ավարտվեցին շուրջ կես դար տևած պատերազմները: Ըստ պայմանագրի՝ պարսիկները պարտավորվում էին հրաժարվել Էգեյան ծովի և Հելլեսպոնտոսի (Մարմարա ծով) ավազաններում գերիշխանություն հաստատելու իրենց ծրագրերից: Էգեյան ծովափից եռօրյա ձանապարհի վրա (շուրջ 180–200 կմ) նրանք իրավունք չունեին զորք պահելու: Փոքրասիական հունական քաղաքները, ձևականորեն մնալով Աքեմենյան տերության կազմում, ստանում էին ինքնուրույնություն ներքին հարցերում: Իսկ մայրցամաքային Հունաստանի պոլիսները Փոքր Ասիայի քաղաքներից պետք է հանեին իրենց կայազորները:

Ամփոփում: *Այսպիսով՝ կեսդարյա հույն–պարսկական պատերազմները ավարտվեցին հունական աշխարհի հաղթանակով: Դրանք ցույց տվեցին, որ հունական պոլիսային համակարգը ավելի կենսունակ էր ռազմական և տնտեսական առումներով մեծ գերակշռություն ունեցող Աքեմենյան տերության համեմատությամբ:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Փոքր Ասիայի արևմտյան ծովափնյա շրջաններում հիմնված հունական քաղաք–պետություններից որո՞նք էին նշանավոր: Դարեհ I–ը ե՞րբ նվաճեց այս տարածաշրջանը: Ի՞նչ հետևանք ունեցավ դա հունական պոլիսների համար: Ո՞րն էր հոնիական պոլիսների ապստամբության անհաջողության գլխավոր պատճառը:
2. Որո՞նք էին հույն–պարսկական պատերազմների պատճառները:
3. Նկարագրե՛ք Ք.ա. 490 թ. արշավանքը: Ի՞նչ ազդեցություն ունեցավ պատերազմը հունական պոլիսների փոխհարաբերությունների վրա:
4. Պարզաբանե՛ք Թեմիստոկլեսի կազմած «ծովային ծրագրի» էությունը: Ի՞նչ նշանավոր ճակատամարտեր են տեղի ունեցել երկրորդ և երրորդ արշավանքների ժամանակ:
5. Ո՞ւմ գլխավորությամբ և ե՞րբ ստեղծվեց Դելոսյան միությունը: Գնահատե՛ք Շուշի հաշտության պայմանագիրը հույների և պարսիկների տեսանկյունից:

§ 2. ԱԹԵՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍԿԵԴԱՐԸ

Աթենական ծովային միությունը

Քսերքսեսի նկատմամբ տարած հաղթանակների շնորհիվ վերացավ պարսիկների՝ Հունաստան ներխուժելու սպառնալիքը: Արտաքին վտանգի բացակայությունը բացասաբար ազդեց հունական պոլիսների դաշնակցային հարաբերությունների վրա: Պոլիսների փոխհարաբերություններում առաջացան հակասություններ: Հատկապես վառ դրսևորվեցին երկու առաջատար պոլիսների՝ Աթենքի և Սպարտայի միջև մշտապես առկա հակասությունները: Հենվելով իրենց դաշնակից պոլիսների վրա՝ երկուսն էլ ձգտում էին հնարավորինս ավելի մեծ ազդեցություն ձեռք բերել հունական աշխարհում: Այդ պայքարում նախաձեռնությունը պատկանում էր տնտեսապես ավելի հզոր Աթենքին:

Վերջինս, բացի տնտեսական մեծ ներուժից, նաև հզոր էր ռազմական առումով, քանի որ անհրաժեշտության դեպքում կարող էր օգտագործել Դելոսյան միության ուժերը:

Այս շրջանում Աթենքում մեծ ազդեցություն ձեռք բերած ժողովրդավարական ուժերը, հենվելով Դելոսյան միության ռազմաքաղաքական հզոր ներուժի վրա, սկսեցին ակտիվություն ցուցաբերել արտաքին քաղաքականության մեջ: Միությունը աստիճանաբար սկսում էր վերածվել **Աթենական ծովային միության**, քանի որ դրանում անդամագրված շուրջ **200 պոլիսները** իրականում Աթենքի անվերապահ ազդեցության ներքո էին: Միության անդամների դրամական մուծումները տնօրինում էր Աթենքը: Իր քաղաքականությունից դժգոհ Միության անդամների անջատողականության դրսևորումների դեպքում Աթենքը դիմում էր նույնիսկ հարկադրանքի: Երբ որոշ կղզիական պոլիսներ (օրինակ՝ **Լեսբոս, Քիոս**) փորձեցին դուրս գալ Միությունից, Աթենքը կանխեց դրանք ռազմական միջամտությամբ:

Միաժամանակ Աթենքը ձգտում էր մշտական վերահսկողություն ապահովել այն պոլիսների նկատմամբ, որոնք առանձնապես կապված չէին Միության հետ: Դրանց տարածքում նա հող էր տրամադրում աթենական քաղաքացիներին: Այդպիսի անձինք հողի դիմաց պարտավոր էին զինծառայություն կատարել հօգուտ Աթենքի:

Աթենքի տնտեսական գերակայությունն ապահովելու նպատակով աթենական դրամական միավորը հայտարարվեց պարտադիր Միության ներսում իրականացվող բոլոր գործառնությունների համար: Դրանով Միության անդամները ավելի մեծ կախման մեջ ընկան նրանից:

Միաժամանակ Աթենքը ձգտում էր Միությունն ընդարձակել ի հաշիվ Սպարտայի և նրա դաշնակիցների: Նա աջակցում էր Միությունից դուրս գտնվող՝ այլ պոլիսներում ապրող աթենամետ ուժերին: Դրա շնորհիվ ժողովրդավարական խմբավորումները հաղթանակ տարան մի շարք օլիգարխիական պոլիսներում՝ **Միլեթում, Թեբեում, Արգոսում** և այլ քաղաքներում:

Աթենքի և Սպարտայի պայքարը գերիշխանության համար

Ք.ա. 460 թ. սկսած՝ Աթենքում մեծ հեղինակություն ձեռք բերեց **Պերիկլեսը**, որն անմիջապես սկսեց եռանդուն արտաքին քաղաքականություն վարել:

Օգտվելով Սպարտայի հելոտների ապստամբությունից՝ Պերիկլեսը դաշինք կնքեց Պելոպոնեսի պոլիս **Արգոսի** հետ և դրդեց վերջինիս գրավելու Սպարտայի ազդեցության տակ գտնվող **Միկենք քաղաքը**: Միաժամանակ Աթենքը օգնեց **Մանտինեա քաղաքին** պարիսպներ կառուցել, և վերջինս վերածվեց Պելոպոնեսում Աթենքի հենակետի: **Պերիկլեսը** զորք մտցրեց Սպարտայի դաշնակից **Կորնթոսի** դեմ պատերազմող **Մեգարա**: Աթենքը հակառակորդների հնարավոր հարձակումից պաշտպանելու նպատակով Պերիկլեսը սկսեց «**Երկար պարիսպների**» կառուցումը: Դրանք երկու կողմից պետք է փակեին Աթենքից դեպի նրա նավահանգիստ **Պիրևս** տանող շուրջ **6 կմ** երկարությամբ ճանապարհը:

Աթենական ծովային միության, առաջին հերթին Աթենքի հզորացումը և միջամտությունը Սպարտայի և նրա դաշնակիցների ներքին գործերին առաջ բերեցին օլի-

գարխիական պոլիսների դժգոհությունը: Վերջիններս ռազմական գործողություններ սկսեցին:

Ք.ա. 457 թ. Բեոտիայում սպարտացիները հաղթանակ տարան աթենական զորքի նկատմամբ: Սակայն շուտով Աթենքն անցավ հակահարձակման: Աթենական զորքը պարտության մատնեց **Թեբեին** և իր ազդեցությունը տարածեց **Բեոտիայի** վրա: **Կորնթոսյան պարանոցում՝ Նավպակտոսում,** Աթենքը կառուցեց ամրություններ, որտեղ սկսեցին հավաքվել Սպարտայից փախած հելոտները:

Սակայն Աթենքի հաջողությունները հետագա ընթացք չստացան: Աքեմենյան արքայի դեմ ապստամբած Եգիպտոսի սատրապին որպես օգնություն ուղարկված աթենական նավատորմը **Ք.ա. 454 թ.** պարտություն կրեց, և Աթենքը կորցրեց իր ուժերի մի մասը: Նույն թվականին **Դելոս կղզուց** Աթենք տեղափոխվեց Դելոսյան միության գանձարանը, քանի որ հնարավոր էր պարսկական նոր ներխուժում: Շուտով Աթենքի և Սպարտայի միջև կնքվեց հնգամյա հաշտության պայմանագիր: Աթենքը պարտավորվում էր չմիջամտել Պելոպոնեսի պոլիսների ներքին գործերին:

Մի քանի տարի անց պատերազմը վերսկսվեց, որն ընթացավ ի վնաս Աթենքի: Վերջինիս ազդեցությունից դուրս եկավ Բեոտիան: Շուտով սպարտական զորքը մտավ Ատտիկա, և միայն Պերիկլեսի ջանքերով հաջողվեց **Ք.ա. 445 թ.** սպարտացիների հետ 30 տարով հաշտություն կնքել: Սպարտան պարտավորվեց վերադարձնել Մեգարան, ինչպես նաև Պելոպոնեսում և այլ վայրերում եղած Աթենքի ունեցած բոլոր հենակետերի մեծ մասը: Աթենքն իր հերթին պարտավորվեց Աթենական միության մեջ չընդգրկել Պելոպոնեսյան միության անդամ պոլիսներին:

Աթենքի և Սպարտայի միջև ընթացած երկու պատերազմները ցույց տվեցին, որ հունական աշխարհը խիստ բևեռացված էր: Հունական պոլիսային աշխարհը խմբավորված էր երկու Միություններում, որոնց միջև հակասությունները աստիճանաբար խորանում էին:

Աթենքը Պերիկլեսի օրոք

Աթենացի զինվորի բարձրաքանդակ

Պերիկլեսը հին հունական պատմության առավել աչքի ընկնող քաղաքական գործիչներից էր, ում անվան հետ է կապվում հունական ժողովրդավարության նվաճումների զգալի մասը: Պերիկլեսը հավասարակշռված և հեռատես քաղաքական գործիչ էր, փայլուն հռետոր և իր ժամանակի ամենազարգացած մարդկանցից մեկը: Նրա կարծիքով՝ Աթենքը պետք է դառնար ոչ միայն Հունաստանի քաղաքական առաջնորդը, այլև հունական մշակույթի կենտրոնը: Պերիկլեսի շուրջն էին հավաքված հունական մշակույթի խոշորագույն գործիչները՝ փիլիսոփա **Պրոտագորասը,** ողբերգակ **Սոֆոկլեսը,** քանդակագործ **Ֆիդիասը,** պատմիչ **Հերոդոտոսը** և այլք:

Աթենքում ունեցած իր հեղինակության շնորհիվ Պերիկլեսը, սկսած **Ք.ա. 443 թ., 15 տարի** վերընտրվում էր որպես **առաջին ստրատեգոս**, այսինքն՝ պետության բարձրագույն գործադիր պաշտոնյա: Նա անցկացրեց մի շարք օրենսդրական բարեփոխումներ, որոնց նպատակն էր պետության կառավարման համակարգի կատարելագործումը և ժողովրդավա-

ռացումը: Նրա օրոք հաճախ պետական կառավարման տարբեր, նույնիսկ բարձրագույն մարմիններում ընտրվում էին ստորին խավերի ներկայացուցիչները: Պերիկլեսը հաճախ քվեարկության փոխարեն պաշտոնի էր նշանակում **վիճակահանությամբ**:

Շարքային աթենացիներին պետական կառավարման համակարգում ներառելու նպատակով Պերիկլեսը պաշտոնի դիմաց **վարձատրություն** մտցրեց: Աշխատավարձը սահմանվում էր ոչ թե մեկ ամսվա, այլ ամեն օրվա համար: Չունևոր աթենացիներին կրոնական և այլ տոների ժամանակ դրամ էր բաժանվում՝ թատրոն հաճախելու համար:

Պերիկլեսի օրոք ընդարձակվեց **լիթուրգիայի** (ընծայաբերում) երևույթը: Յուրաքանչյուր հարուստ աթենացի պարտավորվում էր իր անձնական միջոցների հաշվին պետության համար կառուցել նավեր, ֆինանսավորել հասարակական միջոցառումներ:

Պերիկլեսի օրոք էկլեսիան վերածվեց պետության իրական ղեկավար մարմնի: Յուրաքանչյուր 10 օրը մեկ այն հավաքվում էր՝ քննարկելու համար կարևոր պետական գործերը: Էկլեսիան էր ընտրում ստրատեգոսներին և մյուս պաշտոնյաներին, հայտարարում պատերազմ, կնքում պայմանագրեր, ընդունում պետական մարմինների և պաշտոնյաների հաշվետվությունները:

Ընտրովի մարմինների շարքում գլխավոր դերը պատկանում էր **10 ստրատեգոսների խորհրդին**: Սրանք էին ղեկավարում աթենական զորքը և նավատորմը, արտաքին քաղաքականությունը, տնօրինում պետության ֆինանսները:

Պերիկլեսը մտցրեց **բողոքարկման համակարգ**: Ցանկացած ազատ աթենացի իրավունք ուներ բողոքարկելու էկլեսիայի կողմից նախկինում ընդունված օրենքը կամ էկլեսիա մտած օրենքի նախագիծը: Եթե քննության ընթացքում բողոքը դիտվում էր իրավացի, ապա տվյալ օրենքը կամ օրինագիծը չեղյալ էր համարվում, իսկ դրա հեղինակի հանդեպ դատական գործ էր հարուցվում: Ոչ իրավացի բողոքարկման դեպքում բողոքարկողը տուգանվում էր:

Պերիկլես

Պերիկլեսի ստրատեգոսության օրոք ավարտվեց **Երկար պարիսպների** կառուցումը, որի շնորհիվ Աթենքը հուսալիորեն պաշտպանված էր ցամաքային հարձակման դեպքում: Նույնիսկ պաշարման ժամանակ քաղաքը կարող էր անարգել օգտվել իր նավահանգստից՝ դրսից օգնություն ստանալ կամ ծովային գործողություններ վարել:

Պերիկլեսի կառավարման ընթացքում Աթենքը վերածվեց Հունաստանի ժողովրդավարության հենակետի: Ակտիվ արտաքին քաղաքականության շնորհիվ Աթենքի ազդեցությունը տարածվում էր Հունաստանի մեծ մասի վրա: Աթենքը դարձավ Հունաստանի խոշորագույն քաղաքը: Այս շրջանը Աթենական պետության քաղաքական, տնտեսական և հոգևոր–մշակութային հզորության գագաթնակետն էր, որն ընդունված է անվանել «Պերիկլեսյան ոսկեդար»:

Ամփոփում: *Այսպիսով՝ Ք.ա. 470–440–ական թվականներին, հույն–պարսկական պատերազմներին զուգահեռ, հունական պոլիսային աշխարհում ընթանում էր քաղաքական բևեռացման գործընթաց: Դրա երկու կողմերում էին առավել հզոր երկու պոլիսները՝ Աթենքը և Սպարտան, որոնց շուրջը միավորվել էին ժողովրդավարական և օլիգարխիական պոլիսները: Այս երկուսի միջև փոփոխակի հաջողություններով ընթացող պատերազմները նպատակ ունեին հասնելու քաղաքական առաջնայնության: Ք.ա. V դարի կեսերը Աթենական պետության պատմության մեջ իրավամբ համարվում են նրա համակողմանի զարգացման բարձրակետը՝ ոսկեդարը:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ սրվեցին հունական պոլիսների միջև հակասությունները դեռևս հույն–պարսկական պատերազմների ավարտից առաջ: Ո՞ւմ միջև էր ընթանում պայքարը հունական աշխարհում ազդեցություն ունենալու համար:
2. Ինչո՞ւ ենք ասում, որ Դելոսյան միությունը վերածվեց Աթենական ծովային միության: Ի՞նչ միջոցների դիմեց Աթենքը Միությունից դժգոհ պոլիսների նկատմամբ:
3. Ի՞նչ քաղաքականություն էր վարում Պերիկլեսը Սպարտայի և նրա դաշնակիցների դեմ: Ինչո՞ւ կառուցվեցին «Երկար պարիսպները»:
4. Նկարագրե՛ք Աթենքի և Սպարտայի միջև պատերազմի ընթացքը, ներկայացրե՛ք դրա արդյունքները՝ ըստ Ք.ա. 445 թ. կնքված հաշտության պայմանագրի:
5. Ի՞նչ բարեփոխումներ իրականացրեց Պերիկլեսն իր երկարատև կառավարման ընթացքում:
6. Բնութագրե՛ք Պերիկլեսին, գնահատե՛ք նրա պատմական կերպարը:

§ 3. ՊԵԼՈՊՈՆԵՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Պատերազմի առաջին փուլը. Արքիդամոսյան պատերազմը

Աթենքի և Սպարտայի հակամարտությունը, որը վերածվեց պատերազմի և ավարտվեց 30–ամյա խաղաղության պայմանագրով, չվերացրեց Աթենական և Պելոպոնեսյան միությունների միջև հակասությունները: Նույնիսկ պայմանագրի կնքումից հետո թե՛ Աթենքը, թե՛ Սպարտան ձգտում էին ընդարձակել իրենց ազդեցության գոտիները: Շարունակվեց «սպառազինությունների մրցավազքը»: Երկու միությունները պայքարում էին հանուն Հունաստանում գերիշխանության ձեռքբերման, և վաղ թե ուշ նոր բախումն անխուսափելի էր:

Ժամանակ առ ժամանակ տարբեր պոլիսներում տեղի էին ունենում ռազմական գործողություններ Աթենական և Պելոպոնեսյան միությունների անդամների միջև: Տեղի ունեցան մի շարք իրադարձություններ, որոնցից վերջինը Աթենքի և Պելոպոնեսյան միության անդամ Մեգարայի միջև բախումն էր: Աթենքի ժողովրդական ժողովի որոշմամբ արգելվեց Աթենական միության տարածքում Մեգարայի հետ որևէ առևտրական գործարք: Սրանով Մեգարային ծանր տնտեսական հարված էր հասցվում: Պելոպոնեսյան դաշնակիցները Աթենքից պահանջեցին ցրել Միությունը և վտարել Պերիկլեսին: Երկու պահանջներն էլ մերժվեցին, որից հետո սկսվեց պատերազմը:

Նախահարձակը պելոպոնեսցիներն էին: Բեոտիացիները **Ք.ա. 431 թ.** հարձակվեցին Աթենքի դաշնակից **Պլատեայի** վրա: Միաժամանակ Սպարտայի արքա **Արքիդամոսը** մտավ Ատտիկա, որի բնակչությունը ապաստան գտավ քաղաքում: Պերիկլեսը խուսափում էր ցամաքային ճակատամարտից, քանի որ այստեղ պելոպոնեսցիներն առավելություն ունեին: Նրա կարծիքով՝ Ատտիկայի բնակչությունը Աթենքում ապահով կլիներ, իսկ ծովում մեծ առավելություն ունեցող աթենական նավատորմը կարող էր անարգել ասպատակել Պելոպոնեսի ծովափը, ինչը և տեղի ունեցավ: Արքիդամոսը, չփորձելով գրոհել լավ պաշտպանված Աթենքի վրա, հետ դարձավ: Սակայն հաջորդ գարնանը նա կրկին վերադարձավ Ատտիկա: Քաղաքում սկսված ժանտախտի համաճարակը մեծ վնասներ պատճառեց: Հազարավոր մարդիկ զոհ գնացին հիվանդությանը, այդ թվում՝ զինվորներ: Օգտվելով հարմար առիթից՝ Պերիկլեսի քաղաքական հակառակորդները հասան այն բանին, որ **Ք.ա. 430 թ.** նա չընտրվեց առաջին ստրատեգոսի պաշտոնում: Միայն հաջորդ տարի Պերիկլեսը կրկին ընտրվեց ստրատեգոս, սակայն կարճ ժամանակ անց մահացավ:

Պերիկլեսի մահից հետո նրա կողմնակիցների շարքերում առաջացան երկու հակամարտ խմբավորումներ: Բնակչության առավել ապահովված խավը գլխավորում էր **Նիկիասը**, իսկ մյուսները, որոնք աչքի էին ընկնում կտրուկ գործողությունների պահանջով, գլխավորում էր **Կլեոնը**: Վերջինս պահանջում էր վարել ակտիվ ռազմական գործողություններ պելոպոնեսցիների դեմ:

Իսկ պատերազմը շարունակվում էր: Շուտով սպարտացիները գրավեցին Աթենքի դաշնակից **Պլատեա** քաղաքը և բնաջնջեցին ողջ բնակչությանը: **Ք.ա. 425 թ.** աթենական զորավար **Դեմոսթենեսը** զորքով ափ իջավ Պելոպոնեսի արևմտյան ծովափին և գրավեց **Պիլոս քաղաքը**: Միաժամանակ նա գրավեց մոտակայքում գտնվող կղզին, որտեղ գերի վերցվեցին Սպարտայի ազնվականական տոհմերի 120 ներկայացուցիչներ:

Իրենց հերթին սպարտացիները փորձեցին քայքայել Աթենական միության շարքերը: **Ք.ա. 424 թ.** սպարտացի զորավար **Բրասիդասը** շարժվեց հյուսիս: Նրա արշավանքի նպատակն էր հասնել Հյուսիսային Հունաստան և ստիպել այստեղի պոլիսներին դուրս գալ Միությունից: Հասկանալով Բրասիդասի ծրագրից բխող վտանգը՝ աթենական զորքը **Կլեոնի** գլխավորությամբ նույնպես շարժվեց հյուսիս: **Ք.ա. 422 թ.** տեղի ունեցած ճակատամարտն ավարտվեց սպարտացիների հաղթանակով:

Տևական պատերազմը և մեծ զոհերը ստիպեցին հակառակորդներին հաշտության պայմանագիր կնքել: Ըստ **Ք.ա. 421 թ.** կնքված **Նիկիասի** պայմանագրի՝ վերականգնվեց նախապատերազմյան իրավի-

ձակը (**status quo**): Այնուամենայնիվ, պայմանագրի գլխավոր պահանջը չկատարվեց, քանի որ հեշտ չէր վերադարձնել միմյանցից գրավված այն քաղաքները, որտեղ արդեն հասցրել էին հաստատվել ինչպես աթենացիները, այնպես էլ պելոպոնեսցիները: Ըստ էության՝ այս պայմանագիրը ավելի շուտ զինադադար էր:

Սիցիլիական արշավանքը

Նիկիասի հաշտության պայմանագրից մի քանի տարի անց պատերազմը վերսկսվեց, որի համար առիթ դարձավ Սիցիլիայի հունական գաղութների միջև ծագած հակամարտությունը: Սիցիլիական **Սեգեստե քաղաքը** խնդրեց Աթենքին օգնել իրենց Պելոպոնեսյան միության անդամ գաղութների դեմ պայքարում: Հայտնի քաղաքական գործիչ **Ալկիվիադեսը** համոզեց էկլեսիային համաձայնվել այդ առաջարկին:

Ք.ա. 415 թ. 134 նավերից բաղկացած նավատորմը շարժվեց դեպի Սիցիլիա: Նավատորմի շարժվելու նախորդ գիշերը անհայտ անձինք Աթենքում ջարդել էին **Հերմես աստծո** արձանների դեմքերը: Ալկիվիադեսի հակառակորդները արարքի մեղքը բարդեցին նրա վրա, և էկլեսիան որոշեց ձերբակալել Ալկիվիադեսին, ով նավատորմի հրամանատարներից էր: Նավատորմի հետևից նավ ուղարկվեց, որը հետ բերեց Ալկիվիադեսին: Սակայն Աթենքի ճանապարհին նրան հաջողվեց փախչել և ապաստանել Պելոպոնեսում:

Աթենական զորքը Սիցիլիայում սկզբնական հաջողություններից հետո սկսեց պարտություններ կրել: Ալկիվիադեսի խորհրդով Սպարտան զորք ուղարկեց Սիցիլիա, որը Սիրակուզայի հետ դաշնակցեց և շուտով հասավ հաջողության: **Ք.ա. 413 թ.** աթենական զորքը ստիպված էր վերացնել Սիրակուզայի պաշարումը, այնուհետև այն պարտություն կրեց, և զորքի ողջ մնացած մասը հրամանատարների հետ միասին գերի վերցվեց:

Դեկելեյան պատերազմը. պատերազմների ավարտը

Սիցիլիական արշավանքի հետևանքով Աթենքը զրկվեց իր նավատորմի մեծ մասից, որը անմիջապես ազդեց Աթենական միության վրա: Մի շարք պոլիսներ դուրս եկան դրա կազմից: Այլևս չտիրապետելով խոշոր նավատորմի՝ Աթենքը ի վիճակի չէր կանխելու Միության քայքայումը: Միայն **Ք.ա. 412 թ.** Աթենքը կարողացավ կառուցել 150 նոր ռազմանավեր, սակայն ուժերի հարաբերակցությունը արդեն փոխվել էր հօգուտ պելոպոնեսցիների: Սպարտական զորքը գրավեց և իր ռազմական հենակետը դարձրեց Աթենքից 20 կմ հեռավորության վրա գտնվող **Դեկելեյա** քաղաքը (այստեղից էլ պատերազմի այս փուլի անվանումը), որտեղից կազմակերպում էր իր գործողությունները:

Սիցիլիական Սեգեստե քաղաքի ակրոպոլիսը և թատրոնը

Միաժամանակ Սպարտան պարսիկներից ֆինանսական աջակցություն ստացավ և մեծ նավատորմ կառուցեց: Օգնության դիմաց Սպարտան ճանաչեց պարսիկների գերիշխանությունը Փոքր Ասիայի հունական քաղաքների նկատմամբ:

Աթենքի ծայրաստիճան ծանր դրությունը և ժողովրդավարների թուլացումը նպաստեցին օլիգարխների ակտիվացմանը: **Ք.ա. 411 թ.** վերջիններս հեղաշրջում կատարեցին՝ ստիպելով էկլեսիային վերափոխել գոյություն ունեցող կառավարման համակարգը: Ազնվականներից ստեղծված **«400-ի խորհուրդը»** ստացավ գրեթե անսահմանափակ իշխանություն: Խորհրդին էր վերապահված էկլեսիայի նիստերի հրավիրումը: Այն պահանջեց անմիջապես բանակցություններ սկսել Սպարտայի հետ և հաշտություն կնքել: Սակայն հեղաշրջումը հանդիպեց դիմադրության հատկապես **Սամոս կղզու** մոտ կանգնած աթենական նավատորմի կողմից: Օգտվելով նավաստիների և զինվորների դժգոհությունից՝ Պարսկաստանում գտնվող Ալկիվիադեսը եկավ **Սամոս,** և նավատորմը նրան հռչակեց հրամանատար:

«400-ի խորհուրդը» շուտով հանդիպեց լուրջ խնդիրների: Մասնավորապես Սպարտան հաշտության բանակցությունների ժամանակ պահանջեց Աթենքի լիակատար անձնատվություն և Աթենական ծովային միության ցրումը, որը անընդունելի էր: Խորհուրդը ծրագրում էր գաղտնի կերպով Սպարտային հանձնել Պիրևս նավահանգիստը, ինչը հանգեցրեց նրա վարկաբեկմանը: **«400-ի խորհուրդը»** ցրվեց, և վերականգնվեց ժողովրդավարական կառավարման համակարգը: Իր հերթին Ալկիվիադեսը **Հելլեսպոնտոսի** մերձակայքում մի շարք հաղթանակներ տարավ, որով ապահովեց սևծովյան գաղութներից հացահատիկի ստացումը տնտեսական դժվարություններ կրող Աթենքում: Ալկիվիադեսը վերադարձավ Աթենք և ընտրվեց ստրատեգոս: Այս շրջանում ծանրության նժարը թեքվել էր դեպի Աթենական միությունը:

Ք.ա. 408 թ. Սպարտան կրկին իր ձեռքը վերցրեց նախաձեռնությունը հիմնականում պարսիկների նյութական օգնության շնորհիվ: Նույն թվականին սպարտական նավատորմը հաղթանակ տարավ, որից հետո Ալկիվիադեսը ազատվեց իր զբաղեցրած պաշտոնից և հեռացավ Աթենքից:

Ք.ա. 404 թ. կնքվեց պայմանագիր, որը նախատեսում էր Աթենական ծովային միության ցրում, նավատորմի հանձնում հաղթողներին, բացի 12 նավերից, «Երկար պարիսպների» և Պիրևսի ամրությունների քանդում: Բացի այդ, Աթենքը պետք է հրաժարվեր իր բոլոր տարածքներից, բացի Ատտիկայից և Սալամին կղզուց, նա նաև պետք է ընդուներ Սպարտայի գերիշխանությունը:

Պայմանագրով Աթենքում պետք է հաստատվեր օլիգարխիական (խմբիշխանական) կառավարման համակարգ՝ նորաստեղծ «500-ի խորհրդի» գլխավորությամբ: Սակայն շուտով Աթենքում վերականգնվեց ժողովրդավարական կառավարման համակարգը:

Այսպիսով՝ շուրջ քառորդ դար տևած պատերազմները ավարտվեցին Պելոպոնեսյան միության հաղթանակով: Սակայն վերջին հաշվով պատերազմը ծանր հետևանքներ ունեցավ ողջ հունական աշխարհի համար: Այն մարդկային և նյութական մեծ կորուստներ պատճառեց կողմերին:

Պատերազմների ընթացքում դրսևորվեց պոլիսների միջև առկա հակասությունների ողջ խորությունը: Հարկ եղած դեպքում նրանք չէին վարանում օգնության դիմել ոչ հեռավոր անցյալում իրենց գլխավոր հակառակորդ Աքեմենյան տերությանը: Հիմնականում հենց դրա շնորհիվ պելոպոնեսցիները հասան հաջողության: Դրա հետևանքով պարսիկները վերականգնեցին իրենց գերիշխանությունը Փոքր Ասիայում, որը նրանք կորցրել էին հույն-պարսկական պատերազմների ընթացքում:

Հետագա տասնամյակներում հունական հասարակությունը ընկղմվեց խոր քաղաքական և տնտեսական ճգնաժամի մեջ, որի արդյունքում Ք.ա. IV դ. երկրորդ կեսին հանգեցրեց մակեդոնական նվաճման: Հունական պոլիսները այդպես էլ չկարողացան վերականգնվել, քանի որ խոր ճգնաժամ էր ապրում հենց պոլիսային համակարգը:

Ամփոփում: *Հունական պոլիսների միջև առկա հակամարտությունը ավարտվեց շուրջ երեք տասնամյակ տևած համահունական խոշոր պատերազմով: Աթենական միության պարտությամբ ավարտված պատերազմը, սակայն հավասարապես վնաս հասցրեց թե՛ հաղթողներին, թե՛ պարտվողներին: Հունական բոլոր պոլիսները պատերազմից դուրս եկան խոշոր նյութական և մարդկային կորուստներով: Պատերազմը մեծապես նվազեցրեց հունական պոլիսների հզորությունը, որը ձեռնտու էր առաջին հերթին նրանց հիմնական հակառակորդ Աքեմենյան Պարսկաստանին:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ չվերացան Աթենական և Պելոպոնեսյան միությունների միջև առկա հակասությունները: Ի՞նչն էր Պելոպոնեսյան պատերազմի անմիջական առիթը:
2. Նկարագրե՛ք Արխիդամոսյան պատերազմի ընթացքը: Ինչո՞ւ Պերիկլեսին ազատեցին առաջին ստրատեգոսի պաշտոնից: Նրա կողմնակիցները ինչո՞ւ պառակտվեցին երկու խմբավորման, ովքե՞ր էին գլխավորում դրանք:
3. Ե՞րբ կնքվեց Նիկիասի հաշտությունը: Ինչո՞ւ այն երկար չտևեց:
4. Պարզաբանե՛ք Սիցիլիական արշավանքի պատճառները: Ի՞նչ հետևանք ունեցավ այն Աթենքի համար:
5. Ներկայացրե՛ք Դեկելեյան պատերազմի ընթացքը և արդյունքները: Ինչո՞ւ պարսիկները ֆինանսական աջակցություն ցույց տվեցին Սպարտային:
6. Ե՞րբ ավարտվեց Պելոպոնեսյան պատերազմը: Ի՞նչ հետևանքներ ունեցավ այն Աթենքի, ինչպես նաև ամբողջ հունական աշխարհի համար:

§ 4. ՎԱՂ ՀՌՈՄԸ

Հին Իտալիայի բնակիչները

Ապենինյան թերակղզին, շնորհիվ մեղմ մերձարևադարձային կլիմայի, ջրի բավարար պաշարների և Միջերկրական ծովում ունեցած կենտրոնական դիրքի, հնագույն ժամանակներից իրեն էր ձգում տարբեր ժողովուրդների:

Ք.ա. III–II հազարամյակներում Իտալիայի բնակչությունը համեմատաբար նոսր էր: Այս շրջանում դեռևս գոյություն չուներ պետականություն: Իտալիայի այս ժամանակաշրջանի ժողովուրդների միայն անուններն են պահպանվել որոշ տեղանուններում, օրինակ՝ **լիգուրներ** կամ **լիգեր** (Լիգուրիական ծով), **սարդեր** (Սարդինիա կղզի), **կորսեր** (Կորսիկա կղզի) և այլն: Իրավիճակը փոխվում է Ք.ա. II հազարամյակի վերջերին: Մի քանի ալիքներով Ալպյան լեռնանցքներով թերակղզի եկան իտալական ցեղերը: Սրանցից **լատինները** հաստատվեցին Իտալիայի կենտրոնական մասում, որոնց անունով էլ հետագայում կոչվեց Լացիում մարզը՝ Հռոմ կենտրոնով: Փոքր Ասիայից Իտալիա եկան **Էտրուսկները**: Նրանց զբաղեցրած տարածքը հետագայում կոչվեց **Էտրուրիա**:

Իտալիայի բնակչության շարքում զգալի էր հույների դերը, որոնք այստեղ էին հաստատվել Ք.ա. VIII–VI դդ.՝ հիմնելով տասնյակ գաղութներ: Դրանցից աչքի էին ընկնում **Կապուան, Նեապոլիսը, Տարենտումը, Սիրակուզան** և այլն:

Իտալիայի էտրուսկյան պետությունները

Էտրուսկները միասնական ժողովուրդ չէին, այլ բաղկացած էին ինքնուրույն ցեղախմբերից: Էտրուրիա մարզում նրանք հիմնեցին բազմաթիվ քաղաքներ, որոնց մի մասը միավորված էր ժամանակավոր միություններում: Ըստ ավանդույթի՝ գոյություն ունեին **12–ական քաղաքներից** բաղկացած միություններ: Էտրուսկյան քաղաքներից իրենց նշանակությամբ առանձնանում էին **Վեյքը** (Հռոմի մոտ), **Պերուզիան** (այժմ՝ **Պերուջա**), **Տարքվինիումը** և այլն:

Սկզբնական շրջանում քաղաքները կառավարվում էին արքաների կողմից: Սակայն հետագայում նրանց փոխարեն սկսեցին ընտրել կառավարիչներ ազնվականության շարքերից:

Բարձր կազմակերպվածության, ռազմական և ծովագնացության բնագավառներում ունեցած հմտությունների շնորհիվ էտրուսկյան քաղաքները մեծ ազդեցություն ձեռք բերեցին: Էտրուսկները սկսեցին ծավալել գաղութացման քաղաքականություն:

Էտրուսկների և հույների մրցակցությունը հանգեցրեց ռազմական բախման: **Ք.ա. 535 թ. Կորսիկայի** ափերի մոտ էտրուսկյան–կարթագենյան միացյալ նավատորմը պարտության մատնեց հույներին: Սակայն հույների և էտրուսկների հետագա մրցակցությունը ավարտվեց վերջիններիս պարտությամբ: Որոշ ժամանակ անց վերացավ էտրուսկների ազդեցությունը **Լացիում մարզի** նկատմամբ: Իսկ ավելի վաղ Հռոմից վտարվեցին էտրուսկյան արքաները: Նրանք կորցրին նաև Իտալիայի հյուսիսը, որտեղ հաստատվեցին հյուսիսից ներխուժած գալլերը:

Էտրուսկները հմուտ շինարարներ էին հատկապես քաղաքաշինության ասպարեզում: Քաղաքները կառուցվում էին միասնական հատակագծով: Ապագա քաղաքի տարածքի սահմանները գութանով փորում էին, այնուհետև սկսում էին կառուցել պարիսպներ և վարչական շենքեր: Քաղաքի կենտրոնում էր գտնվում աստծո պունազարդ տաճարը: Քաղաքը ուղիղ փողոցներով բաժանվում էր թաղամասերի:

Էտրուսկները երկրպագում էին բազմաթիվ աստվածների, որոնց գլխավորը **Վերտումնումն** էր: Աստվածների կամքը մարդկանց հասցնելու համար տաճարներում կային գուշակներ, որոնք թռչունների և կենդանիների ներքին օրգանների հետազոտման վրա կատարում էին գուշակություններ: Հետագայում այդ սովորույթը լայնորեն տարածվեց հռոմեացիների մոտ, որոնց տաճարներում կային թռչունների ներքին օրգանների վրա գուշակություններ կատարող քրմեր (**ավգուրներ**):

Էտրուսկները խոր հետք են թողել ապագա Հռոմեական պետության քաղաքական և հոգևոր–մշակութային զարգացման վրա: Մասնավորապես լատինական այբուբենի հիմքում ընկած է էտրուսկյան գիրը:

Էտրուսկյան մշակույթի պահպանված որմնանկար

Արքայական Հռոմը

Ապագա Հռոմեական պետությունը ձևավորվեց լատիններով և այլ ցեղերով բնակեցված **Լացիում մարզում**՝ նավարկելի **Տիբր գետի** ափերին: Մինչև **Ք.ա. VIII դ.** գետի ափերին ընկած յոթ բլուրների վրա կային տասնյակ մանր բնակավայրեր: Յոթ բլուրների միջև ընկած հարթ տեղանքում էր գտնվում շրջակայքի բնակչության հավաքատեղին և շուկան՝ **Ֆորումը**: Ժամանակի ընթացքում բնակավայրերը միավորվեցին, և արդյունքում ձևավորվեց Հռոմ քաղաքը: Հետագայում Կապիտոլիում բլրի վրա կառուցվեցին ամրոց և **Յուպիտեր աստծո տաճարը**: Կապիտոլիումը վերածվեց Հռոմի ռազմաքաղաքական և կրոնական կենտրոնի:

Ըստ ավանդության՝ Հռոմի հիմնադիր Հռոմուլոսից հետո՝ ընդհուպ մինչև Ք.ա. VI դ. վերջերը, Հռոմում գոյություն ուներ արքայական իշխանություն: Պատմիչները վերոհիշյալ արքաներից յուրաքանչյուրի հետ Հռոմի պատմության որոշակի իրադարձություն էին կապում:

Հռոմուլոսից հետո արքա դարձավ **Նումա Պոմպիլիոսը**, որը սահմանեց աստվածների պաշտամունքը, հիմնեց հոգևոր և արհեստավորական խորհուրդներ:

Հաջորդը ռազմատենչ **Տուլլիոս Հոստիլիոսն** էր, որը գրավեց և ավերեց **Ալբա-Լոնգան**, իսկ նրա բնակիչներին վերաբնակեցրեց Հռոմում:

Չորրորդ արքա **Անկոս Մարցիոսը** նույնպես պատերազմներ էր մղում հարևանների դեմ: Բացի այդ, նա կառուցեց կամուրջ Տիբրի վրա, որով քաղաքի երկու մասերը կապվեցին միմյանց հետ: Նա Տիբրի գետաբերանի մոտ՝ ծովափին, կառուցեց Հռոմի առաջին գաղութը՝ **Օստիա նավահանգիստը**:

Հինգերորդ արքան էտրուսկ **Տարքվինիոս I-ն** էր: Սա աչքի ընկավ շինարարական գործունեությամբ: Հռոմում կառուցվեց կրկես, **Կապիտոլիումի** բլրի վրա տաճար, ստորգետնյա կոյուղի:

Նրան փոխարինեց **Սերվիոս Տուլլիոսը**, որի գործունեությունը ուղղված էր հռոմեական հասարակության մեջ սոցիալական բարեփոխումներին: Բացի այդ, Հռոմի շուրջը կառուցվեց հզոր պարիսպ:

Հռոմի վերջին արքա **Տարքվինիոս II-ի** օրոք բնակչությունը ապստամբեց, և արքան վտարվեց: Որոշվեց այլևս արքա չընտրել, և Հռոմում հաստատվեց հանրապետական կառավարման ձև:

Այսպիսով՝ Ք.ա. VIII–VI դարերում հետագայի Հռոմ քաղաքը իր շրջակայքով միավորվեց մեկ պետականության մեջ և վերածվեց

Իտալիայի առավել աչքի ընկնող քաղաքական միավորներից մեկի: Այս ժամանակաշրջանի Հռոմը, սակայն, էտրուսկների և գալլերի դեմ հաճախ ստիպված էր ծանր պայքար մղել իր անկախությունը պաշտպանելու համար:

Վաղ Հռոմի սոցիալական և քաղաքական կարգը

Արքայական դարաշրջանի Հռոմեական պետության բնակչության կազմում կային երեք ցեղեր՝ **լատիններ, սաբիններ** և **էտրուսկներ**, որոնք էլ համարվում էին հռոմեական քաղաքացիներ: Ըստ ավանդության՝ սրանցից յուրաքանչյուրը բաղկացած էր **100 տոհմերից**, որոնք միավորված էին **10 կուրիաների** մեջ: Այսինքն՝ ողջ ազատ բնակչությունը կազմված էր **3 ցեղերից**, **30 կուրիաներից** և **300 տոհմերից**: Վերոհիշյալ 300 տոհմերի ավագներից կազմվում էր ավագների խորհուրդ՝ **սենատ** (նշանակում է «ծերակույտ», լատին.՝ **senex «ծերունի»** բառից): Սենատը քննարկում էր այն բոլոր հարցերը, որոնք հետո պետք է լուծվեին ժողովրդական ժողովում: Վերջինս հավաքվում էր ըստ **կուրիաների**, այդ իսկ պատճառով հռոմեացիների մոտ դրանք կոչվում էին **կուրիական կոմիցիաներ**:

Տոհմերի բոլոր արական սեռի անդամները կրում էին միևնույն տոհմանունը, որը ծագում էր տոհմի հիմնադիր իրական կամ առասպելական նախնուց: Հայտնի տոհմերից էին և ապագա Հռոմեական պետությունում կարևոր դերակատարում ունեին **Ավրելիոսները, Հուլիոսները, Կլավդիոսները, Կոռնելիոսները** և այլք: Տոհմատիրական կարգերի քայքայման հետևանքով տոհմերի ներսում որոշ ընտանիքներ ձեռք բերեցին մեծ ազդեցություն. դրանք կոչվում էին **պատրիկներ**:

Վերոհիշյալ 300 տոհմերից բացի, մնացածը չէին համարվում «հռոմեական ժողովուրդ»: Ինչպես սրանք, այնպես էլ պատերազմների ընթացքում նվաճված հարևան ցեղերը չունեին քաղաքացիական իրավունքներ: Սրանք կոչվում էին **պլեբեյներ** (լատին.՝ **plebs** «հասարակ ժողովուրդ, ամբոխ»): Պլեբեյներն ունեին մասնավոր սեփականություն, զբաղվում էին երկրագործությամբ, արհեստներով, առևտրով, սակայն չէին կարող մասնակցել պետական կառավարմանը:

Այսպիսով՝ արքայական շրջանի հռոմեական պետությունում դեռևս ուժեղ էին տոհմացեղային հարաբերությունները: Հռոմեական երեք ցեղերը հակադրվում էին պետության մնացած բնակչությանը: Նրանք էին օգտվում քաղաքացիական իրավունքներից, կազմում էին պետության օրենսդիր և գործադիր իշխանությունը:

Սերվիոս Տուլլիոսի բարեփոխումները

Տոհմատիրական կարգերի գոյությունը զգալիորեն արգելակում էր պետության տնտեսական և քաղաքական զարգացումը: 300 ավագների բացարձակ իշխանությունը բնակչության մի զգալի մասին դուրս էր թողնում դրան լիարժեք մասնակցելու հնարավորությունից: Այդ էր պատճառը, որ Հռոմի նախավերջին արքա Սերվիոս Տուլլիոսը իրականացրեց տոհմատիրական կարգերի ավարտական փուլը ամրագրող մի կարևոր բարեփոխում:

Արքան Հռոմի ողջ արական սեռի բնակչությանը՝ պատրիկներին և պլեբեյներին, բաժանեց 6 գույքային խմբերի: Հասարակական–քաղաքական կյանքում մարդու իրավունքները և պարտականությունները որոշվում էին՝ ըստ խմբային պատկանելության: Յուրաքանչյուր խումբ պարտավոր էր բանակին տրամադրել որոշակի քանակությամբ զորք:

Նախկին տոհմային՝ **կուրիական կոմիցիաների** փոխարեն արքան ստեղծեց **ցենտուրիական կոմիցիաներ**, որոնց մասնակցում էր ողջ զինապարտ բնակչությունը՝ ըստ ցենտուրիաների: Կուրիական կոմիցիաները պահպանվեցին, սակայն դրանց դերը կտրուկ նվազեց:

Տուլլիոսի բարեփոխումները ծանր հարված հասցրին տոհմատիրական կարգերին, քանի որ այդուհետև մարդիկ գնահատվելու և իրենց տեղը պետության մեջ զբաղեցնելու էին ոչ թե ըստ ծագման, այլ՝ ունեցվածքի:

Սերվիոս Տուլլիոսի բարեփոխումները նշանավորում էին պետականության հաղթանակը տոհմատիրական կարգերի նկատմամբ: Այս բարեփոխումները իրենց բնույթով նույնն են, ինչ Սոլոնի բարեփոխումները Աթենական պետությունում:

Ամփոփում: *Ք.ա. II հազ. Ապենինյան թերակղզում ապրում էին զարգացման տարբեր աստիճան ունեցող ժողովուրդներ՝ էտրուսկներ, հույներ, իտալական ցեղեր և այլն: Դրանցից առաջինը պետականություն ստեղծեցին էտրուսկները, որոնց մշակութային ազդեցությունը մեծ է ապագա հռոմեական քաղաքակրթության ձևավորման վրա: Ք.ա.VIII դարում հիմնված Հռոմը սկզբնական շրջանում ընդամենը մեկն էր Իտալիայի բազմաթիվ քաղաք–պետություններից: Հռոմեական պատմության արքայական դարաշրջանում լուրջ քայլեր կատարվեցին տոհմատիրական կարգերից պետականության անցման ծանապարհին:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ առանձնահատկություններ ունի Իտալիայի աշխարհագրական դիրքը: Ի՞նչ գաղութներ էին հիմնել Իտալիայի տարածքում հույները Ք.ա. VIII–VI դարերում:
2. Իտալիայի ո՞ր մասն էին զբաղեցնում էտրուսկները: Ո՞ւմ էին էտրուսկները համարում իրենց մրցակից, և ինչպե՞ս ավարտվեց այդ հակամարտությունը:
3. Որտե՞ղ ձևավորվեց Հռոմեական պետությունը: Որքա՞ն տևեց արքայական ժամանակաշրջանը Հռոմում:
4. Ո՞ր ցեղերն էին համարվում հռոմեական քաղաքացիներ: Ներկայացրե՛ք Վաղ Հռոմի կառավարման համակարգը:
5. Ինչո՞ւ Սերվիոս Տուլլիոսը իրականացրեց բարենորոգումներ. ի՞նչ էր այն իրենից ներկայացնում:

§ 5. ՀՌՈՄԸ Ք.Ա. V–III ԴԱՐԵՐՈՒՄ: ԻՏԱԼԻԱՅԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Հռոմի քաղաքական կարգը

Հռոմի վերջին արքայի վտարումից հետո ձևավորվեց պետության կառավարման հանրապետական համակարգը: Այդ կարգի ձևավորմանը զգալիորեն նպաստեց և դրանով էլ պայմանավորվեց շուրջ երկու և կես դար տևած պլեբեյների պայքարը ընդդեմ պատրիկների:

Հռոմի գերագույն օրենսդիր մարմինը ժողովրդական ժողովն էր՝ **կոմիցիաները** (լատին.՝ **comitia** «ժողով, հավաք»), որը իր պատմության ընթացքում ունեցավ երեք ձև:

Առաջինը կուրիական կոմիցիաներն էին, որոնք մինչև Սերվիոս Տուլլիոսի բարեփոխումները միակն էին Հռոմում: Այնուհետև դրանց փոխարինեցին **ցենտուրիական կոմիցիաները**: Ցենտուրիական կոմիցիաները հավաքվում էին Հռոմի մոտ գտնվող Մարս աստծուն նվիրված դաշտում: Յուրաքանչյուր ցենտուրիա մեկ ձայնի իրավունք ուներ: Ընդհանուր 193 ցենտուրիաներից 98–ը կազմում էր բնակչության վերնախավը՝ առաջին խավը, այդ պատճառով հենց նրան ձեռնտու որոշումներն էին ընդունվում: Քվեարկության կարգը այսպիսին էր. սկզբում քվեարկում էին առաջին խավի ցենտուրիաները, հետո՝ երկրորդ, երրորդ և այլն: Եթե ընդհանուր ձայների 50 տոկոսը ապահովվում էր, ապա քվեարկությունը դադարեցվում էր: Այս համակարգը ապահովում էր հռոմեական հասարակության վերնախավի գերիշխանությունը:

Ք.ա. III դ. կատարվեց ցենտուրիական կոմիցիաների բարեփոխում, և հինգ խավերից յուրաքանչյուրը իրավունք ուներ կոմիցիաներում ներկայացնելու հավասար քանակությամբ ցենտուրիաներ: Նույն ժամանակներում պլեբեյների համար ստեղծվեցին 35 տրիբուսներ՝ վարչական շրջաններ, և նրանք հավաքվում էին իրենց համար ստեղծված տրիբուսային կոմիցիաներով. վերջինիս որոշումները պարտադիր դարձան բոլոր հռոմեացիների համար: Յուրաքանչյուր տրիբուս այստեղ ուներ մեկ ձայն, որով ապահովվում էր դրա աշխատանքի ժողովրդավարական բնույթը:

Հռոմեական պետության քաղաքական կառուցվածքում կարևորագույն դեր ուներ սենատը: Միայն Ծերակույտի որոշումից հետո էր հարցը քննարկման ուղարկվում կոմիցիաներ, իսկ վերջինիս որոշումը պարտադիր կերպով պիտի հաստատվեր Ծերակույտի կողմից, որից հետո էր միայն դառնում օրենք: Բոլոր գործադիր պաշտոնյաները հաշվետու էին Ծերակույտի առջև: Ծերակույտի անդամների կազմը մշտապես լրացնում էին պաշտոնավարումը ավարտած բարձրագույն պաշտոնյաներով: Ծերակույտի նիստեր հրավիրել կարող էին հենց վերջիններս իրենց պաշտոնավարման ընթացքում:

Հռոմում գոյություն ուներ ընտրովի գործադիր իշխանության ձյուղավորված համակարգ՝ **մագիստրատուրա**:

Հանրապետական կարգերի ձևավորման սկզբնական շրջանում գերագույն մագիստրատը **պրետորն** էր (լատին.՝ **praetor** «առաջնորդ»), որի տեղակալը կոչվում էր **քվեստոր**: Ք.ա. V դ. կեսերից սկսեցին ընտրել երկու պրետորներ՝ հավասար իրավունքներով, որպեսզի թույլ չտան մեկ մարդու ձեռքին չափից ավելի մեծ իշխանության կենտրոնացում: Սրանք պարտավոր էին մշտապես խորհրդակցել միմյանց հետ, որի համար էլ շուտով այս պաշտոնյաները կոչվեցին **կոնսուլներ** (լատին.՝ **consulo** «խորհրդակցում եմ»): Պրետորի պաշտոնը պահպանվեց, ուղղակի այժմ նրանց վրա էր դրված պետության ներսում կարգուկանոնի վերահսկողությունը:

Հռոմում բոլոր մագիստրատուրաները կոլեգիալ էին, այսինքն՝ յուրաքանչյուր պաշտոն ներկայացված էր երկու և ավելի անձանցով (սկզբում՝ երկու կոնսուլ, երկու պրետոր, չորս քվեստոր, չորս էդիլ և այլն):

Կոնսուլները իրականացնում էին բանակի հրամանատարությունը: Էդիլները պատասխանատու էին հասարակական կարգի, քաղաքի բարեկարգման, սնունդով ապահովման և հասարակական միջոցառումների համար: Քվեստորի լիազորությունները տարածվում էին պետական գանձարանի, ֆինանսական հարցերի վրա: Նրանք ուղեկցում էին կոնսուլներին արշավանքների ժամանակ, զբաղվում

ՀԻՆ ԻՏԱԼԻԱՆ

ռազմավարով: Ժողովրդական տրիբունը ուներ արտակարգ լիազորություններ: Նրա անձը անձեռնմխելի էր: Տրիբունին նույնիսկ խոսքով վիրավորելը համարվում էր ծանր հանցագործություն, և տվյալ անձը կարող էր դատապարտվել մահվան:

Բոլոր պաշտոններն ընտրովի էին՝ մեկ տարի ժամկետով: Կար նաև մեկ կարևոր մագիստրատուրա՝ երկու **ցենզորներ**, որոնք հինգ տարին մեկ ընտրվում էին 18 ամիս ժամկետով և իրականացնում էին բնակչության հաշվառումը՝ ըստ գույքային խմբերի, կազմում էին սենատորների նոր ցուցակներ:

Պետության համար արտակարգ ծանր իրավիճակներում (պատերազմ, խոշոր ապստամբություններ և այլն) 6 ամիս ժամկետով ընտրվում էր արտակարգ լիազորություններով օժտված պաշտոնյա՝ **դիկտատոր**: Նա կարող էր այդ ընթացքում կառավարել՝ առանց հաշվի առնելու որևէ պետական մարմնի կարծիքը: Սովորաբար դիկտատոր էր նշանակվում կոնսուլներից մեկը:

Մագիստրատուրաներում աշխատանքը չէր վարձատրվում, քանի որ դա համարվում էր ոչ թե աշխատանք, այլ մարդուն տրված պատվավոր գործ:

Ընդհանուր առմամբ՝ Ք.ա. VI–III դդ. ընթացքում Հռոմեական պետությունում ձևավորվեց հանրապետական՝ ժողովրդավարական կառավարման համակարգ, որը գոյատևեց ընդհուպ մինչև Ք.ա. I դ. վերջին քառորդը:

Իտալիայի նվաճումը

Արդեն Ք.ա. V դ. Հռոմը սկսում է աստիճանաբար գերիշխող դիրք ստանալ Լացիումում հարևաններից նվաճված տարածքների հաշվին:

Հարևան էտրուսկյան քաղաքների նկատմամբ տարած հաղթանակներից հետո Հռոմը ստիպված էր դիմագրավել Ք.ա. V դ. սկզբին Ալպյան լեռնանցքներով Իտալիա ներխուժած

կելտական (գալլական) ռազմատենչ ցեղերի՝ **բոյերի, սենոնների** հարձակումներին: Վերջիններս հաստատվեցին Պո գետի ավազանում՝ հիմնելով իրենց գլխավոր քաղաքը՝ **Մեդիոլանումը** (այժմ՝ **Միլան**):

Ք.ա. 390 թ., հաղթելով հռոմեացիներին, գալլերը պաշարեցին Հռոմ քաղաքը: Նրանք գրավեցին քաղաքի մեծ մասը և հրդեհեցին, անառիկ մնաց միայն **Կապիտոլիումի բլուրը**: Յոթամսյա պաշարումից հետո հռոմեացիները ստիպված էին մեծ ռազմատուգանք վճարել, որից հետո գալլերը հեռացան:

Գալլական արշավանքների վտանգը ստիպեց հռոմեացիներին մերձենալ էտրուսկների և մյուս լատինական ցեղերի հետ: Այս շրջանում Հռոմը ռազմական դաշինքներ կնքեց Իտալիայի այլ միությունների (լատինական, էտրուսկյան) հետ: Առևտրական պայմանագիր կնքվեց նաև հյուսիսաֆրիկյան **Կարթագեն** պետության հետ: Դրա շնորհիվ զգալիորեն աճեց Հռոմի հեղինակությունը. այն աստիճանաբար վերածվում էր Իտալիայի ամենահզոր պետության:

Ամրապնդելով իր դիրքերը և տնօրինելով նյութական ու մարդկային խոշոր պաշարների՝ Հռոմը սկսեց Իտալիայում ծավալել նվաճողական քաղաքականություն: Հռոմի առաջխաղացման առաջին նպատակակետը Իտալիայի կենտրոնական մասում գտնվող իտալիկյան ցեղախմբի՝ սամնիտական միության հպատակեցումն էր: Սամնիտների դեմ ընթացան երեք պատերազմներ (**Ք.ա. 343–290 թթ.**), որոնք ավարտվեցին Հռոմի հաղթանակով: Ցրվեցին ինչպես սամնիտական միությունը, այնպես էլ Հռոմի նախկին դաշնակից լատինական միությունը: Նվաճված քաղաքները ստիպված էին Հռոմի հետ կնքել անհավասար պայմանագրեր: Նրանց տարածքներում հիմնվեցին հռոմեական գաղութներ, որտեղ հողազուրկ կամ սակավահող հռոմեացիները ստացան հողատարածություններ: Այժմ արդեն Հռոմը հաստատուն կերպով հիմնավորվեց կենտրոնական Իտալիայում:

Հռոմի տիրապետությունից, սակայն, դեռևս դուրս էին մնում բերրի հողեր ունեցող և տնտեսապես հզոր Հարավային Իտալիան, որտեղ գտնվում էին հունական հարուստ գաղութները, և Հյուսիսային Իտալիան, որտեղ հաստատվել էին գալլերը:

Կարթագենյան ճարտարապետության այս հոյակերտ տաճարի վրա վառ արտահայտված է հռոմեական ազդեցությունը

Հռոմի և Հոնիական ծովափին գտնվող հունական **Տարենտում քաղաքի** հարաբերությունների սրումը վերջինիս բնակչությանը ստիպեց օգնության դիմել **Էպիրոսի** արքա **Պյուռհոսին**:

Ք.ա. 280 թ. Պյուռհոսի բանակը (20000 հետևակ, 3000 հեծյալ և 20 մարտական փղեր) ափ իջավ Իտալիայում: Առաջին հաղթական ճակատամարտից հետո նրա զորքին միացան հունական քաղաքները և որոշ իտալիկյան ցեղեր: Հաջորդ ճակատամարտում Պյուռհոսը կրկին հաղթեց, սակայն շատ մեծ զոհերի գնով: Ճակատամարտից հետո Կարթագենը և Հռոմը դաշինք կնքեցին, որն ուղղված էր Պյուռհոսի և Սիցիլիայի հունական քաղաքների դեմ: Սիցիլիացիները Պյուռհոսին հրավիրեցին Սիցիլիա, որտեղ կարթագենցիները արդեն գրավել էին կղզու մեծ մասը: Վերջինս համաձայնվեց, Սիցիլիայից վտարեց կարթագենցիներին և պատրաստվում էր արշավանքի դեպի Աֆրիկա՝ Կարթագենը նվաճելու մտադրությամբ: Սակայն Պյուռհոսը շուտով գժտվեց սիցիլիական պոլիսների ղեկավարության հետ և վերադարձավ Իտալիա: **Ք.ա. 275 թ.** տեղի ունեցավ վճռական ճակատամարտ, որտեղ հռոմեական բանակը հաղթանակ տարավ: Պյուռհոսը ստիպված էր վերադառնալ Էպիրոս:

Ք.ա. 270 թ. հռոմեացիները գրավեցին հունական վերջին գաղութ **Հռեգիան**: Իսկ **Ք.ա. 265 թ.** Հռոմը նվաճեց Ապենինյան թերակղզու վերջին ինքնուրույն քաղաքը՝ էտրուսկյան **Վոլսինիումը**: Սրանով ավարտվեց Իտալիայի նվաճումը Հռոմի կողմից:

Ամփոփում: *Այսպիսով՝ Ք.ա. V–III դարերի ընթացքում հռոմեական պետությունում ձևավորվեց հանրապետական կառավարման համակարգը: Նույն ժամանակաշրջանում սկսվեց Հռոմի ռազմաքաղաքական վերելքը, և աստիճանաբար Ապենինյան թերակղզին ընկավ նրա տիրապետության տակ: Նախկին քաղաք–պետությունից Հռոմը վերածվեց հզոր պետության, որը տնօրինում էր նյութական և մարդկային խոշոր միջոցների: Հռոմը արդեն պատրաստ էր դուրս գալու թերակղզու սահմաններից: Բախումը Արևմտյան Միջերկրականի նույնքան հզոր ուժի՝ Կարթագենի հետ անխուսափելի էր:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք հռոմեական պետության կառավարման հանրապետական համակարգը մինչև Ք.ա. I դարի վերջը: Ի՞նչ էր մագիստրատուրան: Ո՞վ էր դիկտատորը:
2. Ո՞րն էր Հռոմի հեղինակության բարձրացման պատճառը: Ինչո՞վ ավարտվեցին Հռոմի և սամնիտական միության բախումները: Ինչո՞ւ Պյուռհոսը համաձայնվեց օգնել Տարենտումի բնակչությանը: Երբ ավարտվեց Իտալիայի նվաճումը Հռոմի կողմից:

§ 6. ՀՌՈՄԸ՝ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎԻ ԱՎԱԶԱՆԻ ԳԵՐԻՇԽՈՂ

Մակեդոնական երկրորդ պատերազմը

Իտալիայի նվաճումից հետո Հռոմը և Կարթագենը բախվեցին միմյանց՝ հարուստ Սիցիլիա կղզուն տիրելու համար: Ք.ա. 264–241 և 218–202 թվականներին նրանց միջև ընթացած Պունիկյան երկու պատերազմներում Հռոմը հաղթանակ տարավ և դրա շնորհիվ վերածվեց ռազմաքաղաքական խոշոր ուժի: Մինչև Ք.ա. III դարի վերջերը Հռոմը միայն հազվադեպ էր ուշադրություն դարձնում Արևելյան Միջերկրականի վրա: Հզորացող Հռոմի համար հելլենիստական պետությունները իրենց տնտեսական վիթխարի ներուժով մեծ հնարավորություններ կարող էին բացել: Լուծելով Կարթագենի խնդիրը՝ Հռոմը հնարավորություն ստացավ զբաղվելու արևելքով, որի համար առիթ ծառայեցին հելլենիստական պետությունների միջև ընթացող պատերազմները:

Հաննիբալի արշավանքի ընթացքում Մակեդոնիայի արքա **Փիլիպոս V-ը** և Սելևկյան արքա **Անտիոքոս III-ը** սկսեցին նվաճել Էգեյան ծովում, Փոքր Ասիայում և Սիրիայում **Եգիպտոսին** պատկանող որոշ տարածքներ: Ձգուշանալով Մակեդոնիայի հզորացումից՝ **Պերգամոնը, Հռոդոսը, Աթենքը** և մյուս հունական քաղաքները պայքար սկսեցին **Փիլիպոսի** դեմ: **Ք.ա. 201 թ. Քիոս կղզու** մոտ տեղի ունեցած ծովային ճակատամարտում Փիլիպոսը պարտություն կրեց: Դաշնակիցները օգնություն ստանալու ակնկալիքով դիմեցին Հռոմին: Վերջինիս ձեռնտու էր Մակեդոնիայի թուլացումը, ինչպես նաև Արևելյան Միջերկրականի մանր պետությունների աջակցությունը:

Հռոմը պատերազմ սկսելուց առաջ դեսպանություն ուղարկեց Անտիոքոսի մոտ և կարողացավ հասնել վերջինիս չեզոքությանը Մակեդոնիայի դեմ ապագա պատերազմում: Միաժամանակ պայմանագրեր կնքվեցին **Հռոդոսի և Պերգամոնի** հետ: Դրանից հետո Հռոմը պահանջեց Փիլիպոսից զորքերը դուրս բերել հունական քաղաքներից և Եգիպտոսին վերադարձնել գրավված տարածքները: Վերջինս մերժեց, և **Ք.ա. 200 թ.** հռոմեական բանակը շարժվեց դեպի Մակեդոնիա: Հռոմեացիներին աջակցեցին հունական քաղաքները: **Ք.ա. 197 թ. Թեսալիայի Կինոսկեֆալե** կոչվող վայրում հռոմեացիները վճռական պարտության մատնեցին մակեդոնական զորքին:

Նույն թվականին Մակեդոնիայի հետ կնքվեց պայմանագիր, ըստ որի՝ Մակեդոնիան հրաժարվում էր իր բոլոր նվաճումներից, վճարում էր 1000 տաղանդ ռազմատուգանք և Հռոմին էր հանձնում իր նավատորմը: Բացի այդ, իր զորքը կրճատում էր մինչև 5000-ի, առանց Հռոմի համաձայնության պատերազմ չէր սկսում որևէ պետության դեմ և ճանաչում էր հունական քաղաքների անկախությունը:

Ավարտելով պատերազմը՝ հռոմեական զորքը մնաց Հունաստանում՝ որոշ քաղաքներում տեղադրելով կայազորեր: Սակայն շուտով Իտալիայի հյուսիսում գալլական ցեղերի խոշոր ապստամբությունը ստիպեց հռոմեացիներին հետ դառնալ:

Այսպիսով՝ Մակեդոնիայի նկատմամբ տարած հաղթանակը Հռոմի առջև բացեց արտաքին քաղաքականության նոր ուղղություն:

Պատերազմ Սելևկյան պետության դեմ

Հռոմի մակեդոնական արշավանքի շրջանում Սելևկյան արքա Անտիոքոս III-ը սկսեց նվաճողական պատերազմներ: Գրավելով Փոքր Ասիայի արևմտյան և հարավային ծովափնյա քաղաքները և անցնելով **Հելլեսպոնտոսը**՝ նա մտավ **Թրակիա**: Այժմ նրա ձեռքում էին գտնվում Սև և Էգեյան ծովերը կապող նեղուցները: Անտիոքոսի գործողությունները ստիպեցին Հռոմի դաշնակիցներ **Պերգամոնին** և **Հռոդոսին** պատերազմ հայտարարել նրան և կրկին դիմել Հռոմին (**Ք.ա. 197 թ.**): Հռոմը, որն այդ պահին զբաղված էր հունական գործերով, անմիջապես չարձագանքեց իր դաշնակիցների խնդրանքին, այլ սահմանափակվեց Անտիոքոսին զգուշացնելով: Իսկ Անտիոքոսը հատուկ հանդիսավորությամբ ընդունեց Հռոմի թշնամի Հաննիբալին: Անտիոքոսը նաև սկսեց հակահռոմեական ելույթների դրդել Հռոմից դժգոհ հունական քաղաքներին:

Ք.ա. 192 թ. Անտիոքոսի բանակը մտավ Հունաստան և հասավ Թերմոպիլյան կիրճ: Այստեղ հռոմեացիները պարտության մատնեցին սելևկյան զորքին, որից հետո Անտիոքոսը վերադարձավ Փոքր Ասիա: Ձարգացնելով հաջողությունը՝ հռոմեական բանակը մուտք գործեց Փոքր Ասիայի հյուսիս–արևմուտք: Այստեղ՝ Մագնեսիայի մոտ, **Ք.ա. 190 թ.** հռոմեացիները գլխովին ջախջախեցին Անտիոքոսի բանակը: Վերջինիս հետ **Ք.ա. 188 թ.** կնքվեց պայմանագիր, որով Անտիոքոսը պարտավորվում էր վճարել 15000 տաղանդ ռազմատուգանք, նավատորմը կրճատել մինչև 10 նավի, իր պետության արևմուտքում չպահել մարտական փղեր, ինչպես նաև վերադարձնել Փոքր Ասիայի իր տիրույթները: Նա պարտավորվում էր նաև հանձնել Հաննիբալին, սակայն վերջինս փախավ Հայաստան:

Փոքր Ասիայում Անտիոքոսից գրաված տարածքները Հռոմը հանձնեց իր դաշնակիցներին, հիմնականում Պերգամոնին և Հռոդոսին: Փաստորեն **Ք.ա. 200–190 թթ.** ընթացքում Հռոմին հաջողվեց պարտության մատնել Մակեդոնիային և Սելևկյան պետությանը: Վերջինս հետագայում կորցրեց բազմաթիվ այլ տիրույթներ հյուսիսում և արևելքում՝ հոգուտ հզորացող Մեծ Հայքի և Պարթևական թագավորությունների:

Մակեդոնիայի և Հունաստանի նվաճումը

Նախորդ պատերազմից հետո Փիլիպոսը, այնուամենայնիվ, կարողացավ զգալիորեն ամրապնդել իր պետությունը: Նա շարունակաբար կուտակում էր ռազմամթերք և նախապատրաստվում ապագայում իր կորցրած ազդեցությունը վերականգնելու համար: Հռոմում գիտակցում էին Մակեդոնիայի տնտեսական վերելքի վտանգները: Հռոմեացիները նույնիսկ փորձեցին Մակեդոնիայի արքա հռչակել Փիլիպոսի՝ Հռոմում պատանդ գտնվող որդուն: Սակայն Փիլիպոսին փոխարինեց մյուս որդին՝ **Պերսևսը**, որը հակահռոմեական դիրքորոշում ուներ: Նրա առաջին գործը եղավ հակահռոմեական դաշինքի ստեղծումը, որին միացան Էպիրոսը և Իլիրիան: Հռոմի վերջնագրին ի պատասխան Պերսևսը իր հերթին պահանջեց Մակեդոնիայում գտնվող բոլոր հռոմեացիներից եռօրյա ժամկետում ազատել երկիրը: **Ք.ա. 171 թ.** Հռոմը պատերազմ հայտարարեց Մակեդոնիային:

Սկզբում ռազմական գործողությունները դանդաղ էին ընթանում: Երբ հռոմեական զորքը հայտնվեց, Պերսևսի հունական դաշնակիցների մի մասն անցավ Հռոմի կողմը: Ձգալով իր դիրքերի թուլությունը՝ Պերսևսը դիմեց Հռոմին հաշտության առաջարկով, որը չընդունվեց: **Ք.ա. 168 թ.** հռոմեացիները պարտության մատնեցին Պերսևսին: Այնուհետև նրանք գրավեցին Էպիրոսը, որտեղից 150000 մարդու ստրկության վաճառեցին: Պատերազմի հետևանքով Մակեդոնիան՝ որպես պետություն, վերացավ: Նրա տարածքը բաժանվեց չորս շրջանների, որոնցից յուրաքանչյուրը բացարձակապես ինքնուրույն էր: Մակեդոնացիներին արգելվեց արդյունահանել ոսկի և աղ, որոնք խիստ կարևոր էին նրա տնտեսության համար: Նմանապես երեք մասի բաժանվեց

Դրամներ հելլենիստական արքաների պատկերով. Ք.ա. III–II դդ.

Անտիոքոս III

Փիլիպոս V

Պերսևս

Իլիրիան: Մակեդոնիայի հունական դաշնակիցները նույնպես պատժվեցին: Շուրջ 1000 հայտնի հույներ գերեվարվեցին Հռոմ, այդ թվում՝ նշանավոր պատմիչ Պոլիբիոսը:

Մակեդոնիայի վերացումով փոխվեց Հռոմի արևելյան քաղաքականությունը: Այժմ արդեն նրա դաշնակիցներ Պերգամոնի և Հռոդոսի հետագա հզորացումը ձեռնտու չէր Հռոմին: Շուտով Հռոմի թույլտվությամբ Պերգամոնից անջատվեց նրա կազմում գտնվող Գալաթիան, ճանաչվեց նաև Պափլագոնիայի անկախությունը: Նույն կերպ կրճատվեց Հռոդոսի ազդեցությունը Էգեյան ծովում:

Հռոմը արդեն իրեն լրիվ ապահով էր զգում Արևելյան Միջերկրականում և պատրաստ էր իր անմիջական տիրապետությունը հաստատելու նաև ասիական մայրցամաքում: Այնուամենայնիվ, հունական քաղաքներում և Մակեդոնիայում դեռևս ուժեղ էին հակահռոմեական տրամադրությունները: Դրանք շուտով վերաճեցին ապստամբության:

Ք.ա. 149 թ. Թրակիայում ազգությամբ հույն ոմն Անդրիսկոս, ով իրեն հայտարարել էր Մակեդոնիայի արքա Պերսևսի որդին, զորքով մտավ Մակեդոնիա: Նրան հաջողվեց պարտության մատնել իր դեմ ուղարկված հռոմեական լեգիոնին և շարժվել հարավ: Միայն հաջորդ տարի Թեսալիայում հռոմեական բանակը հաղթեց ապստամբներին, իսկ Անդրիսկոսը մահապատժի ենթարկվեց:

Ապստամբության ճնշումից հետո Մակեդոնիան, Էպիրոսը և Հունական ծովի կղզիները մտան մեկ վարչական միավորման մեջ, և ստեղծվեց «Մակեդոնիա» պրովինցիան: Այդպիսով՝ վերոհիշյալ ընդարձակ տարածքը ներառվեց Հռոմի վարչաքաղաքական համակարգ՝ վերածվելով նրա հզոր ռազմական հենակետի:

Հռոմը միաժամանակ օգտվեց հարմար առիթից՝ վերջնականապես իր իշխանությունը Հունաստանի վրա տարածելու համար: Իսկ առիթը Աքայան միության և Սպարտայի միջև ծագած պատերազմն էր, որի ընթացքում Հռոմը աջակցեց Սպարտային: Պատերազմը կարճ տևեց, և **Ք.ա. 146 թ.** Իսթմոսի ճակատամարտում հռոմեացիները ջախջախեցին հույներին ու գրավեցին Միության խոշորագույն քաղաք Կորնթոսը: Քաղաքի ողջ բնակչությունը ստրկության վաճառվեց: Հունական քաղաքները այդուհետև պետք է ենթարկվեին Մակեդոնիայի հռոմեական կառավարչին: Հունական քաղաքների զգալի մասը ավերվեց և թալանվեց: Հռոմ ուղարկվեցին մշակույթի բազմաթիվ հուշարձաններ:

Լրացուցիչ նյութ

Ապպիանոս.
«Քաղաքացիական պատերազմները»
(Իտալիայի նվաճման մասին)

«Հռոմեացիները, մաս–մաս գրավելով Իտալիան, դրա շնորհիվ ստանում էին գրավված հողերի մի մասը և դրանց վրա հիմնում էին քաղաքներ կամ էլ զավթում էին արդեն գոյություն ունեցող քաղաքները, որպեսզի այնտեղ ուղարկեն իրենց գաղութաբնակներին: Այդ գաղութները նրանք դիտում էին որպես ամրացված կետեր: Գրավված հողերում իրենց վերցրած մասերը նրանք ամեն անգամ անմիջապես բաժանում էին վերաբնակիչների միջև, վաճառում էին կամ վարձակալության էին տալիս: Պատերազմների հետևանքով անմշակ մնացած հողերը, որոնց քանակը շատ էր աճել, նրանք ժամանակ չունեին բաժանելու հողակտորների, այլ պետության անունից առաջարկում էին մշակել բոլոր ցանկացողներին՝ տարեկան բերքի հանձնման հետևյալ պայմանով՝ ցանքատարածության 1/10–ը և ծառատունկի 1/5–ը: Հռոմեացիները դա անում էին իտալիկների քանակն ավելացնելու նպատակով, որոնց դիտում էին որպես բացառիկ աշխատասեր ժողովուրդ, որպեսզի իրենց երկրում դաշնակիցներ ունենան: Սակայն հետևանքը հակառակն էր: Բանն այն է, որ հարուստները, իրենց վերցնելով դեռևս հողակտորների չբաժանված հողերի մեծ մասը, ժամանակի ընթացքում վստահացան, որ ոչ ոք երբևէ իրենցից այդ հողերը հետ չի վերցնի: Իրենց հողերի մոտակայքում գտնվող աղքատների փոքր հողակտորները նրանք կամ գնում էին վերջիններիս համաձայնությամբ, կամ ուժով վերցնում էին»:

Ամփոփում: *Ք.ա. II դարի սկզբից Հռոմի՝ արևելյան ուղղությամբ սկսված ակտիվ արտաքին քաղաքականությունը ավարտվեց լիակատար հաջողությամբ: Վերացվեց Մակեդոնիայի թագավորությունը, զգալի ռազմական և տնտեսական ներուժ ունեցող հունական պոլիսները նվաճվեցին և ընկան Հռոմի անմիջական տիրապետության տակ: Ծանրագույն հարված հասցվեց հելլենիստական ամենահզոր՝ Սելևկյան պետությանը: Հռոմի տիրապետության հաստատումը Առաջավոր Ասիայում դարձել էր ժամանակի հարց:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ համաձայնության էին եկել Փիլիպոս V–ը և Անտիոքոս III–ը: Ինչո՞ւ Արևելյան Միջերկրականի երկրները դիմեցին Հռոմի օգնությանը: Ներկայացրե՛ք Հռոմի և Մակեդոնիայի միջև կնքված պայմանագրի բովանդակությունը:
2. Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Անտիոքոս III–ը: Ինչո՞վ ավարտվեց Հռոմի և Անտիոքոս III–ի հակամարտությունը:
3. Ովքե՞ր էին Մակեդոնիայի դաշնակիցները Հռոմի դեմ նոր պատերազմի ժամանակ: Պատերազմի ավարտից հետո Հռոմը ի՞նչ քաղաքականություն էր վարում իր դաշնակիցների նկատմամբ: Ինչո՞ւ նրան հաջողվեց տարածել իր ազդեցությունը Հունաստանի վրա:

§ 7. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՃԳՆԱԺԱՄԸ

Սուլլայի դիկտատուրան

Ք.ա. I դարում Հռոմում պարզորոշ զգացվում էր հանրապետական կառավարման համակարգի՝ լայնածավալ պետությունը վերահսկելու անկարողությունը: Խնդիրներ կային նաև բուն Իտալիայում՝ կապված իտալիկների պահանջների հետ: Բնակչության մի զգալի մասը կազմող իտալիկները պահանջում էին հռոմեական քաղաքացիներին հավասար իրավունքներ: **Ք.ա. 91–89 թթ.** սկսված քաղաքացիական պատերազմն ավարտվեց իտալիկների պարտությամբ: Սակայն Հռոմը ստիպված էր զիջումների գնալ և բավարարել նրանց շատ պահանջներ:

Պատերազմից շատ չանցած՝ Հռոմում վերսկսվեց պայքարը **պոպուլյարների** (ժողովրդավարական ուժեր) և **օպտիմատների** (սենատի վերնախավ) միջև: Դրա համար առիթ դարձավ կոմիցիաների որոշումը, որով Պոնտոսի արքա Միհրդատի դեմ պատերազմում հռոմեական բանակի հրամանատար նշանակվեց պոպուլյար **Գայոս Մարիոսը:** Սակայն հայտնի զորավար **Կոռնելիոս Սուլլան,** որը մինչ այդ արդեն սենատի կողմից հաստատվել էր այդ պաշտոնում, ապստամբեց և գրավեց Հռոմը: Նա ձերբակալեց իր քաղաքական հակառակորդներին և անցկացրեց մի շարք միջոցառումներ:

Սենատի կազմում ներառվեցին նրա կողմնակիցներից **300 հոգի,** կրճատվեց ժողովրդական ժողովի և տրիբունների իշխանությունը: Սակայն երբ Սուլլան բանակով գնաց արևելք՝ ընդդեմ Պոնտոսի, պոպուլյարները իտալիկների աջակցությամբ գրավեցին Հռոմը և չեղյալ հայտարարեցին Սուլլայի անցկացրած բոլոր օրենքները:

Հաջողությամբ ավարտելով պատերազմը Միհրդատի դեմ՝ Սուլլան **Ք.ա. 83 թ.** վերադարձավ Իտալիա և գրավեց Հռոմը, որից հետո ստիպեց Ծերակույտին (սենատին) իրեն դիկտատորի լիազորություններ տալ անսահմանափակ ժամկետով:

Սուլլայի առաջին իսկ հրամանով կազմվեցին այն մարդկանց ցուցակները, որոնք հայտարարվում էին օրենքից դուրս և ենթարկվում մահապատժի՝ գույքի բռնագրավմամբ: Սուլլայի հազարավոր հակառակորդներ զոհ գնացին ահաբեկչությանը:

Սուլլան հիմնավորապես վերաձևավորեց պետական կառավարման համակարգը: Ընդարձակվեցին սենատի լիազորությունները: Այդուհետև Ծերակույտն էր տնօրինելու պետության ֆինանսները. նրան հանձնվեցին ցենզորների գործառույթները, ինչպես նաև պրովինցիաների կառավարիչների նկատմամբ վերահսկողությունը:

Սուլլայի գործողությունները տանում էին դեպի պետական կառավարման համակարգի կենտրոնացում՝ ի դեմս ծերակույտի և դիկտատորի, ինչը վերջին հաշվով հող նախապատրաստեց տասնամյակներ անց հանրապետական կառավարման անկման և միապետության հաստատման համար:

Առաջին եռապետությունը

Երբ հայտնի զորավար **Պոմպեոսը** արևելյան արշավանքից հետո վերադարձավ Հռոմ, սենատը հրաժարվեց նրան հաջորդ տարվա համար կոնսուլ առաջադրելուց՝ վախենալով նրան մեծ իշխանություն տալուց: Սենատը մերժեց նաև Պոմպեոսի զինվորներին հող տրամադրելու նախագիծը: Այս պայմաններում Պոմպեոսը համաձայնության եկավ երկու այլ հեղինակավոր զորավարների՝ **Մարկոս Կրասոսի և Հուլիոս Կեսարի** հետ՝ սենատի դեմ համատեղ պայքարելու համար: **Ք.ա. 60 թ.** այդ համաձայնությունը ստացավ **Առաջին եռապետություն** անվանումը:

Ք.ա. 59 թ. Կեսարն ընտրվեց կոնսուլ: Նա օրենքներ անցկացրեց կարիքավորներին հող տրամադրելու, Արևելքում **Պոմպեոսի** գործունեությունը և որոշումները հաստատելու և այլ հարցերի ուղղությամբ: Եռապետները հաճախ հաշվի չէին նստում մագիստրատների հետ՝ երբեմն դիմելով բռնի միջոցների: Կոնսուլության ժամկետն ավարտելուց հետո Կեսարը հինգ տարով նշանակվեց **Ցիսալպյան և Նարբոնյան Գալլիաների** կառավարիչ: Որպես պոպուլյար՝ Կեսարը մեծ հեղինակություն էր վայելում բնակչության շրջանում: Օրենքների մեծ մասը նա անցկացրեց ոչ թե սենատի, այլ կոմիցիաների միջոցով:

Եռապետները որոշեցին նաև, որ **Ք.ա. 55 թ.** Պոմպեոսը և Կրասոսը պետք է ընտրվեին կոնսուլներ, որից հետո կառավարիչներ նշանակվեին պրովինցիաներում (Պոմպեոսը՝ Իբերիայում, Կրասոսը՝ Սիրիայում): Կեսարի գալլական կառավարչության ժամկետը երկարաձգվեց ևս հինգ տարով:

Արևելքում Կրասոսի զոհվելուց հետո Պոմպեոսը սկսեց ընդարձակել իր ազդեցությունը: Դրան նպաստեց նաև այն, որ Կեսարը ծանր պատերազմներ էր վարում Գալլիայում: Քաղաքական լարված իրավիճակում հռոմեական հասարակության վերնախավը գալիս էր եզրակացության, որ անհրաժեշտ է ուժեղ ձեռք՝ երկրում կարգուկանոն մտցնելու համար: Եվ այդ դերում սենատը տեսնում էր Պոմպեոսին, այլ ոչ Կեսարին, ով կապված էր պոպուլյարների հետ: **Ք.ա. 52 թ.** Պոմպեոսն ընտրվեց կոնսուլ, ընդ որում՝ առաջին անգամ նա միայնակ էր վարում այդ պաշտոնը: Փաստորեն, Պոմպեոսը դարձավ դիկտատոր: Նա փորձում էր թուլացնել Կեսարի դիրքերը՝ վերջինիս համարելով իր գլխավոր մրցակիցը:

Հուլիոս Կեսարի դիկտատուրան

Ք.ա. 49 թ. Կեսարի բանակը անսպասելիորեն շարժվեց դեպի Հռոմ: Հարձակումից խուճապահար Պոմպեոսը փախավ Բալկաններ: Կեսարը նույն թվականին գնաց Իբերիա և ստիպեց Պոմպեոսի բանակին հանձնվել: Իսկ վերադարձից հետո նրան հանձնվեցին դիկտատորի գործառույթներ:

Կեսարը վերականգնեց Սուլլայի օրոք քաղաքացիությունից զրկված անձանց իրավունքները: Այնուհետև նա գնաց Իլիրիա, վճռական հաղթանակ տարավ գրեթե կրկնակի ավելի զորք ունեցող Պոմպեոսի նկատմամբ: Վերջինս փախավ Եգիպտոս, սակայն սպանվեց Եգիպտոսի արքայի հրամանով: Հասնելով Եգիպտոս՝ Կեսարը միջամտեց **Պտղոմեոս XII-ի** և նրա քրոջ՝ **Կլեոպատրայի** միջև մղվող գահակալական պայքարին: Կլեոպատրային հայտարարելով Եգիպտոսի թագուհի՝ նա հետո շարժվեց Փոքր Ասիա, որտեղ ջախջախեց Միհրդատ VI-ի որդի **Փառնակեսին**:

Հաջորդ տարի Կեսարը **Իբերիայում** հաջողության հասավ Պոմպեոսի որդիների նկատմամբ, որով էլ ավարտվեց քաղաքացիական պատերազմը:

Ք.ա. 44 թ.՝ Հռոմ վերադառնալուց հետո, Կեսարը հռչակվեց **ցմահ դիկտատոր**: Մինչ այդ նա արդեն ստացել էր ցմահ **տրիբունի** և **ցենզորի** պաշտոններ: Իսկ դեռևս Ք.ա. 63 թ. նա ուներ **մեծ պոնտիֆեքսի** պաշտոնը (քրմապետ): Կեսարը փաստացի ստացավ անսահմանափակ իշխանություն: Նա սենատի անդամների թիվը հասցրեց **900-ի՝** ի հաշիվ իր կողմնակիցների: Սենատորներ դարձան նրա շատ զորահրամանատարներ և նույնիսկ նախկին ստրուկներ:

Այսպիսով՝ Հռոմում հաստատվեց Կեսարի միայնակ կառավարումը. նա անվերապահորեն տնօրինում էր պետության ռազմական, քաղաքական և հոգևոր գործերը: Կեսարի իշխանությունը հենվում էր նրան նվիրված բանակի վրա: Դեռ ժամանակին նվաճված Գալլիայում և մյուս պրովինցիաներում տեղական բնակչության որոշ խավերին հռոմեական քաղաքացիություն տալու շնորհիվ Կեսարը ուժեղ հենարան ուներ նաև այդ երկրներում:

Կեսարը զգալի ձեռնարկումներ իրականացրեց նաև տնտեսական ասպարեզում: Հատվեց նոր դրամ, որը շուտով դարձավ Հռոմում դրամաշրջանառության միակ միջոցը: Կեսարը մտցրեց պրովինցիաներից ուղղակի հարկման համակարգ: Իսկ **Ք.ա. 45 թ.** կատարվեց **տոմարի բարեփոխում**: Նախկին **լուսնային օրացույցը** փոխարինվեց արևայինով: Տարին, ըստ դրա, բաղկացած էր **365 և կես օրից**: Չորս տարին մեկ փետրվարին ավելացվում էր մեկ օր: **Հուլիոսյան օրացույցը** մնաց կիրառման մեջ ընդհուպ մինչև XX դարի սկզբները:

Կեսարը վարում էր հավասարակշիռ քաղաքականություն՝ ձգտելով նախապատվությունը չտալ ոչ պոպուլյարներին, ոչ օպտիմատներին: Նա նույնիսկ թույլ տվեց Հռոմ վերադառնալ իր քաղաքական հակառակորդներին:

Կեսարը սկսեց նախապատրաստվել խոշոր արշավանքի ընդդեմ պարթևների: Այդ նպատակով նա առաջիկա երեք տարվա համար նշանակեց մագիստրատների՝ իր հնարավոր բացակայության դեպքում պետությունը կառավարելու համար: Սակայն այդ արշավանքը չկայացավ: Հռոմում լուրեր էին տարածվել այն մասին, որ Կեսարը պատրաստվում է իրեն

արքա հռչակելու: Նրա դեմ կազմակերպվեց դավադրություն, որին մասնակցում էին շուրջ 60 սենատորներ: **Ք.ա. 44 թ. մարտի 15-ին** սենատի դահլիճում Կեսարը սպանվեց:

Երկրորդ եռապետությունը

Կեսարի սպանությունից հետո սրվեցին հարաբերությունները նրա կողմնակիցների, որոնց գլխավորում էին **Անտոնիոսը** և **Լեպիդոսը**, և հակառակորդների միջև (ղեկավարը՝ **Կիկերոն**): Կեսարին սպանողները փախան Հռոմից: Անտոնիոսը պահանջեց սենատից իրեն հաստատել որպես Գալլիայի կառավարիչ: Սենատի մերժումից հետո նա կոմիցիաների օգնությամբ հասավ դրան: Կեսարականների շարքերը տրոհելու նպատակով սենատը Իլիրիայից հրավիրեց Կեսարի ազգական **Գայոս Օկտավիոսին**, որը Անտոնիոսից պահանջեց իրեն տալ Կեսարի անձնական ունեցվածքը: Կիկերոնի օգնությամբ Օկտավիոսը հաստատվեց որպես Կեսարի որդեգիր և օրինական ժառանգ: Դրանից հետո Օկտավիոսը սկսեց պաշտոնապես կոչվել **Գայոս Հուլիոս Կեսար Օկտավիանոս**: Այս իրավիճակում Անտոնիոսը հեռացավ Ցիսալպյան Գալլիա, իսկ սենատը նրան հայտարարեց պետության թշնամի:

Անտոնիոսի անհաջողությունից հետո Օկտավիանոսը այլևս պետք չէր սենատին, և նա սկսեց Հռոմ վերադարձնել Կեսարին սպանողներին: Իսկ Օկտավիանոսին մերժեցին ընտրել կոնսուլի պաշտոնում: Օկտավիանոսը շարժվեց Հռոմի վրա և գրավեց քաղաքը: Միաժամանակ նա համաձայնության եկավ Անտոնիոսի և Լեպիդոսի հետ, և **Ք.ա. 43 թ.** նրանք ստեղծեցին **երկրորդ եռապետությունը**: Շուտով եռապետները մտան Հռոմ և կազմակերպեցին իրենց հակառակորդների ջարդը, որին զոհ գնացին **300 սենատորներ և շուրջ 2000 հեծյալներ**, այդ թվում՝ Կիկերոնը: Սակայն Իտալիայից դուրս դեպքերը զարգանում էին ի վնաս եռապետների: Իբերիայում զորք հավաքած Պոմպեոսի որդին գրավեց Սիցիլիան, Սարդինիան և Կորսիկան, միաժամանակ փորձում էր շրջափակել Իտալիայի նավահանգիստները: Իսկ Բալկանյան թերակղզում և Սիրիայում խոշոր բանակ էին հավաքել Կեսարին սպանող սենատորներ

Գայոս Հուլիոս Կեսար Օկտավիանոս

Կասիոսը և **Բրուտոսը**: Նրանք պատրաստվում էին ներխուժելու Իտալիա:

Ք.ա. 42 թ. Հունաստանում Անտոնիոսը և Օկտավիանոսը պարտության մատնեցին Կասիոսին և Բրուտոսին ու իրար մեջ բաժանեցին պրովինցիաները: Անտոնիոսին բաժին հասան Արևելյան Միջերկրականի երկրները, Օկտավիանոսին՝ Գալլիան, Իբերիան և Իլիրիան, Լեպիդոսին՝ Աֆրիկան:

Որոշ ժամանակ անց Օկտավիանոսը սկսեց ամրապնդել իր իշխանությունը՝ անտեսելով մյուս եռապետների կարծիքը: Նա ձերբակալեց Լեպիդոսին, իսկ **Ք.ա. 36 թ.** հռչակվեց **ցմահ տրիբուն**: Դրանից հետո Օկտավիանոսի և Անտոնիոսի բախումն անխուսափելի էր: Օկտավիանոսը սենատից պահանջեց երկրից վտարել Անտոնիոսի կողմնակիցներին: Շուրջ 300 սենատորներ և երկու կոնսուլները հեռացան Իտալիայից: Սենատը Անտոնիոսին պատերազմ հայտարարեց:

Ք.ա. 31 թ. Ակցիումի հրվանդանի մոտ Անտոնիոսի նավատորմը պարտվեց, իսկ նրա ցամաքային զորքերը անցան Օկտավիանոսի կողմը: Անտոնիոսը և Կլեոպատրան ինքնասպանություն գործեցին, իսկ Եգիպտոսը վերածվեց Օկտավիանոսի անձնական տիրույթի: Սրանով ավարտվեցին քաղաքացիական պատերազմները:

Լրացուցիչ նյութ

Ապպիանոս.
«Քաղաքացիական պատերազմները»
(հատվածներ)

«Հռոմեական ժողովրդի և սենատի միջև հաճախ տեղի էին ունենում փոխադարձ տարաձայնություններ օրենսդրության, հարկային պարտավորությունների, հասարակական հողերի, մագիստրատների ընտրության հարցերի կապակցությամբ: Սակայն դրանք բառիս բուն իմաստով քաղաքացիական պատերազմներ չէին, որոնք կարող էին հասցնել բռնի գործողությունների: Բանը հասնում էր միայն տարաձայնությունների և վիճաբանությունների, որոնք ընթանում էին օրենքի շրջանակներում և հարթվում էին՝ պահպանելով մեծ հարգանք վիճաբանող կողմերի հանդեպ փոխադարձ զիջումների միջոցով: Ժամանակին զինված ժողովուրդը, այդպիսի երկպառակություն ձեռնարկելով, չօգտվեց իր ձեռքին եղած զենքից, այլ հեռացավ սարի վրա, որն այդ ժամանակից ստացավ «Սրբազան» անվանումը: Բայց այդ ժամանակ էլ նա չդիմեց բռնի միջոցների: Ժողովուրդը միայն սահմանեց մագիստրատուրա, որը կոչված էր պաշտպանելու նրա իրավունքները, և դրա կրողներին անվանեց տրիբուններ: Նրանք պետք է հակադրվեին սենատի կողմից ընտրված կոնսուլներին, որպեսզի պետական իշխանությունը ամբողջովին չկենտրոնանար նրանց ձեռքին: .... Այդպես շարունակվեց մինչև այն պահը, երբ Տիբերիոս Գրակքոսը՝ ժողովրդական տրիբունը, ով իր օրենքների նախագիծն էր ներկայացրել, սպանվեց ժողովրդական հուզումների ժամանակ, ընդ որում՝ Կապիտոլիում բլրի վրա գտնվող տաճարի մոտ ոչնչացվեցին նրա կողմնակիցներից շատերը: Այս նողկալի արարքից հետո հուզումներն այլևս չդադարեցին, ընդ որում՝ ամեն անգամ թշնամի կուսակցությունները բացահայտ դուրս էին գալիս մեկը մյուսի դեմ: ... Չարիքը ավելի ու ավելի էր աճում, տեղի էին ունենում բացահայտ մահափորձեր պետական կարգի նկատմամբ, զինված խոշոր բռնարարքներ հայրենիքի նկատմամբ մարդկանց կողմից, ովքեր դատարանով ենթարկվել էին աքսորի կամ դատապարտվել էին, ինչպես նաև մրցում էին միմյանց հետ որևէ պաշտոնի համար՝ քաղաքացիական կամ զինվորական: Անկարգությունները չդադարեցին մինչև այն պահը, երբ Գրակքոսի մահից մոտավորապես 50 տարի անց կուսակցություններից մեկի ղեկավար Կոռնելիոս Սուլլան, ձգտելով մի չարիքը բուժել մեկ այլ չարիքով, իրեն հայտարարեց միահեծան կառավարիչ շատ երկար ժամանակով: Այդպիսի միահեծան կառավարիչներին անվանում էին դիկտատորներ, նրանց նշանակում էին միայն ամենածանր իրավիճակներում՝ 6 ամիս ժամկետով, սակայն այդ կարգը վաղուց արդեն մոռացվել էր: Սուլլան, գործելով ուժով և հարկադրանքով, ընտրված լինելով որոշակի ժամկետով, իրականում դարձավ ցմահ դիկտատոր: Այնուամենայնիվ, հագենալով իշխանությամբ, Սուլլան առաջինը, ինձ թվում է, համարձակություն ունեցավ կամավոր վայր դնելու իր վրայից տիրանական իշխանությունը, ընդ որում՝ նշելով, որ նա նույնիսկ պատրաստ է իր գործունեության մասին հաշվետվություն ներկայացնելու յուրաքանչյուր մարդու, ով իր նկատմամբ պահանջներ կունենա»:

Կոռնելիոս Սուլլա

Ամփոփում: *Ք.ա. I դարի իրադարձությունները՝ Սուլլայի դիկտատուրան և երկու եռապետությունները, ցույց տվեցին, որ հանրապետական կառավարման համակարգը Հռոմում հիմնավորապես խարխլվել էր, և իրադարձությունների զարգացումը տանում էր դեպի միապետություն: Հռոմեական պետությունը մուտք գործեց իր զարգացման որակապես նոր փուլ՝ պրինցիպատ, որի ավարտին այն վերածվեց միապետության:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչը առիթ դարձավ պոպուլյարների և օպտիմատների միջև պայքարի սրման համար: Ո՞վ հաղթեց այդ պայքարում:
2. Ինչպե՞ս ձևավորվեց առաջին եռապետությունը, ովքե՞ր էին մտնում դրա մեջ: Ո՞ր փոխարքայություններն էին բաժին հասել նրանցից յուրաքանչյուրին:
3. Ինչպե՞ս ավարտվեց Կեսարի և Պոմպեոսի միջև հակամարտությունը: Ի՞նչ տիտղոսներ էր կրում Կեսարը: Ներկայացրե՛ք Կեսարի իրականացրած բարեփոխումները:
4. Ինչո՞ւ ստեղծվեց երկրորդ եռապետությունը: Ովքե՞ր կազմեցին այն: Պրովինցիաները ինչպե՞ս բաժանեցին նրանք: Ինչպե՞ս ավարտվեցին քաղաքացիական պատերազմները Հռոմում:

§ 8. ՊՐԻՆՑԻՊԱՏ. ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ I–II ԴԱՐԵՐՈՒՄ

Հանրապետությունից միապետություն

Հաջողությամբ ավարտելով Անտոնիոսի դեմ մղած ծանր պատերազմը՝ Օկտավիանոսն անցավ իր փաստացի իշխանության իրավական ամրապնդմանը: Նա գիտակցում էր, որ հռոմեական հասարակության մեջ դեռևս ամուր էին հանրապետական կառավարման ավանդույթները: Այդ պատճառով էլ չգնաց դիկտատուրա հաստատելու ուղիով, որը կործանեց թե՛ Սուլլային, թե՛ Հուլիոս Կեսարին: Օկտավիանոսը գործում էր զգույշ՝ քայլ առ քայլ իր ձեռքը վերցնելով պետական կառավարման ղեկը: Նշանավոր փիլիսոփա Սենեկայի պատկերավոր արտահայտությամբ՝ «տիրակալը թաքնվում էր հանրապետության հագուստի մեջ»:

Օկտավիանոսը սենատի կազմից հեռացրեց Անտոնիոսի կողմնակիցներին և այնտեղ մտցրեց իր մարդկանց: Ծերակույտականների նոր ցուցակում Օկտավիանոսի անունը առաջինն էր, որտեղից էլ նրա տիտղոսը՝ «սենատի ղեկավար, առաջնորդ». այդուհետև նա կոչվում էր **պրինցեպս (princeps senatus)**: Իսկ **Ք.ա. 27 թ.** նա ստացավ պատվավոր **Օգոստոս** «Բարձրացյալ» մականունը, որն ընդգծում էր Օկտավիանոսի անձը՝ որպես պետության առաջին դեմքի: Հետագայում նա սկսում է կոչվել «Իմպերատոր Կեսար Օգոստոս, աստվածայինի որդի»:

Օկտավիանոսը ստացավ ցմահ տրիբունի պաշտոն, որը նրա համար ապահովում էր ինչպես անձի անձեռնմխելիություն, այնպես էլ սենատի, կոմիցիաների ու մագիստրատների որոշումների վրա արգելք (վետո) դնելու իրավունք:

Օգոստոսն իր ձեռքը վերցրեց նաև բարձրագույն զինվորական իշխանությունը (imperium), որը նախկինում իրականացնում էին կոնսուլները: Նախկին ավանդույթները չխախտելու նպատակով նա **Ք.ա. 19 թ.** ստացավ ցմահ կոնսուլի պաշտոն: Օգոստոսի տիտղոսաշարի **իմպերատոր** տիտղոսը նույնպես նշում էր նրա գերագույն ռազմական իշխանությունը: Նախկինում իմպերատոր էին անվանում պատերազմում հաղթանակած զորավարներին՝ հաղթանակից մինչև տրիումֆ: Իսկ որպես պրոկոնսուլ՝ Օկտավիանոսի ձեռքն անցավ պետության արտաքին քաղաքականությունը: Նրան էր ենթարկվում մի շարք կարևոր պրովինցիաներում տեղակայված լեգիոնների մեծ մասը: Սրանց ավելացավ **Ք.ա. 12 թ.** ստացած «մեծ պոնտիֆեքս» տիտղոսը, որով նրան տրվեց գերագույն կրոնական իշխանությունը: Օգոստոսի բարձրագույն իշխանությունը հաստատագրվեց ավելի ուշ նրան տրված «Հայրենիքի հայր» պատվո տիտղոսով:

Այդուհանդերձ, չվերացան գոյություն ունեցող օրենսդիր և գործադիր մարմինները՝ ծերակույտը և մագիստրատները: Միայն թե սենատն ընդունում էր Օգոստոսի առաջարկները օրենքների նախագծեր մշակելիս, իսկ կոմիցիաները և մագիստրատուրաները նրանից հանձնարարականներ էին ստանում: Կոնսուլների և ցենզորների իրավունքները աստիճանաբար կրճատվում էին, և նրանք վերածվում էին Օգոստոսի կամակատարների:

Օգոստոսը սկսեց ձևավորել նաև համակայսերական աշխատակազմ: Ընդ որում՝ պաշտոնների էր ներգրավում ամենատարբեր խավերի ներկայացուցիչների, այդ թվում՝ պրովինցիաների բնակիչների և նախկին ստրուկների: Սկսում է աճել **քաղաքային պրեֆեկտի** դերը: Օգոստոսի անձի, ինչպես նաև Հռոմում, Իտալիայում և պրովինցիաներում հասարակական կարգի պահպանումն իրականացնում էր **պրետորիական գվարդիան**: Պրովինցիաներում հարկերի հավաքումն իրականացնում էին **պրոկուրատորները**:

Օգոստոսի իշխանության իրական հիմքը՝ բանակը, նույնպես կրեց փոփոխություններ: Գոյություն ունեցող զորակազմի մեծ մասը ցրվեց, վետերան զինվորները ստացան հող և անցան խաղաղ աշխատանքի: Փոխարենը հավաքագրվեց մշտական, վարձու հիմունքներով գործող բանակ, որի բարձրագույն հրամանատարությունը Օգոստոսի նշանակած անձինք էին: Բանակը, որի թվակազմը հասնում էր շուրջ 250000–ի (25 լեգիոն), հիմնականում տեղակայված էր տերության սահմանամերձ

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
Հռոմեական գաղութներ
Հռոմեական գաղութներ
Հռոմեական գաղութներ

պրովինցիաներում: Բանակի հիմքը կազմում էին հռոմեական քաղաքացիները, սակայն խիստ հազվադեպ հավաքագրում էին նաև ազատ արձակված ստրուկներին ու օտարերկրացիներին: Վերջիններս կցվում էին լեգիոններին՝ որպես օժանդակ զորամասեր: Լեգիոնները ղեկավարում էին սենատորական դասին պատկանող լեգատները, իսկ ավելի ցածր հրամանատարները՝ ցենտուրիոնները, կարող էին լինել նաև նախկին շարքային զինվորներ:

Այսպիսով՝ Օգոստոսը Հռոմի՝ Ք.ա. I դարի քաղաքական վայրիվերումներով և քաղաքացիական պատերազմներով հագեցած իրավիճակում կարողացավ ստեղծել պետական կառավարման այնպիսի համակարգ, որը պետությանը բերեց տևական խաղաղություն, իսկ իրեն՝ անսահմանափակ իշխանություն:

Օգոստոսից սկիզբ առավ Հռոմի պատմության մի նոր փուլ, որը ստացել է **պրինցիպատ** կամ **Վաղ կայսրություն** անվանումը:

Հռոմը Հուլիոս-Կլավդիոսների և Ֆլավիոսների օրոք

Օգոստոսից սկսվեց Հուլիոս-Կլավդիոսների հարստությունը: Պրինցիպատի շրջանում իշխանության ժառանգման կարգը աչքի էր ընկնում անկայունությամբ: Սովորաբար կայսերը, որը կոչվում էր **օգոստոս,** փոխարինում էր արքայատոհմի՝ նրա կողմից որդեգրված անձը: Այս համակարգը, որ բացատրվում է հանրապետական ավանդույթներ ունեցող Հռոմում ժառանգական իշխանության գաղափարի թույլ գիտակցմամբ, գոյատևեց նաև հաջորդ հարստությունների կառավարման շրջանում: Օգոստոսները երկրում ամուր սոցիալական հենարան չունեին, և ժամանակ էր պետք, որպեսզի մարդիկ ընկալեին միապետության գաղափարը: Նրանք սովորաբար հենվում էին բանակի վրա: Սովորական երևույթ էր դարձել մեծ հեղինակություն վայելող անցանկալի անձանց սպանությունները, որոնք, Օգոստոսի կարծիքով, կարող էին իր դեմ դավադրություն կազմակերպել: Այդպես սպանվեց հայտնի բանաստեղծ Լուկանոսը, իսկ փիլիսոփա Սենեկային ստիպեցին ինքնասպան լինել:

Կայսերական իշխանության ամուր հենարան ստեղծելու գործում զգալի էր **Կլավդիոսի** (41–54 թթ.) ներդրումը, ով ստեղծեց իսկական կայսերական կառավարման ապարատ: Նա մեծ քանակությամբ նախկին ստրուկների նշանակեց պետական բարձր պաշտոնների՝ փորձելով հակակշիռ ստեղծել սենատի վերնախավի դեմ: Կլավդիոսը ակտիվ էր նաև արտաքին քաղաքականության ասպարեզում: Նվաճվեցին Բրիտանիայի մեծ մասը (բացի Հյուսիսից), Թրակիան և Մավրիտանիան: Կայսեր սոցիալական հիմքը մեծացնելու և նախկինում նվաճված երկրները ավելի սերտորեն Հռոմի հետ կապելու նպատակով նա պրովինցիաների տասնյակ հազարավոր բնակիչների շնորհեց հռոմեական քաղաքացիություն:

Հուլիոս-Կլավդիոսների հարստության վերջին ներկայացուցիչ **Ներոնի** օրոք իրավիճակը էականորեն ապակայունացավ: Ներոնի անկայուն խառնվածքը, պետական միջոցների անհարկի վատնումները գրեթե սպառեցին պետական գանձարանը: Երկրում ծավալվեց ահաբեկչություն քաղաքական հակառակորդների նկատմամբ: Հրեաստանում սկսված խոշոր ապստամբությունը (66–73 թթ.), որին ավելացան նման ապստամբություններ Գալլիայում և Իբերիայում, վերջնականապես գցեցին կայսեր վարկը: Ստեղծված իրավիճակում նա ինքնասպան եղավ:

Հեռավոր պրովինցիաներում տեղակայված հռոմեական լեգիոններից շատերում զորքի աջակցությամբ կայսրեր հռչակվեցին դրանց հրամանատարները: Մրցակիցների միջև պայքարը վերածվեց քաղաքացիական պատերազմի (68–69 թթ.), որն ավարտեց **Տիտոս Ֆլավիոս Վեսպասիանոսը** և հռչակվեց կայսր (69–79 թթ.)՝ հիմնելով Ֆլավիոսների հարստությունը:

Ֆլավիոսների կառավարման շրջանը աչքի ընկավ ինչպես կայսերական իշխանության ամրապնդմանն ուղղված ջանքերով, այնպես էլ ակտիվ արտաքին քաղաքականությամբ: Վեսպասիանոսը խստագույն վերահսկողություն սահմանեց հարկերի գանձման և ֆինանսների ծախսման նկատմամբ: Կրճատվեցին նույնիսկ արքունիքի պահպանմանն ուղղված ծախսերը: Նրա օրոք սկսվեց Հռոմի կենտրոնում խոշոր ամֆիթատրոնի կառուցումը (հետագայում՝ Կոլիզեում):

Կայսր **Դոմետիանոսը** առանձնակի ուշադրություն էր դարձնում կայսրության հյուսիսային սահմանների անվտանգության խնդրին: Նա կազմակերպեց մի աննախադեպ ծրագիր, ըստ որի՝ Հռենոսից մինչև Դանուբ գետն ընկած շրջանում կառուցվեց սահմանային ամրությունների համատարած շղթա ընդդեմ դեռևս աննվաճ գերմանական ցեղերի: Սահմանային շատ գոտիներ ուղարկվեցին հռոմեացի վերաբնակիչներ:

Անտոնինոսների հարստությունը, հռոմեական ծավալապաշտության ավարտը

I դարի վերջին Ֆլավիոսներին փոխարինեց Անտոնինոսների հարստությունը, որի կառավարման շրջանում կայսրությունը իր վերջին փորձը կատարեց անցնելու տարածքային նվաճումների:

Առաջինը **Տրայանոսն** էր (98–117 թթ.), ով կարողացավ ծանր պատերազմի արդյունքում հիմնավորապես նվաճել կայսրության համար լուրջ վտանգ ներկայացնող **Դակիան** (այժմ՝ Ռումինիա): Դակիան վերածվեց հռոմեական պրովինցիայի, որի բնակչությունը հետագա տասնամյակների ընթացքում կորցրեց իր էթնիկ դիմագիծը, այդ թվում՝ լեզուն: Տրայանոսի հաջորդ ձեռնարկումը հաջող պատերազմն էր ընդդեմ պարթևների: Կայսրը գրավեց Միջագետքը և նույնիսկ պարթևական մայրաքաղաք Տիզբոնը: Միջագետքում ստեղծվեցին հռոմեական պրովինցիաներ:

Նրա հաջորդ **Հադրիանոսը** շարունակեց կայսրության առավել խոցելի սահմանների ամրապնդման քաղաքականությունը: Մասնավորապես Բրիտանիայում կառուցվեց կայսեր անունը կրող ամրությունների շղթան, որը ձգվում էր կղզու արևմուտքից արևելք:

Այնուամենայնիվ, կայսրության եվրոպական տիրույթների անվտանգության խնդիրը դժվար էր լուծել: Մի բան, որ պարզորոշ դրսևորվեց Անտոնինոսների հարստության վերջին խոշոր ներկայացուցիչ **Մարկոս Ավրելիոսի** կառավարման շրջանում (161–180 թթ.): Նրա օրոք վտանգավոր իրավիճակ ստեղծվեց գերմանական ճակատում: Գերմանական խոշոր ցեղամիություններից **մարկոմանները** և նրանց դաշնակից ցեղերը, **167 թ.** անցնելով Դանուբը և ճեղքելով ամրությունների շղթան, մուտք գործեցին հռոմեական տարածք: Կայսրը իր կառավարման մնացած մասը անցկացրեց հակառակորդների դեմ տևական պատերազմներում: Նա հասավ միայն մասնակի հաջողությունների և ստիպված էր թույլատրել մարկոմաններին բնակություն հաստատելու կայսրության հողերում՝ որպես **ֆեդերատների** (դաշնակիցներ): Կայսրը մահացավ մարկոմանների դեմ նոր պատերազմի պատրաստությունների շրջանում **Վինդոբոնա** քաղաքում (այժմ՝ Վիեննա):

Լրացուցիչ նյութ

Տակիտոս. «Տարեգրություններ» (հատվածներ)

«Երբ Բրուտոսի և Կասիոսի զոհվելուց հետո հանրապետական բանակը դադարեց գոյություն ունենալուց, և երբ Պոմպեոսը ջախջախվեց Սիցիլիայի մոտ, գործից հեռացվեց Լեպիդոսը, մահացավ Անտոնիոսը, հուլիոսական կուսակցությունից ոչ ոք այլևս չմնաց, բացի Կեսարից (նկատի ունի Օկտավիանոսին), ով, հրաժարվելով եռապետի պաշտոնից, իրեն անվանելով կոնսուլ և իբրև թե բավարարվելով տրիբունական իշխանությամբ՝ հասարակ ժողովրդի իրավունքները պաշտպանելու համար, սկզբում իր շռայլությամբ գրավեց զինվորներին՝ հաց բաժանելով ամբոխին և բոլորին միասին՝ աշխարհի քաղցր բարիքներով, իսկ հետո, քիչ–քիչ ուժ հավաքելով, սկսեց իրենով փոխարինել ծերակույտը, մագիստրատները և օրենքները՝ դրանում դիմադրության չհանդիպելով, քանի որ առավել անհանդուրժողները զոհվել էին մարտերում կամ պրոսկրիպցիաների ժամանակ, իսկ ազնվականության մյուս մասը, իր ստրկամտության պատրաստակամության դիմաց հարստություն և մեծարանք ստանալով, անվտանգ ներկան գերադասում էր վտանգներ պարունակող անցյալից»:

Ամփոփում: *Ք.ա. I դարի վերջին քառորդում–Ք.հ. I դարի սկզբին ստեղծված Օգոստոսի պրինցիպատը նշանավորեց հռոմեական պետականության զարգացման մի նոր փուլ: Հանրապետական կառավարման համակարգը պահպանվեց, սակայն այն այժմ արդեն ստացավ նոր բովանդակություն՝ հիմնվելով մեկ անձի՝ կայսեր հեղինակության վրա: Օգոստոսից հետո կառավարած կայսրերը ձգտում էին չվերացնելով հանրապետական կառավարման մարմինները՝ ձևավորել կայսերական վարչաքաղաքական աշխատակազմ: Միաժամանակ շարունակվում էր ակտիվ արտաքին քաղաքականությունը նախկինում նվաճված երկրներում: Կայսրերի հիմնական մտահոգությունը սահմանների անվտանգության ապահովումն էր սահմանային գոտիներում, մասնավորապես Հռենոսից Դանուբ ընկած շրջանում և Բրիտանիայում:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Օկտավիանոսն ինչպե՞ս հասավ իր՝ միանձնյա կառավարման նպատակին: Ի՞նչ է ասել նրա մասին Սենեկան: Ի՞նչ է նշանակում պրինցեպս: Ե՞րբ Օկտավիանոսը դարձավ Օգոստոս: Ի՞նչ պաշտոններ էր վարում Օգոստոսը. թվարկե՛ք դրանք:
2. Ի՞նչ փոփոխություններ կատարեց Օգոստոսը կառավարման համակարգում և բանակում: Ինչպե՞ս է կոչվում Հռոմի պատմության՝ Օգոստոսից սկիզբ առած նոր փուլը:
3. Պրինցիպատի շրջանում իշխանության ժառանգման ի՞նչ կարգ էր գործում, ո՞րն էր դրա պատճառը: Ի՞նչ քաղաքականություն էր վարում Տիբերիոսը կայսերական իշխանության ամրապնդման նպատակով:
4. Ո՞վ և ե՞րբ հիմնադրեց Ֆլավիոսների հարստությունը: Բնութագրե՛ք նրանց կառավարման շրջանը:
5. Անտոնինոսների հարստության ո՞ր ներկայացուցիչը հաջողությունների հասավ տարածքային նվաճումների ասպարեզում: Ի՞նչ քայլեր ձեռնարկեց կայսր Հադրիանոսը: Նկարագրե՛ք Մարկոս Ավրելիոսի կառավարման շրջանը:

ԲԱԺԻՆ Գ ՀԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Թեմա 5. ՀԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 1. ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ազատ բնակչություն

Նորքարիդարյան հեղափոխության ավարտական փուլում պետականության ձևավորման հետ մեկտեղ արմատական փոփոխություններ տեղի ունեցան հասարակության սոցիալական կառուցվածքում: Դրա պատճառը գույքային և սոցիալական շերտավորումն էր: Պետական աշխատակազմի ձևավորումը, աշխատանքի բաժանումն ըստ բնագավառների (երկրագործություն, արհեստագործություն, ռազմական գործ և այլն) աստիճանաբար հանգեցրին սոցիալական խմբերի առաջ գալուն: Այդ գործընթացը անցել է մի շարք փուլեր, որոնցից յուրաքանչյուրին հատուկ էին զարգացման առանձնահատկություններ:

Ընդհուպ մինչև Ք.ա. I հազարամյակի երկրորդ կեսը թե՛ Արևելքում, թե՛ Արևմուտքում բնակչության շերտավորումը ընթանում էր չափազանց դանդաղ: Դեռևս վաղ պետականությունների փուլում ձևավորված սոցիալական հարաբերությունների պահպանողական բնույթը շատ դեպքերում փոփոխությունների չենթարկվեց նաև հետագայում:

Վաղ պետականությունների (քաղաք–պետություն, նոմ) սոցիալական հիմքը կազմում էր տոհմային համայնքը: Վերջինս ինքնակառավարվող օղակ էր, որտեղ սովորութային ուժով գործում էր հավասարության սկզբունքը: Այն արտահայտվում էր համայնքի (գյուղական բնակավայր) ողջ հողային պաշարի ընդհանուր սեփականության մեջ: Հողը պատկանում էր բոլորին, և ոչ ոք այն չէր կարող վաճառել կամ նվիրել, նաև մասնատել իր ժառանգների միջև: Սկզբնապես նույնիսկ հողը վիճակահանությամբ տրվում էր համայնքի անդամին յուրաքանչյուր երկրագործական տարվա սկզբին: Այդպիսին էր իրավիճակը Միջագետքում, Եգիպտոսում, Հայաստանում, հունական պոլիսներում «Հոմերոսյան» դարաշրջանում: Նույնիսկ Սպարտայում հողը տրվում էր սպարտիատին ոչ որպես սեփականություն, այլ օգտագործման նպատակով: Ինչպես հողը, այնպես էլ նրա վրա աշխատող հելոտները պատկանում էին պետությանը:

Հողի նկատմամբ ընդհանուր սեփականության գաղափարը գերիշխող էր գրեթե բոլոր հին հասարակություններում: Պետությունների ամրապնդման, արքայական իշխանության հզորացման հետ մեկտեղ տեղի է ունենում համայնական հարաբերությունների նշանակալից վերափոխում: Դա հատկապես նկատելի է արևելյան հասարակություններում: Արքայական իշխանության ամրապնդումը, պետությունների խոշորացումը և խոշոր հողատիրության հանդես գալը նպաստեցին համայնքի իրավունքների կրճատմանը: Համայնքը սկսեց ավելի մեծ կախվածության մեջ ընկնել իր տիրոջից (արքա, տոհմային ազնվական, տաճար): Այս երևույթը հատուկ էր արևելյան պետություններին և ոչ բնութագրական՝ հունահռոմեական աշխարհին ընդհուպ մինչև հելլենիստական դարաշրջան և Հռոմեական հանրապետության վերջին փուլ:

Իրավական տեսանկյունից պետության լիիրավ անդամ (քաղաքացի) էր համարվում, ինչպես Արևելքում, այնպես էլ Արևմուտքում, համայնքի անդամը, ով ուներ իր մասնաբաժինը համայնական հողերից: Հենց այդ էր նրան իրավունք տալիս մասնակցելու ժողովրդական ժողովին, աշխարհազորին և պետության քաղաքական կյանքին: Ինչ–ինչ պատճառներով հողի կորուստը կարող էր հանգեցնել քաղաքացիական իրավունքների կորստյան: Պարտքի դիմաց ստրկացման երևույթը, որ ի հայտ է գալիս գույքային շերտավորման ընթացքում,

կարող էր լրջորեն վնասել պետությանը: Այդպիսի երևույթներ են վկայված Եգիպտոսի Միջին թագավորությունում, Աթենական պետությունում մինչև Սոլոնի կառավարումը և այլն: Վերջինիս կողմից աթենացու ստրկացման վրա դրված արգելքը լիովին արտացոլում է համայնքի անխախտելիության սկզբունքի կարևորությունը հնագույն հասարակությունների գոյության համար:

Հին աշխարհի ավարտական փուլում սկսում է հանդես գալ ազատ բնակչության նոր խավ: Դա կապված էր համայնքի բնակչության մի մասի՝ զանազան պատճառներով քաղաքներ տեղափոխվելու հետ: Նախկին համայնականները, տնտեսական կարիքներից դրդված, փոխում էին իրենց կենսագործունեության բնույթը: Քաղաքային մշակույթի վերելքը, որ սկսվեց հելլենիզմի դարաշրջանում, ձևավորեց ազատ բնակչության խոշոր խավ: Վերջինս բաղկացած էր արհեստավորներից և քաղաքային կենցաղին առնչվող այլ զբաղմունքի տեր անձանցից:

Հին հասարակությունների ազատ բնակչության շարքում, անկախ երկրներից և ժամանակից, հատուկ կարգավիճակ ունեին հոգևոր ոլորտի ներկայացուցիչները՝ քրմական դասը:

Կախյալ բնակչություն

Արդեն վաղ պետականություններում իրավահավասար բնակչության կողքին գոյություն ունեին տարբեր աստիճանի կախվածության մարդկանց խմբեր: Դրանք առաջին հերթին ստրուկներն էին, որոնց գոյացման աղբյուրը, չհաշված որոշ քանակությամբ պարտային ստրուկների, գերազանցապես պատերազմներն էին: Ստրուկներն օգտագործվում էին պետական նշանակության խոշոր շինարարական աշխատանքներում, ինչպես նաև օժանդակ ոլորտներում (տնային սպասավորներ, արհեստավորներ և այլն): Ստրկական աշխատանքի դերը պետության տնտեսական հիմքը կազմող երկրագործության մեջ խիստ սահմանափակ էր: Բացառություն է կազմում Ք.ա. III–II դարերում Հռոմում խոշոր տնտեսություններում ստրկական աշխատանքի կիրառումը:

Ստրուկներից զատ, հատկապես արևելյան խոշոր պետություններում հաճախակի էր կիրառվում հարևան երկրներից բնակչության լայն զանգվածների տեղահանության քաղաքականությունը: Այն իրականացնում էին խեթերը, ասորեստանցիները, եգիպտացիները, հայերը: Դրա նպատակն էր բնակեցնել սեփական պետության անմարդաբնակ կամ սակավաբնակ շրջանները: Սովորաբար դրանք երկրագործներ և հմուտ արհեստավորներ էին, որոնց կարիքը խիստ զգացվում էր: Վերաբնակիչները հիմնականում բնակեցվում էին պետական, այլ ոչ մասնավոր անձանց պատկանող տարածքներում: Վերաբնակիչները անձնապես ազատ էին, սակայն ինքնակամ տեղաշարժվելու իրավունք չունեին:

Կախյալ բնակչության հաջորդ խումբը կազմում էին պետության նախնական միջուկից դուրս գտնվող բնակչությունը կամ որևէ պատճառով այլ պետություն տեղափոխված անձինք: Սրանք նույնպես անձնական ազատություն և սեփականության իրավունք ունեին, սակայն զուրկ էին պետության քաղաքական կյանքին մասնակցելու իրավունքից (օրինակ՝ **մետոյկոսները**՝ Աթենքում, **պլեբեյները** և **իտալիկները**՝ վաղ Հռոմում): Քաղաքացիական իրավունքից զուրկ բնակչության այդ զանգվածը ժամանակի ընթացքում աստիճանաբար ներառվում էր պետության քաղաքական կյանքի ոլորտ (օրինակ՝ իտալիկները Ք.ա. I դարում):

Սեփական–օտար հարաբերակցությունը

Բոլոր վաղ հասարակություններին բնորոշ էր պետության տարածքում սեփական և օտար բնակչության խստիվ հակադրությունը, որը ծագում էր դեռևս տոհմատիրական դարաշրջանից: Այն լիուլի վկայված է բոլոր պետություններում և իր արտացոլումն է գտել արևելյան ու արևմտյան փիլիսոփաների և այլ հեղինակների աշխատություններում:

Այդպիսին էր մասնավորապես Չինաստանում փիլիսոփա **Կոնֆուցիոսի** կողմից ձևակերպված ուսմունքը: Ըստ դրա՝ մարդիկ բաժանվում էին երկու խմբի: Առաջին խումբը կազմում էին նրանք, ովքեր պետք է կառավարեին, իսկ մյուս խումբը պետք է ծառայեր:

Չնայած ասվածը վերաբերում է սեփական բնակչության ներսում ձևավորված շերտավորմանը, սակայն իր ակունքներով հասնում է շատ ավելի վաղ դարաշրջան: Այդպիսին էր Հնդկաստանում արիացիների հայտնվելուց հետո ստեղծված կաստայական հասարակությունը: Նվաճող արիացիները կտրուկ հակադրվում էին տեղական բնակչությանը, որը բացարձակապես իրավազուրկ էր: Նույնը նաև հին Սպարտայում էր, որտեղ միայն սպարտիատներն էին համարվում պետության լիիրավ քաղաքացիներ: Հույների կողմից բոլոր օտարներին տրված «բարբարոս» հավաքական անվանումը այդ մտայնության դրսևորումն է: Նույնը՝ նաև Իտալիայում, որտեղ հռոմեացիները միայն տևական պայքարից հետո ստիպված եղան հռոմեական քաղաքացիություն շնորհել իրենց լեզվակից իտալիկներին:

Ամփոփում: *Հնագույն հասարակությունների սոցիալական կառուցվածքի բնորոշ առանձնահատկությունը պետության հիմքը կազմող համայնքի անդամ բնակչության իրավահավասարությունն էր: Մնացյալ ողջ բնակչությունը, որը դուրս էր համայնքից, այս կամ այլ կարգի կախվածության մեջ էր և չէր կարող համարվել քաղաքացի: Սեփականի և օտարի հակադրությունը հատուկ էր բոլոր վաղ հասարակություններին:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ովքե՞ր էին վաղ պետականությունների սոցիալական հենարանը: Ինչի՞ վրա էր խարսխված ազատ բնակչության իրավահավասարությունը: Վե՛ր հանեք համայնքի դերը հին հասարակություններում:
2. Ովքե՞ր էին համարվում տվյալ պետության քաղաքացիներ: Ի՞նչ առանձնահատկություններ կարող եք նշել Արևելքի ու Արևմուտքի երկրների միջև այս տեսանկյունից:
3. Ներկայացրե՛ք կախյալ բնակչության խմբերը հին հասարակություններում: Ի՞նչ դեր էին խաղում ստրուկները Հին աշխարհում:
4. Ինչո՞ւ էր վաղ հասարակություններին բնորոշ սեփականի և օտարի խիստ հակադրությունը: Բերե՛ք այդպիսի հակադրության պատմական օրինակներ:

§ 2. ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ԲԱՐԲԱՐՈՍԱԿԱՆ ԾԱՅՐԱԳԱՎԱՌԸ

Կենտրոն և բարբարոսական ծայրագավառ

Հին աշխարհի հասարակությունների մարդկանց աշխարհայացքում գերիշխող էր այն մտայնությունը, որ աշխարհի կենտրոնը տվյալ պետությունն էր, որին շրջապատում էր թշնամական արտաքին աշխարհը: Սեփականի և ոչ սեփականի հակադրությունը ընդգծված էր բոլոր հին հասարակություններում:

Հին եգիպտացու պատկերացմամբ՝ Նեղոսի հովտից և դելտայից դուրս գտնվող ամեն ինչ օտար էր և թշնամական: Այդպես էր նաև Միջագետքի ժողովուրդների մոտ: Ասորեստանցիները և բաբելոնցիները ընդգծված հակակրանք էին դրսևորում արևմուտքում գտնվող սիրիական անապատային–տափաստանային գոտու կիսաքոչվոր բնակչության հանդեպ, թեև նրանք նույնպես լեզվակից սեմախոս ցեղեր էին: Նույնը նաև Միջագետքից հյուսիս և հյուսիս–արևելք ընկած լեռնային շրջանների (Հայկական Տավրոսի և Զագրոսի լեռներ) պարագայում էր: Վերջիններիս բնակիչներին միջագետքցիներն անվանում էին **լուլլումու**՝ դրա տակ հասկանալով բարբարոս, այսինքն՝ օրենք չընդունող և թշնամի ժողովուրդներ: Նմանապես հին հույները բոլոր ոչ հունարեն խոսող ժողովուրդներին, նույնիսկ իրենցից անհամեմատ ավելի զարգացած եգիպտացիներին և բաբելոնցիներին անվանում էին «բարբարոսներ»՝ նրանց համարելով օտար: Միևնույն կանխակալ վերաբերմունքը դեպի իրենց ավելի զարգացած հարևանները առկա էր նաև համեմատաբար հետամնաց ժողովուրդների մոտ:

Մի խոսքով՝ հնագույն հասարակություններին բնորոշ էր սեփականի և ոչ սեփականի հակադրությունը: Այդ միտումը շարունակեց գոյատևել նաև հետագայում՝ ընդհուպ մինչև նոր ժամանակներ:

Այնուամենայնիվ, հարևանների հետ անհրաժեշտ էր գոյակցել, պահպանել կանոնավոր հարաբերություններ:

Բացի ժամանակ առ ժամանակ տեղի ունեցող պատերազմներից՝ պայմանավորված տարածքային խնդիրներով, հումքի աղբյուրների նկատմամբ վերահսկողության հաստատմամբ և այլ պատճառներով, հարևանների միջև գործում էր փոխհարաբերությունների բազմատեսակ համակարգ:

Դրանցից առավել կարևորը առևտուրն էր, որի անհրաժեշտությունը փոխադարձ էր: Ձևավորվելով դեռևս նեոլիթյան հեղափոխության շրջանում՝ այն աստիճանաբար լայն ծավալ ընդունեց՝ վերածվելով տարբեր երկրների և տարածաշրջանների միջև կանոնավոր հարաբերությունների: Առևտրի միջոցով էր ընթանում ժամանակի տնտեսության համար խիստ անհրաժեշտ հումքի (մետաղներ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, փայտանյութ և այլն) փոխանակումը: Գոյություն ունեին առևտրական ճանապարհներ, որոնք գտնվում էին պետությունների վերահսկողության տակ: Ք.ա. XIX–XVIII դդ. Աշուրի տնտեսության մեջ կարևոր դեր էր խաղում Փոքր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների հետ իրականացվող առևտուրը: Աշուրյան առևտրականներն այստեղ հիմնել էին առևտրական գաղութներ, որոնց միջոցով էլ կազմակերպում էին իրենց գործը: Առևտուրը գտնվում էր պետության հովանավորության տակ:

Հումքի ստացման ուղիների անվտանգությունն ապահովելու նպատակով հաճախ պետությունները դիմում էին ռազմական ուժին՝ հումքի աղբյուրների բնակչությանը ստիպելով շարունակել դրա մատակարարումը: Արժանահիշատակ է Ք.ա. XV դ. եգիպտական փարավոնուհի **Հատշեպսութի** խաղաղ ռազմերթը դեպի հումքով հարուստ Պունտ երկիր (այժմ՝ Սոմալի): Եգիպտական բանակի միայն երևալը երկրում ստիպեց տեղի բնակիչներին շարունակել իրենց առևտրային հարաբերությունները Եգիպտոսի հետ:

Հեռավոր երկրների բնակչության հետ առևտրային հարաբերությունների զարգացած համակարգ ձևավորվեց Ք.ա. VIII–VI դդ.՝ հունական մեծ գաղութացման շրջանում: Արևմտյան Միջերկրականում և Սև ծովի ավազանում հիմնադրված հարյուրավոր խոշոր և մանր հունական գաղութները իրենց հարևան ցեղերի հետ հաստատում էին փոխշահավետ առևտրային հարաբերություններ,

որոնց շնորհիվ դրանք արագ զարգացում ապրեցին և վերածվեցին ծաղկուն քաղաքների:

Քաղաքակրթության տարածումը

Քաղաքակրթության տարածումը դանդաղ, աստիճանական գործընթաց է: Համաշխարհային պատմական գործընթացի կարևորագույն առանձնահատկություններից են աշխարհագրական տարբեր շրջանների միջև շփումները: Դրանց միջոցով են քաղաքակրթական արժեքները փոխանցվում մի հանրությունից մյուսին՝ այդ ընթացքում ավելի կատարելագործվելով և ձեռք բերելով նոր որակներ: Մարդկային հասարակության պատմությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր տեխնոլոգիական նորույթ, լինի դա աշխատանքի գործիք կամ զենք, տնտեսավարման եղանակ կամ հոգևոր մշակույթի ձեռքբերում, բավական արագ տարածվում է մերձավոր և հարևան ժողովուրդների մոտ:

Քաղաքակրթության տարածումը տարբեր ուղղություններով սկսվել է դեռևս նեոլիթյան հեղափոխության ծավալման շրջանում՝ կապված նստակեցության հետ: Վաղ փուլում՝ Ք.ա. IV–III հազարամյակներում, դեռևս գոյություն չունեին էթնիկ պետություններ: Խոշոր քաղաքական միավորները ռազմական ճանապարհով նվաճված, տարբեր լեզուներով խոսող, միմյանց հետ թույլ կապերով կապված էթնիկ հանրությունների քիչ թե շատ կայուն միություն էին: Պետության տարբեր շրջաններին բնորոշ էր տնտեսական և մշակութային զարգացման անհավասարաչափ մակարդակը: Առավել զարգացած կենտրոնը (մայրաքաղաքը և շրջակա տարածքները) էականորեն տարբերվում էին քիչ ավելի հեռու ընկած շրջաններից:

Քաղաքակրթության տարածումը ընթանում էր ինչպես մեկ պետության ներսում, այնպես էլ պետությունից դուրս՝ դեպի հարևան երկրներ:

Ք.ա. IV հազարամյակից սկսած՝ մեծ էր Եգիպտոսի, Միջագետքի, Հայկական լեռնաշխարհի, Հնդկաստանի և Չինաստանի վաղ երկրագործական կենտրոնների ազդեցությունը հարևան տարածաշրջանների ժողովուրդների վրա: Այդ կենտրոններն աստիճանաբար ընդլայնում են իրենց գործունեության ոլորտը: Աճող բնակչության կենսապահովման կարիքները, զարգացող երկրագործությանը և արհեստագործությանը անհրաժեշտ բնական ռեսուրսների պահանջարկը ստիպում էին փնտրել այդպիսիք հարևանների մոտ: Դրա ընթացքում կանոնավոր հարաբերություններ էին հաստատվում դեռևս մինչպետական փուլում գտնվող ժողովուրդների հետ փոխանակային առևտրի միջոցով: Այդ պահից սկսվում է քաղաքակրթության աստիճանական շարժումը քաղաքակիրթ տարածքներից դեպի ոչ քաղաքակիրթ («բարբարոսական») աշխարհ:

Քաղաքակրթության շարժումը ընթանում էր երկու հիմնական եղանակներով՝ խաղաղ ներթափանցման և հարկադրական ծավալման:

ա) **Խաղաղ ներթափանցում**: Այդպիսին էին քաղաքակիրթ և ոչ քաղաքակիրթ շրջանների փոխհարաբերությունները վաղ փուլում: Քաղաքակրթական կենտրոնները դեռևս բավարար հնարավորություններ չունեին ռազմաքաղաքական ազդեցության տակ առնելու իրենց համար կենսականորեն անհրաժեշտ տարածքները: Այս շրջանում գերակշռում էին տնտեսական հարաբերությունները, որն արտահայտվում էր փոխանակային առևտրով: Այդ շրջաններում հիմնվում էին առևտրական գաղութներ, որոնց միջոցով էլ իրականացվում էր նյութական արժեքների փոխանցումը: Արհեստագործական արտադրանքի փոխարեն քաղաքակրթական կենտրոն էր ներկրվում հումք (հիմնականում՝ մետաղներ, թանկարժեք քարեր, շինանյութ): Այսպիսի փոխհարաբերությունների ակնառու օրինակ է Ք.ա. XIX–XVIII դդ. Հյուսիսային Միջագետքի Աշուր պետությունը: Այս շրջանում մի քանի տասնյակ աշուրյան առևտրական գաղութներ էին հիմնվել օգտակար հանածոներով հարուստ Հայկական լեռնաշխարհի արևմուտքում և Փոքր Ասիայում: Նույնպիսի հարաբերություններ էին հաստատվել նաև Ք.ա. I հազարամյակի կեսերին Սև ծովի ափերին և Ապենինյան թերակղզում հիմնված հունական գաղութների և տեղական ցեղերի միջև: Հատկանշական է, որ երկու դեպքում էլ տեղական ժողովուրդները արագորեն յուրացնում էին ավելի առաջավոր նյութական մշակույթը:

Օրինակ՝ Սև ծովից հյուսիս բնակվող սկյութական ցեղերի մոտ հոյների հաստատումից քիչ անց սկսում են հայտնվել տեղական արտադրության ոսկերչական շքեղ իրեր:

բ) **Հարկադրական ծավալում**: Քաղաքակրթության տարածման երկրորդ եղանակը ռազմական նվաճման կամ ուժի սպառնալիքի տակ հարևան շրջանների ներառումն է քաղաքակրթական կենտրոնի գործունեության ոլորտ: Այդպիսի դեպքերում շարունակվում են նախկին տնտեսական հարաբերությունները, սակայն արդեն ռազմական վերահսկողության պայմաններում: Այս եղանակը գերիշխող է դառնում արդեն Ք.ա. III հազարամյակի կեսերից՝ կապված պետությունների կայացման և հետագա հզորացման հետ: Նվաճողի և նվաճվողի միջև հաստատվում են բազմապիսի հարաբերություններ: Նվաճված երկրների բնակչության վերնախավը ժամանակի ընթացքում սկսում է սերտաճել նվաճողների հետ: Նրանցից շատերը ներգրավվում են ռազմական ծառայության մեջ, ստանում բարձր պաշտոններ ինչպես սեփական երկրում, այնպես էլ նվաճող երկրում: Ավելի զարգացածի, կատարյալի ազդեցությունը արտացոլվում է նաև հոգևոր մշակույթի ասպարեզում: Երկուսի միասնացումը արագացնում է նվաճվողի զարգացման գործընթացը:

Հարկադրական քաղաքակրթումը առկա էր, օրինակ, Եգիպտոսի Հին թագավորության փուլում Սինայի թերակղզում, Պաղեստինում և Սիրիայի առափնյա շրջաններում: Նույնը նաև Ք.ա. IX–VIII դդ. Ասորեստանից հյուսիս–արևմուտք և արևմուտք գտնվող արամեական կիսաքոչվոր ցեղերի պարագայում էր: Վերջիններիս նվաճմանը զուգընթաց սկսվում է դրանց «քաղաքակրթման» գործընթացը: Դրա հետևանքով արամեացիները կարճ ժամանակում տոհմատիրական կարգերից թևակոխեցին զարգացման նոր փուլ և շուտով լիովին ներգրավվեցին Ասորեստանի քաղաքական ու մշակութային կյանքի ոլորտ:

Հատկանշական են Հռոմի կողմից Գալլիայի և Բրիտանիայի նվաճման հետևանքները: Հռոմեացիները գրավված եվրոպական պրովինցիաներում կառուցում էին քաղաքներ, բարեկարգ ճանապարհներ, դպրոցներ, որը նպաստում էր տեղական բնակչության հետ բարիդրացիական հարաբերությունների ձևավորմանը: Ք.հ. I դարում՝ հռոմեական կայսր Վեսպասիանոսի կողմից Ուելսի (Մեծ Բրիտանիայում) վերահնազանդեցումից հետո, տեղական բնակչությունը հռոմեացիներից սովորեց երկրագործության և հանքարդյունաբերության շատ առաջավոր տարրեր: Ըստ ուելսեցի ժամանակագրի՝ երկիրը հռոմեական տիրապետության ժամանակ բարգավաճում էր:

«Քույր» քաղաքակրթություններ

Քաղաքակրթության ծավալումը ոչ միայն նպաստում էր հասարակական և տնտեսական առումներով ավելի ցածր աստիճանի վրա գտնվող ժողովուրդների զարգացմանը, այլև երկու մշակույթների փոխազդեցությունները ժամանակի ընթացքում հանգեցնում էին նոր երևույթների ձևավորմանը: Ի՞նչ էր տեղի ունենում այդ փոխհարաբերությունների հետևանքով:

Տեղական թեկուզև պարզունակ տոհմատիրական հասարակությունը սկսում էր ընդօրինակել ավելի բարձր մշակույթը: Սակայն դա ամենևին չէր հանգեցնում սեփականի կորստյան: Ձևավորվում էր երկուսի տարրերով հագեցած նոր մշակույթ, որն ընդունված է անվանել «քույր» քաղաքակրթություն: Դրանցում ներմուծվում էին օտարի օրինակով ստեղծված պետական կառավարման համակարգը, ավելի կատարյալ աշխատանքային գործիքները, հոգևոր մշակույթի առանձին երևույթները: Սակայն դրա հետ մեկտեղ առժամանակ պահպանվում էին գոյություն ունեցող ընկերային–տնտեսական հարաբերությունները:

«Քույր» քաղաքակրթությունները կարող էին ձևավորվել ինչպես մեկ, այնպես էլ երկու և ավելի քաղաքակրթությունների հետ փոխշփումների հետևանքով, օրինակ՝ Միջերկրական ծովի արևելյան ծովափնյա շրջանները (փյունիկյան քաղաք–պետություններ, արևմտյան Փոքր Ասիա՝ հոնական–հունական աշխարհ և այլն): Առաջինի դեպքում մեծ էր Եգիպտոսի և Միջագետքի, իսկ երկրորդի դեպքում՝ հին Փոքր Ասիայի և մայրցամաքային հունական պոլիսային աշխարհի ազդեցությունը:

Ամփոփում: *Այսպիսով՝ քաղաքակրթության տարածումը երկարատև գործընթաց էր, որ սկսվել էր դեռևս նեոլիթյան հեղափոխության փուլում: Պետությունների ձևավորմանը զուգընթաց այն ավելի լայն թափ առավ, որի հետևանքով դրա ոլորտն ընդգրկվեցին ավելի ընդարձակ տարածաշրջաններ: Քաղաքակրթության տարածումն ընթանում էր երկու ուղիներով՝ խաղաղ ներթափանցում և հարկադրական ծավալում: Դրա հետևանքով ժամանակի ընթացքում ձևավորվում են «քույր» քաղաքակրթություններ:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ մտայնություն էր գերիշխում Հին աշխարհի մարդկանց աշխարհայացքում: Բերե՛ք դրա պատմական օրինակները: Ձեր կարծիքով՝ այսօր գոյություն ունի՞ նման մտայնություն:
2. Ի՞նչ դեր էր խաղում առևտուրը Հին աշխարհում: Պետությունն ինչո՞ւ էր հովանավորում առևտուրը:
3. Ցո՛ւյց տվեք քաղաքակրթության տարածման գործընթացի առանձնահատկությունները վաղ փուլում: Փաստերով ներկայացրե՛ք քաղաքակրթական կենտրոնից դեպի «բարբարոսական» աշխարհ տարածումը Արևելքի երկրների օրինակով:
4. Ի՞նչ եղանակներով էր ընթանում քաղաքակրթության տարածումը: Ո՞ր ժամանակներին էր բնորոշ խաղաղ ներթափանցման եղանակը. նշե՛ք դրա օրինակները: Հարկադրական ծավալումը ինչպե՞ս էր տեղի ունենում: Ներկայացրե՛ք այս եղանակի օրինակները:

Թեմա 6. ՀՈԳԵՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹ

§ 1. ԳԻՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գիրը

Գիրը քաղաքակրթության կարևորագույն բաղադրիչն է, որը ստեղծվեց նեոլիթյան հեղափոխության ավարտական փուլում: Որոշակի պատկերների միջոցով լեզուն և միտքը փոխանցելու առաջին փորձերը տեղ են գտել նորքարիդարյան շրջանում, սակայն դրանք համակարգվեցին միայն պետությունների ձևավորումից հետո: Հին Արևելքում գոյություն ունեին գրի մի քանի կենտրոններ՝ Շումեր, Եգիպտոս, Հնդկաստան և Չինաստան:

Միջագետքում հնագույն գրահամակարգը **նախաշումերական պատկերային գիրն** էր: Այն ուներ մոտ 2000 պատկերանշան, որոնց հիմնական մասը **գաղափարագրեր** են: Յուրաքանչյուր պատկեր արտահայտում էր մեկ ամբողջական իմաստ կամ գաղափար: Առաջին պատկերագիր տեքստերը կազմվել են Ք.ա. մոտ 3200 թ.: Պահպանված տեքստերի ընդհանուր քանակը հասնում է ավելի քան 6 հազարի:

Շումերական պատկերագիրն ի վիճակի չէր արտահայտելու լեզվի բառերի ողջ հնչյունական կազմը: Այդ իսկ պատճառով Ք.ա. 2700–2500 թթ. ընթացքում պատկերային գիրն ապրեց նկատելի բովանդակային և արտաքին փոփոխություններ: Նշաններն աստիճանաբար պարզեցվեցին, և քանի որ տեքստերը հիմնականում գրում էին հում կավե աղյուսակների վրա եղեգնյա ձողիկներով, որոնք թողնում էին սեպաձև հետք, պարզեցված գիրը ստացավ **սեպագիր** կամ **բևեռագիր** անվանումը: Այժմ յուրաքանչյուր սեպախումբ, գաղափարագիր արժեքից բացի, ուներ հնչյունական մի քանի արժեքներ և առանձին հնչյուններ: Սեպագիր գրահամակարգը թույլ էր տալիս լիարժեք արտահայտել լեզվի հնչյունական կազմը:

Ք.ա. III հազարամյակի երկրորդ կեսից շումերերենն իր տեղը սկսեց զիջել աքքադերենին և Ք.ա. II հազարամյակի կեսերին դադարեց խոսակցական լեզու լինելուց: Այն պահպանվեց որպես դպրության լեզու և հարատևեց մինչև Ք.ա. I դարը: Աքքադերենը դարձավ տիրապետող, ապա և միջազգային լեզու: Աքքադական սեպագիրը լայնորեն տարածվեց՝ դուրս գալով Միջագետքի սահմաններից: Այս գրահամակարգն օգտագործվում էր Սիրիայում, Փոքր Ասիայում, Իրանական բարձրավանդակում և Հայկական լեռնաշխարհում:

Շումերական արձանագրություն

Եգիպտական արձանագրություն

Արձանագրություն՝ հայտնաբերված Քաղեշից

Աքքադական սեպագիրն ուներ առավել կիրառական 600 սեպանշան, որոնք միասին արտահայտում էին շուրջ 3000 վանկ և բառ: Այս գրահամակարգի հիման վրա հետագայում, որպես ինքնուրույն դպրոցներ, ձևավորվեցին ասորեստանյան, բաբելոնյան, խեթական, խուռիական, էլամական, ուրարտական, հին պարսկական սեպագիր գրահամակարգերը: Իսկ Ուգարիտում սեպագրի հիման վրա ստեղծվեց հնչյունային գիր՝ բաղկացած 31 սեպանշաններից:

Սեպագիրը բարդ գրահամակարգ էր, պահանջում էր տևական ուսուցում, և գրիչները պետք է տիրապետեին սեպանշանների բազմիմաստությանը, որպեսզի կարողանային օգտվել գրից: Իսկ սեպագրին տիրապետել կարելի էր՝ սովորելով հատուկ դպրոցներում, որոնք կոչվում էին **արձանագրության տներ**: Այստեղ, բացի գրից, սովորեցնում էին շումերերեն, աքքադերեն, վայելչագրություն և այլն: Միջագետքյան տարբեր կենտրոններից հայտնաբերվել են հազարավոր տեքստեր ընդգրկող ամբողջ արխիվներ և «գրադարաններ»:

Եգիպտոսում ստեղծվեց գրային մեկ այլ համակարգ՝ հիերոգլիֆային գիրը, որի հնագույն օրինակները թվագրվում են Ք.ա. XXXI դարով: Այն հարատևեց ընդհուպ մինչև Ք.հ. IV դ.:

Եգիպտական գիրը հնչյունագաղափարագրային համակարգ էր: Ք.ա. II հազարամյակի կեսերին այն ուներ առավել կիրառական մոտ 700 պատկերանշան, որոնց թիվը հետագայում հասավ շուրջ 5000–ի: Գրության մեջ ձայնավորները չէին նշվում, այդ իսկ պատճառով բազում հատուկ անունների և բառերի ճշգրիտ հնչողությունը դեռևս հայտնի չէ:

Հնագույն գրահամակարգերից է նաև չինական հիերոգլիֆային գիրը, որն օգտագործվում է մինչ օրս:

Չինական գիրը նույնպես հնչյունագաղափարագրային համակարգ էր: Այն լայն տարածում ստացավ Ք.ա. XVI–XI դդ.: Սկզբում չինացիները գրում էին բրոնզե և ոսկրե իրերի վրա: Չինաստանում թղթի արտադրության և տպագրության ի հայտ գալով հայտնվեցին տպագիր գրքեր: Չինական գիրը վերջնականապես կանոնակարգվեց Ցին հարստության օրոք:

Այն հսկայական ազդեցություն ունեցավ հարևան երկրների՝ Ճապոնիայի և Կորեայի հիերոգլիֆային գրահամակարգերի վրա: Չինացիները հիմնականում գրում էին վերից վար՝ սկսած աջ կողմից:

Հնդկաստանում ևս գիրը անցել է զարգացման երկարատև փուլ: Սակայն այստեղ գրի զարգացման ընթացքում արձանագրվեց տևական ընդհատում՝ կապված Մոհենջոդարոյի և Խառապպայի մշակույթի անկման հետ: Այս մշակույթի կրողներն ունեին պատկերային գիր, որը բաղկացած էր շուրջ 400 նշաններից: Առ այսօր այդ գիրը վերծանված չէ:

Արդեն Ք.ա. I հազարամյակում Հնդկաստանում ձևավորվում է այբբենական գիրը՝ **բրահմին**: Բրահմին միասնական գիր չէր, այլ ուներ տեղական տարբերակներ: Մաուրյան հարստության շրջանում արամեական այբուբենի ազդեցության տակ բրահմին կատարե-



Պլատոն



Սոֆոկլես



Արիստոտել

լագործվում է և հետագայում լայն կիրառություն ստանում:

Սեպագրից, եգիպտական և չինական հիերոգլիֆային գրից զատ, Հին Արևելքում կիրառվել են նաև այլ գրահամակարգեր՝ **խեթա-լուվիական հիերոգլիֆային** գիրը, **արամեական** և **փյունիկյան հնչյունագիրը**, **նախաէլամական պատկերային** և **գծային էլամերեն** գրերը և այլն:

Իսկ Արևելյան Միջերկրականում այբբենական գրին նախորդել է Ք.ա. II հազարամյակում ստեղծված վանկագիր-հնչյունագիր գիրը (գծային գիրը), որն ուներ երկու տարբերակներ՝ Ա և Բ: Սրանցից երկրորդը ներկայացնում էր հունարենի վաղ բարբառներից մեկը, իսկ առաջինի լեզուն պարզ չէ: Գծային Ա գիրը կիրառվել է Մինոսյան դարաշրջանի Կրետեում:

Ք.ա. I հազարամյակի սկզբներին Հունաստան մուտք գործեց այբբենական գիրը, որը ձևավորվեց Արևելամիջերկրածովյան ավազանի երկրներում կիրառվող գրային համակարգերի ազդեցության տակ: Փոքր Ասիայի հունական պոլիսների սերտ կապերը Փոյուգիայի և փյունիկեցիների հետ նպաստեցին հունական աշխարհում այբբենական գրի ներդրմանը:

Հին Իտալիայում Ք.ա. I հազարամյակի սկզբներին սկսեց լայնորեն կիրառվել էտրուսկյան այբբենական գիրը: Այն հետագայում փոխ առան հռոմեացիները, որն էլ դարձավ լատինական այբուբենի հիմքը:

Գրականությունը

Գեղարվեստական ժանրի ստեղծագործությունների հիմքը դրվել է դեռևս վաղ եգիպտական և շումերական դարաշրջաններում:

Եգիպտական գրականության հնագույն օրինակները թվագրվում են Հին թագավորության շրջանով: Եգիպտական գրականության ժանրերից են առասպելը, օրհներգը, աղոթքը, հմայությունը, գուշակությունը, հեքիաթը, պատմվածքը, ինքնակենսագրությունը, առակը, սիրային քնարերգությունը, խրատը, վարքականոնը և այլն:

Շումերական ժամանակաշրջանից ևս պահպանվել են գեղարվեստական ժանրի հարյուրավոր նմուշներ: Դրանց շարքում կան առասպելներ, ինչպիսին է, օրինակ, շումերական աշխարհաստեղծման առասպելը, վիպերգեր և հերոսապատումներ, աղոթքներ և աստվածներին ուղղված օրհներգեր, արքաների փառաբանումներ, սիրային երգեր, ինքնակենսագրություններ, առակներ, ասացվածքներ, օրորոցային երգեր: Վերոհիշյալ ստեղծագործությունները հիմնականում գրված են չափածո:

Շումերական գրականության մեջ առանձնահատուկ տեղ ունի Ուրուկի արքա **Գիլգամեշի** կյանքին նվիրված ընդարձակ վիպական պոեմը: Դրա ազդեցությունը մեծ էր արևելյան հասարակությունների վրա և լայն տարածում գտավ Միջագետքից դուրս՝ Սիրիայում և Փոքր Ասիայում:

Ք.ա. II հազ. երկրորդ կեսից սկսվում է աքքադերեն գրականության ծնունդը: Այդպիսի ստեղծագործություններից էին բաբելոնյան աշխարհաստեղծման առասպելը, գուշակային, աստղագիտական տեքստերի ժողովածուն և այլն: Ի հայտ են գալիս աստվածներին նվիրված չափածո քնարական բանաստեղծություններ, աղոթքներ: Գրականության ասպարեզում նորույթ էր աստվածաբանական թեմաներով երկխոսությունների կամ մենախոսությունների հանդես գալը:

Հունահռոմեական աշխարհում գեղարվեստական գրականության սկիզբը թվագրվում է Ք.ա. VIII դարով՝ ի դեմս **Հոմերոսի** «**Իլիական**» և «**Ոդիսական**» վիպական պոեմների: Սրանք **Հեսիոդոսի** ստեղծագործությունների հետ միասին («**Թեոգոնիա**», «**Աշխատանք և օրեր**») հունական գրականության հնագույն նմուշներն են:

Հին հունական գրականությունն ուներ իր առանձնահատկությունը՝ պայմանավորված թատրոնի գոյությամբ: Հունաստանում գրականությունն ու թատրոնը կազմում էին մի ամբողջություն, և գրականությունը մասամբ կոչված էր սպասարկելու թատրոնին: Ըստ այդմ, առաջնային դեր ստացան **ողբերգությունն** ու **կատակերգությունը**:

Հին հունական ողբերգության հիմնադիրը **Էսքիլեսն** է, որին հետևեցին **Սոֆոկլեսը** և **Էվրիպիդեսը**:

Ք.ա. VI–V դարերում ծնունդ առավ կատակերգությունը: Այս ժանրի առավել վաղ ներ-

կայացուցիչն էր **Էպիքարմոսը**: Քաղաքական կատակերգության հեղինակը **Արիստոֆանեսն էր**:

Հին հունական արձակն ի հայտ եկավ Ք.ա. V–IV դարերում՝ ի դեմս պատմագրության (**Հերոդոտոս**, **Թուկիդիդես**, **Քսենոփոն**), քանի որ պատմությունը հնում ընկալվում էր իբրև գեղարվեստական ստեղծագործության ժանր: Գեղարվեստական արձակը ներկայանում էր նաև փիլիսոփայական երկխոսության (**Պլատոն**, **Արիստոտել**), հռետորական արվեստի և հանդիսավոր ճարտասանության (**Լիսիաս**, **Դեմոսթենես**, **Իսոկրատես**) տեսքով:

Հունաստանի նվաճումը նախ Մակեդոնիայի, ապա Հռոմի կողմից դասական հունական գրականության անկման պատճառ դարձավ: Գրականության մեջ սկսեցին գերիշխել ընտանեկան և կենցաղային թեմաները:

Իր բազմազանությամբ հունականին չէր զիջում հռոմեական գրականությունը, թեև այն կրում էր հունական գրականության մեծ ազդեցությունը: Հռոմեական գրականությունը վկայված է՝ սկսած Ք.ա. IV դ. վերջերից: Հիմնական ժանրերից էին պոեմը (**Էննիոս**, **Վերգիլիոս**), ողբերգությունը (**Սենեկա Կրտսեր**), կատակերգությունը (**Պլավտոս**, **Տերենտիոս**), կենսագրությունը (**Կոռնելիոս Նեպոս**, **Սվետոնիոս**, **Կուրցիոս Ռուփոս**), պոեզիան (**Հորացիոս**, **Մանիլիոս**), արձակը (**Կիկերոն**, **Սալյուստիոս**, **Պետրոնիոս**, **Սենեկա Ավագ**) և այլն:

Ամփոփում: *Նեոլիթյան հեղափոխության ավարտին Առաջավոր Ասիայում, Հնդկաստանում և Չինաստանում, պետականությունների ձևավորմանը զուգընթաց, ստեղծվեց գիրը: Վաղ գրային համակարգերի բնորոշ առանձնահատկությունը լեզվի հնչյունական կազմի վերարտադրման սահմանափակ հնարավորություններն էին: Շուրջ երեքհազարամյա զարգացման ընթացքում անցում է կատարվում գաղափարային գրից հնչյունական–այբբենական գրի: Գրի զարգացման հետ կապված՝ ծնունդ են առնում գեղարվեստական գրական ստեղծագործությունները:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է ստեղծվել գիրը: Որո՞նք էին գրի կենտրոնները Հին Արևելքում: Քանի՞ պատկերանշան ուներ Միջագետքի հնագույն գրահամակարգը: Ի՞նչ տարբերություն կար շումերական պատկերագրի և սեպագրի միջև: Որտե՞ղ էր տարածված աքքադական գրահամակարգը:
2. Ինչպե՞ս է կոչվում հին եգիպտական գիրը: Ո՞ր դարին են պատկանում հնագույն հիերոգլիֆային գրերը, և մինչև ե՞րբ այն գոյատևեց: Քանի՞ պատկերանշան ուներ այն:
3. Ի՞նչ էր հին չինական գիրը: Ե՞րբ այն վերջնականապես կանոնակարգվեց: Նշե՛ք հնդկական գրի առանձնահատկությունները: Ո՞րն էր գծային Ա և գծային Բ գրերի տարբերությունը:
4. Ներկայացրե՛ք Հին աշխարհի գրականության տարածված ժանրերը և նշանավոր ստեղծագործությունները:
5. Ովքե՞ր էին հունական և հռոմեական գրականության հայտնի հեղինակները, ո՞ր ժանրերն էին տարածված:

§ 2. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Բժշկագիտությունը

Արևելյան քաղաքակրթություններում և հունահռոմեական աշխարհում բժշկագիտությունը գիտության առավել զարգացած ուղղություններից էր: Սակայն դրան զուգահեռ բոլոր երկրներում լայնորեն տարածված էր գերբնական միջամտությամբ՝ մոգությամբ բուժումը:

Եգիպտացիները քաջածանոթ էին մարդու մարմնի ներքին կառուցվածքին, ինչին նրանք հասել էին մարդու կամ կենդանիների մարմինների **զմռսման** (**մումիացման**) շնորհիվ: Բժշկագիտական գրվածքներում միայն անատոմիային վերաբերող տերմինների թիվն անցնում էր 200–ից:

Եգիպտական տաճարներին կից գործում էին «Կյանքի տներ», որոնցում ձեռք էին բերում գիտելիքներ բժշկությունից: Պահպանվել են վիրահատական գործիքներ, իսկ որոշ բարձրաքանդակներ և պապիրուսներ պատկերում են վիրահատական միջամտության տեսարաններ: Բժշկության մեջ օգտագործում էին ամենատարբեր բույսեր և պտուղներ, հանքային աղեր, կենդանիների ոսկորներ, օրգաններ և այլն:

Միջագետքում ևս բժշկությունը հասավ որոշակի մակարդակի, ինչի վկայությունը բժշկագիտական մեծաթիվ տեքստերն են:

Եգիպտական մահվան աստված Անուբիս

Միջագետքի բնակիչները տարբերակում էին բնական պատճառներից ծագած հիվանդությունները որևէ արարքի համար որպես աստվածային պատժի հետևանք համարվող հիվանդություններից: Որպես բուժման միջոց առաջարկվում էին ինչպես գիտական, այնպես էլ մոգական բուժամիջոցներ: Հաճախ հիվանդի բուժմանը բժիշկն ու մոգը ձեռնամուխ էին լինում համատեղ:

Հիվանդությունների տարածման կանխարգելման նպատակով հիվանդը մեկուսացվում էր: Որոշ դեպքերում հիվանդության օջախից այլ վայրեր էին տեղափոխում բնակչության մեծաթիվ զանգվածների:

Ք.ա. VII դ. սկսած՝ Հունաստանում ձևավորվեցին բժշկագիտական դպրոցներ: Առաջին բժշկագիտական աշխատությունը հեղինակել է **Ալկմայոնը**: Նրան հաջորդած **Էմպեդոկլեսը**, **Հիպոկրատեսը** և այլք հսկայական ձեռքբերումներ արձանագրեցին բժշկագիտության բնագավառում: Մասնավորապես Հիպոկրատեսը մշակեց ախտորոշագիտության կարևոր հարցեր, ստեղծեց ուսմունք կանխագուշակության մասին և համարվում է բժշկական աշխարհագրության նախահայրը:

Հունական բժշկագիտական միտքը մեծ ազդեցություն ունեցավ հռոմեական բժշկության վրա: Հռոմում գործող բժիշկների զգալի մասը հույներ էին:

Բժշկագիտությունը Հռոմում մեծ նվաճումների հասավ: Հռոմեացիներն օգտագործում էին նոր դեղամիջոցներ և վիրահատական գործիքներ: Նրանք առկա (ստացիոնար) բուժման համար առանձնացնում էին հատուկ կառույցներ՝ հոսպիտալներ: Հռոմեացիները մեծ ուշադրություն էին դարձնում բնակչության առողջապահության խնդիրներին:

Մաթեմատիկան և աստղագիտությունը

Մաթեմատիկայի զարգացմանը նպաստեց կոթողային ճարտարապետությունը: Այդպիսի շինությունների կառուցումը պահանջում էր բարդ հաշվարկներ:

Եգիպտացիներին հայտնի էին թվաբանությունը, հանրահաշիվը, երկրաչափությունը, եռանկյունաչափությունը: Նրանց մաթեմատի-

Բաբելոնական աստվածները երկնային լուսատուների տեսքով

կոսները կազմում էին զանազան խնդիրներ պարունակող հանրահաշվական տեքստեր: Եգիպտացիներն առաջինը օգտագործեցին հաշվարկի տասական համակարգը, կիրառեցին կոտորակը:

Եգիպտացիները մեծ ձեռքբերումներ ունեն օրացույցի և աստղագիտության բնագավառներում: Նրանք հետևում էին երկնային մարմինների շարժմանը, տարին բաժանում հատ-

Աքքադ. մաթեմատիկական խնդիրների տախտակ, Ք.ա. 1700 թ.

վածների: Եգիպտացիների տարին ուներ երեք երկրագործական եղանակ՝ վարարում, հունձ, երաշտ՝ ընդհանուր 12 ամիս՝ յուրաքանչյուրը 30–ական օրով, որին վերջում գումարում էին հավելյալ 5 օր: Ամիսը բաժանվում էր երեք «շաբաթների»՝ յուրաքանչյուրը բաղկացած 10–ական օրից:

Միջագետքյան մաթեմատիկան նույնպես բարձր աստիճանի էր հասել: Նրանք ծանոթ էին բազմապատկմանը, հակադարձ մեծություններին, թվերի քառակուսիներին և խորանարդներին: Մաթեմատիկական տեքստերի մի մասը պարունակում է աշակերտներին ուղղված խնդիրներ:

Ընդհանուր առմամբ, սակայն, մաթեմատիկական գիտելիքները ինչպես Եգիպտոսում, այնպես էլ Միջագետքում ունեին էմպիրիկ, կիրառական բնույթ և չհասան տեսական ընդհանրացումների մակարդակի:

Բնագիտության զարգացումը Հին Հունաստանում կապված է միլեթյան դպրոցի հետ, որի հիմնադիրը **Թալես Միլեթցին էր**: Մաթեմատիկայի, երկրաչափության, աշխարհագրության, աստղագիտության բնագավառում ծանրակշիռ ավանդ ունեն **Պյութագորասը, Դեմոկրիտը, Անաքսիմենեսը** և այլք: Հունական աշխարհում մաթեմատիկան ձևավորվեց որպես համակարգված գիտություն: Նրանց ձեռքբերումներից են առաջին իռացիոնալ թվերի ստացումը, շրջանի քառակուսացման, անկյան եռատման, խորանարդի կրկնապատկման խնդիրները:

Ձեռքբերումներ արձանագրվեցին նաև Հնդկաստանում և Չինաստանում: Մասնավորապես՝ հնդիկ գիտնականների կողմից ստեղծվեց իռացիոնալ և բացասական թվերով հանրահաշիվը: Նրանք էին հեղինակը արդի տասական դիրքային թվարկության համակարգի՝ իր թվանշաններով, որոնք սովորաբար հայտնի են «արաբական» անվամբ:

Մաթեմատիկայի հետ անխզելիորեն կապված էր աստղագիտությունը, որի համար գիտնականները կիրառում էին մաթեմատիկական մեթոդներ: Աստղագիտության վերաբերյալ աղբյուրները անհամեմատ ավելի շատ տեղեկություններ են պարունակում: Հայտնի է, որ բաբելոնյան աստղագետները գրեթե ճշգրիտ հաշվարկել են տարվա տևողությունը՝ 365 օր,

5 ժամ, 41 րոպե և 4,16 վայրկյան, ինչն ընդամենը 7 րոպե և 17 վայրկյանով էր սխալ: Միջագետքցիները կանոնավոր հետևում էին երկնային մարմինների շարժմանը, Արևի և Լուսնի խավարումներին: Բաբելոնում և այլ քաղաքներում կային աստղագիտական դպրոցներ:

Աստղագիտությունը Հունաստանում ներկայանում էր այնպիսի խոշոր մտածողներով, ինչպիսիք էին **Էրատոսթենեսը, Արիստոտելը** և այլք: **Հիպարքոսը** (Ք.ա. II դ.) կազմեց աստղացուցակ, որը պարունակում է շուրջ հազար աստղերի երկնային դիրքաթվերը (կոորդինատները) և պայծառությունների գնահատականները: Այն օգտագործվում է նաև այսօր:

Հռոմեական դարաշրջանի ճանաչված աստղագետ էր ծագումով հույն **Պտղոմեոսը** (Ք.հ. II դ.): Նա զարգացրեց իր նախորդների կողմից առաջ քաշված՝ Տիեզերքի երկրակենտրոն կառուցվածքի մասին տեսությունը: Այն ընդհուպ մինչև XVI դարի երկրորդ կեսը գերիշխում էր գիտության մեջ: Իսկ արևակենտրոն համակարգի մասին առաջինը խոսել է **Արիստարքոս Սամոսցին** (Ք.ա. IV–III դդ.):

Իրավական միտքը

Գրավոր օրենքներ ստեղծելու փորձեր Միջագետքում կատարվեցին դեռ շումերական դարաշրջանում, սակայն դրա բարձրակետը Բաբելոնի արքա Համմուրապիի օրենսգիրքն էր: Օրենքները վերաբերում են կյանքի ամենատարբեր բնագավառներին: Դրանք պատիժներ էին սահմանում բռնության, սեփականության իրավունքի խախտման, կեղծիքի և խարդախության համար, կարգավորում էին իրավական հարաբերություններն ընտանիքի անդամների միջև և այլն:

Օրենքների ժողովածուներ կազմվեցին նաև այլ արևելյան պետություններում: Միայն խեթական օրենսգրքից պահպանվել են շուրջ 200 հոդվածներ:

Հունաստանում իրավունքի պատմության կարևոր դրվագներից է Ք.ա. VII դ. **Դրակոնի** իրականացրած միջոցառումը, երբ Աթենքում գրի առնվեցին օրենքները: Մինչ այդ պահը առաջնորդվում էին **սովորութային իրավունքի** կանոններով: Դրակոնի օրենքներով վերացվեց արյան վրեժը, սահմանազատվեց կանխամտածված սպանությունը ոչ կանխամտածվածից, սահմանվեց մասնավոր սեփականության իրավունքը, որի չնչին խախտումը դատապարտվում էր մահապատժով:

Օրենքները որոշ ժամանակ անց վերաշարադրվեցին Աթենքի արքոնտ **Սոլոնի** կողմից: Նրա կարևոր բարեփոխումներից էր նաև **ատենականների դատարանի** ստեղծումը:

Հին Հռոմում կար իրավունքի շատ ավելի զարգացած համակարգ: Հին հռոմեական իրավունքի սկիզբը **Տասներկու տախտակների** օրենքներն են (Ք.ա. 450–449 թթ.): Դրանք վերաբերում են դատարանակազմությանը, քրեական, քաղաքացիական և ընտանեկան իրավունքին, մասնավոր սեփականությանը, պայմանագրային հարաբերությունների հիման վրա կնքված գործարքներին և այլն:

Հռոմեական իրավունքը ստորաբաժանվում է **հանրային** և **մասնավորի**: Մասնավոր իրավունքի հիման վրա ձևավորվեց **քաղաքացիական իրավունքը**: Դրա հիմնական հասկացություններից են սեփականության իրավունքը, պարտավորությունների իրավունքը, ժառանգման իրավունքը և այլն:

Հռոմեական իրավական մտքի ձեռքբերումներից էր իրավունքի՝ որպես առանձին գիտության սահմանումը և իրավաբանի հաստատության ստեղծումը: Արդի իրավագիտության բազմաթիվ տերմիններ և հասկացություններ, ինչպես նաև դատարանում երդվելը ժառանգվել են հռոմեական դարաշրջանից:

Փիլիսոփայություն և պատմագիտություն

Փիլիսոփայական մտքի ձևավորման ասպարեզում մեծ է հունական քաղաքակրթության դերը: Հին հունական փիլիսոփայական միտքը ձևավորվել է տարբեր դպրոցներում՝ ծնունդ տալով մի շարք ուղղությունների:

Առաջին փիլիսոփայական դպրոցը **միլեթյան դպրոցն էր** (Ք.ա. VI դ.), որի հիմնադիրն էր **Թալես Միլեթցին**: Նրա հետևորդները աշխարհի նյութական նախահիմք էին համարում որևէ տարր՝ **ջուրը**, **օդը** կամ



Պյութագորաս



Քսենոփոն



Սոկրատես

ապեյրոնը (անվերջ, անորոշ սկզբնանյութ): Իսկ **Հերակլիտը** որպես այդպիսին դիտում էր կրակը:

Հաջորդը **Պյութագորասի** տեսությունն էր (Ք.ա. VI դ.): Նա որպես բոլոր իրերի կեցության սկզբունք համարում էր **թիվը**: Թվի շնորհիվ է աշխարհն ընկալվում որպես օրինաչափություն, տիեզերական կարգուկանոնի հիմք: Հետագայում տարբեր փիլիսոփաներ առաջարկեցին այլ նախահիմքեր:

Իր նախորդ Սոկրատեսի համընդհանուր բանականության սկզբունքը **Պլատոնը** վերափոխեց **օբյեկտիվ իդեալիզմի** ուսմունքի: Նա գաղափարները հռչակեց հավերժական, գերագույն գոյեր: Գլխավորը «բարիքի գաղափարն է», որից ներքև մյուս գաղափարներն են, իսկ զգայական և նյութական աշխարհը գաղափարների ստվերներն են:

Պլատոնի աշակերտ **Արիստոտելի** գոյաբանական ուսմունքը տատանվում է իդեալիզմի և մատերիալիզմի միջև:

Ավելի ուշ փիլիսոփայության մեջ տիրապետող են դառնում տարբեր ուղղություններ՝ **ստոիցիզմը, էպիկուրականությունը, սկեպտիցիզմը, նորպլատոնականությունը:**

Հռոմեական փիլիսոփայությունը գերազանցապես զարգանում էր հունականի ազդեցության պայմաններում: Հռոմեացի փիլիսոփաները հիմնականում զբաղված էին հունական փիլիսոփաների գործերի թարգմանությամբ և մեկնությամբ:

Փիլիսոփայության պես, պատմագիտական միտքը առավել մեծ զարգացում ապրեց հունահռոմեական աշխարհում:

Հունաստանում պատմական բնույթի առաջին գործերը գրվել են Ք.ա. VI–V դդ. **լոգոգրափոսների** կողմից: Նրանք ներկայացնում էին իրենց քաղաքների, առասպելական հերոսների մասին տեղեկություններ: Լոգոգրափոսներից հայտնի էին **Հեկատեոս Միլեթցին** (Ք.ա. մոտ 546–480 թթ.) և **Հելլանիկոս Միտիլենցին** (Ք.ա. V դ.):

Հերոդոտոսը (Ք.ա. 485–425 թթ.) հիմք դրեց ընդհանրացնող ուսումնասիրություններին: Նրա «**Պատմության**» մեջ, բացի հույն–պարսկական պատերազմների նկարագրությունից, հսկայական նյութ է հաղորդվում տարբեր երկրների պատմության, ժողովուրդների կենցաղի ու սովորույթների մասին: Նրան հաջորդեցին մեծաքանակ պատմիչներ, որոնց աշխատությունները նվիրված էին համահունական նշանակության իրադարձություններին (**Թուկիդիդես, Քսենոփոն** և այլն):

Վաղ հռոմեական պատմագրությունը ձևավորվեց **տարեգրությունների** հիման վրա: Միայն Ք.ա. II դարից է սկսվում բուն հռոմեական պատմագրության ծնունդը, որի ձևավոր-

ման վրա մեծ էր հունական ազդեցությունը: Հռոմում գործում էին շատ հույն պատմագիրներ՝ **Պոլիբիոսը, Դիոդորոս Սիկիլիացին, Դիոնիսիոս Հալիկառնասցին, Ապիանոսը** և այլք:

Հռոմեացի պատմագիրներից խոշոր ներդրում ունեն **Տիտոս Լիվիոսը, Տերենտիոս Վառոնը, Սալյուստիոսը, Պոմպեոս Տրոգոսը** և այլք:

Բացի ընդհանուր պատմագիտական ստեղծագործություններից, հանդես են գալիս պատմահուշագրական (**Հուլիոս Կեսար**) և պատմակենսագրական ժանրերը (**Պլուտարքոս, Սվետոնիոս**):

Ամփոփում: *Գիտության տարբեր բնագավառների հիմքերը դրվեցին Առաջավոր Ասիայում և Միջերկրածովյան ավազանում պետականությունների կազմավորմանը զուգընթաց: Այստեղ ձևավորվեցին բնագիտության ամենատարբեր ուղղություններ, ինչպես նաև հասարակական գիտություններ: Դրանք հետագա զարգացում ապրեցին միջնադարում և նոր ժամանակներում:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ բժշկագիտությունը Եգիպտոսում բարձր մակարդակի հասավ: Բուժման ի՞նչ ձևեր էին տարածված Եգիպտոսում, բացի գիտական բժշկությունից: Ի՞նչ է հայտնի Միջագետքի և հունահռոմեական աշխարհի բժշկության մասին:
2. Մաթեմատիկայի ո՞ր ճյուղերին էին ծանոթ եգիպտացիները: Ի՞նչ ձեռքբերումներ ունեին եգիպտացիները օրացույցի և աստղագիտության բնագավառներում: Համեմատե՛ք Եգիպտոսի, Միջագետքի և Հունաստանի ձեռքբերումները մաթեմատիկայի և աստղագիտության բնագավառներում:
3. Ե՞րբ է կազմվել պահպանված հնագույն օրենքների ժողովածուն: Ո՞ր բնագավառներին էին վերաբերում օրենքները: Ներկայացրե՛ք հունական և հռոմեական իրավունքի նվաճումները:
4. Ի՞նչ դեր են խաղացել հույները փիլիսոփայական մտքի զարգացման գործում: Նշե՛ք հայտնի հեղինակներին:
5. Ովքե՞ր էին լոգոգրափոսները: Ներկայացրե՛ք հունահռոմեական հայտնի պատմագիրներին:

§ 3. ԿՐՈՆԸ

Արևելյան երկրներ

Կրոնական հավատալիքները ձևավորվել են որպես մարդու կողմից բնության երևույթների ընկալման արդյունք: Պետականությունների հետ միաժամանակ մարդու ստեղծած ոգիները վերածվում են հստակ գործառույթներով օժտված աստվածների: Պետությունների ամրապնդման և հետագա կենտրոնացման փուլում աստվածները միավորվում են, և հանդես են գալիս դիցարանները: Վերջիններս ստեղծվում էին աշխարհիկ կառույցի օրինակով, որտեղ պետության վարչական կենտրոնի նախկին աստվածը հանդես էր գալիս որպես գլխավոր հովանավոր աստված:

Հին Եգիպտոսում երկար ժամանակ գոյություն չուներ միասնական դիցարան: Փոխարենը գործում էին տեղային՝ նոմային դիցարաններ: Օրինակ՝ Հերակլեոպոլիսի գլխավոր աստվածն էր **Ատումը**՝ նախաստեղծ–արարիչ աստվածը, որից սերում էին մյուս աստվածները՝ **Տեֆնուտ**, **Օսիրիս**, **Նուտ**, **Սեթ** և այլն: Ատումը ծնվել էր նախասկզբնական ջրային քաոսից, որից և արարվել էին աշխարհը, աստվածներն ու մարդիկ:

Միավորված եգիպտական պետության ի հայտ գալով ձևավորվեց նաև համաեգիպտական դիցարանը: Դրանում առաջ մղվեցին այն քաղաքները ներկայացնող աստվածները, որոնց շուրջն ընթացել էր միավորումը: Օրինակ՝ Միջին թագավորության Արևի աստված **Ռան** նույնականացվեց Թեբեի գլխավոր աստված **Ամոնի** հետ և սկսեց պաշտվել **Ամոն–Ռա** անունով:

Եգիպտացիների մոտ արմատավորված էին մեռյալների պաշտամունքը և պատկերացումը հանդերձյալ կյանքի մասին: Նրանց կարծիքով՝ հանդերձյալ կյանքում մահացածին անհրաժեշտ էր մարմին, ուր պետք է ապրեր նրա հոգին: Այդ պատճառով մահացածի մարմինը պետք է զմռսվեր: Ըստ հավատալիքների՝ եգիպտացին մահից հետո կարող էր դառնալ **Օսիրիս**, այսինքն՝ վերածնվեր: Օսիրիսը մեռնող և հարություն առնող աստվածություն էր, անդրաշխարհի տիրակալը:

Օսիրիսի քույրն ու կինն էր **Իսիդան**՝ սիրո և մայրության աստվածուհին: Նրանց որդին՝ **Հորը**, մարմնավորում էր Երկինքը: Վերջինս՝ իբրև կենդանի փարավոն, ապրում էր Երկրում:

Մինչև Ք.ա. III հազարամյակի վերջերը Միջագետքում գոյություն չուներ միասնական դիցարան: Յուրաքանչյուր քաղաք ուներ սեփական պաշտամունքային դիցարանը՝ հովանավոր աստծո գլխավորությամբ: Դրանցից մի քանիսն ունեին համաշումերական նշանակություն: Դրանք էին առաջին սերնդի աստվածների հայր **Անը**, աստվածների մայր **Կին**, **Էնլիլը**՝ երկրորդ սերնդի գերագույն աստվածը, **Էնկին**՝ ստորերկրյա ջրերի և Համաշխարհային օվկիանոսի աստվածը, **Ինաննան**՝ սիրո և ռազմի աստվածուհին, և այլն:

Շումերական դիցարանը համակարգվեց Ուրի III հարստության շրջանում, երբ Միջագետքը մեկ դար միավորվեց կենտրոնացված պետականության մեջ:

Ասորեստանի և Բաբելոնիայի վերելքին զուգահեռ առաջ մղվեց **Աշուր** և **Մարդուկ** աստվածների պաշտամունքը, որոնք էլ ստանձնեցին շումերական աշխարհաստեղծման առասպելների գլխավոր դերը:

Այսպիսով՝ միջագետքյան կրոնապաշտամունքային համակարգի հիմքում ընկած էր շումերական կրոնը, որը հետագայում որոշ փոփոխություններով պահպանվեց սեմախոս բնակչության մոտ: Շումերական աստվածները ստացան սեմական անվանումներ:

Աքեմենյան Իրանի կրոնը՝ **զրադաշտականությունը**, արմատներով հանգում էր հնդեվրոպական հավատալիքներին: Զրադաշտականության հիմքում ընկած էր աստվածային և երկրային աշխարհները սահմանող բարձրագույն կարգը, որի մարմնավորողը **հավերժական հուրն էր**:

Զրադաշտականությունը դուալիստական ուսմունք է, որի առանցքը Աստծո և Դևի, Բարու և Չարի, Լույսի և Խավարի պայքարն է: Այն մարմնավորվում է երկու կերպարների՝ բարի և ստեղծարար ոգի **Ահուրամազդային** և նրա հակառակորդ **Ահրիմանին**: Ահուրամազդան Երկնքի և Երկրի, մարդու և մարդկային երջանկության արարիչն էր:

Հին Հնդկաստանի կրոնական համակարգը

Եգիպտական աստվածներ.
Օսիրիս, Հոր, Իսիդա

ձյուղավորված կառույց էր: Աստվածները բաժանվում էին երկու խմբի՝ **դայվաներ** և **ասուրաներ**: Առաջիններից էին **Ինդրան** (փոթորկի աստված), զոհաբերության կրակի աստված **Ագնին**, Արևի աստված **Սուրյան** և այլն: Ասուրաների թվում էին **Միթրան**, **Վարունան**, **Արյամանը** և այլն: Աստվածները մարդակերպ էին, կային նաև աստվածացված գետեր, սրբազան կենդանիներ:

Հնդարիական հավատալիքների վրա է հիմնված բազմաստվածային **բրահմայական** կրոնը: Այստեղ աստվածների գլխավոր եռյակը կազմում են **Բրահման, Շիվան, Վիշնուն**: Բրահմայականության հիմքում ընկած է **հոգու վերամարմնավորման** գաղափարը: Մահից հետո մարդու հոգին մարմնավորվում է որևէ կենդանու, բույսի կամ այլ մարդու մեջ: Դա կրկնվում է այնքան ժամանակ, քանի դեռ հոգին չի մաքրվել և միաձուլվել **համընդհանուր հոգու** հետ: Բրահմայականության շարունակությունն է **հինդուիզմը**, որն աշխարհի ամենատարածված կրոններից է:

Չինական առասպելաբանության համաձայն՝ աստվածները մարդկանց սովորեցրին կրակ ստանալ, սնունդ և աշխատանքի գործիքներ պատրաստել: Գերագույն աստվածը՝ **Դին,** անձրևի, կայծակի և քամու տիրակալն էր: Նրան շրջապատում էին արքայի՝ **վանի** մահացած նախնիները: Ըստ հավատալիքների՝ արքայի նախնինե-

Հունական Արտեմիս
աստվածուհին



Բաբելոնիայի գլխավոր աստված
Մարդուկը

ը միջնորդի դեր էին կատարում նրա և գերագույն աստծո միջև:

Չինական կրոնը փոփոխությունների ենթարկվեց **կոնֆուցիականության** ի հայտ գալով: Ըստ վերջինիս՝ երկինքը և երկնային կամքը որոշում են մարդկանց գործողություններն ու վարքը, նրանց հասարակական դիրքը: Մարդիկ բաժանվում են երկու խմբի՝ «վեհանձն այրեր» և «մանր մարդիկ»: Առաջինները կոչված էին կառավարելու, երկրորդները՝ դատապարտված էին ծառայելու:

Հունահռոմեական աշխարհ

Հույներն ունեին դիցաբանական հարուստ համակարգ: Այստեղ առաջին աստվածներից էին **Ուրանոսը**, **Գեան**, նրանց որդի **Քրոնոսը** և տասներկու **տիտանները**: Քրոնոսին տապալելով՝ իշխանությունն իր ձեռքն է վերցնում նրա որդի **Զևսը**:

Զևսը երկնքի, ամպրոպի և կայծակի աստվածն էր, որի իշխանությունը տարածվում էր մյուս բոլոր աստվածների վրա: Վերջիններս ներկայացնում էին բնության որևէ երևույթ կամ վերացական հասկացություն. **Պոսեյդոնը** ծովերի աստվածն էր, **Հերան**՝ մայրության, **Դեմետրեն**՝ բնության և բերրիության, **Ապոլոնը**՝ Արևի և արվեստների, **Ափրոդիտեն**՝ սիրո և գեղեցկության: Աստվածներն ապրում էին **Օլիմպոս** լեռան վրա (այդ պատճառով նրանք կոչվում են «օլիմպիական»):

Մեծ կարևորություն ունեին տարբեր աստվածներին նվիրված տոնակատարություններն ու մրցումները, ինչպիսիք էին Աթենաս աստվածուհու պատվին իրականացվող **Համաաթենականքը**, Զևսին նվիրված **օլիմպիական** և **նեմեյան խաղերը** և այլն:

Հռոմեական դիցարանի ձևավորման գործում մեծ էր էտրուսկների ու հույների դերը: Մասնավորապես էտրուսկյան և հունական աստվածների օրինակով հռոմեացիներն իրենց աստվածներին պատկերում էին մարդակերպ: Հռոմեական աստվածներից շատերն ունեին էտրուսկյան ծագում՝ **Յուպիտերը, Յունոնան, Միներվան** և այլն:

Հռոմում պաշտամունքային հարցերը տնօրինում էին **քրմական կոլեգիաները**: Բարձրագույն քրմական իշխանությամբ էին օժտված նաև կոնսուլները, իսկ հետագայում՝ կայսրը, որը նաև գերագույն քուրմն էր: Կայսերական շրջանում մեծ տարածում գտավ կայսեր անձի պաշտամունքը:

Հունական Նիկե աստվածուհին

Հունական Ափրոդիտե աստվածուհին

Հնդկական Իշտար աստվածուհին

Մայրությունը խորհրդանշող խեթական աստվածուհի



Միքելանջելո. «Ողբ»

Բազմաստվածության ավարտը. համաշխարհային կրոններ

Միաստվածական կրոնների ծագումը երկարատև գործընթաց էր՝ պայմանավորված պետականության և կրոնի տևական զարգացմամբ:

Միաստվածության դրսևորումներ կային Ասորեստանում՝ սկսած Սարգոն II–ից, երբ սկսեց բացարձակեցվել Աշուր աստծո պաշտամունքը: Վերջինս ինքնուրույն ներկայացնում էր ողջ դիցարանը: Իսկ Բաբելոնիայում Ք.ա. VI դ. փորձ արվեց բացարձակեցնելու Լուսնի **Սին** աստծո պաշտամունքը:

Հին Հունաստանում որոշ փիլիսոփաներ (Պլատոն, Արիստոտել) կասկածի տակ էին առնում բազում աստվածների գոյությունը:

Միաստվածության մյուս դրսևորումը կապվում է հրեական **Յահվե** աստծո պաշտամունքի հետ: Այն սկզբնապես հրեական ցեղերից մեկի աստվածն էր, որը հետագայում դարձել էր իսրայելցիների միակ աստվածը: Իր գործառույթներով Յահվեն Ք.ա. I հազարամյակի սկզբներին սկսեց առանձնանալ՝ ձեռք բերելով միաստվածական տարրեր և վերածվելով «**մարգարեական միաստվածության**»:

Նրա պաշտամունքի հիման վրա ձևավորվեց **հուդայականությունը**, որը Ք.ա. I հազ. սկզբներին վերածվեց միաստվածային կրոնի: Այն հիմնված է Աստծո և հրեաների նախահայր **Աբրահամի** միջև «կնքված» պայմանագրի վրա: Դրանով **Իսրայելի որդիները** մերժեցին կուռքերի պաշտամունքը: Հուդայականության հիմնական էությունը հենվում է Յահվեի՝ որպես միակ աստծո հանդեպ հավատի, **մեսիայի** (փրկչի) գալստյան, աշխարհի վերջի մոտեցման մասին ուսմունքների վրա:

Միաստվածության հնդկական տարբերակն էր **բուդդայականությունը**, որը ծագել է Ք.ա. I հազ. կեսերին: Հետագայում այն ներթափանցում է Չինաստան՝ ավելի ուշ վերածվելով համաշխարհային կրոնի: Բուդդայականության հիմքը **նիրվանայի** միջոցով փրկության հասնելու գաղափարն է: Ըստ դրա՝ կյանքը տառապանք է, որից կարելի է փրկվել՝ հետևելով նիրվանա տանող ճանապարհին, խեղդելով ցանկություններն ու կիրքը: Նիրվանային հասնելով՝ մարդը դադարում է վերածնվելուց և ազատվում տառապանքներից:

I հազարամյակի սկզբին Պաղեստինում ծագեց **քրիստոնեական վարդապետությունը**, որը արագորեն տարածվեց Սիրիայում, Փոքր Ասիայում, Եգիպտոսում և այլուր: Քրիստոնեության հիմնադիրը **Հիսուս Քրիստոսն** է: Կոստանդին I կայսեր **Միլանի հրովարտակով (313 թ.)** քրիստոնյաները ստացան դավանանքի ազատություն, և քրիստոնեությունը շուտով դարձավ տիրապետող կրոն:

Քրիստոնեության ակունքներում ընկած են տարբեր արևելյան կրոններից (մեռնող–հարություն առնող աստվածություն, հուդայականության մեսիական ուսմունքը և այլն), ինչպես նաև անտիկ փիլիսոփաների ուսմունքներից:

Քրիստոնեության գլխավոր գաղափարներն են հավատն առ Աստված, առ Հիսուս Քրիստոս՝ որպես Աստծո որդի, և առ Սուրբ Հոգի, Քրիստոսի երկրային առաքելությունը և նրա հարությունը, Քրիստոսի մոտալուտ երկրորդ գալուստը, ահեղ դատաստանը և երկնային թագավորության հաստատումը:

Վաղ քրիստոնեական համայնքները պարզ կառուցվածք ունեին: Չկար կարգավորված պաշտամունք, չէր մշակվել միասնական դավանաբանություն: Դավանաբանական վեճերին վերջ տալուն էր միտված **325 թ.** հրավիրված **Նիկեայի եկեղեցաժողովը,** որն ընդունեց **Հավատո հանգանակը** կամ **Հավատամքը**: Դրանով հաստատվեց **Հայր Աստծո** և **Որդի Աստծո** միագո էությունը, և դատապարտվեց **արիոսականությունը**: Այս հակամարտությանը վերջ տվեց **381 թ.** Կոստանդնուպոլսի I տիեզերական ժողովը, որը հաստատեց **Սուրբ Երրորդության** դավանանքը (Հայր Աստված, Որդի Աստված և Սուրբ Հոգի):

Ամփոփում: *Հին աշխարհի մարդու պատկերացումների հիմքում ընկած էին բնության, ժամանակի և տարածության, կյանքի և մահվան ընկալումները: Բնության հետ փոխկապակցվածությունը մարդուն օժտում էր բնության երևույթները յուրովի մեկնաբանելու կարողությամբ, որի արդյունքում էլ ծնվում էր նրա առասպելաբանական մտածողությունը: Ըստ այդմ՝ ծիսականացվում էր ամեն մի երևույթ, որը դառնում էր պաշտամունքի առարկա, դառնում էր ոգի, ապա և աստված: I հազարամյակում Առաջավոր Ասիայում և Հնդկաստանում ձևավորվեցին նաև միաստվածային կրոններ:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշե՛ք կրոնի առաջացման պատմական պայմանները: Ի՞նչ նշանակություն ձեռք բերեց կրոնը պետության համար:
2. Միասնական դիցարանը ինչպե՞ս ձևավորվեց Եգիպտոսում: Միջագետքում ե՞րբ ձևավորվեց միասնական դիցարան:
3. Համեմատե՛ք Եգիպտոսի, Շումերի, Իրանի, Հնդկաստանի և Չինաստանի կրոնական համակարգերը. ի՞նչ նմանություններ ու տարբերություններ կարող եք նշել:
4. Ներկայացրե՛ք հունահռոմեական աշխարհի կրոնական առանձնահատկությունները:
5. Վերհանե՛ք միաստվածային կրոնների առաջացման նախադրյալները: Թվարկե՛ք Հին աշխարհում ստեղծված համաշխարհային կրոնները:

§ 4. ԱՐՎԵՍՏ

Եգիպտոս

Ճարտարապետության սկիզբը կապված է պետականությունների ձևավորման փուլում հասարակական բնույթի վարչական և հոգևոր կառույցների անհրաժեշտության հետ:

Հին եգիպտական ճարտարապետության և շինարարական տեխնիկայի գլուխգործոցը **Գիզեի** Մեծ բուրգերն են՝ Կահիրեից ոչ հեռու: Եգիպտոսում հաշվվում է շուրջ 100 բուրգ, որոնց մեծ մասը կառուցվել է Հին և Միջին թագավորությունների դարաշրջանում:

Եգիպտական տաճարային ճարտարապետության մեջ իրենց ծավալներով և շքեղությամբ առանձնանում են երկու համալիրներ: Առաջինը Ամոն աստծո տաճարն է **Կառնակում՝ Լուքսոր** քաղաքի մոտ: Այն բաղկացած է ընդհանուր պարսպով շրջապատված չորս խոշոր և պարսպից դուրս գտնվող բազմաթիվ փոքր տաճարներից՝ 20 հազ. մ² ընդհանուր մակերեսով: Տաճարի սյունազարդ մեծ սրահն ունի մի քանի մակարդակ՝ մինչև 21 մ բարձրությամբ 134 հսկայական սյուներով: Այստեղ կանգնեցված երկու կոթողներն ունեն 30 մ բարձրություն, յուրաքանչյուրը՝ շուրջ 1000 տոննա քաշ:

Երկրորդը Լուքսորի (նախկինում՝ Թեբե) տաճարային համալիրն է, որի կառուցումն



Լուքսոր. Ռամզես II–ի արձանը

Նարամսինի պատկերով բարձրաքանդակ. Ք.ա. 2250 թ.

Պերսեպոլիս. Դարեհ I–ի տաճարի դարպասները

ավարտվեց Ռամզես II–ի օրոք: Գլխավոր տաճարն աչքի է ընկնում 24 մ բարձրությամբ հսկայական սյուներով՝ պատված Ռամզեսի և հետագա փարավոնների արշավանքների դրվագներով: Տաճարի մուտքի մոտ վեր էին խոյանում Ռամզեսի վեց հսկա արձանները, ինչպես նաև գրեթե 25 մ բարձրությամբ գրանիտե զույգ կոթողներ:

Խոշոր տաճարներից է նաև Ռամզես III–ի կառուցած տաճարը **Մեդինեթ–Աբուում**՝ Լուքսորի մոտ:

Տաճարաշինության նոր ձևերից են ժայռափոր կառույցները: Դրանց շարքում հատկապես նշանավոր է Ռամզես II–ի տաճարը **Աբու–Սիմբելում**՝ փարավոնի 20 մ բարձրության 4 հսկա արձաններով:

Եգիպտական պալատական համալիրները իրենց չափերով չեն զիջել տաճարներին: Օրինակ՝ Ամենհոտեպ IV (Էխնաթոն) փարավոնի՝ Ախետաթոնում կառուցած պալատի արևելյան ճակատն ունեցել է 700 մ երկարություն:

Քանդակագործությունն ու նկարչությունը Եգիպտոսում զարգանում էին ճարտարապետության հետ զուգահեռ: Տաճարները և պալատները զարդարվում էին բարձրաքանդակներով, սրահներում դրվում էին աստվածների, փարավոնների արձաններ, պատերը նկարազարդվում հանդիսավոր տեսարաններով: Դրանցում գլխավոր դերակատարը արքան էր: Քանդակագործը կամ նկարիչը պարտավոր էր արտահայտել փարավոնի անձի գերազանցությունը իր հպատակների նկատմամբ և նրա հավասարությունը աստվածների հետ:

Միջագետք

Միջագետքում կոթողային ճարտարապետությունը սկսվում է շումերական առաջին քաղաքների հետ միասին: Դրա արտահայտությունը կանոնավոր հատակագծով տաճարային, պալատական համալիրներն ու **զիկկուրատներն** են:

Առաջին զիկկուրատը կառուցվել է Ուրուկ քաղաքում Ք.ա. XXXI–XXIX դդ.: Այս տիպի կառույցներից է Ուրի III հարստության արքա Ուր Նամուի և նրա որդի Շուլգիի եռահարկ զիկկուրատը Ուրում: Այն ուներ 20 մ բարձրություն և զբաղեցնում էր 2,8 հազ. մ^2 տարածք: Նշանավոր է Բաբելոնի Մարդուկ աստծո տաճարը, որի զիկկուրատն ուներ 91 մ բարձրություն («**Բաբելոնյան աշտարակը**»):

Տաճարներն ու պալատները սովորաբար ունեին ուղղանկյուն կամ քառանկյուն հատակագիծ՝ բաղկացած մեկ կամ մի քանի բաց բակերի շուրջ խմբված սենյակներից և պահեստներից: Միջագետքյան ճարտարապետության առանձնահատկությունը բացարձակ համաչափության շեշտումն էր:

Աքքադական դարաշրջանի արվեստը հիմնականում ներկայացված է քանդակագործու-

Հռոմի ֆորումը

թյամբ և կնիքագործությամբ: Նշանավոր է Նինվեից գտնված աքքադական արքայի բրոնզե գլուխը, ինչպես նաև Աքքադի արքա Նարամսինի կոթողը: Այստեղ նկատվում է աքքադական արվեստի իրապաշտական ոճը:

Միջագետքում միասնական պետականության հաստատման հետ մեկտեղ արվեստում ևս արձանագրվեցին փոփոխություններ: Պատկերագրությունը ենթարկվեց որոշակի կանոնակարգման՝ ձեռք բերելով միօրինակություն: Արքաները ներկայացվում են հանդիսավորությամբ օժտված, նախորդ շրջանի համեմատությամբ՝ պակաս դինամիկ, հույզերից զուրկ:

Միջագետքյան քանդակագործությունը իր բարձրակետին հասավ նորասորեստանյան տերության շրջանում: Պալատական ամբողջ սրահներ պատվում էին արքայի հաղթարշավները և նրա առօրյան (խնջույք, որս կամ ծիսական արարողություն) ներկայացնող բարձրաքանդակներով: Դրանք երբեմն ունեին մինչև 4 մ բարձրություն և ձգվում էին տասնյակ մետրեր:

Ասուրա–բաբելոնյան քանդակագործության դասական օրինակներ են պալատների և քաղաքի մուտքերը հսկող կեսարդ–կեսկենդանի էակների արձանները:

Աքեմենյան Իրան

Աքեմենյան Իրանի ճարտարապետության վաղ փուլի գլխավոր հուշարձանը **Պասարգադքն** է՝ իր ժամանակաշրջանի համար անանախադեպ ընդարձակ, չորս կողմից պարտեզներով շրջապատված պալատական մի համալիր: Պասարգադքի բնութագրական կառույցներից են համալիրի հանդիսավոր մուտքը, գահանիստ պալատը, «ընդունելությունների սրահը» և Կյուրոսի դամբարանը:

Իրանական ճարտարապետության հաջորդ հուշարձանը Դարեհ I–ի հիմնադրած **Պերսեպոլսի** հուշարձանախումբն է: Այն 450x300 մ մակերեսով արհեստական հարթակի վրա կառուցված ընդարձակ պալատական համալիր է: Համալիրի կենտրոնում 100–սյունանոց հսկայական սրահն է: Սրահի սյուները վեր են խոյանում գրեթե 20 մ՝ պսակվելով կենդանակերպ խոյակներով:

Աքեմենյան արվեստի մյուս՝ առավել լավ ներկայացված ճյուղը քանդակագործությունն է: Դրա լավագույն վկայությունը Դարեհ I–ի, նրա մերձավորների և գերեվարված արքաների պատկերներն են՝ փորագրված Բեհիսթունի ժայռի վրա: Պալատական համալիրները զարդարված էին հարյուրավոր բարձրաքանդակներով՝ ի ցույց դնելով արքաների հզորությունն ու տերության գաղափարախոսությունը: Աքեմենյան քանդակագործության գլուխգործոց են համարվում Դարեհի պալատի բարձրաքանդակները:

Հունահռոմեական աշխարհ

Հին հունական ճարտարապետությունը անցել է մի քանի փուլեր՝ Կրետե–միկենյանից մինչև հելլենիստական:

Միկենյան ճարտարապետությանը բնորոշ են **կիկլոպյան** շարվածքով ամրացված քաղաքները և պալատները: Այդպիսիք հայտնաբերվել են Միկենքում, Պիլոսում, Տիրինթոսում: Դրանք ունեին հանդիսավոր սրահներ, բնակելի, օժանդակ շինություններ, արհեստանոցներ և այլն: Միահարկ կամ երկհարկ պալատի կենտրոնը **մեգարոնն էր**՝ գահանիստ քառասյուն սրահը:

Դասական շրջանի քաղաքաշինության հիմնական տարրերն էին **ակրոպոլիսը**՝ միջնաբերդ–սրբավայրը, և **ագորան**՝ քաղաքի հասարակական և առևտրական կենտրոնը: Դրանց շուրջը ափռված էին քաղաքային թաղամասերը: Ք.ա. VI դ. վերջերից քաղաքային ճարտարապետությանը բնորոշ դարձավ ուղիղ, իրար խաչաձև հատվող փողոցներով հատակագիծը:

Պաշտամունքային հիմնական կառույցները տաճարներն են: Տաճարի վաղագույն ձևերը ծագել են մեգարոնից: Սրանք ուղղանկյուն տաճարներ էին՝ ճակատային սյուներով:

Տաճարների և սյունազարդ շինությունների՝ քարից կառուցումը նպաստեց **ճարտարապետական օրդերների** (հենահեծերի) կիրառության մեծացմանը: Սկզբնականը **դորիական օրդերն** էր, որն աչքի է ընկնում պարզությամբ և խստությամբ: Այդ օրդերով է կառուցված Աթենքի **Պարթենոնը**: Ավելի ուշ ծագեցին **հոնիական** և **կորնթական օրդեր-**

ները: Վերջինս ամենաշքեղն է՝ ոճավորված տերևազարդ խոյակով: Այն լայն տարածում գտավ հելլենիստական դարաշրջանում:

Հունական ճարտարապետության բնորոշ դրսևորումն է **թատրոնը**: Այն կիսաշրջանաձև կառույց է, որի մի կողմում հանդիսատեսի նստատեղերն էին, կենտրոնում՝ բեմադրությունների հրապարակը: Դրանցից ամենավաղը Դիոնիսոսի թատրոնն է Աթենքում, որը տեղավորում էր 17 հազար հանդիսական:

Հունական արվեստում մեծ տարածում գտան նկարազարդ խեցեգործությունը, նկարչությունը, խճանկարչությունը: Ճարտարապետության հետ զուգահեռ ծաղկում ապրեց նաև քանդակագործությունը: Հայտնի քանդակագործներ էին **Ֆիդիասը, Լիսիպպոսը, Պրաքսիտելեսը** և այլք: Հունական բոլոր տաճարների ներսը և արտաքին պատերը զարդարված էին քանդակներով և արձաններով:

Հռոմեական ճարտարապետության ձևավորման գործում մեծ էր էտրուսկյան ճարտարապետության դերը, ինչի վկայությունը տաճարաշինությունն է: Հռոմեական առաջին տաճարները, մասնավորապես Յուպիտերի տաճարը Կապիտոլիումում, կրում են էտրուսկյան տաճարաշինության հատկանիշներ:

Ք.ա. III–I դդ. հռոմեական ճարտարապետությունը բնութագրվում է ծավալուն քաղաքաշինությամբ: Մեծ զարգացում ապրեց բնակարանային ճարտարապետությունը:

Հետագայում կատարելագործվեցին հասարակական և պաշտամունքային կառույցների գլխավոր տիպերը՝ **բազիլիկը** (եռամաս երկայնական ընդարձակ սրահ), որ կառուցվում էր քաղաքային **ֆորումի** տարածքում, և **թերմը**: Թերմը բազմագործառույթ կառույց էր՝ հասարակական բաղնիք, որ նախատեսված էր նաև հանգստի, մրցումների, ժողովների համար: Դիոկղետիանոս կայսեր թերմը տեղավորում էր շուրջ 3 հազար մարդ:

Հռոմեական ճարտարապետական և շինարարական տեխնիկայի նվաճումների թվում է **կամարների** լայն կիրառությունը, ինչը հնարավորություն էր տալիս ավելի մեծ մակերես ծածկելու: Հռոմեացիներն առաջինը շինարարության մեջ օգտագործեցին **բետոնը**: Դրանց շնորհիվ ստեղծեցին այնպիսի կառույցներ, ինչպիսիք են **ամֆիթատրոնները** և **աքվեդուկները** (ջրանցույցները): Ամֆիթատրոններից խոշորագույնը Հռոմի **Կոլիզեումն** է, որը տեղավորում է շուրջ 50 հազար հանդիսական:

Կայսերական շրջանում ճարտարապետությունը դառնում է կայսեր անձի և կայսրության պետական գաղափարախոսության ցուցադրության ձևերից մեկը: Այս երևույթի դրսևորումն է միաթռիչք կամ եռաթռիչք **հաղթակամարը** կամ **հաղթադարպասը** և **հաղթակոթողը**, որոնք զարդարվում էին ճոխ բարձրաքանդակներով (Սեպտիմիոս Սևերոսի, Կոստանդինի հաղթակամարները, Տրայանոսի հաղթակոթողը և այլն):

Ծաղկում ապրեց քանդակագործությունը, մեծ թվով քանդակներ ստեղծվում էին անհատական պատվերներով: Մեծ տարածում են գտնում նաև հունական արձանների կրկնօրինակումները: Տաճարներն ու պալատները, առանձին վիլլաները զարդարվում են կրոնական, պատմական բովանդակությամբ քանդակաշարերով: Այս շրջանում է ձևավորվում մարտապատկերային քանդակագործությունը, զարգանում է կոթողային–դեկորատիվ գեղանկարչությունը, խճանկարչությունը և այլն:

Ամփոփում: *Նյութական մշակույթի առաջին հուշարձանները սկսեցին առաջ գալ պետականությունների ձևավորման հետ միասին: Դրանց շարքում առանձնանում են հատկապես ճարտարապետությունը և քանդակագործությունը, որոնք ժամանակի ընթացքում հասան կատարելության: Հնագույն շրջանի ճարտարապետության և քանդակագործության բնորոշ առանձնահատկությունը դրանց կոթողայնությունն է:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ընդհանուր գծերով ներկայացրեք հին եգիպտական արվեստը: Արվեստի ի՞նչ նշանավոր գործեր են ստեղծել հին եգիպտացիները: Նկարագրե՛ք այդ հուշարձանները:
2. Ի՞նչ կառույցներով արտահայտվեց կոթողային ճարտարապետությունը Միջագետքում: Համառոտ ներկայացրե՛ք այդ ճարտարապետական հուշարձանները:
3. Որո՞նք են Աքեմենյան Իրանի ճարտարապետության նշանավոր կոթողները: Ի՞նչ գիտեք դրանց մասին:
4. Համառոտ ներկայացրե՛ք հին հունական ճարտարապետության ու քաղաքաշինության հիմնական կառույցները: Զարգացման ի՞նչ ճանապարհ է անցել հունական ճարտարապետական օրդերների կիրառությունը: Թվարկե՛ք հին հույն քանդակագործների անուններ. նրանց ո՞ր ստեղծագործություններին եք ծանոթ:
5. Որո՞նք են հռոմեական ճարտարապետության և շինարարական արվեստի նշանավոր ձեռքբերումները: Ո՞ր կոթողներն են բնորոշ կայսերական շրջանի հռոմեական ճարտարապետությանը:
6. Աղյուսակի տեսքով ներկայացրե՛ք հին եգիպտական, Միջագետքի, հին հունական և հռոմեական ճարտարապետության և արվեստի նշանավոր կոթողները: Կազմե՛ք որևէ հուշարձանի ընդարձակ նկարագրություն:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑՈՒ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱ ՀԵՏՆՈՐԴ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԱԺԻՆ Դ ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՎԱՐՏԸ

Թեմա 7. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

§ 1. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Հունաստանի նվաճումը Մակեդոնիայի կողմից

Պելոպոնեսյան պատերազմներից հետո, ինչպես արդեն գիտեք, հունական պոլիսային աշխարհը մուտք գործեց համընդհանուր ճգնաժամի փուլ: Պատերազմների հետևանքով մեծ քանակությամբ մարդիկ զրկվել էին իրենց հողակտորներից, որը սոցիալական լուրջ ընդվզումների առիթ էր դարձել: Խախտվել էր պոլիսի լիարժեք քաղաքացու հիմնական հատկանիշը՝ սեփական հողակտորի առկայությունը:

Ք.ա. 392 թ. Կորնթոսում, իսկ **371 թ.** Արգոսում բնակչության հուզումների ժամանակ սպանվեցին հազարավոր ունևոր քաղաքացիներ: Այդ իրադարձությունները ցույց տվեցին, որ գնալով ավելի է խորտակվում պոլիսային համակարգի գլխավոր առանձնահատկությունը՝ պոլիսի քաղաքացիների միջև համերաշխությունը:

Ճգնաժամը դրսևորվեց պոլիսների, ինչպես նաև նրանց և Աքեմենյան տերության փոխհարաբերություններում: Ք.ա. IV դարի հունական աշխարհի քաղաքական կյանքի հիմնական առանձնահատկությունը արտաքին կողմնորոշման անկայունությունն էր: Նույնիսկ առաջատար պոլիսները հաճախակի փոխում էին իրենց քաղաքական դիրքորոշումը՝ կախված հանգամանքներից: Մեծապես աճեց Աքեմենյան տերության դերը ներհունական իրադարձություններում:

Հունական պոլիսներից ոչ մեկը ի վիճակի չէր կայուն դեր ապահովելու իր համար: Ներքին խնդիրները լուծելու համար նրանք հաճախակի դիմում էին արտաքին աշխարհին, առաջին հերթին՝ Աքեմենյան տերությանը:

Այս իրավիճակում հունական գործերում նախաձեռնությունը անցավ հզորացող Մակեդոնիային: Վերջինիս արքա Փիլիպոս II–ը (Ք.ա. 359–336 թթ.) ստեղծեց ամուր պետականություն և հզոր բանակ: Փիլիպոսն օգտագործեց առաջին իսկ առիթը հունական պոլիսները նվաճելու համար: **Ք.ա. 338 թ.** Բեոտիայի **Քերոնեա** բնակավայրի մոտ տեղի ունեցած ճակատամարտում մակեդոնացիները հաջողության հասան:

Հունական պոլիսների անցումը մակեդոնական տիրապետության տակ ամրագրվեց **Ք.ա. 337 թ.** Կորնթոսում հավաքված համահունական վեհաժողովում: Այնտեղ ստեղծվեց հունական պոլիսների միություն՝ Մակեդոնիայի գլխավորությամբ: Հայտարարվեց համընդհանուր խաղաղություն, արգելվեցին պատերազմները: Փիլիպոսը կոչ արեց պոլիսներին միավորվելու ընդդեմ հույների վաղեմի թշնամի պարսիկների:

Աքեմենյան տերության նվաճումը

Սակայն Փիլիպոսը չհասցրեց իրականացնել իր ծրագիրը: Այն վիճակված էր նրա որդի Ալեքսանդրին:

Ք.ա. 334 թ. Ալեքսանդրի բանակը (30000 հետևակ և 5000 հեծյալ) պատմական Տրոյայից ոչ հեռու՝ **Գրանիկոս գետի** մոտ, ջախջախեց Դարեհ III–ի փոքրասիական սատրապների զորքը: Հաջորդ տարվա գարնանը Ալեքսանդրը Կիլիկիայի **Իսոս** քաղաքի մոտ պարտության մատնեց Դարեհի գլխավորած գերակշիռ ուժերին: Այնուհետև նա, տիրանալով սիրիական և փյունիկյան քաղաքներին, **Ք.ա. 332 թ.** առանց դիմադրության մտավ Եգիպտոս:

Եգիպտոսից Ալեքսանդրը շարժվեց Միջագետք, որտեղ **Ք.ա. 331 թ. Գավգամելա** բնակավայրից ոչ հեռու տեղի ունեցավ վճռա-

կան ձակատամարտ: Չնայած թվական զգալի առավելությանը՝ Դարեհի փախուստը մարտադաշտից կանխորոշեց նրա պարտությունը:

Հաղթանակից հետո Ալեքսանդրը առանց լուրջ դիմադրության տիրացավ Միջագետքին և հասավ սկզբում Շոշ, այնուհետև՝ Պերսեպոլիս քաղաքներ: Դարեհը փորձեց փախչել և ապաստան գտնել Պարթևստանում, սակայն ձանապարհին սպանվեց իր մերձավորների կողմից: Դարեհի մահից հետո Ալեքսանդրը շարունակեց արշավանքը, քանի որ Աքեմենյան տերության արևելքում նրա դեմ ստեղծվել էր դաշինք:

Մակեդոնացիներին դժվարությամբ հաջողվեց **Ք.ա. 329–327 թթ.** հպատակեցնել **Բակտրիան** և **Սոգդիանան**: Արշավանքի ավարտին Ալեքսանդրը շարժվեց հարավ՝ դեպի Հնդկաստան: Սակայն նրան վիճակված չէր նվաճել այս երկիրը: Առաջին հաղթական ձակատամարտից հետո պատերազմներից հոգնած նրա զինվորները հրաժարվեցին արշավանքը շարունակելուց: Դրանով ավարտվեցին Ալեքսանդրի շուրջ տասնամյա արշավանքները, որոնց հետևանքով նա տիրացավ արդեն նախկին Աքեմենյան տերությանը:

Հելլենիստական պետությունները

Ք.ա. 323 թ.՝ Ալեքսանդրի մահվան պահին, նրա ստեղծած տերությունը ընդգրկում էր Բալկանյան թերակղզուց մինչև Կենտրոնական Ասիա ընկած վիթխարի տարածքը՝ ավելի մեծ, քան նախկին Աքեմենյան տերությունը: Կյանքի վերջին երկու տարիներին նա զբաղված էր իր նորաստեղծ տերության կազմակերպման հոգսերով: Սակայն ժամանակը չբավարարեց ամուր վարչաքաղաքական և տնտեսական համակարգ ստեղծելու համար: Ալեքսանդրից հետո նրա տերությունը արագորեն քայքայվեց:

Առաջին տարիներին Ալեքսանդրի զորավարները, որոնք կոչվում էին **դիադոխներ** (հուն.՝ «ժառանգորդներ»), համաձայնության եկան պահպանելու նորաստեղծ տերության տարածքային ամբողջականությունը: Վերջինս պետք է բաժանվեր սատրապությունների, որտեղ կառավարելու էին իրենց շարքերից ընտրված սատրապները: Սկզբում մի կարճ ժամանակով իշխանությունը անցավ մակեդոնական հեծելազորի հրամանատար և Ալեքսանդրի մանկահասակ որդու խնամակալ **Պերդիկայի** ձեռքը: Մակեդոնիան և Հունաստանը տրվեցին **Անտիպատրոսին** և **Կրատերոսին**, Թրակիան՝ **Լիսիմաքոսին**, Փոքր Ասիան՝ **Անտիգոնոսին**, **Էվմենեսին**, Եգիպտոսը՝ **Պտղոմեոսին** և այլն:

Այս իրավիճակը երկար շարունակվել չէր կարող, քանի որ Ալեքսանդրի զորավարները միայն ձևականորեն էին ենթարկվում Պերդիկային: Վերջինիս փորձերը՝ ամրապնդելու կենտրոնական իշխանությունը, հանդիպեց դիադոխների դիմադրությանը: Պերդիկայի արշավանքը ընդդեմ Պտղոմեոսի, Անտիպատրոսի և մյուսների **Ք.ա. 321 թ.** ավարտվեց նրա սպանությամբ իր իսկ մերձավորների կողմից: Մակեդոնական զորահրամանատարների խորհրդում որոշվեց իշխանությունը հանձնել Անտիպատրոսին, իսկ տերության տարածքները՝ մի շարք զորավարների: Սակայն Անտիպատրոսի մահից հետո տերության տրոհման գործընթացը սկսեց արագ զարգանալ: Զորավարներից ոչ ոք չէր ցանկանում առաջնությունը զիջել մյուսին: Պարզ դարձավ, որ Ալեքսանդրի ստեղծած տերությունը վերականգնել այլևս հնարավոր չէր:

Հակասությունները դիադոխների միջև տարեցտարի ավելի էին խորանում, որոնք հաճախ վերածվում էին խոշոր պատերազմների: Պատերազմները ոչ մեկին վճռական հաջողություն չբերեցին: Շուտով նրանց միջև կնքվեց հաշտության պայմանագիր, որն ամրագրեց տարածքների նոր վերաբաժանումը: Օգտվելով հարմար առիթից՝ **Սելևկոսը Ք.ա. 312 թ.** հաստատվեց Բաբելոնում: Վերջապես **Ք.ա. 301 թ.** Սելևկոսը, Մակեդոնիայի արքա Կասանդրոսը և Լիսիմաքոսը պարտության մատնեցին Անտիգոնոսին, որից հետո սկսեցին ձևավորվել ապագա հելլենիստական պետությունների սահմանները: Դրանց շարքում առավել խոշորը Սելևկոսի պետությունն էր, ում հաջողվեց փաստացի իրեն ենթարկել նախկին Աքեմենյան տերության արևելյան շրջանները: Հետագայում հելլենիստական պետությունների սահմանները այլևս նշանակալից փոփոխություններ չկրեցին:

Խճանկար. Ալեքսանդր Մակեդոնացին Գավգամելայի ճակատամարտում, Ք.ա. 331 թ.

Այսպիսով՝ Ալեքսանդրի մահից հետո մի քանի տասնամյակներում ձևավորվեց հելլենիստական պետությունների համակարգը, որը մասնակի փոփոխություններով շարունակեց գոյատևել մինչև Հռոմի ներթափանցումը Արևելք:

Հելլենիզմ

Ալեքսանդրի արշավանքներով սկսվեց և հետագայում աստիճանաբար ձևավորվեց համաշխարհային պատմության մի կարևոր դարաշրջան, որը ստացել է «հելլենիստական» անվանումը: Այն արդյունք էր երկու միանգամայն տարբեր քաղաքակրթությունների (արևելյան և արևմտյան) միջև դարերի ընթացքում տեղի ունեցած փոխշփումների: Պատմության մեջ առաջին անգամ վերացան Արևելքի և Արևմուտքի միջև առկա քաղաքական սահմանները: Բալկաններից մինչև Կենտրոնական Ասիա և Հնդկաստան ընկած ընդարձակ շրջանները ներառվեցին հելլենիստական պետությունների մեջ:

Ալեքսանդրի պատկերացմամբ իր նորաստեղծ պետությունը կարող էր հաստատուն լինել միայն նվաճողների և նվաճվողների միջև սերտ հարաբերությունների հաստատման դեպքում: Եկվոր հույներն ու մակեդոնացիները տեղական ժողովուրդների հետ պետք է այնքան սերտանային, որ հետագայում միավորվեին և կազմեին մեկ ժողովուրդ՝ «պարսկահույներ» անվանումով: Ալեքսանդրը շատ պարսիկների, ովքեր թշնամաբար չէին տրամադրված մակեդոնացիների դեմ, նշանակեց բարձրագույն պետական պաշտոնների: Արքայի աջակցությամբ հազարավոր հույներ և մակեդոնացիներ ամուսնացան պարսկուհիների հետ:

Արևելյան և արևմտյան մշակույթների և քաղաքական ու տնտեսական ավանդույթների միջև շփման եզրեր ստեղծելու և սերտաձելու նպատակով նա հատուկ ուշադրություն էր դարձնում քաղաքաշինությանը: Ալեքսանդրը իր տերության մայրաքաղաքը դարձրեց Բաբելոնը:

Հելլենիստական պետությունների ծնունդը կարևորագույն հետևանքներ ունեցավ արևելյան քաղաքակրթությունների հետագա զարգացման վրա: Հելլենիստական պետությունները արևելյան միապետության և հունական աշխարհի պոլիսային համակարգի միաձուլումն էին: Դրանք աչքի էին ընկնում կենտրոնացված ուժեղ արքայական իշխանությամբ և քաղաքների ինքնավարությամբ:

Հելլենիստական աշխարհի կարևոր առանձնահատկությունը տեղական ավանդական և եկվոր հունամակեդոնական մշակույթների օրգանական միաձուլումն էր: Երկու մշակութային տարրերի փոխներգործությունը հանգեցրեց նոր իրողությունների: Այն արտացոլվեց կյանքի բոլոր բնագավառներում՝ կենցաղից մինչև նյութական և հոգևոր մշակույթ, այդ թվում՝ կրոն: Մեծ առաջընթաց նկատվեց քաղաքաշինության, նավաշինության և ռազմական արվեստի բնագավառներում:

Հունական գիտության վրա զգալի էր արևելյան, հատկապես բաբելոնյան և եգիպտական բնագիտության ազդեցությունը: Հելլենիստական քաղաքները վերածվեցին մշակույթի առաջատար կենտրոնների: Արքայական պալատներում բացվում էին գրադարաններ և **մուսեյոններ** (մուսաների տաճարներ), որտեղ գիտնականները և բանաստեղծները նյութական աջակցություն էին ստանում իրենց աշխատանքով զբաղվելու համար:

Կարևոր երևույթ էր արևելյան և արևմտյան կրոնների սերտացումը և միաձուլումը: Հունական դիցարանի աստվածները նույնացվում էին արևելյան աստվածների հետ՝ ստանալով նոր բովանդակություն: Այսպես՝ Զևսը նույնացվեց եգիպտական Ամոնի և բաբելոնյան Բելի հետ: Այդպիսի միասնական աստվածությունների պաշտամունքը լայնորեն տարածվեց նույնիսկ հելլենիստական պետություններից դուրս ընկած երկրներում:

Ամփոփում: *Ք.ա. IV դարի ճգնաժամը հունական պոլիսային աշխարհում բացասաբար անդրադարձավ բոլոր, առաջին հերթին՝ առաջատար պոլիսների քաղաքական և տնտեսական ներուժի վրա: Ճգնաժամի ընթացքում թուլացած պոլիսները ի վերջո Ք.ա. 338 թ. ընկան հզորացած Մակեդոնիայի տիրապետության տակ: Իսկ Ք.ա. 334 թ. սկսվեց Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը, որն ավարտվեց Աքեմենյան տերության նվաճումով: Ալեքսանդրի մահից հետո նրա վիթխարի տերությունը տրոհվեց, և ստեղծվեցին մի շարք պետություններ, որոնք ստացել են «հելլենիստական» անվանումը: Սկսվեց համաշխարհային պատմության մի նոր ժամանակաշրջան, որը կոչվում է հելլենիստական:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչը նպաստեց պոլիսային համակարգի քայքայմանը: Ո՞րն էր Ք.ա. IV դարի հունական աշխարհի քաղաքական զարգացումների առանձնահատկությունը:
2. Ո՞ւմ օրոք Մակեդոնիան սկսեց հզորանալ: Ի՞նչ քաղաքականություն էր վարում Փիլիպոս II–ը հունական պոլիսների նկատմամբ: Ե՞րբ է տեղի ունեցել վճռական ճակատամարտը մակեդոնական զորքերի և պոլիսների միացյալ բանակի միջև: Ի՞նչ որոշումներ ընդունեց Կորնթոսի համահունական վեհաժողովը:
3. Ներկայացրե՛ք Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքների ընթացքն ու արդյունքները:
4. Ինչո՞ւ Ալեքսանդրի տերությունը շատ արագ տրոհվեց: Հելլենիստական ի՞նչ պետություններ առաջացան:
5. Պարզաբանե՛ք հելլենիզմի բնորոշ կողմերը: Մեծ Հայքը և մյուս հայկական պետությունները ինչպե՞ս ներգրավվեցին հելլենիստական աշխարհի մեջ:

§ 2. ՀՌՈՄԸ ԵՎ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ

Հռոմի ներթափանցումը Առաջավոր Ասիա

Հռոմեական հանրապետության ներթափանցումը բուն Առաջավոր Ասիա սկսվեց դեռևս հելլենիստական Մակեդոնիայի նվաճման շրջանից (Ք.ա. 200–168 թթ.): Այս փուլում հռոմեացիները Ք.ա.190թ. Մագնեսիայի ճակատամարտում տարած հաղթանակի շնորհիվ ծանրագույն հարված հասցրին ամենահզոր հելլենիստական պետությանը:

Ներթափանցման հաջորդ՝ վճռական փուլը Միհրդատյան պատերազմներն էին արդեն Սուլլայի և Պոմպեոսի ակտիվ դերակատարմամբ (**Ք.ա. 89–64 թթ.**):

Ք.ա. 90–ական թվականներին Պոնտոսի արքա **Միհրդատ VI Եվպատորը** սկսեց ընդարձակել իր տիրույթները Հալիս գետից արևմուտք ընկած շրջաններում, որոնք գտնվում էին Հռոմի տիրապետության տակ: Հռոմեացիների դրդմամբ Բիթանիայի արքան **Ք.ա. 89 թ.** պատերազմ սկսեց Միհրդատի դեմ, սակայն վերջինս պարտության մատնեց նրան և Ասիա պրովինցիայում (նախկին Պերգամոնի թագավորությունը) տեղակայված հռոմեական զորքին: Պոնտական զորքը առանց դժվարության գրավեց Ասիան, և Միհրդատի հրամանով այստեղ ոչնչացվեցին շուրջ 80000 հռոմեական քաղաքացի և իտալիկներ: Հակահռոմեական ելույթներ սկսվեցին նաև Հունաստանում և Մակեդոնիայում:

Միայն Սուլլայի գլխավորությամբ հռոմեական բանակի հայտնվելը Հունաստանում շտկեց Հռոմի համար ծայրաստիճան ծանր իրավիճակը: Սուլլան ոչ միայն պարտության մատնեց պոնտական երկու բանակներին **Քերոնեայի** և **Օրքոմենի** մոտ, այլև մուտք գործեց Փոքր Ասիա, որով ստիպեց Միհրդատին **Ք.ա. 85 թ.** կնքել վերջինիս համար ծանր պայմանագիր (**Դարդանոսի պայմանագիրը**):

Հռոմի վերջնական ամրապնդումը արևելքում և այստեղ նրա հիմնական հակառակորդ Պոնտոսի՝ որպես ինքնուրույն պետության վերացումը տեղի ունեցան Ք.ա. 70–ական թվականներին: Դրան նախորդել էր Միհրդատի և Մեծ Հայքի տիրակալ Տիգրան Մեծի դաշինքը: Երկու պետությունների խոշոր նվաճումների արդյունքում արևելքում Հռոմի գերիշխանության տակ էին մնացել միայն առանձին շրջաններ: Ստեղծվել էր Տիգրան Մեծի աշխարհակալ հայկական տերությունը:

Սկզբում Լուկուլլոսը, այնուհետև Պոմպեոսը կարողացան հաջողության հասնել Պոնտոսի դեմ պատերազմներում: Պոմպեոսը հաջողություն ունեցավ նաև հռոմեա–հայկական պատերազմում: Արդյունքում՝ էականորեն փոխվեց Առաջավոր Ասիայի քաղաքական քարտեզը հօգուտ Հռոմի: Պոմպեոսը կատարեց պրովինցիաների վերաձևավորում: Սելևկյան պետության տարածքը վերածվեց **Սիրիա** անունը կրող պրովինցիայի: Կապադովկիան և Մեծ Հայքը փաստացի դարձան Հռոմից կախյալ պետություններ:

Պոմպեոսը պրովինցիաների վրա սահմանեց հարկ՝ եկամուտների 10 տոկոսի չափով: Նա նաև բարեփոխումներ կատարեց պրովինցիաների կառավարման համակարգում: Մասնավորապես պատժվեցին պրովինցիալ վարչակազմում տեղ գտած չարաշահումների հեղինակները: Նա հարկերից ազատեց հելլենականացված քաղաքներին: Վերջիններիս տրվեցին անվտանգության երաշխիքներ:

Պոնտոսի խնդրի լուծումը և Մեծ Հայքի հետ Արտաշատի Ք.ա. 66 թ. պայմանագրի կնքումը լուրջ հաջողություն էին:

Հռոմի քաղաքականությունը Արևելքում

Հռոմի արևելյան քաղաքականությունը էականորեն տարբերվում էր եվրոպականից: Ք.ա. I դարում՝ Արևելքում Հռոմի նվաճումների պահին, այստեղ ապրում էին պետականության և ընդհանրապես քաղաքակրթության հնագույն ավանդույթներ ունեցող ժողովուրդներ: Վերջապես այստեղ կային ռազմաքաղաքական և տնտեսական խոշոր ներուժ ունեցող պետություններ՝ Պարթևստանը, Պոնտոսը և Մեծ Հայքը, որոնք իրենք էին ձգտում ընդարձակել իրենց ազդեցության ոլորտները: Հռոմը ստիպված էր հաշվի նստել Արևելքում տիրող իրավիճակի հետ: Պոմպեոսի արշավանքից

հետո Պոնտոսի թագավորության վերացումով կրճատվեց անկախ պետությունների քանակը:

Արևելքում Հռոմի քաղաքական հետաքրքրությունները երեք տիպի տարածքների նկատմամբ էին:

Առաջինը Առաջավոր Ասիայի արևմուտքում գտնվող շրջաններն էին, որոնք վերածվեցին հռոմեական պրովինցիաների (Ասիա, Բյութանիա, Պոնտոս, Սիրիա, Պաղեստին, Եգիպտոս և այլն):

Պրովինցիաներում Հռոմը հիմնում էր գաղութներ, որոնց բնակիչները Իտալիայից եկած առևտրականներ, հողատերեր և վաշխառուներ էին: Սրանք կազմում էին պրովինցիաների բնակչության արտոնյալ խավը: Ինչպես և Եվրոպայում, այստեղ էլ իրականացվում էր հռոմեականացման քաղաքականությունը: Հռոմը հենվում էր նաև տեղական ազնվականության վրա, որը ժամանակի ընթացքում սկսում էր հռոմեականանալ:

Երկրորդ տիպի շրջաններն էին կազմում հռոմեական պրովինցիաների և հայ–պարթևական սահմանների միջև ընկած ու Հռոմից կախյալ կարգավիճակ ունեցող պետությունները: Դրանք էին Կապադովկիան, Լիկիան և Պամֆիլիան մինչև պրովինցիաների վերածվելը, ինչպես նաև Կոմմագենեն: Սրանց արքաները ճանաչել էին Հռոմի գերիշխանությունը և վայելում էին կիսանկախ կարգավիճակ՝ հարկի վճարման և ինքնուրույն արտաքին քաղաքականություն չվարելու պայմաններով: Այս երկրները միաժամանակ արգելապատնեշային տարածքների դեր էին կատարում մի կողմից Հռոմի, մյուս կողմից՝ անկախ Պարթևստանի և Մեծ Հայքի միջև: Կախյալ պետությունների մի մասը ժամանակի ընթացքում վերածվեց հռոմեական պրովինցիաների:

Երրորդ խմբի մեջ էին մտնում անկախ և հզոր պետությունները՝ Պարթևստանը և Մեծ Հայքը: Հռոմը հնարավորություն չուներ ուղղակի ծավալման միջոցով իր տիրապետությունը հաստատելու նրանց վրա: Այս պետությունների հետ հարաբերություններում, սկսած Օկտավիանոսից, գերիշխում էր դիվանագիտական պայքարի քաղաքականությունը, որն իրականացվում էր ներքին հակասությունների օգտագործման միջոցով: Հռոմը ձգտում էր այստեղ ստեղծել հռոմեամետ ուժեր, աջակցում էր Պարթևստանում և Մեծ Հայքում ոչ հռոմեամետ արքաների դեմ ծավալվող պայքարին: Այդ քաղաքականությունը ամբողջապես դրսևորվեց Հռոմեական կայսրության գոյության ողջ ընթացքում, երբ պայքարը Հայքի նկատմամբ ազդեցություն ձեռք բերելու համար հաճախ հանգեցնում էր տևական պատերազմների: Այդ էր պատճառը, որ Արևելքում Հռոմը ի վիճակի չէր ծավալվելու կամ վարելու այնպիսի հռոմեականացման քաղաքականություն, ինչպիսին կատարում էր դեռևս գերազանցապես տոհմատիրական փուլում գտնվող Եվրոպայում: Հռոմի զգուշավոր քաղաքականությունը Արևելքում արմատական գործողություններ իրականացնելու առումով սկսվեց Օգոստոսից: Ինչպես նշում է հռոմեացի պատմիչ Սվետոնիոսը, «... *նա երբեք ճակատամարտ կամ պատերազմ չէր սկսի, եթե համոզված չլիներ, որ հաղթանակի դեպքում կստանա ավելին, քան կկորցնի պատերազմի դեպքում*»:

Այնուամենայնիվ, ժամանակ առ ժամանակ Հռոմը փորձեր էր կատարում ընդարձակելու իր տիրապետության շրջանակները: Սակայն Հռոմի հաջողությունները կարճատև էին, ինչպես եղավ կայսր Տրայանոսի պարթևական արշավանքի պարագայում: Նույնիսկ պարթևական մայրաքաղաք Տիզբոնի նվաճումը հնարավորություն չտվեց երկար ժամանակով հաստատվելու Միջագետքում: I–IV դարերում երբեմն տեղի էին ունենում հռոմեա–պարթևական պատերազմներ, որոնք, սակայն, ի վիճակի չէին խախտելու երկու պետությունների միջև հաստատված ուժերի հարաբերակցությունը: Հետագա դարերում էլ հռոմեա–պարթևական և հռոմեա–սասանյան հակամարտությունը շարունակվեց, սակայն կողմերից որևէ մեկի համար առանց էական հաջողությունների:

Ամփոփում: *Դեպի Արևելք Հռոմի շուրջ երկդարյա ներթափանցումը ավարտվեց Ք.ա. 60–ական թվականներին՝ Պոմպեոսի արշավանքի արդյունքում: Արևելքի երկրներում Հռոմը ստիպված էր վարել տարբերակված քաղաքականություն: Այստեղ Հռոմի քաղաքականության ոլորտում էին ինչպես նրա անմիջական տիրապետությանը ենթակա պրովինցիաներ, այնպես էլ կիսանկախ և անկախ պետություններ, որոնց հետ Հռոմը պետք է հաշվի նստեր:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ առանձնահատկությամբ է բնորոշվում Հռոմի ներթափանցումը Արևելք: Համառոտ ներկայացրե՛ք Հռոմի ներթափանցման պատմությունը Առաջավոր Ասիա:
2. Ինչո՞վ էր տարբերվում Հռոմի արևելյան քաղաքականությունը եվրոպականից: Որո՞նք էին Արևելքում Հռոմի քաղաքական հետաքրքրությունների թիրախ տարածքները. ինչո՞վ էին դրանք իրարից տարբերվում: Քաղաքական ի՞նչ մանևրներ էր օգտագործում Հռոմը: Ձեր կարծիքով՝ ո՞րն էր դրանցից արդյունավետ. ինչո՞ւ:
3. Ժամանակագրական աղյուսակի տեսքով ներկայացրե՛ք Հռոմի տարածքային և ռազմական ու դիվանագիտական ձեռքբերումները Արևելքում:

§ 3. ՀՌՈՄԸ ԵՎ ԵՎՐՈՊԱՆ

Հուլիոս Կեսարի գալլական արշավանքը

Ալպյան լեռներից այն կողմ ընկած եվրոպական ընդարձակ տարածաշրջանը Հռոմի արտաքին քաղաքականության տեսադաշտում հայտնվեց Կեսարի գալլական արշավանքների ժամանակ: Այս բազմաէթնիկ և բազմամշակույթ տարածքը Հռոմի համար կենսական մեծ նշանակություն ուներ երկու առումներով: Նախ այն Հռոմին անմիջականորեն սահմանակից էր և ոչ միշտ էր հնարավոր զսպել հյուսիսից հաճախակի Ալպյան լեռնանցքները հաղթահարող և Իտալիան ասպատակող ռազմատենչ ցեղերին (կելտեր (գալլեր), գերմանացիներ և այլք): Երկրորդ՝ Եվրոպան Իտալիային առավել մոտ գտնվող նյութական և մարդկային ռեսուրսների մի անսպառ աղբյուր էր, նաև շուկա, որը կարելի էր օգտագործել: Հյուսիսի բարբարոսների դեմ հուսալի արգելապատնեշը, բացի այդ, նաև հետագա առաջխաղացման համար հարմար հենակետ էր:

Հուլիոս Կեսարի գալլական արշավանքների նախօրեին Գալլիայում տիրում էր լարված իրավիճակ՝ կապված կելտական երկու խոշոր ցեղամիությունների՝ էդուների և սեկվանների միջև հակամարտության հետ:

Ք.ա. 58 թ. գալով Գալլիա՝ Կեսարը հնազանդեցրեց **հելվետներին** (ներկայիս Շվեյցարիայում), իսկ սեկվանները ճանաչեցին Հռոմի գերիշխանությունը:

Հաջորդ տարի Կեսարը հաղթեց բելգերին, այնուհետև՝ ծովափնյա **արմորիկներին**: Իր գալլական արշավանքը Կեսարն ավարտեց **ակվիտանների** նվաճմամբ: Իսկ **Ք.ա. 55 թ.** նա անցավ նաև Հռենոս գետը՝ գերմանական ցեղերի տարածքը, որից հետո գերմանացիները դադարեցրին իրենց ասպատակությունները դեպի Գալլիա:

Կեսարի նվաճումները վտանգվեցին **Ք.ա. 52 թ.**, երբ հարավային Գալլիայում սկսվեց արվերների առաջնորդ **Վերցինգետորիքսի** ապստամբությունը: Ապստամբությանը միացան շատ ցեղեր: Կեսարը զորքը բաժանեց երկու մասի, որոնք ինքնուրույն պետք է ճնշեին Գալլիայի տարբեր շրջաններում գործող ապստամբական զորքերի դիմադրությունը: Նա անձամբ շարժվեց Վերցինգետորիքսի դեմ և պաշարեց նրա գլխավոր քաղաք Գերգովիան (ներկայիս Կլերմոնի մոտ), սակայն չկարողացավ գրավել այն:

Այս անհաջողությունից հետո Կեսարը կրկին միավորեց իր ուժերը և ընթացավ դեպի ապստամբների գլխավոր հենակետ Ալեզիա ամրոցը: Հռոմեացիները ի վերջո հաջողության հասան: Վերցինգետորիքսը մահապատժի ենթարկվեց, և Կեսարը վերացրեց ապստամբության օջախները:

Այսպիսով՝ հաջողվեց նվաճել Գալլիան: Այժմ Հռոմի տիրապետությունից դուրս էին մնում Հռենոսից արևելք ընկած գերմանական հողերը, ինչպես նաև Բալկաններից հյուսիս գտնվող շրջանները:

Հռոմի քաղաքականությունը Արևմտյան Եվրոպայում

Գալլիայի նվաճումով սկսվեց Հռոմի ակտիվ ներթափանցումը Եվրոպայի տարբեր շրջաններ: Շարժումը դեպի Եվրոպա շարունակվեց Օգոստոսի և նրա հաջորդների օրոք: Այն իրականացվում էր տարբեր եղանակներով:

Ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող շրջաններում, որոնց բնակչությունը անհնազանդություն էր դրսևորում, սովորաբար զենքի ունակ հասուն բնակչության մի մասը ֆիզիկապես բնաջնջվում էր կամ ստրկության վաճառվում այլ երկրներում: Այդպես եղավ Օգոստոսի օրոք **Ք.ա. 25 թ.** Ալպյան լեռների արևմուտքում՝ կելտական անհնազանդ **սալաս** կոչվող ցեղի պարագայում: Բնակչության զգալի մասը բնաջնջվեց, իսկ մնացած 36 հազարը ստրկության վաճառվեց: Ընդ որում՝ պայմանով, որ առաջիկա 20 տարվա ընթացքում դրանց տերերը ոչ մեկին ազատ չարձակեին: Նորանվաճ շրջաններում կազմակերպում էին պրովինցիաներ կամ ավելի մանր վարչական միավորներ՝ հռոմեական կառավարչի գլխավորությամբ: Այնտեղ տեղադրվում էին կայազորներ, կառուցվում ամրություններ: Միաժամանակ հիմնվում էին բնակավայրեր, որտեղ բնակեցվում էին հռոմեական վերաբնակիչներ և առևտրականներ:

Նոր նվաճված երկրների յուրացման այս փուլում Հռոմի նպատակը այդ տարածքների նկատմամբ հուսալի վերահսկողության ապահովումն էր:

Այնուհետև սկսվեց պրովինցիաների յուրացման քաղաքականության հաջորդ՝ «քաղաքակիրթ» փուլը, որը երկարատև միջոցառումների շարք էր: Հռոմեացիները գիտակցում էին, որ միայն ռազմական հարկադրանքով հնարավոր չէ կայուն գերիշխանություն ապահովել ոչ միայն դեռևս աննվաճ սահմանամերձ պրովինցիաներում, այլև արդեն վաղուց հպատակեցված շրջաններում: Անհրաժեշտ էր ապահովել տեղի բնակչության հնազանդությունը, վերջիններիս ինտեգրումը կայսրության քաղաքական, տնտեսական և հոգևոր–մշակութային համակարգ: Այդ նպատակով լոյալ ցեղերի բնակչության մի մասին, առաջին հերթին՝ ազնվականությանը, տրվում էին զանազան արտոնություններ, նույնիսկ հռոմեական քաղաքացիություն: Մասնավորապես, կայսր Կլավդիոսը **Ք.հ. 48 թ.** Գալլիայի բնակիչներին շնորհեց հռոմեական սենատում ընտրվելու իրավունք: Որոշ գալլական քաղաքների ողջ բնակչությանը տրվեց հռոմեական քաղաքացիություն: Հռոմեական իշխանությունները նպաստավոր պայմաններ էին ստեղծում տնտեսության զարգացման համար, հիմնում էին բարեկարգ ճանապարհներ: Պրովինցիաներ էր ներթափանցում հռոմեական մշակույթը (դպրոցների բացում, լատիներենի լայն տարածում, քաղաքաշինության նկատելի վերելք և այլն):

Գալլերի առաջնորդ Վերցինգետորիքսը հանձնվում է Յուլիոս Կեսարին

Հռոմի խաղաղ էքսպանսիայի լավագույն դրսևորումը Գալլիայի հռոմեականացումն է:

Կեսարի արշավանքներից անմիջապես հետո Գալլիայի յուրացումն իրականացվում էր համեմատաբար խաղաղ եղանակով: Գալլիան բաժանվեց երկու վարչական շրջանների՝ Գալլիա և Բելգիա: Կեսարը և նրա հաջորդները չվերացրին գալլական ցեղերի ավանդական հասարակական–քաղաքական կառուցվածքը: Նախկինի պես ցեղերը գտնվում էին արքայիկների և ցեղապետների իշխանության տակ, որոնք պարտավոր էին ապահովել բնակչության լոյալությունը Հռոմի հանդեպ և հավաքել հարկերը: Գալլերի հնազանդության ապահովման նպատակով արդեն Կեսարը ձգտում էր իշխանությունը հանձնել տեղական հռոմեամետ ազնվականների ձեռքը: Հռոմին հավատարիմ առաջնորդները և ցեղերը ստացան արտոնություններ, ինչպես նաև հողեր: Նրանց մի մասը նույնիսկ հռոմեական քաղաքացիություն ստացավ: Կեսարը հանդուրժող էր նաև գալլերի ավանդական պաշտամունքների հանդեպ: Գալլ հոգևորականները՝ դրուիդները, շարունակում էին իրականացնել իրենց գործունեությունը՝ չնայած այն հանգամանքին, որ տաճարներում և սրբավայրերում պահվող հարստության զգալի մասը բռնագրավվեց և ուղարկվեց Հռոմ: Քաղաքներում և որոշ շրջաններում լատիներենը հայտարարվեց պաշտոնական հաղորդակցության լեզու: Ողջ Գալլիայում մտցվեց հռոմեական դրամական համակարգը, ընդ որում՝ միայն հռոմեական իշխանություններին իրավունք վերապահվեց հատել ոսկե դրամ:

Գալլիայի յուրացումով սկսվեց կենտրոնական և արևմտյան Եվրոպայի պատմության որակական նոր փուլ: Եթե մինչ այդ դարեր շարունակ Հռոմի և Ալպյան լեռներից հյուսիս բնակվող ժողովուրդների փոխհարաբերություններում գերակշռում էին ռազմական բախումները, ապա այժմ գալլական ցեղերը դադարեցրին ոտնձգությունները հռոմեական տիրույթների հանդեպ: Ժամանակակից Ֆրանսիայի, Շվեյցարիայի և Բելգիայի գալլերը ներառվեցին Հռոմի վարչաքաղաքական համակարգ և բռնեցին քաղաքակրթության

ճանապարհը: Այդ գործընթացը շարունակվեց հետագայում՝ արդեն կայսրության շրջանում, երբ ի դեմս գալլական (կելտական) աշխարհի՝ զգալիորեն ընդլայնվեցին քաղաքակրթության տարածման սահմանները: Այժմ արդեն «բարբարոսական ծայրագավառը» տեղափոխվեց Հռենոս գետից արևելք՝ սկսվելով հետագայի Գերմանիայից և շարունակվելով դեպի Արևելյան Եվրոպա:

Արևմտյան Եվրոպան կայսրության շրջանում

Գալլիայի հռոմեականացման գործընթացը շարունակվեց արդեն կայսրության շրջանում: Հռոմեական իշխանությունները շարունակաբար ձգտում էին մարդկային և նյութական ռեսուրսներով արտակարգ հարուստ այս կարևոր տարածքը ներառել կայսրության քաղաքական, տնտեսական և հոգևոր–մշակութային համակարգ: Առաջին հերթին կարգավորվեց Գալլիայի նկատմամբ իրականացվող հարկային համակարգը: Օգոստոսից սկսած՝ 15 տարին մեկ անգամ կատարվում էր գույքագրում և դրան համապատասխան հարկի չափի սահմանում: Գալլիայի տարածքում իրականացվող յուրաքանչյուր տնտեսական գործարք (առք ու վաճառք, ներմուծում և արտահանում և այլն) ենթակա էր հարկման:

Գալլիայի կարևոր ռազմավարական կենտրոններում և գերմանական ցեղերին նայող սահմանային կետերում տեղադրվեցին հռոմեական կայազորներ: Դեռևս Կեսարի արշավանքներից մի քանի տարի անց հռոմեական զինվորների ընդհանուր թիվը այստեղ հասավ շուրջ 100 հազարի: Մոտավորապես այդքան էլ հռոմեացի վերաբնակիչների հողեր տրամադրվեցին: Տասնյակ հազարավոր հռոմեացի առևտրականներ և այլ զբաղմունքի տեր անձինք մշտապես գտնվում էին Գալլիայում: Սրանով հռոմեացիները ձգտում էին իրենց համար ստեղծել ամուր սոցիալական հենարան, այն նույն քաղաքականությունը, որ իրականացնում էին Արևելքում:

Այնուամենայնիվ, հռոմեական տիրապետությունը Գալլիայում ունեցավ իր կարևոր դրական հետևանքները:

Առաջինը Գալլիայի տնտեսության շարունակական վերելքն էր, հատկապես գյուղատնտեսության բնագավառում: Ք.հ. I–II դարերում կտրուկ աճեցին նախկինում անմշակ հողերի յուրացման ծավալները: Երկրագործությունը, մասնավորապես հացահատիկի մշակումը վերածվեց Գալլիայի տնտեսության հիմքի: Առաջացան խոշոր երկրագործական տնտեսություններ, որոնք պատկանում էին հռոմեացիներին և տեղական ազնվականությանը: Աճեց խոշոր քաղաքների և բնակավայրերի թիվը:

Զգալի վերելք ապրեցին հանքարդյունաբերությունը, արհեստագործությունը և առևտուրը: Հռոմեացիները Գալլիայում ստեղծեցին բարեկարգ ճանապարհների համակարգ: Դրանք շուրջ 10 մետր լայնությամբ՝ սալապատ ճանապարհներ էին, որոնք հեշտացրին ներքին երթևեկը և զգալիորեն նպաստեցին առևտրի զարգացմանը: Մեծ վերելք ապրեց քաղաքաշինությունը: Դրանք կառուցվում էին հռոմեական քաղաքների օրինակով, միասնական նախագծով: Քաղաքները Գալլիայի հռոմեականացման կարևոր օղակներից էին: Այստեղ էր բնակվում հռոմեական կենցաղը յուրացրած գալլական ազնվականության մեծ մասը, որով ապահովվում էր մշտական կապը գյուղական համայնքների հետ, և հեշտացվում էր վերջիններիս վերահսկողությունը:

Հռոմեականացման գործընթացի առավել կարևոր ուղղությունը լատիներենի ներդրումն էր Գալլիայում: Գալլական ազնվակա-

Ծովային ճակատամարտ գալլերի և հռոմեացիների միջև

նության վերնախավը արագ յուրացրեց լատիներենը՝ փորձելով նմանվել նվաճողներին՝ դրանից բխող հետևանքներով: Ք.հ. I դ. գալլական քաղաքների բնակչության խոսակցական լեզուն, ի տարբերություն գյուղական շրջանների, գերազանցապես լատիներենն էր: Այն դասավանդվում էր դպրոցներում, պաշտոնական լեզու էր բանակում, որտեղ ծառայում էին շատ գալլեր: Լատիներենի ներդրմանը շատ նպաստեց այն հանգամանքը, որ գոյություն չուներ միասնական կելտերեն, այլ կային ընդամենը բարբառներ: Բացի այդ, կելտերը չունեին սեփական գիր և օգտվում էին լատինական այբուբենից: Արդյունքում արդեն կայսրության վերջին փուլում լատիներենը դարձավ Գալլիայի բնակչության մեծ մասի լեզուն:

Գալլիա Հռոմի ներթափանցման և այնտեղ իրականացված հռոմեականացման քաղաքականության արդյունքում Գալլիան աստիճանաբար կորցրեց իր էթնիկ–մշակութային նկարագիրը: Հռոմին մոտ գտնվող կամ տնտեսական և ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող շրջանները մեծ մասամբ ինտեգրվեցին Հռոմեական կայսրության կյանքում: Միայն առանձին հեռավոր շրջաններն էին դեռևս որոշակիորեն դուրս մնում հռոմեականացումից:

Ամփոփում: *Ք.ա. I դարում Հռոմը, տիրելով Արևմտյան Եվրոպայի մեծ մասին, ձեռնամուխ եղավ դրա յուրացմանը: Այն իրականացվում էր նպատակասլաց քաղաքականության միջոցով: Սկզբում հռոմեացիները ձնշում էին հակահռոմեական ելույթները, գրավված տարածքները միավորում էին պրովինցիաներում և սահմանամերձ գոտիներում կառուցում էին ամրություններ: Վերջապես՝ Հռոմը Գալլիայում սկսեց իրականացնել հռոմեականացման նպատակասլաց քաղաքականություն, որի արդյունքում այս ընդարձակ տարածաշրջանը հիմնավորապես ինտեգրվեց կայսրության մեջ:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ էին հռոմեացիները մեծ ուշադրություն դարձնում Ալպյան լեռներից հյուսիս ընկած եվրոպական տարածաշրջանին: Պաշտպանական նկատառումով ի՞նչ քայլեր ձեռնարկեցին հռոմեացիները:
2. Եվրոպայի տարբեր շրջանների հանդեպ Հռոմը տարբեր քաղաքականություն էր վարում. փաստերով հիմնավորե՛ք այս պնդումը:
3. Կեսարի արշավանքներից անմիջապես հետո ի՞նչ եղանակով էր իրականացվում Գալլիայի հռոմեականացումը: Վարչական ի՞նչ շրջանների այն բաժանվեց:
4. Գալլիայի հռոմեական յուրացումը ի՞նչ նշանակություն ունեցավ Եվրոպայի պատմության մեջ: Ք. հ. I–III դարերում Եվրոպայի ո՞ր մասն էր համարվում «բարբարոսական ծայրագավառ»:
5. Կայսրության շրջանում ի՞նչ նորություններ մտան Գալլիայի հռոմեականացման քաղաքականության մեջ: Ներկայացրե՛ք Գալլիայի հռոմեականացման հիմնական արդյունքները:

Թեմա 8. ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՎԱՐՏԸ

§ 1. ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ III–V ԴԱՐԵՐՈՒՄ

Պրինցիպատից դոմինատ

III դարում Հռոմեական կայսրությունը նշանակալից կորուստներ կրեց, որ կապված էր **Սևերոսների** արքայատոհմի օրոք ներքաղաքական կյանքում տիրող ճգնաժամի հետ: Դանուբյան պրովինցիաներում գոթական ցեղերը, իսկ Գալլիայում գերմանական **պեմաններն** ու **ֆրանկները** սպառնում էին հռոմեական տիրույթներին: Իրենց հերթին գալլերը փորձեցին անկախանալ Հռոմից և ստեղծեցին սեփական պետություն: Իսկ արևելքում սասանյան արքա **Շապուհ I-ը** պարտության մատնեց հռոմեական բանակին **Եդեսիայի** մոտ՝ գերելով նույնիսկ կայսր **Վալերիանոսին**:

Ավրելիանոսի օրոք նոր սպառնալիք ստեղծվեց Եվրոպայում: Կայսրը ստիպված էր ապահովության համար զորքերը և հռոմեական վերաբնակիչներին տեղափոխել Դանուբի ձախափնյակ. **գոթերը, սարմատները** և **մարկոմանները** գրավեցին **Դակիա** պրովինցիան: Քանի որ բարբարոսները սպառնում էին նաև Իտալիային, Հռոմ քաղաքի շուրջը կառուցվեց նոր պարիսպ:

Այս իրավիճակում զինվորական վերնախավի աջակցությամբ կայսր հռչակվեց ծագումով իլլիրիացի **Դիոկղետիանոսը** (284–305 թթ.):

Դիոկղետիանոսն անցկացրեց ռազմավարչական մեծ բարեփոխումներ, որոնց նպատակն էր ապահովել անծայրածիր կայսրության արդյունավետ կառավարումը, ինչպես նաև վերանվաճել կորցրած տարածքները: Նա կայսրությունը բաժանեց երկու մասի՝ արևելյան (կենտրոնը՝ **Նիկոմեդիա՝** Փոքր Ասիայում) և արևմտյան (կենտրոնը՝ **Միլան**), որոնցից յուրաքանչյուրում կառավարում էր **օգոստոս** տիտղոսը կրող անձ: Արևելքը նա վերցրեց իրեն, իսկ արևմուտքում նշանակվեց **Մաքսիմիանոսը**: Օգոստոսներն ունեին մեկական տեղակալներ՝ **կայսրեր**, որոնց նստավայրերը առավել վտանգավոր սահմանամերձ շրջաններում էին: Վերջիններիս կնության տրվեցին օգոստոսների դուստրերը՝ պայմանով, որ 20 տարի անց նրանք դառնալու էին օգոստոսներ: Կառավարման այս համակարգը կոչվեց **քառապետություն** (տետրարխիա):

Կայսրությունը բաժանվեց 12 **դիոցեզների**, որոնք էլ իրենց հերթին՝ **պրովինցիաների**: Վերջիններիս չափերը փոքրացվեցին, իսկ քաղաքացիական և ռազմական գործառույթներն անջատվեցին միմյանցից: Դրա նպատակը պրովինցիաների կառավարիչների ինքնուրույնության սահմանափակումն էր:

Կատարվեց նաև ռազմական բարեփոխում: Ավելացվեց բանակի թվակազմը ի հաշիվ նախկին ստրուկների, կոլոնների և կայսրության տարածքում վերաբնակված բարբարոսների: Բանակում ընդգրկվեցին նաև կայսրության սահմաններում բնակվող բարբարոսների ջոկատներ (**ֆեդերատները**): Բանակը բաժանվեց երկու խմբի՝ սահմանապահ և շարժունակ զորամասերի: Վերջիններս տեղակայվում էին երկրում և կարիքի դեպքում ուղարկվում այս կամ այն ուղղությամբ:

Այսպիսով՝ Դիոկղետիանոսի օրոք ավարտվեց պրինցիպատը, և հիմք դրվեց կառավարման նոր եղանակին՝ **դոմինատին** (լատ.՝ «տեր»): Դրա էությունն այն էր, որ ստեղծվեց ռազմական միապետություն՝ մեկ անձի անսահմանափակ իշխանությամբ: Կայսերական իշխանությունը աստվածացվում էր: Կայսրության բոլոր քաղաքացիները համարվում էին կայսեր, այլ ոչ պետության հպատակները:

Դիոկղետիանոսի՝ իշխանությունից հրաժարվելուց հետո արևմտյան կայսրության օգոստոսի որդին՝ **Կոստանդինը,** վերացրեց տետրարխիան (քառապետություն) և դարձավ կայս-

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԵԾ ԳԱՂԹԸ

ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ
Հունական նշանագրան տեսնելիք IV դ. մեջտեղ
Հունական նշանագրան բանեցնող տեսնելիք
Գերմանական տեսակագրան տեսնելիք IV դ. մեջտեղ
Գերմանական նշանագրան գրանցման տեսակ. շրջան
IV-VI դդ. գրանցման ցանցի տեսակագրեր
IV-VI դդ. նոսրոց տեսակագրեր
IV-VI դդ. գրանցման ցանցի տեսակագրեր
Գոթերի հարավային գաղթ
Գոթերի հարավային գաղթ
Գոթերի հարավային գաղթ

Բարբարոսների կողմից Հռոմի գրավումն ու ավերումը

ության միանձնյա կառավարիչ (306–337 թթ.): Այնուամենայնիվ, նա պահպանեց Դիոկղետիանոսի ստեղծած քառամաս վարչական համակարգը. դրանցից յուրաքանչյուրը կոչվում էր **պրեֆեկտուրա**: Դրանց կառավարիչները կոչվում էին **պրեֆեկտներ**, որոնք անմիջականորեն ենթարկվում էին կայսերը:

330 թ. Կոստանդինը հեռացավ Հռոմից և մայրաքաղաք հռչակեց Բոսֆորի ափին գտնվող Բյուզանդիոն քաղաքը, որը վերանվանվեց Կոստանդնուպոլիս:

Կոստանդինի կարևորագույն ձեռնարկումներից էր **325 թ. Նիկեայի ժողովում** քրիստոնեական կրոնի պարտադիր դոգմաների ընդունումը. կայսրն անձամբ մասնակցում էր ժողովին: Չնայած հեթանոսական ծեսերը դեռ շարունակվեցին մինչև դարավերջ, սակայն քրիստոնեությունը դարձավ միակ կրոնը: Կայսրության խոշոր քաղաքներում (Երուսաղեմ, Անտիոք, Ալեքսանդրիա, Հռոմ, Կոստանդնուպոլիս) ստեղծվեցին եպիսկոպոսություններ, որոնց առաջնորդները ստացան **պատրիարք** տիտղոսը: Իսկ Հռոմի և Ալեքսանդրիայի պատրիարքները կոչվում էին նաև **պապեր**: Կայսրության տարածքում քրիստոնեության պաշտոնականացմանը չխանգարեց նույնիսկ կայսր **Հուլիանոսի** (361–363) փորձը՝ վերականգնելու հեթանոսությունը:

Այսպիսով՝ Կոստանդինի օրոք Հռոմեական կայսրությունում վերջնականապես հաղթանակ տարավ դոմինատը՝ կայսեր անսահմանափակ, աստվածացված իշխանությունը:

Բարբարոսները երկու կայսրությունների սահմաններին

Կայսրության հյուսիսային սահմաններում լուրջ սպառնալիք ներկայացնող բարբարոսները զգալիորեն ակտիվացան IV–V դարերի ընթացքում: Այս ընթացքում Եվրոպայի տարբեր շրջաններում շարունակվում էր ցեղային միությունների ձևավորման գործընթացը, որում հատկապես ակտիվ էին գերմանական ցեղերը: Սև ծովի հյուսիսային ափերին ստեղծվեցին արևելյան և արևմտյան գոթերի միությունները: Հռենոս և Դանուբ գետերի ավազանում ձևավորվեցին **ֆրանկների, սաքսերի, ալեմանների, լանգոբարդների, բուրգունդների** և **վանդալների** միությունները:

Օդեր և Վիսլա գետերից արևելք և հարավ կազմավորվեցին **սլավոնական** տարբեր ցեղամիություններ:

Սրանց հարաբերությունները կայսրության հետ սովորաբար խաղաղ բնույթ էին կրում: Բարբարոսական ցեղերի տոհմային ավագանին կանոնավոր շփումներ ուներ կայսրության պրովինցիալ վարչակազմի հետ: Նրանցից շատերը արագորեն յուրացնում էին հռոմեական ազնվականության կենցաղը, առավել զարգացած ցեղերի կյանքում աստիճանաբար մուտք էր գործում նստակյաց երկրագործական և արհեստագործական կենցաղավարությունը: Հաճախ բարբարոսական բնակչության մեծ մասը, կայսրության համաձայնությամբ, փոխադրվում էր նրա տարածք՝ վարձու զինծառայության պայմանով: Վերջին հանգամանքը որոշակիորեն փոփոխում էր կայսրության հյուսիսային պրովինցիաների բնակչության ազգագրական պատկերը:

Այնուամենայնիվ, պարենի պաշարները լրացնելու ցանկությունը երբեմն ավարառուական արշավանքների պատճառ էր դառնում: Այս հարցում հատկապես կարևոր դերակատարում ունեին կայսրության սահմաններից առավել հեռու ապրող ցեղերը: Թե՛ մեկը, թե՛ մյուսը ժամանակ առ ժամանակ լրջորեն անհանգստացնում էին կայսրության սահմանամերձ շրջանների բնակչությանը:

Բարբարոսների ճնշումը կայսրության վրա հատկապես ուժեղացավ՝ կապված արևելքից **հոների** տեղաշարժի հետ: Վերջիններս **375 թ.** ջախջախեցին գոթերին, որոնք ստիպված էին ապաստան խնդրել Արևելյան կայսրության կայսր **Վաղեսից**՝ խոստանալով անցնել զինծառայության: Չստանալով խոստացված պարենային օգնությունը՝ նրանք ապստամբեցին և շարժվեցին դեպի Կոստանդնուպոլիս: **378 թ. Ադրիանապոլսի** մոտ գոթերը պարտության մատնեցին կայսերական զորքին. Վաղեսը զոհվեց ճակատամարտում: Իրավիճակը որոշակիորեն բարելավվեց **Թեոդոս** կայսեր օրոք, որը գոթերին բնակեցրեց Բալկաններում՝ որպես ֆեդերատներ: Այնուամենայնիվ, այլևս չկարողանալով պահպանել վերահսկողությունը ողջ կայսրության նկատմամբ՝ նա **395 թ.** այն բաժանեց երկու մասի: Արևելյան մասում կայսր հռչակվեց նրա ավագ որդի **Արկադիոսը**, իսկ արևմուտքում՝ կրտսերը՝ **Հոնորիոսը**: Այսպիսով՝ Հռոմեական կայսրությունը վերջնականապես բաժանվեց երկու ինքնուրույն կայսրությունների:

Այս իրադարձությունից հետո Արևմտյան կայսրությունը արագորեն սկսեց անկում ապրել: Դրա հիմնական պատճառն այն էր, որ բարբարոսները արևելքից արևմուտք շարժման ընթացքում անխուսափելիորեն պետք է բախվեին Իտալիայի հետ: Առժամանակ Հոնորիոսին հաջողվում էր կասեցնել բարբարոսների հարձակումները, որին նպաստեց արքունիքում կարևոր դեր ունեցող, ծագումով վանդալ **Ստիլիխոնի** գործունեությունը: Վերջինս հետ մղեց վեստգոթերի հարձակումը, Իտալիայի մատույցներն ամրացնելու նպատակով **407 թ.** հետ կանչեց Բրիտանիայում գտնվող լեգիոնները: Սրանով ավարտվեց կայսրության արդեն ձևական տիրապետությունը Ալպերից հյուսիս: Սակայն հաջորդ տարի Ստիլիխոնի սպանությունը հնարավորություն ընձեռեց բարբարոսներին անցնելու հարձակման: **410 թ.** վեստգոթական զորքը **Ալարիխի** գլխավորությամբ գրավեց և ավերեց Հռոմը: Միայն Ալարիխի մահից հետո վեստգոթերը հեռացան Գալլիա, որտեղ ստեղծեցին թագավորություն՝ **Թուլուզ** մայրաքաղաքով (418 թ.): Ավելի ուշ նրանք նվաճեցին նաև Պիրենեյան թերակղզու մեծ մասը: Նրանց ճնշման տակ այստեղ նախկինում հաստատված վանդալները և ալանները հեռացան Աֆրիկա, որտեղ ստեղծեցին թագավորություն՝ **Կարթագեն** մայրաքաղաքով:

Արևմտյան կայսրության վերջին ռազմաքաղաքական ձեռնարկումը հոների արշավանքի դեմ դիմադրության կազմակերպումն էր: **451 թ.** Գալլիայում՝ **Կատալաունյան դաշտում**, հռոմեական–գերմանական–գալլական միացյալ բանակը զորավար **Աեցիոսի** գլխավորությամբ պարտության մատնեց հոներին: Իսկ **476 թ.** Իտալիայում տեղակայված գերմանական վարձու զորքերի հրամանատար **Օդոակրը** գահընկեց արեց վերջին կայսր մանկահասակ **Հռոմուլոս Ավգուստուլոսին**, որով էլ ավարտվեց Արևմտյան կայսրության գոյությունը: Կայսերական պատվանշանները (թագը և հագուստը) Օդոակրը ուղարկեց Կոստանդնուպոլիս՝ արևելյան կայսերը:

Ամփոփում: *Դեռևս Դիոկղետիանոսից սկսված վարչաքաղաքական բարեփոխումները և 395 թ. կայսրության բաժանումը երկու մասի ի վիճակի չեղան պահպանելու Հռոմեական կայսրության տարածքային ամբողջականությունը: Դրա պատճառը ոչ այնքան ներքին խնդիրներն էին, որքան Եվրոպայի տարբեր ժողովուրդների քաղաքական ակտիվության աննախադեպ աճը՝ «բարբարոսական» պետականությունների կազմավորումը:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն էր Հռոմեական կայսրության III դարում ունեցած տարածքային կորուստների գլխավոր պատճառը: Ովքե՞ր էին կայսրության հակառակորդները:
2. Ռազմավարչական ի՞նչ բարեփոխումներ անցկացրեց Դիոկղետիանոս կայսրը: Ի՞նչ էր քառապետությունը. պարզաբանե՛ք կառավարման այդ համակարգը: Ինչո՞վ էր տարբերվում դոմինատը պրինցիպատից: Ո՞րն էր դոմինատի էությունը:
3. Ինչո՞ւ Կոստանդինը վերափոխեց տետրարխիան: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ նա մայրաքաղաքը տեղափոխեց Բյուզանդիոն: Վերհանե՛ք Նիկեայի տիեզերական ժողովի նշանակությունը:
4. Ցեղային ի՞նչ միություններ էին կազմավորվել և Եվրոպայի ո՞ր տարածքներում. թվարկե՛ք դրանք: Ներկայացրե՛ք դրանց և Հռոմեական կայսրության հարաբերությունները մինչև հոների արշավանքները:
5. Պարզաբանե՛ք հոների տեղաշարժերի և հարձակումների հետևանքները բարբարոսների ցեղային միությունների վրա:
6. Ինչո՞ւ Թեոդոս կայսրը երկու մասի բաժանեց կայսրությունը: Վերհանե՛ք Արևմտյան Հռոմեական կայսրության անկման պատճառները:

§ 2. ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Պարթևական պետությունը

Սելևկյանները հազիվ մի քանի տասնամյակ կարողացան պահպանել իրենց լայնածավալ տերության արևելքը: Արդեն Ք.ա. III դարի կեսերին նրանից անջատվեցին և անկախացան **Բակտրիան** (ներկայիս Աֆղանստանի հյուսիսը և Ամուդարյա գետի աջափնյակը) և Պարթևստանը:

Պարթևների առաջին արքան **Արշակն** էր, որի անունով էլ արքայատոհմը սկսեց կոչվել **Արշակունի**: Սկզբնական շրջանում Պարթևստանը համեմատաբար փոքր տարածք էր զբաղեցնում և մեծ դժվարությամբ էր պահպանում իր անկախությունը: Արշակի որդի **Տրդատ I–ը** միայն տարածքային զիջումների գնով պահպանեց իր պետությունը սելևկյան արքա Անտիոքոս III–ի արևելյան արշավանքի ընթացքում:

Պարթևստանի վերելքը սկսվեց **Միհրդատ I–ի** օրոք (Ք.ա. 171–138 թթ.), երբ պետությունը տարածվեց Հինդուքուշի լեռներից մինչև Եփրատ: Սակայն դրանից մի քանի տարի անց Պարթևստանը ենթարկվեց արևելքից **թոխարների** հարձակմանը: Պարթևական երկու արքաները՝ **Հրահատ II–ը** և **Արտավան I–ը**, զոհվեցին թոխարների դեմ պատերազմում: Միայն **Միհրդատ II–ին** հաջողվեց կանգնեցնել հակառակորդին: Արքան նույնիսկ փորձ կատարեց մերձենալ Հռոմի հետ՝ դեսպան ուղարկելով Սուլլայի մոտ:

Պարթևական պետության հզորացմանը ծանր հարված հասցրեց Մեծ Հայքի արքա Տիգրան Մեծը՝ նրանից զավթելով զգալի տարածքներ: Սակայն Տիգրանի անհաջողությունը Հռոմի դեմ պատերազմում կրկին խթանեց պարթևների ակտիվությունը: Ք.ա. 53 թ.՝ Խառանի ճակատամարտից հետո, պարթևները գրավեցին Սիրիան: Պարթևական արքա **Հրահատ IV–ը** պարտության մատնեց Անտոնիոսին նրա՝ Ք.ա. 36 թ. արևելյան արշավանքում:

Այս պահից պարթևա–հռոմեական հարաբերություններում հաստատվեց երկարատև խաղաղություն: Պարթևստանը այս տևական շրջանում վերածվեց Առաջավոր Ասիայի հզորագույն տերության, որի հետ Հռոմը ստիպված էր մշտապես հաշվի նստել:

Հռոմի ակտիվությունը Արևելքում վերսկսվեց կայսր Տրայանոսի արշավանքով: Միայն կայսեր մահը փրկեց պարթևներին հետագա կորուստներից: Տրայանոսի հաջողությունները կրկնեցին **Մարկոս Ավրելիոսը 164 թ.** և **Սեպտիմիոս Սևերոսը՝ 198–199 թթ.**: Պարթևական վերջին արքա **Արտավան V–ը** հռոմեացիներից հետ նվաճեց Միջագետքը, սակայն մի քանի տարի անց՝ **226 թ.**, Պարթևական պետությունը անկում ապրեց սասանյանների ապստամբության հետևանքով: Արտաշիրի բարձրացրած ապստամբությունն ավարտվեց հաջողությամբ, իսկ Արտավան V–ը սպանվեց:

Սելևկյան տերության խոշորագույն քաղաքներից մեկի՝ Ապամեայի ավերակները

Պարթևական պետությունը քաղաքակրթական տարբեր աստիճանների վրա գտնվող, հաճախ կիսանկախ երկրների միություն էր: Բուն Պարթևստանը և իրանալեզու շրջանները բաղկացած էին արքայատոհմի անդամների կողմից կառավարվող մարզերից, որոնց կառավարիչները հաճախ իշխում էին ժառանգաբար (Ատրպատական, Ֆարս, Էլամ): Այս կառավարիչներն ունեին սեփական զորք, իսկ ոմանք նույնիսկ դրամ էին հատում: Հռոմեացի պատմիչ Պլինիոսի համաձայն՝ պարթևներին ենթակա էին 18 թագավորություններ: Տերության առավել զարգացած շրջանը արևմտյանն էր: Հատկապես Միջագետքը և Սիրիան տիպիկ հելլենիստական տարածքներ էին, որտեղ գերիշխում էր քաղաքային կենցաղը, իսկ հոգևոր և նյութական մշակույթը հիմնավորապես հելլենականացած էր:

Պարթևստանի կառավարման համակարգը լիովին արտացոլում էր տերության բազմաշերտ կառուցվածքը: Գոյություն չուներ պետական կառավարման միասնական համակարգ: Հաճախ պահպանվում էին նվաճված երկրում նախկին ժամանակներից մնացած կառավարման մարմինները: Պարթևական արքաները հաշվի էին նստում տերության կազմում գտնվող երկրների առանձնահատկությունների ու ավանդույթների հետ:

Բուն Պարթևստանում վարչական ստորին միավորը **դիզպատն** էր՝ բնակավայրի կառավարիչը, որը ենթարկվում էր ավելի խոշոր վարչական միավորի կառավարչին՝ **շահրապին**: Վերջինս էլ ենթակա էր **մարզբանին**: Տերության արևմուտքում պահպանվում էին հելլենիստական վարչական տիտղոսները՝ **ստրատեգոս, արխոս**: Միայն հզոր արքայական իշխանության պայմաններում էր հնարավոր իրականացնել այսպիսի տարաբնույթ վարչական կառույցի վերահսկողությունը: Արքայական իշխանության թուլացման կամ ծանր պատերազմների շրջանում տերության ինքնուրույն միավորները սկսում էին դրսևորել կենտրոնախույս միտումներ: Դա հատկապես զգացվեց արդեն Ք.հ. I–III դարերում, երբ տերության կազմում գտնվող որոշ երկրներ փաստացի դուրս եկան պարթևական արքաների վերահսկողությունից: Այսպես՝ 58 թ. անկախացավ **Վրկանիան**, որի արքան նույնիսկ դեսպանություն ուղարկեց Հռոմ: III դարի սկզբին տերության կազմից դուրս եկավ Ֆարսը, որի արքան ընդունեց **շահ** (արքա) տիտղոսը:

Հնդկաստանը մաուրյան հարստության շրջանում

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքից մի քանի տարի անց նվաճողների դեմ սկսվեց ապստամբություն՝ **Մաուրյան** տոհմի ներկայացուցիչ **Չանդրագուպտայի** գլխավորությամբ: Նա վտարեց մակեդոնացիներին, իսկ **Ք.ա. 305 թ.** հաջողության հասավ Հնդկաստան արշաված Սելևկոս I–ի դեմ պատերազմում: Սելևկյանները ստիպված էին Չանդրագուպտային զիջել զգալի տարածքներ Աֆղանստանում և Իրանում: Նորա-

Մաուրյան հարստություն. Աշոկա

Ցին կայսրություն. Ցին Շի Հուանդի



Սանչի ստուպայի դարպասները
Մաուրյան դինաստիայի ժամանակաշրջան

ստեղծ պետության կենտրոնական մասն ընդգրկում էր **Մագադիան**՝ Գանգեսի հովտում, որի մայրաքաղաքն էր **Պատալիպուտրան**: Չանդրագուպտային փոխարինեց որդին՝ **Աշոկան** (Ք.ա. 268–231), որի օրոք Մաուրյան պետությունը հասավ իր հզորության բարձրակետին:

Պետությունը տարածվում էր գրեթե ողջ թերակղզու վրա՝ ընդգրկելով նաև զգալի տարածքներ Հնդկաստանից արևմուտք: Աշոկան ստեղծեց պետական կառավարման այնպիսի համակարգ, որն ապահովում էր ահռելի տերության կառավարումը: Տերությունը բաժանվեց 5 փոխարքայությունների, որտեղ կառավարում էին արքայատոհմի անդամները: Փոխարքայությունները իրենց հերթին բաժանվում էին ավելի մանր վարչական միավորների: Արքային կից գործում էր արքայական խորհուրդը, որի անդամները բարձրագույն ազնվականության ներկայացուցիչներն էին: Արքան իր մերձավորների հետ հաճախ շրջում էր երկրով, որպեսզի անձամբ վերահսկի փոխարքաների գործունեությունը:

Պետությունն ամրապնդելու ճանապարհին կարևոր խնդիր էր տերության տարբեր շրջանների բնակչության միջև հոգևոր կապերի սերտացումը, քանի որ յուրաքանչյուր երկիր ուներ իր սեփական կրոնապաշտամունքային համակարգը: Չվերացնելով մյուս կրոնները՝ Աշոկան համապետական կրոն հռչակեց **բուդդայականությունը**:

Մաուրյան պետությունը Աշոկայից հետո սկսեց թուլանալ հատկապես հունա–բակտրիական պետության արշավանքից հետո: **Ք.ա. 180 թ.՝** մաուրյան վերջին արքայի սպանությունից հետո, իշխանության եկավ նոր՝ **Շունգերի** արքայատոհմը:

Մաուրյան տերությունը Հնդկաստանի պատմության մեջ առաջին համահնդկական պետությունն էր, որի արքաները փորձում էին ստեղծել մեկ միասնական քաղաքական, տնտեսական և հոգևոր–մշակութային համակարգ:

Չինաստանը Ցին կայսրության շրջանում

Ք.ա. V–III դարերում Չինաստանը բաժանված էր մի շարք խոշոր և մանր թագավորությունների՝ **Հան, Չժաո, Ցին** և այլն: Ընդհուպ մինչև Ք.ա. III դարը սրանցից Ցին պետությունը երկրորդական նշանակություն ուներ: Արքաների հիմնական մտահոգությունը երկիրը բարեփոխումների միջոցով ամրապնդելն էր: Այդ ասպարեզում կարևոր նշանակություն ունեցան բնակչության բաժանումը 20 գույքային խմբերի, բանակի վերակազմավորումը (նոր զորամասերի ստեղծում, մարտավարման նոր եղանակ), հարկային համակարգի բարելավումը:

Ք.ա. IV դարի վերջերից Ցինի արքաները սկսեցին նվաճողական պատերազմներ: **Ք.ա. 241 թ.** նրանց հաջողվեց պարտության մատնել չորս թագավորությունների միացյալ բանակին, իսկ **Ք.ա. 221 թ.** Ցինի արքա **Ին Չժենը** հաղթեց վերջին հակառակորդներին: Նա

ընդունեց **Հուանդի** տիտղոսը և այդուհետ սկսեց կոչվել **Ցին Շի Հուանդի՝** «Ցինի առաջին կայսր»: Մայրաքաղաք հռչակվեց **Չանանը**: Հետագայում կայսրը գրավեց նաև հարավային Չինաստանը, իսկ հյուսիսում վտարեց քոչվոր հոներին: Քոչվորների առջև պատնեշ ստեղծելու նպատակով նա կառուցեց Չինական մեծ պարիսպը՝ շուրջ 5000 կմ երկարությամբ:

Ցին Շի Հուանդին կատարեց վարչական բարեփոխումներ՝ կայսրությունը բաժանելով 40 մարզերի: Կայսրը ձգտում էր ստեղծել միասնական ժողովուրդ՝ միասնական կառավարման համակարգով և մտայնությամբ: Արգելվեց տարբեր մարզերի բնակիչներին իրենց անվանել ըստ տվյալ մարզի նախկին անվան: Երկրի ներքին շրջաններում գտնվող քաղաքների պարիսպները քանդվեցին, պահպանվեցին միայն սահմանամերձ շրջանների ամրությունները: Մասնավոր անձանց ձեռքում գտնվող զենքը առգրավվեց: Արգելվեց նաև կրել ժառանգական տիտղոսներ. բոլոր քաղաքացիները հավասար էին օրենքի առջև: Մտցվեցին միասնական օրենսդրություն, գերագույն վերահսկողական ծառայություն, որը վերահսկում էր վարչական ապարատը և ենթարկվում էր անձամբ կայսրին: Բնակչության պատկանելությունը գույքային խմբերին որոշվում էր ըստ գույքի և պետության հանդեպ ծառայության աստիճանի:

Կայսրը մեծ նշանակություն էր տալիս ցամաքային և գետային ճանապարհաշինությանը: Շինարարական աշխատանքները մեծ չափեր ընդունեցին: Մտցվեցին կշռի, երկարության, ծավալի միասնական միավորներ, ինչպես նաև միասնական դրամ: Կատարվեց գրային համակարգի բարեփոխում. հիերոգլիֆային գիրը պարզեցվեց, որպեսզի հեշտացվի դրա կիրառումը: Ժամանակակից չինական գրի հիմքում ընկած է այդ շրջանի գրային համակարգը:

Այսպիսով՝ Ցին Շի Հուանդին արմատական բարեփոխումներ իրականացրեց տերության հասարակական–քաղաքական, տնտեսական և հոգևոր–մշակութային բնագավառներում, որոնց նպատակն էր ստեղծել միասնական ամուր պետականություն: Դա ծանր հարված էր տոհմատիրական կարգերին:

Լրացուցիչ նյութ

Աշոկա արքայի հռչակագիրը (հատվածներ)

Աստվածների սիրելին՝ Աշոկա արքան, ասում է. «Բարի գործ կատարելը դժվար է: Նա, ով բարի գործ է կատարում, շատ պետք է չարչարվի: Ես շատ բարի գործեր եմ կատարել, և եթե իմ որդիները, թոռները և նրանց հետնորդները ընդհուպ մինչև աշխարհի վերջը այդպես վարվեն, նրանք էլ շատ բարի գործեր կանեն: Սակայն եթե նրանցից որևէ մեկը անտեսի սա, ապա չարիք կգործի: Հիրավի, չար գործ կատարելը շատ հեշտ է»:

Աստվածների սիրելին՝ Աշոկա արքան, ասում է. «Նախկինում պետական գործերը կարգավորված չէին, ոչ էլ արքային զեկուցում էին ամեն պահ: Բայց այժմ ես հրամայել եմ, որ ցանկացած ժամանակ՝ ուտելիս կլինեմ ես թե կանացի հարկաբաժնում, ննջարանում թե մարտակառքի վրա, պատգարակի վրա թե այգում կամ որևէ այլ վայրում, լրաբերներին պետք է հանձնարարվի զեկուցել ինձ ժողովրդի վիճակի մասին, որպեսզի ես տեղյակ լինեմ այդ վիճակի մասին, որտեղ էլ որ կլինեմ»:

Աստվածների սիրելին՝ Աշոկա արքան, ասում է. «Ես խոր ցավ եմ զգում չնվաճված երկրի նվաճման ժամանակ տեղի ունեցող սպանության, մահվան և բնակչության տեղահանման պատճառով»: Աստվածների սիրելին ավելի խոր ցավ է զգում այն պատճառով, որ տարբեր կրոններ դավանող բրահմանները, ճգնավորները և տանտերերը, ովքեր ապրում են այդ երկրներում, և ովքեր հարգում են մեծերին՝ հայրերին, մայրերին, ավագներին, վիրավորվում են, սպանվում կամ բաժանվում իրենց սիրելիներից:

Ամփոփում: *Ք.ա. III դարում Առաջավոր Ասիայի մի մասում, Հնդկաստանում և Չինաստանում, նախկինում գոյություն ունեցող քաղաքակրթական կենտրոններում ձևավորված պետությունների տարածքում ի հայտ է գալիս քաղաքական կենտրոնացման միտում: Դրա անմիջական հետևանքը Պարթևստանի, Մաուրյան Հնդկաստանի և Ցին կայսրության հանդես գալն էր:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ և ո՞վ հիմնադրեց Պարթևական պետությունը: Ո՞ւմ օրոք վերելք ապրեց Պարթևստանը: Արևելքից ո՞ր ցեղերն էին սպառնում Պարթևստանին Ք.ա. III դարի երկրորդ կեսին:
2. Ք.ա. I դարի առաջին կեսին ո՞վ ծանր հարված հասցրեց պարթևների տերությանը: Ի՞նչ արդյունք ունեցան այդ նույն դարի երկրորդ կեսերի հռոմեա–պարթևական բախումները: Ե՞րբ անկում ապրեց Պարթևստանը:
3. Ներկայացրե՛ք Պարթևստանի հասարակական կյանքի առանձնահատկությունները: Ինչպիսի՞ն էր կառավարման համակարգը:
4. Ո՞վ գլխավորեց մակեդոնացիների դեմ պայքարը Հնդկաստանում Ք.ա. IV դ. վերջին: Ո՞ւմ օրոք Մաուրյան պետությունը հասավ իր հզորության գագաթնակետին: Փորձե՛ք գծակարգի տեսքով ներկայացնել այն: Ո՞ր կրոնը դարձավ համապետական:
5. Քաղաքական ի՞նչ իրավիճակ էր տիրում Չինաստանում Ք.ա. V–IV դարերում: Ցին արքաների պատերազմները ի՞նչ արդյունքներ տվեցին Ք.ա. III դ. վերջին: Ի՞նչ է նշանակում Ցին Շի Հուանդի կայսեր անունը: Ինչո՞ւ նա կառուցել տվեց Չինական մեծ պարիսպը:
6. Գնահատե՛ք միասնական պետության ստեղծման նպատակով Ցին Շի Հուանդիի քաղաքականությունը:

§ 3. ԲԱՐԲԱՐՈՍԱԿԱՆ ԵՎՐՈՊԱՆ

Կելտեր

Արևմտյան և Կենտրոնական Եվրոպան Ք.ա. I հազ. իրենից ներկայացնում էր բազմաթիվ խոշոր և մանր ցեղային միություններով խիտ բնակեցված տարածք: Բնական պաշարներով և ջրի պաշարներով հարուստ այս ընդարձակ երկրամասը գտնվում էր հունահռոմեական քաղաքակիրթ աշխարհի անմիջական հարևանությամբ, որի հետ ուներ տարաբնույթ, հիմնականում առևտրական փոխհարաբերություններ: Այստեղից հունական պոլիսները, այդ թվում՝ գաղութային, կանոնավոր ներմուծում էին փայտանյութ, մետաղներ (հատկապես կապար՝ Բրիտանիայից)՝ փոխարենը տեղական բնակչությանը մատակարարելով արհեստագործական ապրանքներ: Հռոմեական հանրապետության գոյության վերջին շրջանում Եվրոպայի ժողովուրդները դեռևս ապրում էին տոհմատիրական հարաբերությունների փուլում: Երբեմն ձևավորվում էին անկայուն ցեղային միություններ, որոնք, սակայն, դեռևս չէին կարող կոչվել պետություններ:

Եվրոպական ցեղերից այս ժամանակաշրջանում առավել բազմաքանակը և զարգացածը կելտերն էին: Սրանք միմյանց լեզվակից տասնյակ խոշոր և մանր ցեղեր էին, որոնք բնակվում էին Հռենոս, Սենա և Լուարա գետերի ավազաններում: Ավելի ուշ նրանք ծավալվեցին մի կողմից դեպի Պիրենեյան թերակղզի (Իսպանիա) և Բրիտանական կղզիներ, մյուս կողմից՝ հարավային Գերմանիայի հարավ, Հունգարիա, Չեխիա և Բալկանյան թերակղզու հյուսիս: Ք.ա. V–IV դարերում կելտերը մի քանի ալիքներով մուտք գործեցին նաև Իտալիա և բնակություն հաստատեցին Ապենինյան թերակղզու հյուսիսում՝ Պո գետի ավազանում (Ցիսալպյան Գալլիա): Հռոմեացիներին կելտերը հայտնի էին որպես գալլեր, իսկ նրանց բուն երկիրը՝ Գալլիա: Ք.ա. III դ. կելտերի մի ճյուղը շարժվեց դեպի Հունաստան, այնտեղից էլ՝ Փոքր Ասիա և հաստատվեց այստեղ (**գալատներ**): Իսկ նույն ժամանակներում կելտական ցեղերից **բելգերը** գրավեցին Ֆրանսիայի հյուսիսը և Բրիտանիայի մի մասը: Կելտերը յուրացրին Բրիտանիան, ինչպես նաև Իռլանդիան (շոտլանդացիների, ուելսեցիների և իռլանդացիների նախնիները):

Գալլիայի առավել զարգացած շրջանը հարավն էր, որը Հռոմի և հունական գաղութների հարևանությամբ էր (ներկայիս Ֆրանսիայի Պրովանս մարզը): Կելտական առաջին ցեղային պետությունները ստեղծեցին Ֆրանսիայի հարավում հիմնավորված երկու խոշոր ցեղախմբերը՝ **էդուները** և **արվերնները**: Այստեղ բնակչության սոցիալական և գույքային շերտավորումը բավական խորացել էր: Իշխանությունը տոհմային ազնվականության խորհրդի ձեռքում էր: Արտոնյալ կարգավիճակ ունեին քրմերը՝ **դրուիդները**, որոնք համարվում էին իմաստության կրողներ: Նրանք տարեկան մեկ անգամ անտառային բացատում հավաքվում էին խորհրդի, ընդունում որոշումներ, որոնք պարտադիր էին ցեղամիության բոլոր անդամների համար:

Հունահռոմեական ազդեցության հետևանքով կելտական ցեղերը արագորեն յուրացրին քաղաքակրթական շատ տարրեր: Կելտերին է պատկանում սուր հատող խոփ ունեցող ծանր գութանի հայտնագործումը, որը թույլ էր տալիս շատ ավելի խոր ակոսներ փորել: Կելտերը հիմնում էին խոշոր բնակավայրեր, որոնք պատվում էին սրբատաշ քարերով կառուցված պարիսպներով: Կելտական ցեղախմբերի շատ արքայիկներ, հույների և հռոմեացիների ազդեցության տակ նույնիսկ հատում էին սեփական պատկերով ոսկե և արծաթե դրամներ, որոնք օգտագործվում էին արտաքին առևտրում:

Այնուամենայնիվ, նույնիսկ առավել զարգացած կելտական ցեղերը այդպես էլ չմիավորվեցին միասնական պետականության շրջանակներում: Դրան խանգարում էր ինչպես ցեղերի զարգացածության տարբեր աստիճանների առկայությունը, այնպես էլ վտանգավոր հարևանների ներկայությունը (հյուսիսում և հյուսիս–արևելքում՝ գերմանական ցեղերը, հարավում՝ Հռոմը):

Գերմանացիներ

Գերմանական մեծաքանակ ցեղերը սկզբնապես բնակվում էին ժամանակակից Գերմանիայի հյուսիսային և կենտրոնական շրջաններ-

ում՝ Վեզեր և Օդեր գետերի միջև, ինչպես նաև Սկանդինավյան թերակղզու հարավում: Ք.ա. I հազ. կեսերից սկսած նրանք աստիճանաբար տեղաշարժվեցին հարավ՝ հասնելով մինչև Հռենոսի ափը: Գերմանացիների ճնշման տակ տեղի կելտական ցեղերը ստիպված էին հեռանալ այլ վայրեր: Իրենց մշտական տեղաշարժերի ընթացքում գերմանական առանձին ցեղեր հասան նույնիսկ մինչև Ապենինյան թերակղզի՝ լուրջ սպառնալիք դառնալով հռոմեացիների համար (կիմբրները և տևտոնները): Այս վաղ շրջանի գերմանական ցեղերից էին **մարկոմանները, սվևները, տևտոնները** և այլն:

Դեպի Եվրոպա հռոմեական ներթափանցման շրջանում գերմանական ցեղերը բնակվում էին Դանուբ գետից հյուսիս և արևելք՝ Հռենոս և Վիսլա գետերի միջև: Այս ընդարձակ տարածքը, որը հռոմեացիները չկարողացան նվաճել, նրանք անվանում էին «Ազատ Գերմանիա»: Իսկ Հռենոսի ձախափնյակում գտնվում էին Հռոմին ենթակա **Վերին** և **Ստորին Գերմանիա** պրովինցիաները:

Կելտերի հետ համեմատած՝ գերմանացիները զարգացման ավելի ցածր մակարդակի վրա էին: Գերմանական ցեղերը քաղաքակիրթ աշխարհի հետ շփվում էին կելտերի միջոցով, որով էլ պայմանավորված էր նրանց մոտ տնտեսության ցածր մակարդակը: Միայն Ք.ա. IV դ. գերմանական որոշ ցեղեր սկսեցին զբաղվել երկաթի մշակմամբ: Գերմանացիները հիմնականում անասնապահներ էին, որոնց մոտ երկրագործությունը երկրորդական դեր էր կատարում: Այդ էր պատճառը, որ նրանք շարժունակ էին և շարունակ նոր բնակավայրեր էին փնտրում: Գոյամիջոցների սակավությունը ստիպում էր գերմանացիներին պարբերաբար արշավանքներ կազմակերպել հարևանների դեմ՝ ավար ձեռք բերելու նպատակով: Նրանք հաճախ վարձու զինծառայություն էին կատարում կելտական արքայիկների կամ հռոմեացիների համար:

Կելտական զինվորներ

Հռոմեական կայսրության սահմանակից «Ազատ Գերմանիայի» ցեղերի մի մասի մոտ Ք.հ. I դարում ընթանում էր տոհմատիրական հարաբերությունների քայքայման գործընթացը: Ժամանակ առ ժամանակ որոշ ցեղերի հաջողվում էր ստեղծել հզոր միություններ, որոնք, սակայն, կայուն չէին: Դրանց կողմից եկող վտանգը երբեմն հռոմեացիները չեզոքացնում էին տոհմային ավագանու ներսում երկպառակությունները խթանելու միջոցով: Սակայն հաճախ Հռոմը ստիպված էր դիվանագիտությունը զուգակցել ռազմական միջամտությանը:

Առաջին խոշոր գերմանական միությունը ստեղծեցին մարկոմանները, որոնց առաջնորդ **Մարոբոդի** շուրջը միավորվեցին սվևները, լանգոբարդները և այլք: Մարոբոդն ուներ շուրջ 70000 զորք: Մարկոմանական հզոր միության գոյությունը անկախացման հույսեր ներշնչեց Հռոմից կախյալ ցեղերին: **9 թ.** Հռոմի դեմ ապստամբեց **խերուսկների** առաջնորդ **Արմինիոսը**, ով **Տևտոբուրգյան անտառում** գլխովին ջախջախեց հռոմեական երեք լեգիոնների: Արմինիոսը փորձում էր միավորել հարևան գերմանական ցեղերին և ստեղծել պետություն: Գերմանական ցեղերի նկատմամբ ազդեցություն հաստատելու ձգտումը պատճառ դարձավ Արմինիոսի և Մարոբոդի միջև թշնամության: Նրանց միջև պատերազմ սկսվեց, որն ավարտվեց **Ք.հ. 17 թ.** Արմինիոսի հաղթանակով: Շուտով Արմինիոսը պարտություն կրեց հռոմեացիներից:

II դարի երկրորդ կեսին գերմանական ցեղերից մարկոմանները և քվադները կրկին ներխուժեցին կայսրության հյուսիսային պրովինցիաներ: Կայսր Մարկոս Ավրելիոսը մեծ դժվարությամբ կարողացավ կանգնեցնել հա-

կառակորդներին:

Հաջորդ դարում գերմանական ցեղերի մի մասին հաջողվեց ստեղծել արդեն համեմատաբար կայուն միություններ: Դրանք հիմնականում զբաղեցնում էին Հռոմեական կայսրության սահմաններից հեռու ընկած տարածքներ՝ ժամանակակից Գերմանիայի հյուսիսում և հյուսիս–արևելքում: Այդպիսի միություններից իրենց հզորությամբ աչքի էին ընկնում **վանդալները, ալեմանները, լանգոբարդները, անգլերը, սաքսերը** և այլք: Վերջիններս ուշ կայսրության շրջանում իրենցից ներկայացնում էին լուրջ ռազմաքաղաքական ուժ, և հռոմեացիները մեծ դժվարությամբ էին կարողանում պահպանել իրենց սահմանների անվտանգությունը:

Եվրոպայի մյուս ժողովուրդները

Գերմանացիներից և կելտերից արևելք բնակվում էին բազմաթիվ այլ ժողովուրդներ, որոնց մի մասի ծագումը պարզ չէ: Հռոմի բալկանյան տիրույթների համար մեծ սպառնալիք էին հյուսիսից արշավող ցեղերը, որոնք ծանր հարված հասցրին հռոմեական Մակեդոնիային: Կեսարի գալլական արշավանքների շրջանում թրակացիներն ավերեցին Մակեդոնիան, իսկ նրանց ջոկատները վերահսկում էին Մակեդոնիայից Թեսալիա տանող հռոմեական ճանապարհը:

Ժամանակակից Ռումինիայի տարածքում ապրում էին **գետերը** և **դակերը**, որոնք Ք.ա. I դարում ստեղծեցին թագավորություն: Այն շուտով ընդարձակվեց՝ ներառելով Դանուբ գետի երկու ափերը, և հասնում էր մինչև Թրակիա ու Իլիրիա: Ք.հ. I դարի վերջերին, արքա **Դեկեբալի** օրոք Դակիան վերածվեց հզոր քաղաքական ուժի: Արքան երկրում սկսեց կառուցել ամրոցներ, ստեղծեց մարտունակ բանակ: Հռոմի դեմ արդյունավետ պայքարելու նպատակով նա ցանկանում էր դաշինք կնքել Պարթևստանի հետ:

Հռոմը ստիպված էր տևական պայքար սկսել Դեկեբալի դեմ՝ այդ գործին մասնակից դարձնելով նրա իշխանությունից դժգոհ տեղական ազնվականությանը: Այնուամենայնիվ հռոմեա–դակական պատերազմները երկար ժամանակ ընթանում էին փոփոխակի հաջողություններով: Ի վերջո կայսր Տրայանոսին հաջողվեց **106 թ.** վճռական հաղթանակ տանել և Դակիան անցավ Հռոմեական կայսրության տիրապետության տակ:

Գերմանական ցեղերից արևելք և Սև ծովից հյուսիս ընկած ընդարձակ շրջաններում բնակվում էին մեծաքանակ այլ ժողովուրդներ, որոնք հռոմեացիներին հայտնի էին որպես **սարմատներ, վենեդներ, անտեր, գոթեր** և այլն: Այս ցեղերը ընդհուպ մինչև Արևմտահռոմեական կայսրության անկումը անմիջականորեն չէին առնչվում հռոմեացիների հետ: Սրանց ռազմական ակտիվությունը զգացվեց միայն ժողովուրդների Մեծ տեղաշարժի շրջանում:

Եվրոպական քաղաքակրթության սկիզբը

Այսպիսով՝ Ք.ա. I հազ. վերջերին եվրոպական տարածաշրջանում սկսվում է տոհմատիրական կարգերի քայքայման գործընթացը, որը արագացավ այստեղ Հռոմի ներթափանցման և տեղի ժողովուրդների հետ հռոմեացիների ունեցած տարաբնույթ փոխառնչությունների հետևանքով: Ներքին զարգացման և հռոմեական քաղաքակրթության ազդեցության շնորհիվ Ք.հ. I–II դարերում Բրիտանական կղզիներից մինչև Արևելյան Եվրոպա սկսում են ձևավորվել անկայուն ցեղային պե-

Գերմանացի զինվորներ

տականություններ, որոնք հետագայում արդեն աստիճանաբար վերածվում են լուրջ ռազմաքաղաքական գործոնի:

Հռոմի անմիջական տիրապետության տակ գտնվող եվրոպական շրջաններում (Դանուբից հարավ) «բարբարոսական» պետությունների ձևավորումը կանգ առավ: Այստեղ գտնվող նախկին ցեղային պետությունները ցրվեցին և այդ շրջանները վերածվեցին հռոմեական պրովինցիաների (Գալիա, Պանոնիա, Իլիրիկ և այլն): Պետությունների ձևավորումը այժմ արդեն ընթանում էր հռոմեական տիրույթների հարևանությամբ գտնվող գերմանական և հյուսիսբալկանյան տարածքներում: Վերջիններիս ցեղամիությունները կայուն հարաբերություններ ունեին Հռոմի հետ կյանքի տարբեր ոլորտներում՝ վարձու զինծառայություն, առևտուր և այլն, որը նպաստում էր հասարակության հետագա շերտավորմանը: Դա էլ իր հերթին հանգեցնում էր պետականության սաղմերի ամրապնդմանը:

Եվրոպայում պետությունների կազմավորումը նոր թափ առավ III–IV դարերում՝ կապված ինչպես ցեղային միությունների հզորացման, այնպես էլ Հռոմեական կայսրության թուլացման հետ:

Հուլիոս Կեսար. «Նոթեր գալլական պատերազմի մասին» (հատվածներ)

Ամբողջ Գալլիան բաժանված է երեք մասի, որոնցից մեկում բնակվում են բելգերը, մյուսում՝ ակվիտանները, իսկ երրորդում՝ նրանք, ովքեր իրենց անվանում են կելտեր, մեր լեզվով՝ գալլեր: Սրանք բոլորը միմյանցից տարբերվում են լեզվով, սովորություններով և օրենքներով: Գարոննա գետը գալլերին բաժանում է ակվիտաններից, իսկ Մարնա և Սենա գետերը՝ բելգերից: Սրանց բոլորից բելգերը ամենախիզախն են, որովհետև նրանք ամենահեռուն են գտնվում քաղաքակրթությունից և մեր պրովինցիայից, առևտրականները հաճախ չեն այցելում նրանց, ներմուծում իրեր, որոնցից նրանց ուղեղը փափկակյաց կդառնար: Եվ նրանք ամենամոտն են գերմանացիներին, ովքեր ապրում են Հռենոսից այն կողմ, ում հետ նրանք շարունակաբար մարտնչում են: Այդ նույն պատճառով հելվետները նույնպես գերազանցում են մնացած գալլերին քաջությամբ, քանի որ ստիպված են գրեթե ամենօրյա կռիվներ մղել գերմանացիների դեմ, երբ նրանք (հելվետները) դուրս են մղում նրանց (գերմանացիներին) իրենց հողերից կամ մարտնչում են իրենց սահմաններում:

Ամփոփում: *Մինչև Ք.ա.I դարի կեսերը Ալպյան լեռներից հյուսիս ընկած Կենտրոնական և Արևմտյան Եվրոպայում բնակվում էին սոցիալ–տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման մակարդակներով միմյանցից տարբեր բազմաթիվ ժողովուրդներ՝ կելտեր, գերմանացիներ և այլք: Դեպի Եվրոպա Հռոմի ներթափանցման շրջանում եվրոպական ժողովուրդներից կելտերի մոտ պետականության զարգացումը կանգ առավ: Եվրոպայում ցեղային պետությունների ձևավորումը արագացավ արդեն կայսրության շրջանում, հիմնականում հռոմեական գերիշխանությունից դուրս ընկած շրջաններում:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ հասարակությունում էին ապրում Եվրոպայի ժողովուրդները Ք.ա. I հազարամյակում: Կելտական ցեղերը ե՞րբ և ո՞ր տարածքներում հաստատվեցին: Ինչպե՞ս էին նրանց անվանում հռոմեացիները:
2. Որտե՞ղ էին բնակվում առավել զարգացած կելտական ցեղերը: Ի՞նչ ազդեցություն ունեցավ նրանց վրա հունահռոմեական քաղաքակրթությունը: Ինչո՞ւ կելտական ցեղերը չկարողացան միավորվել մեկ միասնական պետության մեջ:
3. Որտե՞ղ էին սկզբնապես բնակվում գերմանական ցեղերը: Եվրոպայի ո՞ր շրջաններ նրանք սկսեցին տեղաշարժվել: Ինչո՞ւ նրանց տնտեսությունն այնքան զարգացած չէր, որքան կելտերինը:
4. Արևելյան Եվրոպայում ի՞նչ ցեղեր էին ապրում: Ո՞վ և ե՞րբ ստեղծեց թագավորություն ժամանակակից Ռումինիայի տարածքում:

§ 4. ՉԻՆԱՍՏԱՆԸ ԵՎ ՀՆԴԿԱՍՏԱՆԸ ՆՈՐ ՀԱՋԱՐԱՄՅԱԿԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

Չինաստանը Հան հարստության օրոք

Ցին Շի Հուանդի կայսրը ընդամենը մի քանի տարով կարողացավ պահպանել իր ստեղծած հսկայական տերությունը: Ցինի, ինչպես նաև նախկինում անկախ պետությունների խոշոր ազնվականությունը դժգոհ էր մայրաքաղաք **Չանանի** կայսեր անսահմանափակ իշխանությունից: Նրա դեմ բազմիցս կազմակերպվում էին մահափորձեր: Կայսեր մահից հետո սկսվեցին պալատական խլրտումներ և հուզումներ տերության շրջաններում, որոնք վերածվեցին քաղաքացիական պատերազմի: Ապստամբների առաջնորդներից **Լյու Բանը** հասավ հաջողության: Կայսրը գերվեց, իսկ Լյու Բանը Ք.ա. **202 թ.** իրեն հայտարարեց կայսր: Նրանով սկսվեց Ավագ Հան հարստության կայսրությունը:

Քաղաքացիական պատերազմի ավարտին տերությունը նյութական և մարդկային խոշոր կորուստներ էր կրել: Հիմնավորապես ավերվել էին բնակավայրերը, ոռոգողական կառույցները, երկրում սով էր տիրում: Պատմիչ **Սիմա Ցյանի** հավաստմամբ՝ մայրաքաղաքներում և խոշոր քաղաքներում 10 բնակչից մնացել էր հազիվ 1–2–ը: Գյուղական համայնքներին վերադարձվեցին նրանց տարածքում գտնվող արոտավայրերը, անտառները և ջրամբարները, որոնք պետականացվել էին Ցին Շի Հուանդիի ժամանակ:

Կայսրը վերականգնեց պետական կառավարման քայքայված մարմինները: Նա սկզբում ստիպված էր հանդուրժել չինական նախկին պետություններում իշխող արքայատոհմերի ժառանգական իրավունքները: Վերջիններս, որ կոչվում էին **վան** («կառավարիչ, արքա»), շարունակեցին տիրել իրենց տարածքներին: Սակայն նրանք շուտով սկսեցին ինքնուրույն քաղաքականություն վարել: Այդ էր պատճառը, որ հետագայում Լյու Բանը սկսեց վերացնել վանների արտոնությունները, իսկ մի մասին մահապատժի ենթարկեց:

Լյու Բանից հետո վանների կենտրոնախույս միտումներն ուժեղացան: Նրանք երբեմն դաշնակցում էին կայսրության արտաքին թշնամիների, մասնավորապես հյուսիսից արշավող հոնական ցեղերի հետ: Իսկ **Ք.ա. 154 թ.** կայսրին մեծ դժվարությամբ հաջողվեց ճնշել 7 վա-

Չինական մեծ պարիսպը

ների ապստամբությունը: Վաներին ջախջախիչ հարված հասցրեց միայն **Ու Դի** կայսրը (Ք.ա. 140–87): Վերջինիս կառավարման հետ է կապված Չինաստանի տնտեսության զգալի վերելքը:

Ընդարձակվեց ոռոգման համակարգը, որի շնորհիվ աճեց մշակովի հողատարածությունների քանակը: Կայսրը պետական մենաշնորհ մտցրեց աղի, երկաթի, գինու արտադրության բնագավառում: Միայն կայսերական վարչակազմն իրավունք ուներ դրամ հատելու: Մեծ վերելք ապրեց արտաքին առևտուրը, որ կապված էր հատկապես Մետաքսի մեծ ուղու բացման հետ: Առևտրադրամական հարաբերությունները ներթափանցեցին կյանքի բոլոր բնագավառներ: Պետական գանձարանի եկամուտներն ընդարձակելու նպատակով **Ք.ա. 123 թ.** նույնիսկ թույլատրվեց պետական պաշտոնների առքուվաճառքը:

Տնտեսական մեծ վերելքի շնորհիվ զգալիորեն աճեց բնակչության թվաքանակը: Մարդահամարի տվյալներով՝ Չինաստանի բնակչությունը այս շրջանում հասնում էր շուրջ 60 միլիոնի:

Կատարելագործվեց նաև պետական կառավարման համակարգը: Այն վերածվեց կենտրոնացված պետական կառույցի: Տերությունը բաժանվեց 13 խոշոր մարզերի, վերջիններս՝ 83 ավելի մանր շրջանների: Մարզերից յուրաքանչյուրում կառավարում էր կայսեր նշանակած փոխարքան: Կայսերական վարչակազմի ընդհանուր թվաքանակը հասնում էր շուրջ 130 հազար մարդու: **Ք.ա. 136 թ.** սահմանվեց օրենք պետական պաշտոնյաների վերաբերյալ: Վերջիններս պաշտոնավարման անցնելուց առաջ պարտավոր էին քննություն հանձնել, որի արդյունքներով ստանում էին համապատասխան դասային աստիճաններ:

Կայսրը վերակազմավորեց նաև բանակը, քանի որ Չինական մեծ պարսպից հյուսիս ապրող քոչվոր **հոները** հաճախ ասպատակում էին տերության հյուսիսային շրջանները և երբեմն նույնիսկ հասնում մայրաքաղաք: Ստեղծվեց ծանրազեն զրահապատ հեծելազոր, որը կազմեց բանակի հիմքը: Հետևակի զինավորման մաս կազմեցին ինքնանետները (միջնադարյան եվրոպական արբալետի տարատեսակը): Չինական բանակը զինված էր նաև քարանետ մեքենաներով, որոնք ի վիճակի էին խփելու շուրջ 500 մետր հեռու ընկած նշանակետին:

Չեզոքացնելով հոնական սպառնալիքը՝

Գուպտաների դարաշրջանի ճարտարապետական նմուշներ

կայսրն ինքն անցավ ակտիվ քաղաքականության: Արևմուտքում կայսերական բանակը հասավ մինչև Ֆերգանայի հովիտ՝ Կենտրոնական Ասիայում, որով Չինաստանը անմիջական կապ հաստատեց Առաջավոր Ասիայի պետությունների հետ: Բացվեց Մետաքսի ուղին, որը խոշոր եկամուտներ էր ապահովում պետական գանձարանի համար:

Հան տերության վերելքը, սակայն, ուղեկցվում էր նաև բացասական երևույթներով: Պետական խոշոր ծախսերը փոխհատուցվում էին հարկերի ավելացմամբ: Բնակչության համար հատկապես ծանր էր 3–80 տարեկան անձանց վրա շնչահարկի սահմանումը: Հաճախ մարդիկ ստիպված էին ընտանիքներով հեռանալ իրենց բնակավայրերից:

Ք.հ. 8 թ. իշխանությունը զավթեց մանկահասակ կայսեր խնամակալ **Վան Մանը**, ով իրեն հայտարարեց **Մին** հարստության կայսր: Իր համար սոցիալական հենարան ապահովելու նպատակով կայսրը խոստացավ բոլոր կարիքավորներին հող տրամադրել: Սակայն նա միաժամանակ ստիպված էր ավելացնել հարկերը (բերքի 1/10 մասը), որը ծանր հարված էր բնակչության համար:

Վան Մանի դիրքերը վտանգվեցին հոների ակտիվության հետևանքով: Վերջիններս արևմուտքում գրավեցին Մետաքսի ուղին, և կայսրը պարտություն կրեց նրանց դեմ պատերազմում: Իսկ երկրում սկսվեցին ապստամբություններ: Հատկապես ծանր էր «Կարմրահոնքերի» ապստամբությունը: Ապստամբները երկու անգամ գրավեցին մայրաքաղաքը: Սակայն նրանք չկարողացան դիմանալ այստեղ: Հան արքայատոհմի ներկայացուցիչներից **Գուան Ու Դին** շուտով ճնշեց ապստամբությունը և իրեն կայսր հռչակեց: Նրանով Չինաստանում սկսվեց Կրտսեր Հան հարստությունը:

Գուպտաների տերությունը

Մաուրյան պետության տրոհումից հետո Հնդկաստանը տասնյակ պետությունների մի ցանց էր: Միասնական պետականության բացակայության պայմաններում Ք.ա. II դարում Հնդկաստանի հյուսիս–արևմուտքը գրավվեց Բակտրիայում և ժամանակակից Աֆղանստանի տարածքում գտնվող քուշանական թագավորության կողմից: Քուշանների տիրապետությունը համեմատաբար թույլ էր: Հնդկական մշակույթը և հատկապես բուդդայական կրոնը այս շրջանում զգալի վերելք ապրեցին: Քուշանական արքա **Կանիշկայի** օրոք բուդդայականությունը նույնիսկ տարածվեց ողջ տերությունում: Զգալի առաջընթաց ապրեց քուշանների տիրապետության տակ գտնվող հնդկական տարածքների տնտեսությունը:

Ք.հ. II դարից սկսած՝ Հնդկաստանի շատ շրջաններ փաստացի անկախացան քուշաններից, և այստեղ ստեղծվեցին անկախ պետություններ (**Գանգեսի հովիտը, Ռաջաստանը, Փենջաբը** և այլն): Հնդկական պետություններից հատկապես աչքի էր ընկնում Գանգեսի հովտում գտնվող **Մագադիան**, որի կառավարիչ **Գուպտան** III դարում ստեղծեց խոշոր պետություն: Նրա հաջորդների օրոք Մագադիան վերածվեց Հնդկաստանի հզորագույն պետության:

Պատերազմների արդյունքում նվաճված պետություններում Գուպտաները վերացնում էին տեղական արքայատոհմերի իշխանությունը և նրանց փոխարեն նշանակում իրենց մերձավորներին: Գուպտաների հարևան բոլոր պետությունները կախվածության մեջ էին նրանցից: Գուպտաների պետությունը հասավ իր հզորության գագաթնակետին **Չանդրագուպտա II–ի** (380–415 թթ.) օրոք: Նա նվաճեց Հնդկաստանի արևմուտքը՝ դուրս գալով Արաբական ծովափ, որով անմիջական կապ ստեղծվեց Առաջավոր Ասիայի երկրների հետ: Նրա կառավարման շրջանում տերությունը հասավ իր առավելագույն չափերին: Աննախընթաց վերելք ապրեցին տնտեսությունը և մշակույթը: Արքան հովանավորում էր գիտնականներին, գրողներին և արվեստագետներին: Նրա կառավարման շրջանը հետագայում կոչվեց «Գուպտաների ոսկեդար»:

Չանդրագուպտայի հետնորդների օրոք տերությունը սկսեց դժվարություններ կրել, որոնք առաջին հերթին կապված էին արքայատոհմի անդամների միջև ծավալված գահակալական պայքարի հետ: Երկրի թուլացմանը նպաստեցին նաև պարբերաբար Հնդկաստան արշավող հոների դեմ մղվող պատերազմները: Նույնիսկ հաղթանակը քոչվորների դեմ չկա-

Չանդրագուպտայի քանդակը

րողացավ կանգնեցնել տերության տրոհումը: Արդեն հաջորդ դարում Գուպտաների պետությունը մասնատվեց մի շարք մանր թագավորությունների: Կրկին սկսվեց Հնդկաստանի քաղաքական մասնատվածության փուլը, որը տևեց երկար դարեր:

Հնդկաստանի մշակույթը Գուպտաների օրոք

Գուպտաների դարաշրջանում Հնդկաստանում մեծ վերելք ապրեցին տնտեսության և մշակույթի տարբեր ճյուղեր: Դա վերաբերում է հանքարդյունաբերությանը, ծովային և գետային տրանսպորտին և այլ բնագավառների: Մեծ աճ է նկատվում արտաքին առևտրի ասպարեզում: Արտահանվում էին համեմունքներ, դեղորայք, ներկեր, բամբակ, մետաղներ, թանկարժեք քարեր, ձիեր, փղեր և այլն:

Գուպտաների շրջանում էր, որ Հնդկաստանը ապրեց իր մշակութային առավելագույն վերելքը: Այն ժամանակվա քաղաքակիրթ աշխարհում Հնդկաստանը հայտնի էր որպես զարգացած և իմաստուն մարդկանց երկիր:

Հնդկական գիտության զարգացածության վառ վկայությունն է փիլիսոփայական տարբեր ուղղությունների առկայությունը: Այս շրջանում սուր գիտական պայքար էր ընթանում նյութապաշտական և գաղափարապաշտական ուղղությունների միջև: **Չարվակա** ուղղության հետևորդները գտնում էին, որ աշխարհում նյութն է միակ իրականը, իսկ գիտելիքի միակ աղբյուրը զգացական ընկալումն է: Աշխարհը բաղկացած է չորս նյութերից՝ օդ, կրակ, ջուր և հող: Մահից հետո մարմինը կրկին վերածվում էր սկզբնական նյութի: Գիտակցությունը գոյություն ունի միայն կենդանի մարմնում, այդպիսով՝ հոգին անմահ չէ: Այդ պատճառով նրանք չէին ընդունում հոգու տեղափոխումը մարմնից մարմին, ինչպես նաև դրախտի և դժոխքի գաղափարը:

Հնդիկները անգերազանցելի էին հատկապես մաթեմատիկայի և աստղագիտության ասպարեզում: Նրանց է պատկանում «արաբական» կոչվող թվերի հայտնագործությունը: Նրանք գիտեին քառակուսի արմատը, երկու անհայտով հավասարումները, սինուսների աղյուսակը և այլն: Նրանց կարծիքով՝ երկրագունդը կլոր է և պտտվում է իր առանցքի շուրջը, այն ունի ձգողական ուժ, մոլորակները դասավորված են Երկրից շատ հեռու:

Ձևավորվեց և լայն կիրառություն ստացավ Հնդկաստանի բազմաթիվ լեզուներից մեկը՝ **սանսկրիտը**: Դրանով են գրված նշանավոր «Մահաբհարատա» և «Ռամայանա» վիպերգությունները: Հնդկական բարոյախրատական բնույթի գրականության ազդեցության տակ է ստեղծվել արաբական «Հազար ու մի գիշերը»:

Հին հնդկական գրականության խոշորագույն գործիչ **Կալիդասան** (IV–V դդ.) ապրել է հենց այս շրջանում: Նա դրամատիկ ստեղծագործությունների անգերազանցելի վարպետ էր:

Աննախադեպ նվաճումների հասավ նաև հնդկական կոթողային ճարտարապետությունը: Գուպտաների օրոք են կառուցվել բուդդայական խոշորածավալ տաճարները՝ **ստուպաները**:

Նրանց օրոք Հնդկաստանում ստեղծված մշակութային արժեքները գոյատևեցին նաև հետագայում՝ ամուր հիմք ստեղծելով միջնադարյան և նոր շրջանի հնդկական մշակույթի զարգացման համար:

Ամփոփում: *Չինաստանում Ք.ա. II դարում, իսկ Հնդկաստանում III դարում սկսվում է գոյություն ունեցող պետականությունների վերամիավորման երկրորդ փորձը: Չինաստանում Հան, իսկ Հնդկաստանում Գուպտաների հարստություններին հաջողվում է միավորել և ստեղծել մեծ տերություններ: Միավորումը մեծապես նպաստեց Չինաստանի և Հնդկաստանի տնտեսական և հոգևոր կյանքի առաջընթացին:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ և ե՞րբ հիմնադրեց Ավագ Հան հարստությունը Չինաստանում: Ի՞նչ հետևանքներ ունեցավ քաղաքացիական պատերազմը, չինացի պատմիչ Սիմա Ցյանը ի՞նչ է մեզ հաղորդել այդ մասին:
2. Թվարկե՛ք նոր կայսր Լյու Բանի ձեռնարկած միջոցառումները դրությունը կարգավորելու համար: Հան հարստության օրոք Չինաստանի առաջընթացի մասին վկայող ի՞նչ փաստարկներ կարող եք նշել:
3. Որո՞նք էին Հան հարստության անկման պատճառները:
4. Ինչպիսի՞ն էր Հնդկաստանի քաղաքական վիճակը Մաուրյան պետության անկումից հետո: Ի՞նչը նպաստեց քուշանների հաջողությանը Հնդկաստանում:
5. Որտե՞ղ և ե՞րբ ստեղծվեց Գուպտաների պետությունը: Ինչպե՞ս կանվանեք Չանդրագուպտա II–ի կառավարման շրջանը և ինչո՞ւ: Որո՞նք էին Գուպտաների տերության մասնատման գլխավոր պատճառները:
6. Այս ժամանակի Հնդկաստանը հայտնի էր որպես զարգացած, իմաստուն մարդկանց երկիր. ի՞նչն էր նման գնահատականի հիմքը: Լուսաբանե՛ք չարվակների գաղափարները. ի՞նչ կարծիքի եք դուք: Թվարկե՛ք հնդկական մշակույթի նվաճումները:

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

ԲԱԺԻՆ Ա ԱՆՑՈՒՄ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ

Թեմա 1. ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

§1. ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Միջնադարյան քաղաքակրթության ձևավորման ուղիները

Միջնադարյան քաղաքակրթության ձևավորումը բարդ ու երկարատև գործընթաց էր: Եթե Եվրոպայում անտիկ քաղաքակրթությունը հիմնականում զարգանում էր Հին Հունաստանում և Հռոմում, ապա միջնադարի քաղաքակրթությունը ընդգրկում է համարյա ողջ Եվրոպան:

Միջնադարին անցման ժամանակ Եվրոպայում գոյություն ունեին երկու տարբեր հասարակություններ՝ **ուշ անտիկ** և **բարբարոսական**: Առաջինը ներառում էր Հռոմեական կայսրության սահմաններում բնակվող ժողովուրդներին, իսկ երկրորդը՝ բարբարոսական ցեղերին (գերմանացիներ, սլավոններ, կելտեր): Երկու հասարակություններում էլ միմյանցից անկախ ձևավորվում էին միջնադարի քաղաքակրթությանը յուրահատուկ հատկանիշներ: Իրավիճակը փոխվեց, երբ բարբարոսական, մասնավորապես գերմանական ցեղերի մի մասը տարաբնակվեց Արևմտահռոմեական կայսրության սահմաններում: Սա Եվրոպայի հետագա ճակատագրի համար մեծ նշանակություն ունեցավ: Արևմտահռոմեական կայսրությունը դադարեց գոյություն ունենալուց, ուստի փոխվեց Եվրոպայի քաղաքական քարտեզը: Նախկին կայսրության զբաղեցրած տարածքներում առաջացան մի շարք բարբարոսական թագավորություններ, որոնք հիմք դարձան նոր ավատատիրական տիպի պետությունների կազմավորման համար: Եվրոպայի մնացած շրջաններում ևս, որոնք Հռոմեական կայսրության մաս չէին կազմել, ստեղծվում են ավատատիրական տիպի պետություններ: Այսպիսով՝ Եվրոպայում միջնադարի քաղաքակրթությունը ձևավորվում էր ինչպես երկու հասարակությունների (հռոմեական և բարբարոսական) բախման և փոխներգործության, այնպես էլ նրանցից որևէ մեկի բացակայության պայմաններում: Արդյունքում միջնադարը առաջանում էր համադրման և ներքին ճանապարհներով:

Հռոմեական և բարբարոսական քաղաքակրթությունների համադրումը

Ժողովուրդների մեծ գաղթի դարաշրջանում (IV–VII դդ.) բարբարոսական ցեղերի տեղաշարժերը նախորդ տեղաշարժերից տարբերվում էին ոչ միայն չափերով, այլև բնույթով: Այժմ դրանց մասնակցում էին ավելի մեծ քանակությամբ մարդիկ: Նրանք չէին բավարարվում միայն կայսրության սահմանամերձ շրջաններն ասպատակելով, այլ տարաբնակվում էին նրա տարածքներում: Այսպես՝ արևմտյան գոթերը նախ հաստատվեցին Հարավային Գալլիայում, ապա՝ Իսպանիայում, վանդալները՝ Հյուսիսային Աֆրիկայում, ֆրանկները՝ Գալլիայում, արևելյան գոթերը, ապա և լանգոբարդները՝ Իտալիայում, անգլոսաքսերը՝ Բրիտանիայում:

Չնայած որ նվաճված շրջաններում գերմանացիները կազմում էին բնակչության ընդամենը 2–10%-ը, սակայն ակտիվ դեր էին խաղում զբաղեցրած տարածքների սոցիալ–քաղաքական կյանքում: Այսպես՝ Արևմտյան Եվրոպայի մի շարք շրջաններում միջնադարը առաջացավ գերմանական քայքայվող տոհմացեղային հասարակության և ուշ հռոմեական քայքայվող հասարակության փոխներգործության և համադրման արդյունքում: Երկու հասարա-

կությունների համադրման ձանապարհով միջնադարյան քաղաքակրթությունը սկսեց ձևավորվել Գալլիայում և Իսպանիայում: **Վանդալական, Լանգոբարդական** և **Արևելյան գոթական** թագավորությունները կարճատև կյանք ունեցան, ուստի փոխներգործության արդյունքները նկատելի չէին:

Երկու տարբեր աստիճանների վրա գտնվող հասարակությունների փոխներգործության և համադրման արդյունքում նոր հասարակության առաջացման համար անհրաժեշտ էին որոշակի պայմաններ: Դրանցից կարևորը եկվոր գերմանացիների և տեղաբնիկների թվական հարաբերակցությունն էր: Չնայած գերմանացիները կարողացել էին նվաճված տարածքներում իրենց ձեռքը վերցնել ռազմական և քաղաքական իշխանությունը, սակայն եթե նրանք թվաքանակով անհամեմատ քիչ լինեին, ապա կարող էին արագ ձուլվել տեղաբնիկների հետ: Այս դեպքում ձուլման հավանականությունը մեծ էր, քանզի գերմանացիների հասարակական–քաղաքական զարգացման մակարդակը ավելի ցածր էր: Համադրման համար անհրաժեշտ էր երկու հասարակությունների համար բնորոշ հատկանիշները կրողների որոշակի թվաքանակ: Այսպես՝ փոխներգործության ու համադրման կենտրոն համարվող Հյուսիսարևմտյան Գալլիայում թվական հարաբերակցությունը կազմում էր մեկ ֆրանկ – տասը տեղաբնիկ գալլա–հռոմեացի:

Հռոմեագերմանական համադրման մյուս կարևոր նախապայմանը կապված էր գերմանացիների տարաբնակեցման բնույթի հետ: Գալլիայում, Իսպանիայում, Իտալիայում հաստատված ֆրանկները, արևմտյան գոթերը, արևելյան գոթերը սովորաբար զբաղեցնում էին ազատ հողատարածքները, իսկ անհրաժեշտության դեպքում տեղաբնիկներից վերցնում էին մշակելի հողերի և արոտավայրերի մի մասը: Այս դեպքում գերմանացիները և տեղաբնիկները ապրում էին սերտ հարևանությամբ, կամ առաջանում էին խառը բնակչություն ունեցող գյուղեր: Այսպես՝ գերմանացիները կարող էին ընդօրինակել գյուղատնտեսության և արհեստագործության այն ձևերը և աշխատանքների կազմակերպման այն եղանակները, որոնք ունեին տեղաբնիկները, և հակառակը: Գերմանացիները ևս իրենց հերթին որոշակի ազդեցություն ունեցան արտադրության կազմակերպման վրա: Գերմանական բնակչության հիմնական մասը ազատ գյուղացիներն էին, ուստի Գալլիայում և Իսպանիայում սկսեց լայնորեն տարածվել մանր արտադրությունը: Այս ձևը ավելի առաջադիմական էր, քանի որ գյուղացին ինքն էր վարում իր տնտեսությունը և շահագրգռված էր արդյունքով:

Որոշ գերմանական ցեղեր, մասնավորապես անգլոսաքսերը, վանդալները և լանգոբարդները աշխատում էին առավել համախմբված ապրել, ուստի ամբողջովին բռնագրավում էին տեղաբնիկների հողերը կամ զանգվածաբար ոչնչացնում էին նրանց: Այս դեպքում, երբ գերմանացիները հիմնում էին նոր բնակավայրեր և ապրում մեկուսի, տեղաբնիկների հետ տնտեսական կապերը թույլ էին կամ բացակայում էին, նոր հասարակության ձևավորումն ու զարգացումը դանդաղում էր:

Հռոմեական և բարբարոսական քաղաքակրթությունների փոխներգործության համար անհրաժեշտ էր նաև, որ համադրվող կողմերը գտնվեին զարգացման որոշակի աստիճանի վրա: Իսպանիայի և Գալլիայի միջերկրածովյան շրջանները իրենց զարգացման մակարդակով չէին տարբերվում Իտալիայից, և այստեղ հաստատված գերմանացիները ընդօրինակելու շատ բան ունեին: Կայսրության առավել թույլ և հետամնաց շրջաններում ապրող տեղաբնիկների և եկվոր գերմանացիների զարգացման մակարդակը համարյա նույնն էր, ուստի միմյանց ընդօրինակելու կարիք չկար:

Գերմանական ցեղերը ևս տարբերվում էին իրենց զարգացման աստիճանով: Այսպես՝ մինչև Իսպանիայում հաստատվելը արևմտյան գոթերը շուրջ մեկ դար ապրել էին կայսրության տարածքում (Հարավային Գալլիա) և յուրացրել էին հռոմեական հասարակության որոշ նվաճումներ: Ֆրանկները Ք.հ. I դ. բնակվում էին կայսրության սահմանամերձ շրջաններում և անընդհատ շփվում էին Գալլիայում բնակվող գալլա–հռոմեացիների հետ, ընդօրինակում աշխատանքի կազմակերպման նրանց փորձը:

Հռոմեագերմանական փոխներգործության համար հարկավոր էր նաև որոշակի խաղաղ ժամանակաշրջան: Սովորաբար այն տևում էր 150–200 տարի:

Միջնադարյան քաղաքակրթության ձևավորման ներքին ճանապարհը

Այն հասարակություններում, որտեղ երկու քաղաքակրթությունների փոխներգործությունը թույլ էր կամ բացակայում էր, միջնադարյան քաղաքակրթության ձևավորումը դանդաղ էր ընթանում: Վերջինիս առաջացման ժամանակ հասարակությունները զարգացման տարբեր աստիճանների վրա էին: Նրանց մի մասը (Բյուզանդիա, Իրան, Հնդկաստան, Չինաստան) մինչավատատիրական քաղաքակրթության անկման փուլում էր: Գերմանիան, Բրիտանիան, Արևելյան Եվրոպան, Արաբական թերակղզին զբաղեցնող հասարակությունները ապրում էին տոհմացեղային հարաբերությունների քայքայման ժամանակաշրջանում: Այլ քաղաքակրթությունների հետ փոխներգործության բացակայության պայմաններում այդ հասարակություններում միջնադարի ձևավորումը տեղի էր ունենում ներքին ճանապարհով: Կախված նրանից, թե հասարակությունը զարգացման որ աստիճանից էր անցնում միջնադարին՝ ներքին ճանապարհը կարելի է ստորաբաժանել երկու ուղու: Առաջին դեպքում (Բյուզանդիա, Իրան, Հնդկաստան, Չինաստան) միջնադարը ձևավորվում էր անկում ապրող անտիկ և արևելյան հասարակարգի ներսում: Երկրորդ դեպքում (Գերմանիա, Բրիտանիա, Արաբական թերակղզի) միջնադարը ծնվեց քայքայվող տոհմացեղային հասարակարգի ներսում: Սակայն սրանք լրիվ մեկուսացված չէին, և այստեղ ևս զգացվում էր այլ քաղաքակրթությունների ազդեցությունը, որը ներթափանցում էր առևտրական կապերի ու մշակույթի միջոցով:

Միջնադարյան քաղաքակրթության տարատեսակները

Տարբեր հասարակություններ միջնադարին անցել են ո՛չ միաժամանակ և ո՛չ էլ նույն ճանապարհով: Ժամանակագրական սահմանները տարբեր են մայրցամաքների և անգամ նույն երկրի համար: Միջնադարի առաջացման և զարգացման վրա զգալի էին ոչ միայն հասարակության զարգացման աստիճանը, այլև բնակլիմայական պայմանները, ժողովրդագրական պատկերը և կրոնը: Միջին դարերում կրոնը առաջատար դիրք էր զբաղեցնում հասարակության հոգևոր և սոցիալ–քաղաքական կյանքի կազմակերպման գործում: Այսպես՝ միջնադարյան քաղաքակրթությունը ստեղծող հասարակությունները միմյանցից տարբերվում էին զարգացման մակարդակով, կրոնական և ազգային առանձնահատկություններով և միջավայրի բնակլիմայական պայմաններով: Սրանց հիման վրա ձևավորվեցին միջնադարյան քաղաքակրթության մի քանի տիպեր: Հաշվի առնելով կրոնի խաղացած դերը՝ միջնադարյան քաղաքակրթությունը բաժանվում է չորս տիպի՝ քրիստոնեական, իսլամական, բուդդայական, հինդուական: Մյուս դեպքում հաշվի առնելով այն, որ միջին դարերը ներառում են ավատատիրական հարաբերությունների ձևավորումը, զարգացումը և անկումը, այն բաժանվում է հետևյալ տեսակների՝ արևմտաեվրոպական, բյուզանդական, սկանդինավյան–ռուսական, մուսուլմանական, արևելյան:

Միջնադարի քաղաքակրթության **արևմտաեվրոպական** տարատեսակը ընդհանուր քրիստոնեական քաղաքակրթության մի մասն է: Միջին դարերում այն ներառում էր Ֆրանսիան, Գերմանիան, Անգլիան, Ապենինյան և Պիրենեյան թերակղզիները:

Բյուզանդական (Արևելահռոմեական կայսրություն) միջնադարն ուներ մի շարք առանձնահատկություններ, որոնց շնորհիվ այն քրիստոնեական քաղաքակրթության մեջ ներկայանում է որպես առանձին տեսակ: Նրա հիմքում ընկած էին անտիկ հունահռոմեական մշակույթի հիմնական հատկանիշները:

Սկանդինավյան–ռուսական տեսակը ներառում էր Ռուսիան և Սկանդինավյան թերակղզին: Այստեղ նախնադարյան համայնական հասարակարգից անցում կատարվեց միջնադարին՝ շրջանցելով հին հասարակության փուլը:

Միջնադարյան քաղաքակրթության **մուսուլմանական** տարատեսակի առաջացումը կապված էր իսլամի և մի շարք տարածքներում (Արաբական թերակղզի, Մերձավոր Արևելք, Հյուսիսային Աֆրիկա) նրա հաստատման հետ:

Միջնադարի **արևելյան** տիպը տարածում գտավ Իրանում, Հնդկաստանում, Չինաստանում, Ճապոնիայում: Իրանում միջնադարի ձևավորումը սկսվեց III–IV դդ. (Սասանյան տերություն), Չինաստանում՝ II–III դդ., Հնդկաստանում՝ V–VI դդ.:

Միջնադարյան քաղաքակրթության տարատեսակներն ըստ երկրների կամ տարածաշրջանների

Արևմտա-եվրոպական	Ֆրանսիա	Գերմանիա	Անգլիա	Իտալիա	Իսպանիա
Բյուզանդական	Բյուզանդիա				
Սկանդինավյան-ռուսական	Հին Ռուսիա		Նորվեգիա	Շվեդիա	Դանիա
Մուսուլմա-նական	Արաբական թերակղզի	Հյուսիսային Աֆրիկա		Մերձավոր Արևելք	
Արևելյան	Իրան	Հնդկաստան	Չինաստան		Ճապոնիա

Ամփոփում: *Միջնադարյան քաղաքակրթությունը Եվրոպայում զարգանում էր տարբեր ուղիներով: Այն ձևավորվում էր ինչպես երկու հասարակությունների (հռոմեական և բարբարոսական) բախման և փոխներգործության, այնպես էլ նրանցից որևէ մեկի բացակայության պայմաններում: Արդյունքում միջնադարն առաջանում էր համադրման և ներքին ճանապարհներով:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ ուղիներով էր ձևավորվում միջնադարյան քաղաքակրթությունը Եվրոպայում:
2. Ո՞ր ժամանակաշրջանն է ընդգրկում ժողովուրդների մեծ գաղթը: Ինչո՞վ էր այն տարբերվում բարբարոսական ցեղերի նախորդ տեղաշարժերից: Ինչպե՞ս տարաբնակեցվեցին այդ ցեղերը: Ի՞նչ պայմաններ էին անհրաժեշտ նոր հասարակության առաջացման համար:
3. Ներկայացրե՛ք միջնադարին անցման ներքին ուղին: Ո՞ր երկրներում էր միջնադարը ձևավորվում այդ ճանապարհով:
4. Ըստ կրոնական չափանիշի՝ միջնադարյան քաղաքակրթության ի՞նչ տիպեր կարող եք նշել: Ո՞րն է միջնադարյան քաղաքակրթությունների տարբերակման մյուս չափանիշը: Ներկայացրե՛ք միջնադարյան քաղաքակրթությունների տարատեսակներից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

§ 2. ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Սոցիալական միջավայրի կազմակերպումը

Միջնադարը ներառում է ավատատիրական հարաբերությունների ձևավորման, զարգացման և անկման փուլերը, ուստի այն հաճախ անվանում են ավատատիրական քաղաքակրթություն, իսկ երբեմն նաև երկրագործական հասարակություն, քանի որ բնակչության հիմնական զանգվածը զբաղվում էր երկրագործությամբ:

Միջնադարի մարդը շրջակա միջավայրը հիմնականում օգտագործում էր գյուղատնտեսական աշխատանքներ կազմակերպելու համար: Հողը օգտագործում էր որպես ցանքատարածություններ, արոտավայրեր, խոտհարքներ, բանջարանոցներ, այգիներ:

Բնակավայրի հիմնական ձևը գյուղն էր: Տունը ծառայում էր ոչ միայն որպես բնակատեղի, այլև անհրաժեշտ ապրանքներ արտադրելու տեղ, քանզի անասունները ևս ապրում էին այստեղ: Այս ամբողջը միասին կազմում էին մարդու սոցիալական միջավայրը, սրանց միջոցով էր մարդը բավարարում իր սոցիալական պահանջմունքները:

Ավատատիրական հարաբերությունների ձևավորման շեմին կանգնած էին երկու հասարակություններ: Առաջինը անտիկ հասարակարգում էր, իսկ երկրորդը՝ տոհմացեղային: Երկուսի համար էլ ընդհանուրն այն էր, որ քայքայման և նոր հասարակություն ստեղծելու ճանապարհին էին:

Հռոմեական կայսրությունը IV–V դդ. անկում էր ապրում: Այդ հասարակությունում գյուղատնտեսական և արհեստագործական արտադրության մեջ զգալի էր ստրկական աշխատանքի վրա հիմնված խոշոր տնտեսությունների դերը: Մանր գյուղացիական և արհեստագործական տնտեսությունները ավելի շատ տարածված էին կայսրության ասիական շրջաններում:

Ստրուկի աշխատանքի վրա հիմնված տնտեսությունների համար անհրաժեշտ էր, որ շուկայում միշտ լինեին էժան ստրուկներ: Սակայն Ք.հ. II դարից սկսած, երբ Հռոմեական կայսրության ռազմական գերակայությունը հարևան երկրների և ժողովուրդների նկատմամբ թուլանում էր, համապատասխանաբար պակասում էր ստրուկների թվաքանակը, և աճում էր նրանց գինը: Այս դեպքում ստրկատերերը իրենք էին փորձում կազմակերպել ստրուկի վերարտադրությունը: Նրանք թույլատրում էին, որ ստրուկն ամուսնանա: Ամուսնության իրավունքի հետ միաժամանակ ստրուկին որոշակի պայմաններով հանձնվում էր հողամաս կամ արհեստանոց և արտադրություն կազմակերպելու համար անհրաժեշտ սերմացու, հումք և աշխատանքի գործիքներ: Ստրուկը պարտավոր էր բերքի կամ արհեստագործական արտադրանքի մի մասը տալ տիրոջը: Սա արդեն փոխում էր ստրուկի իրավական կարգավիճակը, քանի որ նա ամուսնանում էր և դառնում որոշակի գույք տնօրինող անձ:

Ուշ Հռոմեական կայսրությունում մեծ տարածում ստացավ նաև կոլոնատը: Խոշոր և միջին ստրկատերերը իրենց հողատարածքներից առանձնացնում էին մանր հողակտորներ և վարձակալության հանձնում առանձին մարդկանց՝ կոլոններին:

Տոհմացեղային հասարակարգը մասնավորապես գերմանացիների մոտ արդեն Ք.հ. I դ. սկսեց անկում ապրել, քանզի առաջանում էր գույքային և սոցիալական անհավասարություն: Գերմանական տոհմացեղային հասարակության մեջ ամենաբազմամարդ խավը ազատ մարդն էր, որը հիմնականում զբաղվում էր գյուղատնտեսությամբ: Սակայն նա միայն գյուղացի չէր, քանի որ միաժամանակ զինվոր էր և ժողովրդական ժողովի անդամ: Սոցիալական շերտավորման արդյունքում ազատ մարդկանց զանգվածից անջատվեց տոհմացեղային ավագանին, որն իր ձեռքում կենտրոնացրեց հսկայական հողատարածքներ և մեծաքանակ անասունների հոտեր: Այժմ տնտեսություն կազմակերպելու համար նրանց անհրաժեշտ էր շահագործել ուրիշի աշխատանքը: Աշխատուժ կարող էին դառնալ աղքատացած, բայց դեռևս ազատ մարդիկ: Տոհմացեղային ավագանին աշխատում էր նրանց կտրել հասարակական աշխատանքից (զինվոր, ժողովրդական ժողովի անդամ) և դարձնել կախ-

յալ մարդիկ: Այսպես տոհմացեղային հասարակության ներսում ազատների կողքին առաջացավ մի նոր՝ կախյալ մարդկանց խավ:

Սոցիալական միջավայրի կազմակերպման բազմազանությունը յուրահատուկ էր անցման շրջանին: Ավատատիրական հարաբերությունների հաստատմանը զուգահեռ դրանք միավորվում էին, քանի որ ձևավորվում էր հողային սեփականության ավատատիրական իրավունքը: Այն սովորաբար ձևավորվում էր երկու ճանապարհով: Առաջինը տեղի էր ունենում գյուղական համայնքի ներսում: Գյուղացու հողը ժառանգաբար անցնում էր հորից որդուն, իսկ VI դ.՝ նաև աղջկան: Այդ հողը կարելի էր վաճառել, նվիրել, պարտքի դիմաց գրավ դնել: Երբ աղքատացած գյուղացին իր հողը վաճառում էր կամ գրավ դնում, հողերը կենտրոնանում էին մի խումբ մարդկանց ձեռքում, որոնք հետո մտնում էին ավատատերերի դասակարգի մեջ: Նրանք իրենց հողը մշակելու համար տարբեր պայմաններով հանձնում էին գյուղացիներին:

Հողային սեփականության առաջացման երկրորդ ճանապարհը որևէ ծառայության դիմաց հող շնորհելն էր: Թագավորը կամ խոշոր հողատերերը ծառայության դիմաց հող էին շնորհում իրենց նվիրված մարդկանց: Սրանք ևս մտնում էին ավատատերերի դասակարգի մեջ: Ավատատիրոջ հողը սովորաբար բաժանվում էր երկու մասի՝ **տերունական հող (դոմեն)**, և այն հողը, որը մշակելու համար հանձնում էին գյուղացուն: Այսպես ձևավորվեցին ավատատիրական հասարակության երկու հիմնական դասակարգերը՝ **աշխարհիկ** ու **հոգևոր ավատատերերը** և **գյուղացիները:**

Հասարակության սոցիալական կառուցվածքը

Ավատատիրական հասարակությունը առանձին փակ խմբերից (գյուղացիներ, աշխարհիկ և հոգևոր ավատատերեր) բաղկացած հասարակարգ էր: Յուրաքանչյուր խմբի համար սահմանված էին որոշակի իրավունքներ և պարտականություններ: Մարդը դրանք կարող էր իրականացնել միայն իր կոլեկտիվի միջոցով: Գյուղացին հողակալման իրավունքը իրականացնում էր գյուղական համայնքի միջոցով՝ որպես նրա անդամ: Ավատատերը հողի և նրա վրա ապրող գյուղացու նկատմամբ ունեցած պայմանական սեփականության իրավունքը իրականացնում էր վասալական կապերի միջոցով:

Ստացած հողում գյուղացին վարում էր ինքնուրույն տնտեսություն, քանի որ ուներ սեփական տուն, անասուններ և աշխատանքի գործիքներ: Գյուղացին, որը մշակում էր ավատատիրոջ հողը, չէր համարվում այդ հողի սեփականատեր, սակայն իր հողը ժառանգություն թողնելու իրավունք ուներ: Գյուղացու տնտեսական կախվածությունը հողատիրոջից արտահայտվում էր հարկեր վճարելով: Ավատատերերի դասակարգը բաղկացած էր աշխարհիկ և հոգևոր ավատատերերից, որոնք վաղ միջնադարում կազմում էին բնակչության 1–2%–ը: Ավատատերերի դասակարգը իր հերթին բաղկացած էր մի քանի դասերից:

Եթե անտիկ Եվրոպայում ազատ մարդու՝ հող ունենալու իրավունքը կապված էր այն բանի հետ, որ նա ծնվել էր տվյալ պոլիսում, ապա վաղ միջնադարում պայմանավորված էր նրա պատկանելությամբ ավատատերերի դասակարգին կամ գյուղական համայնքին:

Ավատատիրական աստիճանակարգությունը

Ավատատերերի դասակարգի կազմակերպման կարևոր առանձնահատկություններից մեկը նրա ներսում գործող աստիճանակարգությունն էր, որը հիմնված էր պայմանական հողային սեփականության վրա: Ավատատիրական հարաբերությունների հաստատմանը զուգահեռ փոխվում էին նաև հողի սեփականության իրավունքի ձևերը: Սկզբում դա **ալոդն** էր, որն անցնում էր ժառանգաբար և կարելի էր վաճառել, նվիրել: Օգտվելով սրանից՝ հողատերը որևէ ծառայության (մասնավորապես զինվորական) դիմաց ցմահ օգտագործելու պայմանով հող էր շնորհում առանձին մարդկանց: Պայմանական հողատիրության այս ձևը կոչվում էր **բենեֆիցիում**, որին շուտով փոխարինեց **ավատը:** Այն ևս պայմանական հողատիրություն էր, սակայն տրվում էր ոչ թե ցմահ, այլ ժառանգաբար օգտագործելու իրավունքով: Պայմանական հողատիրության

իրավունքի շրջանակներում հող շնորհողը կոչվում էր **սենյոր**, իսկ ստացողը՝ **վասալ**: Հողի սեփականության իրավունքը պայմանական էր, քանի որ ավատի սեփականատեր համարվում էր ոչ միայն վասալը, այլև այն սենյորը, որից ստացել էր, և ավելի բարձր կանգնած սենյորներ: Այսպես իշխող դասակարգի ներսում ձևավորվեց **ավատատիրական աստիճանակարգությունը:**

Աստիճանակարգության ամենավերին աստիճանին կանգնած էր **թագավորը**՝ որպես բոլոր ավատատերերի **գերագույն սենյոր:** Որոշ դեպքերում իր պետության մեջ գլխավորելով աստիճանակարգությունը՝ թագավորը կարող էր հանդես գալ որպես ուրիշ թագավորի, կայսեր կամ Հռոմի պապի վասալ: Աստիճանակարգության երկրորդ աստիճանը զբաղեցնում էին թագավորի անմիջական վասալները: Դրանք խոշոր հողատերերն էին՝ դուքսերը, կոմսերը, արքեպիսկոպոսները, եպիսկոպոսները և վանահայրերը: Նրանք իրենց պատկանող տարածքներում հավաքում էին հարկերը, զբաղվում դատական և վարչական գործունեությամբ: Նրանք դրամ հատելու և պատերազմներ վարելու իրավունք ունեին: Ավատատիրական սանդուղքի երրորդ աստիճանը զբաղեցնում էին սրանց վասալները՝ բարոնները: Սրանցից ներքև կանգնած էին ավելի մանր ավատատերերը՝ ասպետները, որոնցով ավարտվում էր աստիճանակարգությունը:

Արևմտյան Եվրոպայի բոլոր երկրներում, բացի Անգլիայից, աստիճանակարգության ներսում հարաբերությունները կարգավորվում էին *«Իմ վասալի վասալը իմ վասալը չէ»* սկզբունքով: Անգլիայում բոլոր ավատ ստացողները, անկախ նրանից, թե ումից են ստացել, համարվում էին թագավորի վասալները:

Սենյոր–վասալ հարաբերությունները կարգավորվում էին հողի շնորհումով: Հողը վասալին տրվում էր ծառայության համար: Ավատատիրական սովորույթի համաձայն՝ վասալը պարտավոր էր տարվա ընթացքում 40 օր ծառայել սենյորին: Վասալի պարտականություններից էին պաշտպանել սենյորի պատիվը և արժանապատվությունը, նրա ընտանիքը և մասնակցել նրա մղած պատերազմներին:

Ավատի ստացման ժամանակ վասալը հավատարմության երդում էր տալիս, որի խախտման դեպքում սենյորը իրավունք ուներ ավատը հետ վերցնելու:

Ասպետություն

Ասպետությունը, որը կանգնած էր աստիճանակարգության վերջին աստիճանին, միջնադարի Արևմտյան Եվրոպայի ռազմահողատիրական խավն էր: Այն ներառում էր բոլոր ավատատեր զինվորներին: Ասպետ չէին ծնվում, այլ դառնում էին որոշակի կանոններով կատարվող ձեռնադրությունից հետո: Աշխարհիկ բոլոր ավատատերերի (թագավոր, դուքս, կոմս, բարոն, ասպետ) որդիների դաստիարակության համար մշակվել էր ուսուցման համակարգ, որը տևում էր 21 տարի: Սովորեցնում էին **ասպետական յոթ առաքինություններ.** ձիավարություն, սրամարտություն, նիզականետություն, լող, բազեով որսորդություն, շախմատ խաղալ, բանաստեղծություններ գրել՝ նվիրված սիրած աղջկան:

Ասպետի հանդերձանք

Ասպետ ձեռնադրելը խորհրդանշական արարողություն էր ասպետության շարքերը ընդունվելու համար: Սկզբում այն աշխարհիկ արարողություն էր, սակայն հետագայում եկեղեցին դարձրեց կրոնական արարողակարգ:

Ասպետությունը առաջացավ VIII դ.: Ասպետը հեծյալ զինվորական ծառայություն կատարող անձն էր, որի համար հող էր ստանում: Հողը տրվում էր այն մշակող գյուղացիներով հանդերձ, որոնք հարկ էին վճարում ասպետին: Ասպետության ձևավորումը որպես ռազմահողատիրական դաս ավարտվեց XI դարում:

Ձեռնադրությունից անմիջապես հետո ասպետը դառնում էր ինչ–որ մեկի վասալը: Նրա հիմնական զբաղմունքները զինվորական ծառայությունը, որսորդությունը և զինախաղն էին:

Ասպետության՝ որպես ռազմական դասի ազդեցությունը սկսեց անկում ապրել XV դ., երբ հայտնագործվեց հրազենը:

Ամփոփում: *Ավատատիրական հասարակությունը ձևավորվեց Հին աշխարհի փլատակների վրա: Այն հասարակության ներփակ խմբերից բաղկացած հասարակարգ էր, որոնցից յուրաքանչյուրն օժտված էր որոշակի իրավունքներով և պարտականություններով: Ավատատիրական հասարակության զարգացման կարևոր առանձնահատկությունը աստիճանակարգությունն էր, որի վերին աստիճանին կանգնած էր թագավորը՝ որպես բոլոր ավատատերերի գերակա իշխանավոր:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ են միջնադարն անվանում նաև երկրագործական հասարակություն: Միջնադարում ո՞րն էր բնակավայրի հիմնական ձևը: Ո՞ւմ աշխատանքի վրա էր հիմնված տնտեսությունը Հռոմեական կայսրությունում: Ինչո՞ւ սկսած Ք.ա. II դարից՝ ստրուկների քանակը սկսեց պակասել: Ինչպե՞ս փոխվեց ստրուկի կարգավիճակը: Ի՞նչ է կոլոնատը: Ինչպե՞ս առաջացավ կախյալ մարդկանց խավը: Ի՞նչ ճանապարհներով էր ձևավորվում հողային սեփականության ավատատիրական իրավունքը:
2. Սոցիալական ի՞նչ խմբերից էր բաղկացած ավատատիրական հասարակությունը: Ինչպի՞սի կախվածության մեջ էր գյուղացին ավատատիրոջից, ինչո՞վ էր դա արտահայտվում:
3. Ինչի՞ վրա էր հիմնված ավատատիրական աստիճանակարգությունը: Հողի սեփականության իրավունքի ի՞նչ ձևեր գիտեք: Բացատրե՛ք դրանցից յուրաքանչյուրի օգտագործման կարգը: Ներկայացրե՛ք ավատատիրական աստիճանակարգությունը: Ո՞րն էր դրա սկզբունքը: Ի՞նչ պարտականություններ ուներ վասալը սեյորի նկատմամբ:
4. Ի՞նչ էր ասպետական խավը: Ե՞րբ է առաջացել ասպետությունը: Ինչո՞ւ ասպետության ազդեցությունը սկսեց անկում ապրել:

§ 3. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Թագավորական իշխանության կազմակերպումը

Մինչև Ժողովուրդների մեծ գաղթը Արևմտյան Եվրոպայում կար մեկ պետություն՝ Հռոմեական կայսրությունը: Արևմտահռոմեական կայսրության թուլացման և անկման շրջանում գերմանական ցեղերի մի մասը տարաբնակվեց կայսրության տարածքներում և ստեղծեց թագավորություններ, որոնք հայտնի էին «բարբարոսական թագավորություններ» անունով: Վաղ միջնադարում պետություններ ստեղծվեցին նաև Եվրոպայի այն մասերում, որոնք երբևիցե կայսրության կազմի մեջ չէին մտել:

Տոհմացեղային հասարակարգում ապրող գերմանացիների մոտ պետություն դեռևս չէր ձևավորվել: Այն սկսեց սաղմնավորվել IV–V դդ.: Այդ ժամանակ գերմանական ցեղերի քաղաքական կազմակերպման հիմնական ձևերն էին ժողովրդական ժողովը, ավագների խորհուրդը, ռազմական առաջնորդը:

Ժողովրդական ժողովը քննարկում էր ցեղի համար մեծ կարևորություն ներկայացնող հարցեր: Նրան մասնակցում էին զենք վերցնելու ունակ բոլոր ազատ տղամարդիկ: Ավագների խորհուրդը ուներ միայն դատական իրավունքներ: Ռազմական առաջնորդը, որն արդեն կարողացել էր ստեղծել սեփական զորաջոկատը, օժտված էր միայն ռազմական իշխանությամբ:

Հասարակության զարգացմանը զուգահեռ կառավարման այս ձևերը ձեռք էին բերում նոր բովանդակություն, քանի որ պետության կազմավորման համար անհրաժեշտ էր, որ ռազմական առաջնորդը յուրացներ թագավորական իշխանությանը հատուկ իրավունքներ: Ռազմական առաջնորդից թագավորի վերածվելու գործընթացը արագացավ՝ կապված ցեղային միության առաջացման հետ: Ցեղային միությունը ներառում էր մի քանի հարյուր հազար մարդ և զբաղեցնում էր մեծ տարածք: Այդ պատճառով ցեղային միության՝ զենք վերցնելու ունակ բոլոր անդամներին անհնար էր հրավիրել ժողովրդական ժողովի: Այսպես՝ ժողովրդական ժողովը բաժանվեց երկու մասի: Իր գոյությունը շարունակեց միայն ցեղի ժողովրդական ժողովը: Սակայն նա կորցնում էր իր քաղաքական նշանակությունը, քանի որ իրավունք չուներ որոշումներ ընդունելու ցեղային միության անունից: Մյուսը ռազմական առաջնորդի գլխավորությամբ հրավիրվող ժողովն էր, որին մասնակցում էին ցեղային միության այն ներկայացուցիչները, որոնք մտնում էին առաջնորդի անձնական զորաջոկատի մեջ, և ցեղային առաջնորդները: Այս ժողովի ընդունած որոշումներն արդեն պարտադիր էին ցեղային միության համար:

Ավագների խորհուրդը դառնում էր ռազմական առաջնորդին կից խորհուրդ: Այսպես՝ ռազմական առաջնորդը դանդաղորեն իր ձեռքում էր կենտրոնացնում ամբողջ իշխանությունը և դառնում էր թագավոր: Նա վեր էր կանգնած հասարակությունից և յուրացնում էր թագավորական իշխանության խորհրդանիշ համարվող թագը: Ձևավորվեց նաև թագավորական իշխանության ժառանգականության սկզբունքը: Թագավորական իշխանության կազմակերպման և ամրապնդման համար մեծ նշանակություն ունեցավ այն, որ թագավորն էր տնօրինում երկրի հողային ֆոնդը և դրա բաշխման իրավունքը: Հարկային և դատական համակարգը ևս ամբողջովին ենթարկվում էր թագավորին: Այսպիսով՝ թագավորն իր ձեռքում կենտրոնացնում է օրենսդիր, ռազմական, դատական և ֆինանսական ամբողջ իշխանությունը: Թագավորական իշխանության կազմակերպումը հանդիպում էր լուրջ դիմադրության: Իշխանության համար թագավորի դեմ պայքարում էին խոշոր հողատերերը և ցեղային առաջնորդները: Թագավորը ստիպված էր կառավարման որոշ գործառույթներ հանձնել նրանց: Արդյունքում նոր կազմավորվող թագավորական իշխանությունը թույլ էր, ուստի չկարողացավ ստեղծել կենտրոնաձիգ կառավարում ունեցող պետություն:

Ֆրանկական թագավորությունը

Ֆրանկներն ապրում էին Հռենոս գետի ստորին հոսանքում և ծովափնյա շրջաննե-

Ֆրանկների առաջնորդ Քլոդվիգը

րում: Նրանց ցեղային միությունը բաժանվում էր երկու ճյուղի՝ **սալիական** և **ռիպուարական**:

Արևմտահռոմեական կայսրության անկումից (476 թ.) հետո ֆրանկներն անցան Հռենոս գետը և սկսեցին Հյուսիսարևելյան Գալլիայի նվաճումը: Նրանց ղեկավարում էր սալիական ֆրանկների առաջնորդ **Քլոդվիգը** (486–511 թթ.) **Մերովեի** տոհմից: Այդ պատճառով նոր հիմնադրված պետության առաջին կառավարիչները կոչվում էին **Մերովինգներ**: **486 թ. Սուասոն** քաղաքի մոտ ֆրանկները պարտության մատնեցին հռոմեացիներին և գրավեցին Հյուսիսարևելյան Գալլիան: Մինչև VI դ. կեսերը ֆրանկները կարողացան գրավել նախկին հռոմեական Գալլիա պրովինցիան: Այստեղ ապրում էր շուրջ 6–8 մլն գալլա–հռոմեացի: Նվաճման ընթացքում ֆրանկները սովորաբար զբաղեցնում էին ազատ հողատարածքները, իսկ անհրաժեշտության դեպքում տեղաբնիկներից վերցնում էին մշակելի հողերի և արոտավայրերի մի մասը: Այս դեպքում ֆրանկները և տեղաբնիկները ապրում էին հարևանությամբ կամ խառը բնակչություն ունեցող գյուղերում: Ֆրանկական յուրաքանչյուր ընտանիք վերցնում էր այնքան հող, որքան կկարողանար մշակել:

Քլոդվիգը՝ որպես ռազմական առաջնորդ, սեփականացրեց Գալլիայում հռոմեական կայսրերին պատկանող հողատարածքները: Նրան և զորաջոկատի անդամներին բաժին հասավ նաև տեղական անհնազանդ խոշոր հողատերերի հողատարածքների մի մասը: Մնացածները ծառայության անցան Քլոդվիգի մոտ: Ֆրանկները և տեղաբնիկները, երկար ժամանակ ապրելով կողք կողքի, յուրացրին միմյանց լեզուն և սովորույթները: Նրանց միջև սկսեցին ձևավորվել հարևանական և ազգակցական կապեր:

496 թ. Քլոդվիգն ընդունեց քրիստոնեություն և մկրտվեց: Նոր կրոնն ընդունեցին նաև նրա երեք հազար զինվորները: Զգտելով հասնել միանձնյա իշխանության՝ Քլոդվիգը ոչնչացրեց ֆրանկական ցեղերի բոլոր առաջնորդներին, որոնք իշխանության համար պայքարում էին իր դեմ: Այսպես՝ մոտ **500 թ.** առաջացավ Ֆրանկների թագավորությունը: Քլոդվիգը դարձավ այդ թագավորության միակ կառավարիչը: Այժմ նրան ենթարկվում էր ոչ թե մեկ ցեղային միություն, այլ Գալլիայի ողջ բնակչությունը: Նրա իշխանությունը ժառանգական էր: Այսպես՝ ավատատիրական հարաբերությունների ձևավորմանը զուգահեռ կազմավորվում էր վաղ ավատատիրական պետությունը:

Գալլիայում մնացել էին կայսերական կառավարման որոշ մարմիններ, սակայն սկզբնական շրջանում ֆրանկները չկարողացան դրանք ամբողջովին յուրացնել: Ժողովրդական ժողով այլևս չէր հրավիրվում, քանի որ անհնար էր ամբողջ Գալլիայում տարաբնակված ֆրանկներին հրավիրել ժողովի: Երկրի կառավարումը Քլոդվիգը կենտրոնացրեց իր ձեռքում, իսկ կառավարման կենտրոնը դարձավ արքունիքը: Իշխանության կազմակերպման համար թագավորն օգտագործեց այն, որ ինքն ամենախոշոր հողատերն էր և ուներ անձնական մեծ զորաջոկատ: Քլոդվիգը և նրա հաջորդները երկիրը կառավարում էին, ինչպես սեփական տնտեսությունը: Սեփական հայեցողությամբ նրանք հողատարածքներ էին նվիրում և պաշտոններ տալիս իրենց նվիրված մարդկանց:

Համապետական խնդիրներ քննարկելու և լուծելու համար թագավորը այս մարդկանց էր հրավիրում ժողովի: Երկիրը կառավարելու համար Քլոդվիգը այն բաժանեց առանձին շրջանների՝ կոմսությունների, որոնք կառավարում էին նրա մերձավոր մարդիկ:

ՖՐԱՆԿԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

Քլոդվիգի մկրտությունը

Կոմսերը տվյալ տարածքում հավաքագրված զինված ջոկատների հրամանատարներն էին: Նրանք էին ղեկավարում տեղական դատարանը: Կոմսությունը բաղկացած էր հարյուրյակից, իսկ վերջինս՝ գյուղական համայնքից:

Խոշոր հողատիրության և մասնավոր իշխանության աճի պայմաններում թագավորական իշխանությունը գնալով թուլանում էր: Պետության մի շարք մարզեր այլևս չէին ենթարկվում Մերովինգներին: Երկրի իրական կառավարումը անցավ **մայորդոմներին,** ուստի Մերովինգների արքայատան վերջին ներկայացուցիչները ստացան «ծույլ թագավորներ» անվանումը: Մայորդոմը սկզբում թագավորական կալվածքների կառավարիչն էր և նշանակվում էր թագավորի կողմից: Օգտվելով թագավորական իշխանության թուլացումից՝ նրանք կարողացան իրենց ձեռքում կենտրոնացնել երկրի փաստական կառավարումը: Նրանք Մերովինգների տոհմից թագավոր էին ընտրում և կառավարում նրա անունից:

Սալիական դատաստանագիրքը

Ավատատիրական հարաբերությունների և թագավորական իշխանության ձևավորմանը զուգահեռ անհրաժեշտություն էր դառնում կարգավորել հասարակության ներսում առաջացած նոր հարաբերությունները: Տոհմացեղային հասարակարգի քայքայման փուլում գտնվող ֆրանկները չէին կարող փոխ առնել հռոմեական իրավունքը: Որոշ ժամանակ նրանք պետք է ապրեին իրենց սովորութային իրավունքի նորմերով: Օգտվելով օրենսդիր իշխանություն ունենալու իր իրավունքից՝ Քլոդվիգը կարգադրեց գրի առնել սալիական ֆրանկների սովորութային իրավանորմերը: Այսպես կազմվեց **Սալիական դատաստանագիրքը:**

Հռոմեական ազդեցությունը օրենսգրքի վրա շատ թույլ էր և դրսևորվում էր նրանում, որ շարադրված էր լատիներենով, իսկ տուգանքները հաշվարկված էին հռոմեական դրամական միավորով: VI–IX դդ. օրենսգիրքը լրացվում էր ֆրանկական թագավորների ընդունած օրենքներով: Սալիական դատաստանագիրքը Գալլիայի բնակչությանը բաժանում էր ֆրանկների և տեղաբնիկների: Չնայած իրավական տեսակետից օրենսգիրքը ֆրանկների մեջ ոչ մի սահմանաբաժանում չէր կատարում, և բոլորը համարվում էին ազատ մարդիկ, սակայն իրավանորմեր կային սոցիալական և գույքային շերտավորման մասին: Ֆրանկների սովորութային իրավունքի համաձայն՝ սպանության համար տուգանք էին վճարում: Այսպես՝ զինվորի սպանության համար նրա հարազատներին վճարում էին 600 սոլիդ, ազատ ֆրանկի համար՝ 200, իսկ կիսազատի համար՝ 100:

Դատաստանագիրքը տեղական բնակչությանը բաժանում էր երեք խավի՝ խոշոր հողատերեր, մանր հողատերեր և հողազուրկ մարդիկ, որոնք տարբեր պայմաններով մշակում էին ուրիշի հողը: Ավատատիրական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ ֆրանկների և գալլա–հռոմեացիների միջև գոյություն ունեցող ազգային և իրավական տարբերությունները վերանում էին: Քլոդվիգի հաջորդների օրոք տեղական բնակչությանը ևս սկսեցին ընդգրկել զինվորական ծառայության մեջ: Հողահարկ և գլխահարկ սկզբից վերցնում էին միայն գալլա–հռոմեացիներից, իսկ հետագայում՝ նաև ֆրանկներից: Այսպես իրենց գոյությունը պահպանած տեղական հողատերերը մտնում էին ֆրանկական ավագանու, իսկ գալլա–հռոմեական և ֆրանկական մանր արտադրողները միավորվում էին մեկ այլ դասակարգի մեջ:

Ամփոփում: *Արևմտահռոմեական կայսրության փլատակների վրա Եվրոպայի բարբարոսական ցեղերը սկսեցին ստեղծել իրենց պետությունները: Դրանց կառավարման եղանակը դեռևս պահպանում էր տոհմացեղային փուլին բնորոշ կառույցներ՝ ժողովրդական ժողով, ավագների խորհուրդ, ռազմական առաջնորդ: Այդ իսկ պատճառով սկզբում թագավորական իշխանությունը դեռևս ուժեղ չէր: Բարբարոսական թագավորություններից ամենահզորը Ֆրանկական պետությունն էր՝ Մերովինգյան արքայատոհմի գլխավորությամբ: Ամուր պետականության ստեղծման նպատակով Քլոդվիգի կարգադրությամբ հավաքվեցին սալիական ֆրանկների սովորութային իրավանորմերը և գրի առնվեցին (Սալիական դատաստանագիրք):*

Հարցեր և առաջադրանքներ

1. Կառավարման ինչ ձևեր էր ընդունված գերմանական ցեղերի մոտ: Ներկայացրեք թագավորական իշխանության ձևավորման գործընթացը:
2. Ո՞ր տարածքներն էին զբաղեցնում ֆրանկները: Ո՞ր տոհմին էին պատկանում Ֆրանկական պետության առաջին կառավարիչները: Երբ ֆրանկներն ընդունեցին քրիստոնեություն: Ինչպե՞ս էր Քլոդվիգը կազմակերպում երկրի կառավարումը: Ինչո՞ւ էին Մերովինգների վերջին ներկայացուցիչներին անվանում «ծույլ թագավորներ»:

§ 4. ՊԱՅՔԱՐ ԱՐԵՎՄՏԱՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Կարլոս Մարտելի ռազմական բարեփոխումները

Պիրենեյան թերակղզին նվաճած արաբները VIII դ. սկզբին սկսեցին հարձակվել նաև Ֆրանկական թագավորության վրա: **732 թ. Պուատիեի** մոտ տեղի ունեցած ճակատամարտում մայորդոմ **Կարլոսը** կարողացավ ծանր պարտության մատնել արաբներին: Այս հաղթանակի համար էլ ժամանակակիցները նրան տվեցին **Մարտել (Մուրճ)** անվանումը: Արաբների դեմ տարած հաղթանակը մեծ նշանակություն ունեցավ, քանի որ կանգնեցվեցին նրանց արշավանքները Արևմտյան Եվրոպայի խորքեր: Շուտով արաբներից ազատագրվեց նաև Հարավային Գալլիան: Սակայն արաբական արշավանքների վտանգը չվերացավ, քանի որ նրանք հաստատվել էին Իսպանիայում:

Կարլոս Մարտելը գիտակցում էր, որ արաբների դեմ հաջող պայքարելու համար անհրաժեշտ է ունենալ մշտական մարտունակ հեծելազոր, մինչդեռ Ֆրանկական բանակը կազմված էր հիմնականում հետիոտն աշխարհազորից: Մշտական հեծյալ բանակ ստեղծելու համար Կարլոս Մարտելը անցկացրեց ռազմական բարեփոխումներ: Հեծյալ զինվորական ծառայություն կատարելու համար նա զինվորին հող էր տրամադրում այնտեղ ապրող գյուղացիների հետ միասին: Զինվորը սպառազինության ծախսերը և ապրուստի միջոցները ստանում էր այդ հողի վրա ապրող գյուղացիների վճարած հարկերից: Զինվորական ծառայության դիմաց հողը սկզբում տրվում էր ցմահ (բենեֆիցիում), ապա՝ ժառանգաբար (ավատ): Վերջին դեպքում ժառանգը պարտավոր էր կատարել նույն ծառայությունները, ինչի դիմաց հողը ստացել էր հայրը:

Մեծաքանակ հեծելազոր ստեղծելու համար Կարլոս Մարտելը բռնագրավեց անհնազանդ հողատերերին և եկեղեցուն պատկանող հողերի մի մասը: Այս ձանապարհով նա ոչ միայն ընդարձակեց Ֆրանկական պետության սահմանները, այլև ժամանակավորապես ուժեղացրեց կենտրոնական իշխանությունը: Օգտագործելով այս հանգամանքը՝ նրա որդի և հաջորդ մայորդոմ **Պիպին Կարճահասակը** որոշեց գահընկեց անել Մերովինգներին և յուրացնել թագավորական տիտղոսը: **751 թ.** Սուասոն քաղաքում Պիպինը հռչակվեց թագավոր: Ֆրանկական պետությունում իշխանությունն անցավ **Կարոլինգներին:** Այս անվանումը առաջացել է հետագայում՝ արքայատան ամենանշանավոր ներկայացուցիչ Կարլոս Մեծի անունից:

Կարլոս Մեծի պատերազմները

Արևմտահռոմեական կայսրության անկումից հետո կայսերական գահը թափուր էր մնացել: Նրա ժառանգման և միասնական կայսրության վերականգնման համար պայքար սկսեց Բյուզանդիան: Սակայն արաբա–բյուզանդական երկարատև հակամարտությունը ստիպեց Բյուզանդիային հրաժարվել այս ծրագրից: Արևմտահռոմեական կայսրության ժառանգության համար պայքար սկսեց Պիպին Կարճահասակի որդի **Կարլոս Մեծը** (768–814 թթ.):

Նախկին Արևմտահռոմեական կայսրության տարածքներից միայն Գալլիա պրովինցիան էր պատկանում Ֆրանկական թագավորությանը: Կայսրության վերաստեղծման համար Կարլոս Մեծը պետք է նվաճեր նրա նախկին տարածքները և ձեռնադրվեր կայսերական թագով:

Կարլոս Մեծն ուներ վիթխարի հասակ և ամուր կազմվածք: Նա մահացավ 70 տարեկան հասակում, որը ժամանակաշրջանի համար անսովոր տարիք էր, ուստի ժամանակակիցները մտածում էին, որ նա Աստծո ընտրյալն էր: Ֆրանկական թագավորության ընդարձակման և պահպանման համար նա կազմակերպեց 50 արշավանք, որոնցից 30–ը անձամբ էր գլխավորում:

Կարլոս Մեծը շարունակեց Պիպին Կարճահասակի պատերազմները Հյուսիսային Իտալիայում հաստատված լանգոբարդների դեմ: Նա երկու արշավանք կազմակերպեց դեպի Իտալիա, ձերբակալեց լանգոբարդների թագավորին և Հյուսիսային Իտալիան միացրեց իր թագավորությանը: Նա երկարատև պատերազմ սկսեց նաև Իսպանիայում հաստատված

արաբների դեմ, որն ընթանում էր փոփոխակի հաջողություններով: Վերջիվերջո ֆրանկներին հաջողվեց արաբներից խլել **Հյուսիսարևելյան Իսպանիան՝ Բարսելոնա** քաղաքով: Կարլոս Մեծի մղած պատերազմներից ամենաերկարատևը Սաքսոնիայի նվաճումն էր, որը տևեց ավելի քան 30 տարի (772–804 թթ.): Այնուհետև նա նվաճեց Բավարիան:

Նվաճումների արդյունքում Ֆրանկական թագավորությունը իր տարածքով մոտավորապես համապատասխանում էր նախկին Արևմտահռոմեական կայսրությանը:

Կարլոս Մեծի կայսրությունը

Այսպես՝ Կարլոս Մեծը հաջողությամբ լուծեց նախկին Արևմտահռոմեական կայսրության մեջ մտնող տարածքների վերամիավորման խնդիրը: Կայսերական թագով թագադրվելու համար մնում էր մի հարմար առիթ: Նման առիթ ներկայացավ, երբ Լևոն III պապը հռոմեական ավագանու հալածանքներից խուսափելու համար ապաստանեց կայսեր մոտ: Վարձահատույց լինելու համար պապը համաձայնեց Կարլոսին թագադրել կայսերական թագով: **800 թ.** Կարլոսը ժամանեց **Հռոմ, և Ս. Պետրոսի** տաճարում պապը նրան թագադրեց կայսերական թագով: Կայսերական տիտղոսը Կարլոսին արդեն հավասար էր դարձնում բյուզանդական կայսեր հետ: Այդ պատճառով հակասություններ առաջացան Ֆրանկական տերության և Բյուզանդիայի միջև: Միայն **812 թ.** Բյուզանդիան պաշտոնապես ճանաչեց Կարլոս Մեծի կայսրությունը:

Լևոն III պապը թագադրում է Կարլոս Մեծին

Կայսրության կառավարման կենտրոնը դարձավ կայսերական արքունիքը: Տարվա ընթացքում երկու անգամ կայսեր հրավերով արքունիք էին ժամանում աշխարհիկ և հոգևոր ավագանու ներկայացուցիչները, և նրանց համաձայնությամբ կայսրը օրենքներ էր ընդունում:

Կայսրությունը բաժանված էր առանձին շրջանների, որոնք ղեկավարում էին կոմսերը: Նրանք հավաքում էին հարկերը և ղեկավարում աշխարհազորը: Կոմսերի գործունեությունը վերահսկելու համար Կարլոսը հաճախ իրեն նվիրված մարդկանց ուղարկում էր կոմսություններ:

Կայսրը անցկացրեց նաև դատական բարեփոխումներ: Մինչ այդ դատավորը ընտրվում էր կոմսության ժողովրդական ժողովում: Սա ֆրանկների տոհմացեղային հասարակարգից մնացած ժառանգություն էր: Կայսրը վերացրեց այս կարգը: Դատավորը դառնում էր նշանակովի պաշտոնյա և ենթարկվում էր կոմսին:

Կարլոս Մեծն անցկացրեց նաև ռազմական բարեփոխում: Նա գյուղացիներին ազատեց զինվորական ծառայությունից, քանի որ նրանք հնարավորություն չունեին հեծյալ ռազմական ծառայություն կատարելու ձիու և սպառազինության թանկության պատճառով: Հետիոտն աշխարհազորը պահպանեց իր գոյությունը, սակայն ծառայության էին կանչում ավելի շատ հողատարածք ունեցող գյուղացուն: Այսպես զինվորական ծառայությունը դառնում էր ավատատերերի դասակարգի արտոնությունը:

Կարոլինգյան վերածնունդը

Ֆրանկական հասարակության ինչպես ընկերային և քաղաքական, այնպես էլ մշակույթի բնագավառում տեղի էին ունենում փոխներգործություն և համադրում: Անտիկ և բարբարոսական մշակույթների միավորման և

նոր տիպի՝ միջնադարյան մշակույթի առաջացման համար կապող օղակ էին դառնում լատիներենը և քրիստոնեությունը: Փոխներգործության արդյունքում ձևավորված վաղ միջնադարի մշակույթի առաջին ծիլերը երևացին Կարոլինգների կառավարման շրջանում: Այդ պատճառով այս շրջանի մշակույթը ստացավ «**Կարոլինգյան վերածնունդ**» անվանումը:

Կարլոս Մեծը ուշադրություն էր դարձնում մշակութային կյանքի զարգացմանը: Տերության կազմի մեջ մտնում էին բազմաթիվ ժողովուրդներ ու ցեղեր, որոնք ապրում էին տարբեր սովորույթներով և խոսում տարբեր լեզուներով: Հասկանալով այս ամենը՝ կայսրը փորձում էր ստեղծել մեկ միասնական քրիստոնեական մշակույթ:

Մշակույթի բնագավառում Կարլոսի անցկացրած բարեփոխումները համապատասխանում էին այն ժամանակաշրջանին, երբ տերության կառավարումը ավելի շատ կրթված մարդկանց կարիք ուներ: **787 թ.** կայսրը օրենք ընդունեց այն մասին, որ թեմերում բոլոր վանքերը պետք է ունենան իրենց դպրոցները: Այնտեղ պետք է սովորեն ոչ միայն հոգևորականների, այլև աշխարհականների երեխաները: Այդ դպրոցներում դասավանդելու համար Բրիտանիայից հրավիրված **Ալքուինը** գրեց քերականության, ճարտասանության և աստղագիտության դասագրքեր:

Կարոլինգյան վերածննդի կենտրոնը **Ախենի** (կայսրության մայրաքաղաք) արքունական ակադեմիան էր: Կարլոս Մեծը այստեղ հրավիրեց ժամանակի՝ Եվրոպայի ամենակրթված մարդկանց՝ **Պավել սարկավագին, Այնհարտին:** Առաջինը գրեց լանգոբարդների պատմությունը, իսկ երկրորդը՝ Կարլոս Մեծի կյանքի ու գործունեության մասին: Կարոլինգյան վերածնունդը կապող օղակ դարձավ բարբարոսական, հռոմեական և քրիստոնեական մշակույթների միավորման համար, ինչի հիմքի վրա էլ ստեղծվեց վաղ միջնադարի մշակույթը:

Վերդենի դաշնագիրը

Կարլոս Մեծի հիմնադրած կայսրությունը ամուր չէր: Այնտեղ ապրում էին տարբեր ժողովուրդներ ու ցեղեր, որոնք միմյանցից տարբերվում էին տնտեսական և մշակութային զարգացման մակարդակներով: Կայսրությունը պահպանվում էր զենքի և կայսեր անձնական հեղինակության շնորհիվ:

Ավատատիրական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ կենտրոնական իշխանությունը գնալով թուլանում էր: Խոշոր ավատատերերը համարյա անկախ դարձան:

Տերության տարբեր մարզերի միջև տնտեսական և քաղաքական կապերը թույլ էին կամ բացակայում էին: Այդ պատճառով Կարոլինգյան տերությունը տրոհվեց: Արդեն Կարլոս Մեծի որդի **Լյուդովիկոս Բարեպաշտը 817 թ.** կայսրությունը բաժանեց իր որդիների միջև: Նա իրեն վերապահեց միայն կայսեր տիտղոսը: Սակայն այս բաժանումը կողմերից ոչ մեկին չբավարարեց, և նրանց միջև սկսվեցին երկարատև պառակչական պատերազմներ: Վերջապես **843 թ.** Լյուդովիկոս Բարեպաշտի որդիները հավաքվեցին **Վերդեն քաղաքում** և կայսրության նոր բաժանման դաշնագիր ստորագրեցին: Վերդենի դաշնագիրը հիմք դրեց արդի Ֆրանսիայի, Գերմանիայի և Իտալիայի կազմավորմանը:

Դաշնագրով Ֆրանկական տերությունը բաժանվեց երեք մասի: Լյուդովիկոս Բարեպաշտի կրտսեր որդի **Կարլոսը** ստացավ Արևմտաֆրանկական (Ֆրանսիա) թագավորությունը, որը ներառում էր ապագա Ֆրանսիայի հիմնական տարածքը: Այստեղ գերիշխում էր ռոմանական լեզուն, որի հիման վրա ձևավորվեց ֆրանսերենը: Մյուս որդին՝ **Լյուդովիկոս Գերմանացին,** ստացավ Ալպերից հյուսիս և Հռենոսից արևելք ընկած հողերը՝ Արևելաֆրանկական (Գերմանիա) թագավորությունը: Այստեղ հիմնականում բնակվում էին գերմանական ցեղեր: Այստեղ ձևավորվեց միասնական գերմաներենը: Կայսերական տիտղոսը տրվեց Լյուդովիկոսի ավագ որդուն՝ **Լոթարին**: Նրա պետության մեջ մտան Իտալիան և այն տարածքները, որոնք ընկած էին Ֆրանսիայի և Գերմանիայի միջև: Լոթարի կայսրությունը տարբեր ազգային և քաղաքական միավորներից բաղկացած պետություն էր, որտեղ քիչ թե շատ միասնական ամբողջություն կազմում էր Իտալիան: Այստեղ ձևավորվեց իտալերենը:

Ամփոփում: *Արևմտահռոմեական կայսրության անկումից հետո Բյուզանդիան անհաջող փորձ կատարեց նվաճելու արևմուտքը: Այդ խնդիրը իրականացրեց Գալլիայի տարածքում կազմավորված Ֆրանկական թագավորությունը: Կարոլինգյան արքայատոհմի գլխավորությամբ ֆրանկները Կարլոս Մեծի արշավանքների արդյունքում տիրացան նախկին Արևմտյան կայսրության տարածքին: Իսկ 800 թ. Կարլոսը Հռոմի պապի կողմից թագադրվեց որպես կայսր: Կարլոսի հաջորդների օրոք կայսրությունը բաժանվեց երեք մասի (Վերդենի բաժանքը), որով հիմք դրվեց ապագա Գերմանիա, Ֆրանսիա և Իտալիա պետություններին:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչի՞ համար էր Կարլոս Մարտելը ստացել իր մականունը: Ի՞նչ նշանակություն ունեցավ Պուատիեի ճակատամարտը: Ինչո՞ւ Կարլոս Մարտելը անցկացրեց ռազմական բարեփոխումներ: Ե՞րբ և ո՞ւմ օրոք իշխանությունն անցավ Կարոլինգներին:
2. Ի՞նչը ստիպեց Բյուզանդիային հրաժարվել Արևմտահռոմեական կայսրության ժառանգման համար պայքարից: Դեպի ո՞ւր էին ուղղված Կարլոս Մեծի արշավանքները: Ո՞րն էր Կարլոս Մեծի մղած պատերազմներից ամենաերկարատևը: Պարզաբանե՛ք Կարլոս Մեծի արշավանքների արդյունքները:
3. Ե՞րբ Կարլոս Մեծը կայսր հռչակվեց: Ի՞նչը առիթ դարձավ դրա համար: Ի՞նչ բարեփոխումներ իրականացրեց կայսրը:
4. Ինչո՞ւ է վաղ միջնադարյան մշակույթը ստացել «Կարոլինգյան վերածնունդ» անվանումը: Ինչի՞ն էր վերաբերում 787 թ. օրենքը:
5. Վերհանե՛ք Կարլոս Մեծի ստեղծած տերության տրոհման գլխավոր պատճառը: Ե՞րբ ստորագրվեց Վերդենի դաշնագիրը, ո՞ր պետությունների հիմքը դրվեց դրանով: Ինչպե՞ս բաժանվեց Կարլոս Մեծի կայսրությունը:

§5. ՍՐԲԱԶԱՆ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ

Գերմանական թագավորության ծնունդը

Վերդենի դաշնագրով կազմավորված Արևելաֆրանկական (Գերմանիա) թագավորությունում ավատատիրական հարաբերությունները ավելի դանդաղ էին զարգանում, քան Ֆրանսիայում և Իտալիայում: Սրա պատճառներից մեկն այն էր, որ գերմանական ցեղերով բնակեցված տարածքները, որոնք մտան Գերմանիայի կազմում, երբեք Հռոմեական կայսրության մաս չէին կազմել: Հռոմեական հասարակության ազդեցությունը այստեղ շատ թույլ էր: Ավատատիրական հարաբերությունները ձևավորվում էին ներքին ճանապարհով: Այստեղ երկար ժամանակ պահպանվում էր տոհմացեղային հասարակարգին բնորոշ ցեղային կազմակերպումը: Չնայած ցեղային կազմավորումները դարձել էին վարչական միավորներ՝ դքսություններ (Սաքսոնիա, Բավարիա), սակայն առանձին ցեղերով բնակեցված տարածքներ էին, որոնք ղեկավարում էին ցեղային առաջնորդները՝ դուքսերը:

911 թ. Գերմանիայում դադարեց Կարոլինգյան արքայատունը, և թագավոր ընտրվեց ցեղային դուքսերից մեկը՝ **Կոնրադ I Ֆրանկոնացին:** Նա փորձեց ամրապնդել թագավորական իշխանությունը, ուստի դուքսերի և թագավորի միջև բացահայտ պայքար սկսվեց, որն ավարտվեց վերջինիս պարտությամբ: Նրա մահից հետո ցեղային դուքսերի միջև նորից պայքար սկսվեց իշխանության համար: Ի վերջո թագավոր ընտրվեց Սաքսոնիայի դուքս **Հենրիխ I–ը** (919–936 թթ.): Այսպես **919 թ.** Եվրոպայում ծնվեց գերմանական (Տևտոնական) թագավորությունը: Չնայած դուքսերի անջատողական ձգտումներին՝ կենտրոնական իշխանության ամրապնդման համար ստեղծվել էին որոշակի պայմաններ: Դրանում շահագրգռված էին մանր ու միջին հողատերերը և եկեղեցին, որոնց թագավորը պաշտպանում էր խոշոր հողատերերի ոտնձգություններից:

Այդ ժամանակ նորաստեղծ պետության համար մեծ վտանգ էին ներկայացնում հունգարները: Նրանք անընդհատ ասպատակում էին Գերմանիան, ամայացնում ու թալանում: Հունգարներին կանգնեցնելու դուքսերի փորձերը հաջողությամբ չավարտվեցին: Հունգարների դեմ պայքարելու համար ցեղային դուքսերը հավաքվեցին Հենրիխ I–ի շուրջը: **933 թ.** գերմանացիները առաջին անգամ պարտության մատնեցին հունգարներին: Նրանց դեմ պայքարը շարունակեց **Հենրիխ I–ի** որդի **Օտտոն I–ը** (936–973 թթ.): **955 թ.** տեղի ունեցած վճռական ճակատամարտում հունգարները ծանր պարտություն կրեցին, դրանով դադարեցին նրանց արշավանքները Գերմանիա:

Սրբազան հռոմեական կայսրություն

Հունգարների դեմ տարած հաղթանակով Գերմանիան դարձավ ժամանակի Արևմտյան Եվրոպայի ամենաուժեղ պետությունը: Հենվելով այս իրողության վրա՝ Օտտոն I–ը որոշեց թագադրվել Հռոմ քաղաքում, վերականգնել Կարլոս Մեծի տերությունը և յուրացնել կայսեր տիտղոսը: Նորից պայքար սկսվեց Արևմտահռոմեական կայսրության ժառանգության համար:

951 թ. Օտտոնը ձեռնարկեց առաջին արշավանքը Իտալիա, սակայն Հռոմ չհասավ: Նա գրավեց Լոմբարդիան, ամուսնացավ Իտալիայի թագավորության օրինական ժառանգորդուհու հետ և իրեն հռչակեց Իտալիայի թագավոր:

962 թ. Օտտոնը կազմակերպեց երկրորդ արշավանքը: Այս անգամ նա հասավ Հռոմ և թագադրվեց որպես կայսր: Այսպես առաջացավ գերմանական կայսրությունը, որը հետագայում ստացավ **Սրբազան հռոմեական կայսրություն** անվանումը: Օտտոնի և պապի միջև պայմանագիր կնքվեց, ըստ որի՝ պապն ընդունում էր կայսեր գերիշխանությունը: Օգտվելով սրանից՝ Օտտոնի հաջորդները փորձում էին Արևմտյան Եվրոպայում ստեղծել միասնական քրիստոնեական կայսրություն՝ Ախեն և Հռոմ մայրաքաղաքներով: Կայսրությունը պետք է բաղկացած լիներ ինքնուրույն թագավորություններից, որոնց թագավորները պետք է ընդունեին կայսեր գերիշխանությունը: Սակայն այս ծրագիրը չիրագործվեց:

Սրբազան հռոմեական կայսրությունը կարծես թե Կարոլինգյան կայսրության վերա-

ծնունդն էր, սակայն տարբերվում էր նրանից: Տարածքով այն ավելի փոքր էր: Նրա մեջ մտնում էին Գերմանիան, Հյուսիսային և Միջին Իտալիան ու Հարավարևելյան Ֆրանսիան:

Կայսերական եկեղեցին

Միջնադարում համեմատաբար մեծ տարածքի վրա թագավորը դժվարությամբ էր իրականացնում իր իշխանությունը: Խոշոր պետությունները սովորաբար մշտական մայրաքաղաք չունեին, և կառավարումն իրագործելու համար թագավորն անընդհատ տեղաշարժվում էր երկրի մի ծայրից մյուսը: Այսպես էր կառավարում նաև Օտտոնը: Սրբազան հռոմեական կայսրության տարածքը բավական մեծ էր, և կառավարելը դժվար էր: Անհրաժեշտ էր գտնել կառավարման նոր ձևեր և միջոցներ: Այս նպատակով Օտտոնը որոշեց կառավարմանը մասնակից դարձնել նաև եկեղեցուն: Այս

Մետաղադրամ Օտտոն I–ի պատկերով

Կարլոս Մեծի մետաղադրամը

ձանապարհով նա փորձում էր հաղթահարել նաև ցեղային դուքսերի անջատողական ձգտումները և ամրապնդել կենտրոնական իշխանությունը: Այդ ժամանակ եկեղեցին միակ կազմակերպությունն էր, որ կայսրության ողջ տարածքում ուներ իր կառույցները՝ վանքերը, եկեղեցիները, և կազմակերպվում էր ոչ թե ցեղային, այլ թեմական սկզբունքով:

Եկեղեցու կառավարման մեջ ներգրավելու նպատակով Օտտոնը սկսեց հողեր և լայն արտոնություններ շնորհել նրան: Նա հոգևորականներին պաշտոնների էր նշանակում և կառավարման որոշ գործառույթներ հանձնում էր նրանց: Եկեղեցիներին և վանքերին տրված հողերում արգելվում էր որևէ դատարանի գործունեություն, բացի եկեղեցականից: Հաճախ հոգևորականները ստանում էին նաև կոմսությունը կառավարելու իրավունք և կոմսի տիտղոս: Այսպես եկեղեցին դառնում է **գործադիր իշխանություն իրականացնող մարմին:** Օտտոնը հոգևորականներին ներգրավում էր նաև ռազմական ծառայության մեջ: Իրենց հերթին եպիսկոպոսները և վանահայրերը ռազմական ծառայության դիմաց հողեր էին շնորհում իրենց վասալներին, որոնք կազմում էին զորքի 3/4 մասը: Եկեղեցուն առատ հողեր շնորհելով և օժտելով ռազմական ու գործադիր իշխանությամբ՝ Օտտոնը միաժամանակ աշխատում էր այն պահել կայսերական իշխանության ենթակայության տակ: Այդ պատճառով նա էր բարձրաստիճան հոգևորականներին պաշտոնների նշանակում: Եթե եպիսկոպոսի կամ վանահոր պաշտոնը թափուր էր մնում, ապա եկամուտներն անցնում էին թագավորին: Այսպիսով՝ եկեղեցին ամբողջովին ենթարկվեց կայսրին, ուստի ստացավ «**կայսերական եկեղեցի**» անվանումը:

Արևմտյան Եվրոպայում քրիստոնյա կայսրություն ստեղծելու համար գերմանական կայսրերը պետք է յուրացնեին նաև բարձրագույն հոգևոր իշխանություն: Կայսրը միաժամանակ պետք է լիներ և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր իշխանության կրող: Կայսրերը սկսեցին իրենց համարել Քրիստոսի փոխանորդ Երկրի վրա և կառավարել նրա անունից:

Գերմանական կայսրերի վարած քաղաքականությունը հանդիպեց պապականության

դիմադրությանը, որովհետև պապերն իրենք էին իրենց համարում Աստծո փոխանորդ Երկրի վրա և պահանջում էին, որ աշխարհիկ միապետները ենթարկվեն իրենց:

Շուտով կայսրության և պապականության միջև պայքար սկսվեց այն բանի համար, թե բարձրաստիճան հոգևորականներին պաշտոնների նշանակելու իրավունքը ում է պատկանում: Այն հայտնի է **«պայքար ինվեստիտուրայի»** համար անվանումով:

Ինվեստիտուրա (շնորհում) էր կոչվում այն արարողությունը, երբ սենյորը ավատը հանձնում էր վասալին: Եպիսկոպոսի և վանահոր համար ինվեստիտուրան ընդգրկում էր ոչ միայն հողի տրամադրումը, այլև հոգևոր կոչում շնորհելը (հոգևոր ինվեստիտուրա): Վերջին դեպքում նրանց հանձնում էին գավազան և մատանի: Եկեղեցական իրավունքի համաձայն՝ հոգևոր ինվեստիտուրայի իրավունքը պատկանում էր հոգևոր իշխանությանը, սակայն մինչև XI դ. կեսերը այն իրականացնում էին կայսրերը: Պապականությունը մտադիր չէր երկար հաշտվել այս իրողության հետ և սկսեց վիճարկել ինվեստիտուրայի իրավունքը: Այս պայքարում շոշափվում էր այն խնդիրը, թե ում վերահսկողության տակ պետք է գտնվի եկեղեցին՝ կայսեր, թե՞ պապի: Պայքար էր գնում նրա համար, թե Արևմտյան Եվրոպայի քրիստոնյա աշխարհը ով էր ղեկավարելու՝ Հռոմի պա՞պը, թե՞ Սրբազան հռոմեական կայսրության կայսրը:

Ալբրեխտ Դյուրեր. «Կարլոս Մեծ»

Ինվեստիտուրայի համար մղվող պայքարը ավելի սուր բնույթ ընդունեց **Հենրիխ IV կայսեր** (1056–1106) և **Գրիգորիոս VII պապի** (1073–1085) միջև: Սկզբում նրանց հարաբերությունները ջերմ էին: Սուրբ երկիր խաչակրաց արշավանք կազմակերպելու և ղեկավարելու ցանկություն ունեցող պապը կայսրին հանձնարարեց իր փոխարեն կառավարել եկեղեցին: Սակայն երբ կայսրը Իտալիայում իր ցանկությամբ երեք եպիսկոպոս նշանակեց, պապը դժգոհեց: Կայսրը պահանջեց, որ նա հրաժարվի պաշտոնից: Գրիգորիոս VII–ը բանադրանքի ենթարկեց կայսրին և հպատակներին ազատեց նրան տված հավատարմության երդումից: Գերմանական բարձրաստիճան հոգևորականները և ցեղային դուքսերը հայտարարեցին, որ չեն ճանաչի կայսեր իշխանությունը, եթե նա մեկ տարի մնա բանադրանքի տակ: Հենրիխը որոշեց հանդիպել պապին և թողություն խնդրել: Նրանց հանդիպումը տեղի ունեցավ Իտալիայի **Կանոսա ամրոցում:** Մինչև հանդիպումը կայսրը, հանելով թագավորական նշանները, ոտաբոբիկ, առանց ուտելու երեք օր կանգնեց ամրոցի առաջ: Թողությունը նա ստացավ ծնկաչոք վիճակում:

Ինվեստիտուրայի համար պայքարն ավարտվեց միայն **1122 թ.,** երբ ստորագրվեց **Վորմսի համաձայնագիրը:** Կայսրության տարբեր շրջանների համար եպիսկոպոսների և վանահայրերի ընտրության տարբեր կարգ սահմանվեց: Գերմանիայում եպիսկոպոսին և վանահորը ընտրում էին հոգևորականների ժողովում: Աշխարհականներից ժողովին պետք է մասնակցեր միայն կայսրը կամ նրա ներկայացուցիչը: Ընտրությունից հետո հաջորդաբար կատարվելու էր աշխարհիկ և հոգևոր ինվեստիտուրան: Կայսրը

հանձնում էր գայիսոնը՝ աշխարհիկ ինվեստիտուրա (եպիսկոպոսի կամ վանահոր իրավունքը եկեղեցական հողի նկատմամբ): Ապա կատարվում էր հոգևոր ինվեստիտուրան (եպիսկոպոսին կամ վանահորը հանձնում էին հոգևոր իշխանության խորհրդանիշները՝ գավազանը և մատանին):

Իտալիայում և Բուրգունդիայում եպիսկոպոսի կամ վանահոր ընտրությունը տեղի էր ունենալու առանց աշխարհիկ անձի ներկայության: Ընտրությունից վեց ամիս անց նոր հանձնում էին գայիսոնը:

Վորմսի համաձայնագիրը մեծ հարված հասցրեց «կայսերական եկեղեցուն», քանի որ Իտալիայի և Բուրգունդիայի եկեղեցիները այլևս չէին ենթարկվում կայսեր իշխանությանը:

Օտտոն I

Օտտոնյան վերածնունդը

Օտտոն I–ի և նրա հաջորդների կառավարման ժամանակաշրջանում Գերմանիայում վերելք ապրեց մշակույթը: Սա կապված էր ոչ միայն Կարոլինգյան վերածնության, այլև այն իրողության հետ, որ կայսրության առաջացումից հետո գերմանացիները ծանոթացան իտալական և բյուզանդական մշակույթների հետ: Օտտոն I–ը Բյուզանդիայից Գերմանիա հրավիրեց ժամանակի նշանավոր գիտնականներին, ճարտարապետներին, ոսկերիչներին:

Կայսերական իշխանության հովանու ներքո առանձին վանքեր դառնում էին մշակույթի և կրթության կենտրոններ: Օտտոնի ջանքերով արքունիքում ստեղծվեց **ակադեմիա**, որը Կարլոս Մեծի ստեղծած Ախենի արքունական ակադեմիայի վերածնունդն էր: Այստեղ ստեղծվում էին պատմական և գրական երկեր, արտագրում և նկարազարդում էին ձեռագրեր: Օտտոնի ջանքերով արքունիքում և խոշոր վանքերում բացվում էին դպրոցներ, որոնց համար գրվում էին դասագրքեր: Կրթության իրավունք ունեին ոչ միայն հոգևորականների, այլև աշխարհականների զավակները:

Օտտոնյան վերածննդի մշակույթում առավել զարգացավ պատմագրությունը, որի աչքի ընկնող ներկայացուցիչներից մեկը **Վիդուքինդն էր:** Նա իր «Սաքսերի պատմությունը» աշխատության մեջ մանրամասն շարադրել է Օտտոն I–ի կյանքն ու գործունեությունը: Սրբազան հռոմեական կայսրության ստեղծման սկզբնական շրջանի պատմությունը ներկայացված է **Տիտմարի** «Ժամանակագրության» մեջ: Այն առանձնահատուկ է նրանով, որ հեղինակը անդրադարձել է ոչ միայն կայսրության ներսում, այլև հարևան երկրներում տեղի ունեցող իրադարձություններին:

Օտտոնյան վերածննդի ինքնատիպ դեմքերից է միանձնուհի **Գրոսվիտան**, որին սովորաբար անվանում են գերմանացի առաջին կին գրող: Նրա գրչին են պատկանում Օտտոն I–ին փառաբանող պատմական մի ստեղծագործություն և լատիներենով գրված պոեմներ ու դրամաներ:

Օտտոնյան վերածնունդը հիմք դարձավ գերմանական ազգային մշակույթի ձևավորման համար:

Ամփոփում: *Կարոլինգյան արքայատոհմի իշխանության ավարտից հետո Գերմանիայի թագավոր Օտտոնը Արևմտահռոմեական կայսրության ժառանգության համար պայքարում հասավ հաջողության և 962 թ. ընտրվեց կայսր: Նրա պետությունը հետագայում ստացավ Սրբազան հռոմեական կայսրություն անվանումը: Կայսերական իշխանության ամրապնդման նպատակով Օտտոնը հենվում էր քրիստոնեական եկեղեցու վրա: Օտտոնի օրոք մեծ ուշադրություն էր դարձվում մշակույթի զարգացմանը:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ էր ավատատիրական հասարակությունը Գերմանիայում ավելի դանդաղ զարգանում, քան Ֆրանսիայում և Իտալիայում:
2. Ե՞րբ է ծնունդ առել Գերմանական (Տևտոնական) թագավորությունը, ո՞վ էր առաջին թագավորը: Պարզաբանե՛ք, թե ինչը նպաստեց թագավորական իշխանության ամրապնդմանը:
3. Ներկայացրե՛ք Օտտոն I–ի ձեռնարկած քայլերը՝ Կարլոս Մեծի տերությունը վերականգնելու նպատակով: Ե՞րբ սկզբնավորվեց Սրբազան հռոմեական կայսրությունը, որո՞նք էին դրա մայրաքաղաքները: Օտտոն I–ը հասա՞վ իր նպատակին, թե՞ ոչ. կազմակերպե՛ք քննարկում այս հարցի շուրջ:
4. Պետական կառավարման համակարգում ի՞նչ փոփոխություն մտցրեց Օտտոն I–ը: Ինչո՞ւ եկեղեցին ստացավ «կայսերական» անվանումը: Ո՞րն էր Սրբազան հռոմեական կայսրության կայսրերի և Հռոմի պապերի միջև ծագած հակամարտության գլխավոր պատճառը:
5. Ի՞նչ է ինվեստիտուրան: Ե՞րբ և ի՞նչ ավարտ ունեցավ ինվեստիտուրայի համար պայքարը: Եպիսկոպոսների և վանականների ընտրության ի՞նչ կարգ սահմանվեց. նկարագրե՛ք այդ արարողությունը: Ի՞նչ հետևանք ունեցավ Վորմսի համաձայնագիրը:
6. Վերհանե՛ք Օտտոնյան վերածնունդի նախադրյալները: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ զարգացում ապրեց գերմանական պատմագրությունը: Ո՞վ էր ժամանակի հայտնի պատմագիրը: Ո՞վ էր գերմանացի առաջին կին գրողը: Ի՞նչ նշանակություն ունեցավ Օտտոնյան վերածնունդը:

§6. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Քրիստոնեության տարածումը Արևմտյան Եվրոպայում

Հռոմեական հասարակության ճգնաժամին զուգահեռ անկում էին ապրում նաև հեթանոսական մշակույթը և բազմաստվածությունը: Հասարակության ներսում տեղի ունեցած սոցիալական և քաղաքական տեղաշարժերի արդյունքում ճգնաժամի մեջ հայտնվեց նաև գաղափարախոսությունը: Բազմաստվածությունը այլևս ի վիճակի չէր բացատրելու տեղի ունեցած փոփոխությունները, ուստի անվստահություն էր առաջանում նրա նկատմամբ: Նա իր տեղը զիջում էր քրիստոնեությանը:

Քրիստոնեությունը համաշխարհային կրոն էր: Նրա արագ տարածմանը նպաստում էր ոչ միայն այն, որ վերջինս առաջարկում էր նոր գաղափարախոսություն, այլև ստեղծվում էր ամուր եկեղեցական կառույց: Պատկանելությունը եկեղեցական կազմակերպությանը հաճախ վտանգավոր էր, սակայն եկեղեցին համախմբում էր իր անդամներին և բարոյական ու նյութական օժանդակություն ցույց տալիս:

Քրիստոնյաների հալածանքները հաճախ հակառակ արդյունք էին տալիս. նրանք ավելի էին համախմբվում և ստեղծում նոր համայնքներ: Նոր կրոնը տարածվում էր Հռոմեական կայսրությունում, առաջանում էին քրիստոնեական խոշոր կենտրոններ Հռոմը, Ալեքսանդրիան, Անտիոքը, Կեսարիան, Եփեսոսը:

Քրիստոնեությունը Հռոմեական կայսրության պետական կրոն դառնալու գործում մեծ դեր խաղաց Կոստանդիանոս I կայսրը: Չնայած ինքը քրիստոնեություն ընդունեց մահվանից քիչ առաջ, սակայն ճիշտ էր հասկացել նրա դերը կայսրությունում ապրող ժողովուրդների համախմբման գործում: **313 թ.** կայսրը հրատարակեց **Միլանի հրովարտակը**, ըստ որի՝ քրիստոնեությունը հեթանոսության հետ ստանում էր հավասար իրավունքներ: Հալածանքները դադարեցին: Նրանք իրավունք ստացան ազատ դավանելու իրենց կրոնը, զբաղեցնելու պաշտոններ: Քրիստոնյաներն արդեն չէին հրաժարվում զինվորական ծառայություն կատարելուց, ինչպես նախկինում: **381 թ.** քրիստոնեությունը հռչակվեց կայսրության պետական կրոն:



Տիեզերական ժողով Նիկեայում

Արդեն IV դ. վերջին քրիստոնեությունը տարածվել էր կայսրության համարյա բոլոր շրջաններում: Քրիստոնյա քարոզիչները սկսեցին նոր կրոնը քարոզել նաև գերմանացիների, կելտերի և սլավոնների շրջանում: IV դ. 40-ական թվականներին եպիսկոպոս **Վուլֆիլը** սկսեց քրիստոնեություն տարածել գոթերի շրջանում: Հաջողության հասնելու համար նա Աստվածաշունչը թարգմանեց գոթերեն: Սակայն գոթերը քրիստոնեությունը ընդունեցին **արիոսական** ձևով, որն այդ ժամանակ համարվում էր հերետիկոսություն: Այս ձևով քրիստոնեությունն ընդունեցին նաև վանդալները, բուրգունդները, լանգոբարդները: Ֆրանկներն ընդունեցին ուղղափառ դավանանքով քրիստոնեությունը: Հետագայում բարբարոսական թագավորությունները հրաժարվեցին արիոսականությունից և դարձան ուղղափառներ:

V դ. կեսերին քրիստոնեությունը Իռլանդիա ներթափանցեց Բրիտանիայից, և

ավարտվեց Արևմտյան Եվրոպայի քրիստոնեացումը:

Տոհմացեղային հասարակարգում գտնվող բարբարոսները քրիստոնեությունն ընդունում էին վերևից, ուստի երկար ժամանակ շարունակում էին ապրել հեթանոսական սովորույթներով ու պատկերացումներով: Բարբարոսական թագավորները սովորաբար քրիստոնեությունն ընդունում էին քաղաքական նպատակներով: Դա ավելի ուժեղ Աստծուց ակնկալվող օգնության հույսն էր և թագավորական տիտղոս յուրացնելու ցանկությունը. *«Չկա ուրիշ իշխանություն, բացի Աստծո տվածից»:*

Իր ազդեցությունը հավատացյալների շրջանում ուժեղացնելու համար եկեղեցին հեթանոսական որոշ սովորույթներ ու պատկերացումներ ներառեց քրիստոնեության մեջ:

Հավատո հանգանակը

Քրիստոնեական ուսմունքի ձևավորումը համընկավ անտիկ աշխարհից միջնադարին անցման ժամանակաշրջանի հետ: Այդ պատճառով քրիստոնեության վրա մեծ ազդեցություն ունեցավ ինչպես անտիկ քաղաքակրթությունը, այնպես էլ ձևավորվող միջնադարը:

IV դ. քրիստոնեության ներսում միասնություն չկար: Առաջացել էին մի շարք ուղղություններ: Կոստանդիանոս կայսրը որոշեց եկեղեցական ժողովի միջոցով ստեղծել միասնական ուսմունք: Սկզբում քրիստոնեության հետ կապված խնդիրները քննարկում էին որևէ տարածաշրջանի մակարդակով հրավիրվող ժողովում, որի որոշումներն ընդունվում էին միայն տվյալ տարածքում: Համաքրիստոնեական խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ էր հրավիրել տիեզերական ժողով, որին պետք է մասնակցեին եկեղեցական բոլոր թեմերի ներկայացուցիչները:

Քրիստոնեական ուսմունքի հիմնական կանոնները մշակեցին եկեղեցու հայրերը: Նրանք այն աստվածաբանները և քարոզիչներն էին, որոնց աշխատությունները ճանաչվում էին որպես ուղղափառ և հեղինակավոր: Դրանց թվում էին IV–V դդ. ստեղծագործող աստվածաբաններ **Աթանաս Ալեքսանդրացին, Բարսեղ Մեծը, Գրիգորիոս Աստվածաբանը, Գրիգորիոս Նյուսացին:**

Առաջին տիեզերական ժողովը հրավիրվեց **325 թ. Նիկեա** քաղաքում: Այն կապված էր Ալեքսանդրիայի քահանա **Արիոսի** հետ, որը փորձեց վիճարկել եկեղեցու հայրերի ընդունած կանոնները: Նա քննադատեց աստվածային Երրորդության պաշտոնական ուսմունքը: Նա գտնում էր, որ Որդի Աստվածը, այսինքն՝ եկեղեցու հիմնադիր Հիսուս Քրիստոսը, հավասար չէ Հայր Աստծուն. քանի որ արարված է նրանից, ուստի ցածր է: Նիկեայի ժողովը դատապարտեց այս ուսմունքը և հաստատեց **քրիստոնեության Հավատո հանգանակը:** Աստվածային Երրորդությունը մեկն է և բաղկացած է երեք անձերից՝ Հայր Աստված, Որդի Աստված, Սուրբ Հոգի Աստված: Սրանք հավասար են և անբաժան: Չնայած Արիոսի ուսմունքը հայտարարվեց հերետիկոսություն, սակայն արիոսականությունը լայն տարածում գտավ հատկապես գերմանացիների շրջանում:

Նիկեայի ժողովը քննարկեց նաև եկեղեցու կազմակերպման հետ կապված խնդիրներ: Դրանց թվում էր եպիսկոպոսի ընտրության և ձեռնադրության կարգը: Որպես բարձրագույն իշխանություն ունեցող եպիսկոպոսներ՝ առանձնացվեցին **Հռոմինը** (Արևմուտք), **Անտիոքինը** (Արևելք), **Ալեքսանդրիայինը** (Եգիպտոս): Երկրորդ տիեզերական ժողովում այսպիսի կարգավիճակ ստացավ Կոստանդնուպոլսի աթոռը:

Հաջորդ խնդիրը, որը ևս երկար ժամանակ դարձել էր վեճերի պատճառ, Քրիստոսի բնության հարցն էր: Կոստանդնուպոլսի պատրիարք **Նեստորը** քարոզում էր, որ Քրիստոսը ունի միայն մարդկային բնություն: **431 թ. Եփեսոսի** երրորդ տիեզերական ժողովը մերժեց այս ուսմունքը: Սակայն Նեստորի կողմնակիցները այն տարածեցին Պարսկաստանում, Չինաստանում, Մոնղոլիայում և Հնդկաստանում:

Քրիստոսի բնության խնդրի քննարկման ժամանակ առաջացել էր ևս մեկ ուղղություն, որի կողմնակիցները գտնում էին, որ Քրիստոսը ունի միայն աստվածային բնություն: Սա ստացավ **միաբնակություն** անվանումը:

451 թ. Քաղկեդոն քաղաքում հրավիրվեց չորրորդ տիեզերական ժողովը, որին մասնակցում էին 650 հոգևորականներ: Հակառակ նեստորականության և միաբնակության՝ ժո-

ղովը որոշում ընդունեց Քրիստոսի երկու՝ աստվածային և մարդկային բնության մասին: Մասնակից 150 հոգևորականներ չհամաձայնվեցին ժողովի այս որոշման հետ և չստորագրեցին այն: Ժողովի ընդունած կանոնների շարքում կարևոր նշանակություն ունեցավ 28–րդ կանոնը, որի համաձայն՝ Կոստանդնուպոլսի աթոռի իրավունքները հավասարեցվեցին Հռոմի պատրիարքի իրավունքներին: Ժողովը որոշում ընդունեց նաև Անտիոքի և Երուսաղեմի պատրիարքությունների սահմանների մասին:

Հայոց եկեղեցին չմասնակցեց Քաղկեդոնի ժողովին և նրա որոշումները չընդունեց: Հայկական, եգիպտական և ասորական եկեղեցու մի մասը մնացին որպես միաբնակ եկեղեցիներ: Նրանք կազմեցին արևելյան ուղղափառ ուղղությունը:

Ուսմունք փրկության մասին

Դավանաբանական խնդիրների հետ զուգահեռ քրիստոնեական գաղափարախոսության մեջ մեծ ուշադրություն էին դարձնում նաև մարդու և Աստծո փոխհարաբերություններին: Քրիստոնեական ուսմունքի համաձայն՝ արարչագործության բարձրակետը մարդն էր, քանի որ Աստված նրան ստեղծեց իր նմանությամբ և օժտեց բանականությամբ: Սակայն առաջին մարդիկ (Ադամ և Եվա) չլսեցին Աստծուն, և նրանց գործած մեղքի պատճառով աշխարհ եկավ չարը, ու մարդը կորցրեց իր համար սահմանված անմահությունը: Սակայն սրանով մարդու և Աստծո փոխհարաբերությունները չավարտվեցին: Քանի որ մարդը Աստծո ստեղծած էակն էր, ապա վերջինս անընդհատ փորձում էր նրան ազատել մեղսագործությունից: Սկզբում Աստված փորձեց մարդուն ազատել մեղքից առանձին մարդկանց կամ ընտրյալ ժողովրդի ապրելաձևի օրինակների միջոցով: Սակայն այս փորձերն անհաջողության մատնվեցին: Այդ ժամանակ Աստված որոշեց մարդկանց մոտ ուղարկել իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Վերջինիս առաքելությունն էր մարդկանց սովորեցնել ճիշտ ապրել, ցույց տալ փրկության ճանապարհը և ձեռք բերել անմահություն: Իսկ վերջում տեղի էր ունենալու Ահեղ դատաստանը, որից հետո ճիշտ ապրածները արժանանալու էին դրախտի, իսկ մեղավորները՝ դժոխքի: Աստծո պատվիրանները մարդկանց սովորեցնելու և Աստծո ու մարդու փոխհարաբերությունները կարգավորելու գործառույթը Քրիստոսը հանձնեց իր հիմնադրած եկեղեցուն: Այսպես՝ եկեղեցին յուրացրեց հավատացյալի կրթության, ապրելաձևի նորմերը կարգավորելու և փրկության նախապատրաստելու գործառույթները:

Քրիստոնեության համաձայն՝ մարդը կարող է փրկության հասնել միայն այն դեպքում, երբ հաղորդակցվում է Քրիստոսի հետ: Սա կարող է տեղի ունենալ միայն եկեղեցում կատարվող խորհուրդների միջոցով: Դրանք յոթն էին, որոնցից կարևորներն էին մկրտությունը, հաղորդությունը, ամուսնությունը, մեղքերի թողությունը, ձեռնադրությունը:

Վանքերը

Քրիստոնեության քարոզչության և ամրապնդման գործում զգալի դեր խաղացին վանքերը: Եկեղեցին աշխատում էր հավատացյալներին դաստիարակել Նոր Կտակարանում նկարագրված՝ Քրիստոսի կյանքի օրինակներով: Քրիստոսի երկրային կյանքը դրվեց վանականության կազմակերպման հիմքում: Արդեն III–IV դդ. ճգնավորները հեռանում էին բնակավայրերից և հաստատվում անմարդաբնակ վայրերում:

Միջնադարում առաջանում է վանականության երկու տիպ՝ ուխտավորներ, երբ մարդիկ հրաժարվում էին երկրային կյանքի մի շարք ձևերից և անընդհատ տեղից տեղ էին շարժվում: Մյուսը վանքերն էին՝ վանականների համայնքները, որոնք ունեին կանոնադրություն և ենթարկվում էին վանահորը: Կանոնադրությունը կարգավորում էր վանականների օրվա ռեժիմը և կենցաղը: Վանականությունը՝ որպես հոգևոր դաս, ձևավորվեց III դ. նախ Եգիպտոսում, ապա՝ Պաղեստինում և Ասորիքում:

Վանականների համար առաջին կանոնադրությունը գրեց **Բենեդիկտոս Նուրսիացին: 530 թ. Նեապոլի** մոտ նա հիմնադրեց **Մոնթեկասինո** վանքը, որ վանական առաջին միաբանությունն էր: Կանոնադրությունը կարգավորում էր վանականների կյանքը:

Ս. Բենեդիկտոսը գտնում էր, որ վանքը Տիրոջը ծառայելու դպրոց է, ուստի վանականները պետք է խիստ կարգուկանոն պահպանեն: Դառնալով միաբանության անդամ՝ վանականը հրաժարվում էր աշխարհիկ կյանքից, հնազանդության երդում էր տալիս, որից հետո նա իրավունք չուներ լքելու վանքը: Վանքում հաստատվում էր միատեսակ կարգուկանոն, որպեսզի բացառվի անհատական գործունեությունը: Այնտեղ աղոթքի հետ միաժամանակ մեծ կարևորություն էր տրվում հոգևոր և ֆիզիկական աշխատանքին: Աստիճանաբար վանքերը դառնում էին կրթության և գիտության կենտրոններ: Խոշոր վանքերին կից բացվում էին դպրոցներ, մատենադարաններ: Այդ պատճառով վաղ միջնադարի մշակույթը ստացավ «**Վանքապատկան մշակույթ**» անվանումը:

Ամփոփում: *IV դարում Հռոմեական կայսրությունում պետական կրոն հռչակված քրիստոնեությունը Արևմտյան կայսրության անկումից հետո սկսեց մեծ ազդեցություն ձեռք բերել ինչպես Արևելքում, այնպես էլ նորաստեղծ եվրոպական երկրներում: Քրիստոնեական եկեղեցու կառավարման գործում ղեկավար դեր ստանձնեցին Հռոմի պապը և Կոստանդնուպոլսի պատրիարքը: Հատկապես ակտիվ էր պապականությունը, որը ձգտում էր իր իշխանությունը տարածել նաև արևելյան թեմերի վրա: Քրիստոնեական եկեղեցին միաժամանակ պայքարում էր թե հեթանոսության, թե հերետիկոսական շարժումների դեմ:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Պատմական ի՞նչ պայմաններ նպաստեցին քրիստոնեության արագ տարածմանը Հռոմեական կայսրությունում: Ներկայացրե՛ք Կոստանդիանոս I կայսեր դերը քրիստոնեության պետական կրոն դառնալու գործում: Ե՞րբ այն հռչակվեց կայսրության պետական կրոն:
2. Ե՞րբ է ավարտվել Արևմտյան Եվրոպայի քրիստոնեացումը: Բարբարոսական թագավորություններում սկզբում քրիստոնեությունն ընդունում էին քաղաքական նկատառումներով. ինչո՞ւ:
3. Ինչո՞ւ Կոստանդիանոս I կայսրը որոշեց եկեղեցական ժողով հրավիրել: Քրիստոնեական ուսմունքի հիմնական կանոնները ո՞ր աստվածաբանների կողմից մշակվեցին և ե՞րբ: Ի՞նչ որոշումներ կայացրեց Նիկեայի առաջին տիեզերական ժողովը:
4. Ի՞նչ էր քարոզում Նեստորը, և ո՞ր տիեզերական ժողովը մերժեց այն:
5. Միաբնակության հարցի հետ կապված՝ ե՞րբ և որտե՞ղ հրավիրվեց տիեզերական ժողով: Ի՞նչ որոշում ընդունեց այդ ժողովը: Վերհիշե՛ք, թե ինչու հայոց եկեղեցին չմասնակցեց այդ ժողովին:
6. Վանականությունը որտե՞ղ և ե՞րբ ձևավորվեց: Ինչո՞վ է հայտնի Բենեդիկտոս Նուրսիացին: Ինչո՞ւ է վաղ միջնադարի եվրոպական մշակույթը ստացել «Վանքապատկան մշակույթ» անվանումը:

§ 7. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Եկեղեցու կառույցը

Քրիստոնեության տարածման և պետական կրոն դառնալուն զուգահեռ եկեղեցին ստեղծում էր նաև իր կառույցը: Դրանք ձևավորելու ժամանակ օգտագործվեց Հռոմեական կայսրության վարչական բաժանումը:

Եկեղեցու ստորին միավորը **ծուխն** էր, որը համապատասխանում էր պետության վարչական բաժանման ստորին օղակին՝ գյուղին: Մի քանի ծխեր կազմում էին **եպիսկոպոսական թեմ**, որը համընկնում էր պրովինցիա (շրջան) վարչական միավորին: Ինչպես պետության վարչական համակարգում, այնպես էլ եկեղեցու թեմական կառույցում կային ավելի խոշոր միավորներ, որոնք կոչվում էին **միտրոպոլիտություններ** և **արքեպիսկոպոսություններ**: Առավել խոշոր եկեղեցական միավորները՝ Հռոմ, Կոստանդնուպոլիս, Ալեքսանդրիա, Անտիոք, Երուսաղեմ, V դ. սկսեցին կոչվել **պատրիարքություններ**:

Եկեղեցու կառավարման գործում մեծ նշանակություն ձեռք բերեցին եպիսկոպոսների ժողովները, որոնք լինում էին տեղական և տիեզերական: Տեղական ժողովին սովորաբար մասնակցում էին մի քանի շրջանների եպիսկոպոսներ և քննարկում էին տեղական նշանակության խնդիրներ:

Արևմտյան Եվրոպայում ևս քրիստոնեության տարածմանը զուգահեռ ձևավորվում էին եկեղեցու կառույցները: II–III դդ. քրիստոնեությունը գլխավորապես տարածվում էր Հռոմեական կայսրության քաղաքներում: Յուրաքանչյուր քաղաք ուներ իր եպիսկոպոսը, իսկ պրովինցիայի կենտրոնը՝ իր միտրոպոլիտը:

Բարբարոսական արշավանքների և բարբարոսական թագավորությունների ստեղծման շրջանում եկեղեցական կառույցները վերափոխվեցին: Եկեղեցուն հանձնվեցին հարկային և դատական իրավունքներ: Եպիսկոպոսը թեմի տարածքում հավաքում էր պետական հարկերը և զբաղվում դատական գործունեությամբ: Այսպես առաջացավ թագավորական եկեղեցին, այսինքն՝ յուրաքանչյուր երկրում եպիսկոպոսությունները միավորվում էին եկեղեցական մեկ միավորի մեջ: Թագավորը յուրացնում էր եկեղեցական ժողովներ հրավիրելու և որոշումները հաստատելու իրավունքը: Այսպես՝ ավատատիրական հարաբերությունների կազմավորմանը զուգահեռ ձևավորվեցին նաև քրիստոնեական եկեղեցու կառույցները:

Պապականության առաջացումը

Տիեզերական ժողովներին զուգահեռ համաքրիստոնեական խնդիրներ լուծելու դեր ստանձնեցին նաև առանձին եպիսկոպոսա-

Պատրիարք

Արքեպիսկոպոս

Միտրոպոլիտ

Եպիսկոպոս

կան աթոռներ: Ավանդույթի համաձայն՝ այդ աթոռները հիմնադրել էին Քրիստոսի առաքյալները և նրանց հաջորդները: Նրանք պահպանել էին քրիստոնեական հավատքի մաքրությունը, ուստի տարաձայնությունների դեպքում անհրաժեշտ էր դիմել նրանց: Այս աթոռները հետագայում վերածվեցին պատրիարքությունների: Նրանց մեջ գլխավորը համարվում էր Հռոմի եպիսկոպոսը, որը հետագայում ստացավ **պապ** անվանումը: Ըստ ավանդույթի՝ Հռոմի թեմը հիմնադրել էր առաքյալների գլխավոր Պետրոսը: Հռոմի պապի իշխանության ամրապնդումը կապված էր այն բանի հետ, որ Հռոմը կայսրության մայրաքաղաքն էր, ուստի նրա եպիսկոպոսը պետք է գերիշխող դիրք ստանար մյուս եպիսկոպոսների նկատմամբ: Հռոմի պապը իր բարձր դիրքը փորձում էր հիմնավորել նաև նրանով, որ այստեղ են քարոզել և թաղվել երկու մեծ առաքյալները՝ Պողոսը և Պետրոսը: Արդեն Նիկեայի առաջին տիեզերական ժողովի չորրորդ կետը հաստատեց Հռոմի եպիսկոպոսի բարձր դիրքը Արևելքի երեք (Անտիոք, Երուսաղեմ, Ալեքսանդրիա) աթոռների հետ միաժամանակ:

Պապականությունը աշխատում էր տիեզերական եկեղեցում ստեղծել միապետական կառավարման համակարգ: Սա հիմնավորում էին նրանով, որ Քրիստոսը, դիմելով Պետրոս առաքյալին, ասել է. «Դու Պետրոս (լատիներեն՝ քար) ես, և այս քարով ես կստեղծեմ իմ եկեղեցին»:

Արդեն IV–V դդ. պապականությունը փորձում էր իրագործել այս ծրագիրը: Այս ուղղությամբ մեծ գործունեություն ծավալեց **Լևոն I Մեծ պապը** (440–461 թթ.): Նա իրեն համարում էր Պետրոս առաքյալի ժառանգորդը և նրա տեղապահը Երկրի վրա: Սակայն Հռոմի աթոռի հետ հավասար իրավունքներ ստացան Արևելքի չորս (Անտիոք, Երուսաղեմ, Ալեքսանդրիա, Կոստանդնուպոլիս) պատրիարքությունները:

Արդեն Քաղկեդոնի չորրորդ տիեզերական ժողովը սահմանեց, որ քրիստոնեական եկեղեցին պետք է կառավարեն հինգ տիեզերական պատրիարքները: Հռոմի աթոռի բարձր դիրքը հաստատվեց միայն Արևմուտքի համար:

Բարբարոսական թագավորությունների առաջացումը և թագավորական եկեղեցու ձևավորումը խախտեցին պապականության և Արևմտյան Եվրոպայում կազմավորված եպիսկոպոսական թեմերի փոխհարաբերությունները: V դ. վերջից մինչև VIII դ. Հռոմի պապին ենթարկվում էին միայն Միջին և Հարավային Իտալիայի եպիսկոպոսները: Բարբարոսական թագավորություններում եկեղեցին ենթարկվում էր թագավորին և կախված չէր պապական աթոռից: Իտալիայից դուրս առաջին եկեղեցին, որն ուղղակի ենթարկվեց Հռոմի աթոռին, անգլոսաքսոնական եկեղեցին էր: Սա կապված էր այն բանի հետ, որ Բրիտանիայում քրիստոնեությունը քարոզում էին Հռոմից ուղարկված քարոզիչները: Այստեղ կազմակերպված եկեղեցու գլուխ կանգնեց արքեպիսկոպոսը, որը բարձր էր եպիսկոպոսից: Արքեպիսկոպոսին ընտրում և ձեռնադրում էր պապը: Եկեղեցու կազմակերպման այս ձևը պապականությունը տարածեց Արևմտյան Եվրոպայի մյուս երկրներում:

Յուրաքանչյուր պետությունում եկեղեցու գլուխ կանգնած էր արքեպիսկոպոսը, որը ենթարկվում էր պապին: Այսպես Արևմտյան Եվրոպայի (բացի արաբական Իսպանիայից) բոլոր երկրների եկեղեցիները ենթարկվեցին Հռոմի աթոռին:

Պապականության դիրքերը ամրապնդվեցին հատկապես Կարոլինգների կառավարման շրջանում: Թագավորական տիտղոսին ձգտող Պիպին Կարճահասակը սերտ հարաբերություններ հաստատեց Հռոմի հետ, պապի օժանդակությամբ նա հռչակվեց թագավոր: Պապականությանը վարձահատույց լինելու համար նա արշավանք կազմակերպեց Իտալիա և **756 թ.** Միջին Իտալիան նվիրեց Հռոմի աթոռին: Այսպես առաջացավ պապի աշխարհիկ պետությունը:

Իր դիրքերը Արևմտյան Եվրոպայում ամրապնդելու համար պապականությունը VIII դ. շրջանառության մեջ դրեց «Կոստանդիանոսի շնորհագիրը» կեղծ փաստաթուղթը: Այնտեղ նշվում էր, որ Կոստանդիանոս կայսրը մայրաքաղաքը Հռոմից Կոստանդնուպոլիս տեղափոխելու ժամանակ Արևմուտքում իրավահաջորդ է նշանակել Հռոմի եպիսկոպոսին և նրան հանձնել թագավորներին թագադրելու իրավունքը:

800 թ., երբ Լևոն III պապը Հռոմում Կարլոս Մեծին թագադրեց որպես կայսր, պապականությունը յուրացրեց նաև կայսրերին թագադրելու իրավունքը:

Եկեղեցիների բաժանումը

Պատրիարքական աթոռների ձևավորումից հետո Հռոմի և Կոստանդնուպոլսի միջև պայքար սկսվեց տիեզերական եկեղեցում գերիշխող դիրք գրավելու համար: Տարաձայնությունները հասցրին նրան, որ երկու եկեղեցիները բաժանվեցին: **1054 թ.** Կոստանդնուպոլիս ժամանեցին Հռոմի պապի նվիրակները և նզովեցին Կոստանդնուպոլսի պատրիարքին: Վերջինս իր հերթին նզովեց պապի նվիրակներին, որոնք վրդովված հեռացան Կոստանդնուպոլսից: Այսպես երկու եկեղեցիները բաժանվեցին: Այդ ժամանակից արևմտյան եկեղեցին սկսեց կոչվել **հռոմեականթոլիկական** (լատինական), իսկ արևելյանը՝ **ուղղափառ** (բյուզանդական):

Եկեղեցիների բաժանման հիմքում ընկած էին Արևելքի և Արևմուտքի զարգացման առանձնահատկությունները: Արևելքում գոյություն ուներ ուժեղ աշխարհիկ իշխանության ավանդույթ, որի շնորհիվ բյուզանդական կայսրը և Արևելքի մյուս միապետները կարողացան եկեղեցին ենթարկել իրենց: Արևմուտքում չկար նման ավանդույթ, և նոր կազմավորվող թագավորական իշխանությունները մինչև XIII դ. ենթարկվում էին պապականությանը:

Արևելյան և արևմտյան եկեղեցիների միջև ձևավորվել էին նաև դավանաբանական տարաձայնություններ: Արևմուտքում հացով և գինով հաղորդվում էին միայն հոգևորականները, իսկ աշխարհականները՝ միայն հացով: Արևելքում բոլոր հավատացյալները պարտադիր պետք է հաղորդվեին հացով և գինով: Արևմուտքում խաչակնքում էին հինգ մատով, իսկ Արևելքում՝ երեք: Հռոմեականթոլիկական եկեղեցում եկեղեցական արարողությունները կատարվում էին միայն լատիներենով, ուստի արգելվում էր Աստվածաշնչի թարգմանությունը: Արևելքում թույլատրվում էր արարողությունները կատարել տեղական լեզուներով և թարգմանել Աստվածաշունչը:

Հռոմի և Կոստանդնուպոլսի աթոռների բաժանման մեջ պակաս կարևոր դեր չխաղացին քաղաքական տարաձայնությունները: Դրանցից կարելի է առանձնացնել Արևմտահռոմեական կայսրության ժառանգության համար մղվող պայքարը, որտեղ պապականությունը պաշտպանում էր Կարոլինգներին, ինչպես նաև Հարավային Իտալիայի համար մղվող պայքարը Բյուզանդիայի և պապականության միջև:

Երկու եկեղեցիների վերջնական բաժանումը տեղի ունեցավ **1204 թ.**, երբ խաչակիրները գրավեցին և ավերեցին Կոստանդնուպոլիսը:

Եկեղեցին Արևմտյան Եվրոպայի սոցիալ-քաղաքական կյանքում

Քրիստոնեությունը պետական կրոն դառնալուց հետո անմիջապես ներառվեց ավատատիրական հարաբերությունների մեջ: Եկեղեցիները և վանքերն ունեին հսկայական քանակությամբ հողատարածքներ:

Վաղ միջնադարում Արևմտյան Եվրոպայում մշակելի հողերի մեկ երրորդը պատկանում էր եկեղեցուն: Բարձրաստիճան հոգևորականները ներառված էին ավատատիրական աստիճանակարգության մեջ:

VI–VII դդ. սկսած ձևավորվում էին մասնավոր եկեղեցիներ: Խոշոր հողատերերը իրենց տիրույթներում եկեղեցիներ և վանքեր էին կառուցում և հանդես էին գալիս որպես նրանց սենյորներ: Կարոլինգները սկզբում իրենց սեփական տիրույթներում, ապա երկրի մյուս շրջաններում հիմնում էին մասնավոր վանքեր, և վանահայրերը դառնում էին նրանց վասալները: Ավելի ուշ նրանք սկսեցին վասալական ծառայություն պահանջել նաև մյուս մասնավոր վանքերից: Որպես սենյոր՝ Կարոլինգները երաշխավորում էին նրանց անվտանգությունը:

Հոգևոր վասալները պարտավոր էին ռազմական ծառայություն կատարել: Կարոլինգների բանակի 2/3-ը (հաճախ էլ 3/4-ը) կազմում էին հոգևորականները: Այսպես ձևավորվեց ավատատիրական եկեղեցին, որը տարբերվում էր IV–V դդ. եկեղեցուց:

Բարձրաստիճան հոգևորականների ներա-

ռումը ավատատիրական աստիճանակարգության մեջ հանգեցնում էր նրան, որ եպիսկոպոսներին և վանահայրերին նշանակում էին աշխարհիկ պաշտոնների:

Ավատատիրական երկպառակությունների և պատերազմների շրջանում եկեղեցին որոշակի միջոցներ ձեռնարկեց դրանք կանգնեցնելու համար: Տարբեր երկրներում եկեղեցական ժողովներն ընդունեցին որոշումներ «Աստվածային զինադադարի» և «Աստվածային խաղաղության» մասին: Առաջինը արգելում էր ավատատերերին միմյանց դեմ պատերազմել եկեղեցական տոների ժամանակ և կիրակի օրերին: Երկրորդ որոշմամբ՝ ավատատերերից պահանջում էին չսպանել հոգևորականներին, գյուղացիներին, առևտրականներին, կանանց: Այսպես՝ կաթոլիկ եկեղեցին պապականության գլխավորությամբ սկսեց հանդես գալ որպես Արևմտյան Եվրոպան միավորող ուժ, քանի որ արևմտաեվրոպացիներին համախմբում էր մեկ եկեղեցու և մեկ հավատի շուրջ:

Ամփոփում: *Քրիստոնեության տարածման և պետական կրոն հռչակվելուց հետո աստիճանաբար ստեղծվեց եկեղեցական կառույցը: Համաքրիստոնեական խնդիրների լուծման նպատակով ստեղծվեցին եպիսկոպոսական աթոռներ, որոնք, ըստ ավանդույթի, հիմնադրել էին Քրիստոսի առաքյալները և նրանց հաջորդները: Այդ աթոռները հետագայում վերածվեցին պատրիարքությունների, որոնք մեջ գլխավորը Հռոմի պապն էր: Պապականության գլխավորությամբ կաթոլիկ եկեղեցին ստանձնեց Արևմտյան Եվրոպան միավորող ուժի դերը:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք քրիստոնեական եկեղեցու վարչական կառույցը Արևելյան Հռոմեական կայսրությունում: Բարբարոսական թագավորությունների ստեղծման շրջանում ինչ վերափոխումներ եղան եկեղեցու կառույցում և իրավասությունների մեջ:
2. Ինչու՞ էր Հռոմի եպիսկոպոսը ձգտում դառնալու քրիստոնեական եկեղեցու մեջ գերիշխող և ինչպե՞ս էր դա հիմնավորում: Որո՞նք էին Քաղկեդոնի տիեզերական ժողովում հաստատված բարձր աթոռները:
3. Ի՞նչպես առաջացավ Հռոմի պապի աշխարհիկ իշխանությունը: «Կոստանդիանոսի շնորհագիր» կեղծ փաստաթուղթը ինչ էր իրենից ներկայացնում:
4. Ե՞րբ տեղի ունեցավ քրիստոնեական եկեղեցու մեծ բաժանումը, և որո՞նք էին դրա գլխավոր պատճառները:
5. Նշե՛ք կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիների միջև դավանաբանական և ծիսական մի քանի տարբերություններ: Ներկայացրե՛ք նաև կաթոլիկ, ուղղափառ և արևելյան ուղղափառ եկեղեցիների (հայոց եկեղեցու օրինակով) միջև եղած տարբերություններն ու նմանությունները:
6. Ի՞նչ առանձնահատկություններ ուներ Կարոլինգների ձևավորած եկեղեցին: Փաստերով հիմնավորե՛ք, որ եկեղեցին դարձավ ավատատիրական հասարակարգի բաղկացուցիչ մասը:

§ 8. ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Կրթական համակարգը

Արևմտահռոմեական կայսրության անկումը, բարբարոսական արշավանքները, անընդմեջ պատերազմները պատճառ դարձան, որ V–VII դդ. մշակույթը անկում ապրի: Սակայն ավատատիրական հարաբերություններին զուգահեռ սկսեց ձևավորվել և զարգանալ նաև միջնադարի մշակույթը:

Վաղ միջնադարի մշակույթը դրեց ժամանակակից եվրոպական քաղաքակրթության հիմքերը, քանի որ անտիկ աշխարհում Եվրոպայի մեծ մասը աշխարհագրական, այլ ոչ թե պատմամշակութային իրողություն էր:

Վաղ միջնադարը ժառանգություն ստացավ երեք տիպի մշակույթներ, որոնց փոխներգործության արդյունքում էլ ձևավորվեց ավատատիրական մշակույթը: Դրանք էին հռոմեական մշակույթը, բարբարոսական մշակույթը և քրիստոնեությունը: Այս բոլորը միմյանց միավորեցին քրիստոնեական եկեղեցին և լատիներենը:

Վաղ միջնադարը անտիկ աշխարհից ժառանգեց նրա կրթական համակարգը, որը հայտնի էր «յոթ ազատ արվեստներ» անվանումով: Այն միջնադարին հարմարեցնելու առաջին փորձը V դ. կատարեց **Մարկիանոս Կապելան:** Նա մշակեց այն առարկաների ցանկը, որոնք ընկած էին անտիկ կրթական համակարգի հիմքում: Դրանք էին քերականությունը, դիալեկտիկան (տրամախոսություն), ճարտասանությունը, թվաբանությունը, երկրաչափությունը, երաժշտությունը, աստղաբաշխությունը: VI դ. կրթական գործի կազմակերպիչներ **Բոեցիոսը** և **Կասիոդորը** յոթ ազատ արվեստները բաժանեցին երկու մասի՝ եռյակ (քերականություն, դիալեկտիկա, ճարտասանություն) և քառյակ (թվաբանություն, երկրաչափություն, երաժշտություն, աստղաբաշխություն): Առաջինը նախատեսված էր ուսուցման նախնական աստիճանի, իսկ երկրորդը՝ ավելի բարձր աստիճանի համար:

Կասիոդորը նույնիսկ փորձ արեց համալսարան բացելու, սակայն նրա ծրագիրը չիրագործվեց: Սրա փոխարեն նա Հարավային Իտալիայում գտնվող իր կալվածքում հիմնեց դպրոց, որը դարձավ մշակութային յուրօրինակ կենտրոն: Այն իր մեջ ներառում էր բուն դպրոցը, արհեստանոցը, մատենադարանը: Կրթական գործի կազմակերպման այս ձևը օրինակ դարձավ բոլոր այն վանքերի համար, որտեղ դպրոցներ էին բացվում:

Վաղ միջնադարում դպրոցները բաժանվում էին երեք խմբի՝ վանական, տաճարային և ծխական:

Պատմագրությունը

Բարբարոսական արշավանքների և թագավորությունների կազմավորման շրջանում սկսվեց նաև ազգային ինքնագիտակցության ձևավորումը: Պատմական հայրենիքը թողած և Արևմտյան Եվրոպայի այս կամ այն տարածքում հայտնված և թագավորություններ ստեղծած գերմանական ցեղերը իրենց նվաճումները և ներկայությունը փորձում էին հիմնավորել որպես անհրաժեշտություն: Այս ժամանակ էլ ստեղծվեցին առաջին գրավոր պատմությունները, որտեղ շարադրված էր ոչ թե հռոմեացիների, այլ գերմանացիների պատմությունը:

Վաղ միջնադարում պատմությունը սովորաբար շարադրում էին համառոտ ժամանակագրության տեսքով: Սկզբում նշում էին թվականը, ապա՝ տեղի ունեցած իրադարձությունը: Ժամանակագրությունը սովորաբար սկսում էին արարչագործությունից, այնուհետև հեղինակը համառոտ շարադրում էր մինչև իր ապրած ժամանակաշրջանը և առավել մանրամասն նկարագրում էր իր ապրած ժամանակաշրջանի իրադարձություններն ու դեպքերը:

Վաղ միջնադարի Արևմտյան Եվրոպայի առաջին պատմիչը Կասիոդորն էր: Նա գրել է 12 գրքերից բաղկացած «Գոթերի պատմությունը» աշխատությունը, որը մեզ է հասել ոչ թե ամբողջությամբ, այլ համառոտագրված: Այն **551 թ.** կրճատված տարբերակով վերաշարադրել է **Յորդանը:** Այնուհետև մեկը մյուսի հետևից սկսեցին շարադրել գերմանական տարբեր ժողովուրդների պատմությունները: **Գրիգորիոս Տուրացին** (VI դ.) շարադրեց «Ֆրանկների պատմությունը», **Իսիդոր Սևիլիացին** (VII դ.)՝ «Գոթերի, վանդալների

և սվևների թագավորների պատմությունը», **Բեդա Պատվարժանը** (VIII դ.)՝ «Անգլիական ժողովրդի եկեղեցական պատմությունը»: Այս շարքի վերջին աշխատությունը պատկանում է **Սաքսոն Քերականի** (XII դ.) գրչին և կոչվում է «Դանիացիների գործերը»:

Գրականությունը

Վաղ միջնադարի գրականությունը, համեմատած մշակույթի մյուս ճյուղերի հետ, իր վրա ավելի շատ էր կրում գերմանական մշակույթի ազդեցությունը: Բանավոր ժողովրդական ստեղծագործության առաջին նմուշները գերմանացիների մոտ հանդես են եկել Ք.հ. I դ.: Դա հին հեթանոսական պոեզիան է, որտեղ նկարագրված են ժողովրդի կյանքը, կենցաղը և աշխարհայացքը: Կախարդանքների միջոցով մարդիկ աշխատում էին բուժել հիվանդներին, ազատել գերիներին, հեռացնել չար ուժերին: Աստվածներին նվիրված երգերում գերմանացիները փառաբանում էին նրանց, որպեսզի օգնություն ստանան:

Վաղ միջնադարի գրականության մեջ մեծ տեղ է գրավում հերոսական վիպերգը (էպոսը): Գերմանական ցեղերից յուրաքանչյուրն ուներ իր հերոսական էպոսը: Անգլոսաքսոնական էպոսը գրի առնվեց **1000 թ.** հին անգլերենով: Այն նվիրված էր Դանիայի թագավոր **Բեովուլֆին**, որը պայքարում էր ծովային հրեշի դեմ: Հին սկանդինավյան էպոսը՝ «Էդդան», գրի առնվեց Իսլանդիայում:

Վաղ միջնադարում տեղի ունեցած նշանավոր պատմական իրադարձությունները ավելի շատ արտացոլված են ֆրանսիական **«Երգ Ռոլանդի մասին»** և իսպանական **«Երգ իմ Սիդի մասին»** վիպերգերում: Իսպանական հերոսական վիպերգում տեղ են գտել արաբներից Իսպանիան ազատագրելու (Ռեկոնկիստա) պատմական դրվագները:

Ֆրանսիական հերոսական էպոսը նվիրված է 778 թ. Կարլոս Մեծի Իսպանիա կատարած արշավանքին: Այն անհաջող էր, և ֆրանկները ստիպված հետ էին դառնում: Ռոնսևալի կիրճում ֆրանկների վերջապահ գունդը՝ Ռոլանդի հրամանատարությամբ, մարտի մեջ մտավ թշնամու դեմ, և բոլորը զոհվեցին:

Պատմական դեմքերի և իրադարձությունների առասպելականացումը տեղ է գտել նաև Գերմանիայում ստեղծված «Երգ Նիբելունգների մասին» էպոսում:

Վաղ միջնադարի մարդու աշխարհընկալումը

Վաղ միջնադարի մարդու աշխարհընկալումը ձևավորվում էր քրիստոնեության ազդեցությամբ: Քրիստոնեությունը գտնում էր, որ ժամանակի մեջ մարդու գոյությունն ունի սկիզբ և վերջ: Սկիզբը կապված էր արարչագործության, իսկ վերջը՝ Քրիստոսի երկրորդ գալստյան և Ահեղ դատաստանի հետ: Մարդն իր ապրելաձևը կազմակերպում էր այնպես, որ արժանանա փրկության: Այդ պատճառով էլ միջնադարի մարդու զգացումներից ամենաուժեղը անվստահության զգացումն էր, որն անընդհատ ազդում էր նրա գիտակցության և գործողությունների վրա: Նյութական անապահով վիճակը, անբավարար գիտելիքները, կախվածությունը բնության երևույթներից մարդուն անզոր և անվստահ էին դարձնում: Նյութական միջոցների անբավարարության պատճառով վաղ միջնադարի մարդը սոցիալական միջավայրն ընկալում էր որպես յուրայինի (համայնք) և օտարի (համայնքից դուրս): Յուրային համարում էր այն համայնքի ունեցվածքը, որտեղ նա ապրում և աշխատում էր: Մնացած բոլոր մարդիկ, այդ թվում՝ օտարերկրացիները և նույնիսկ հարևան համայնքի բնակիչներն ու նրանց ունեցվածքը համարվում էին օտար: Այս տեսակետից հատկանշական է անգլոսաքսոնական թագավոր **Ինեի** (688–726 թթ.) ընդունած օրենքը, ըստ որի, եթե որևէ մարդ մոտենում է համայնքին ոչ թե սովորական, այլ ուրիշ ճանապարհով, ապա պարտավոր է նախազգուշացնել, հակառակ պարագայում համարվում է գող: Այս դեպքում նրան կարող են սպանել կամ գերի վերցնել:

Վաղ միջնադարի մարդը հասարակության մեջ հանդես չէր գալիս որպես առանձին անհատ, այլ ներկայանում էր որպես որևէ խմբի անդամ: Մարդը հասարակության մեջ իր տեղը զբաղեցնում էր իր խմբի միջոցով: Որոշակի պատճառներով մարդուն խմբից հեռացնելը նշանակում էր նրա լիակատար օտարում հասարակությունից, քանի որ նա ստանում էր

լքյալի կարգավիճակ և չէր ընդունվում մյուս խմբերի կողմից: Այսպիսի օրինակ է ասպետին իր խմբից հեռացնելը: Սա կատարվում էր, օրինակ, այն դեպքում, երբ ասպետը սպանում էր գերուն՝ չսպասելով նրա համար սահմանված փրկագնի ստացմանը:

Գյուղացուն ևս արտաքսում էին խմբից, եթե պարբերաբար խախտում էր համայնքի կազմակերպման նորմերը, և նա դառնում էր լքյալ: Համայնքը իր վրա էր վերցնում նրա ընտանիքը պահելու հոգսը: Նույն կարգը կիրառվում էր նաև հոգևորականների նկատմամբ. նրանց կարգալույծ էին անում և հեռացնում խմբից, ուստի նրանք դառնում էին լքյալ:

Վաղ միջնադարում ֆիզիկական աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը դրական էր: Այսպես բենեդիկտյան միաբանության կանոններում տեղ էր գտել «Աղոթք և աշխատանք» կանոնը: Հետագայում ֆիզիկական աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը փոխվեց: Ֆիզիկական աշխատանքը վերապահվեց հասարակության ստորին շերտերին: Առավել հարգալից դարձավ մտավոր և ռազմական աշխատանքը, որի կրողներն էին վանականները և ասպետները:

Վաղ միջնադարի մարդու աշխարհընկալման մեջ կարևոր էր նաև ժամանակի և տարածության ընկալումը: Մարդը Երկիր մոլորակը պատկերացնում էր սկավառակի տեսքով, որը ծածկված էր երկնքով: Երկրի կենտրոնը համարվում էր Երուսաղեմը, որտեղ Քրիստոսի շիրիմն էր:

Վաղ միջնադարում ժամանակի չափման միասնական համակարգ գոյություն չուներ: Օրը բաժանվում էր երկու մասի՝ ցերեկ և գիշեր: Եթե հանցագործությունը կատարվել էր գիշերը, ապա պատիժը ավելի խիստ էր, քանզի գտնում էին, որ գիշերը պատկանում է գերբնական ուժերին՝ սատանային և տեսիլքներին:

Այսպիսով՝ վաղ միջնադարի մարդու աշխարհայացքը ձևավորում էին քրիստոնեությունը, շրջակա միջավայրը և հասարակական հարաբերությունները:

Վաղ միջնադարի Արևմտյան Եվրոպայի կրթական համակարգի կառուցվածքը

Դասավանդվող առարկաները						
Աստվածաբանություն	Երաժշտություն	Երկրաչափություն	Թվաբանություն	Աստղագիտություն	Դիալեկտիկա	Քերականություն

Դպրոցների տիպերը		
Ծխական	**Վանական**	**Տաճարային**
Գյուղական եկեղեցիներին կից դպրոցներ, որտեղ գյուղի երեխաները սովորում էին գրել, կարդալ, հաշվել, երգել:	Վանքերին կից դպրոցներ, որտեղ պատրաստում էին ստորին և միջին աստիճանի հոգևորականներ և ուսուցչությամբ ու գիտությամբ զբաղվող վարդապետներ:	Քաղաքների Մայր տաճարներին կից դպրոցներ, որտեղ պատրաստում էին ինչպես բարձրաստիճան հոգևորականների, այնպես էլ աշխարհիկ գործունեությամբ զբաղվող մարդկանց:

Ամփոփում: *Արևմտահռոմեական կայսրության անկումից հետո շուրջ երկու դար եվրոպական երկրներում մշակույթը անկում էր ապրում: Սկսած VII–VIII դարերից՝ այն կրկին սկսեց զարգանալ: Մշակույթի վերելքն արտահայտվում էր վանքերին ու եկեղեցիներին կից դպրոցների բացմամբ: Վերջիններս կազմակերպվում էին անտիկ դարաշրջանի դպրոցների նման: Աշխարհիկ ոլորտի մասնագետներ պատրաստելուն էր ուղղված համալսարանների բացումը: Վերելք են ապրում պատմագիտությունը և գրականությունը: Վաղ միջնադարում փոխվում է նաև մարդու աշխարհայացքը, որը ձևավորվում է քրիստոնեության ուսմունքի, շրջակա միջավայրի և հասարակական հարաբերությունների ազդեցությամբ:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ Արևմտյան Եվրոպայում V–VII դարերում մշակույթն անկում ապրեց: Ո՞ր մշակույթների փոխներգործության արդյունքում ձևավորվեց ավատատիրական մշակույթը: Ի՞նչը դարձավ նրանց շաղկապողը:
2. Կրթական համակարգում ի՞նչ փոփոխություններ մտցրին Բոեցիոսը և Կասիոդորը: Վերջինս ի՞նչ նորույթ մտցրեց կրթության կազմակերպման ձևի մեջ: Նշե՛ք վաղ միջնադարի դպրոցների տեսակները:
3. Ո՞ր տիպի պատմագրական աշխատանքներն էին տարածված վաղ միջնադարում: Ո՞վ էր Արևմտյան Եվրոպայի առաջին պատմիչը, ի՞նչ աշխատություն է գրել: Թվարկե՛ք գերմանական տարբեր ժողովուրդների պատմությունը գրած հեղինակներին և նրանց աշխատանքները: Գերմանական տարբեր ցեղերի պատմությունների հեղինակները ի՞նչ էին փորձում հիմնավորել իրենց պատմություններում:
4. Ներկայացրե՛ք վաղմիջնադարյան գերմանական գրականության ձեռքբերումները:
5. Փորձե՛ք վերհանել վաղմիջնադարյան մարդկանց աշխարհընկալման բնորոշ կողմերը: «Յուրայինի» և «օտարի» ընկալման ի՞նչ պատմական օրինակ կարող եք նշել:
6. Վաղ միջնադարում հասարակության մեջ մարդն ինչի՞ միջոցով էր տեղ զբաղեցնում: Ինչո՞ւ փոխվեց ֆիզիկական աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը:

§ 9. ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ V ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ IX ԴԱՐԻ ԿԵՍԵՐԸ

Բյուզանդական կայսրության կազմավորումը

395 թ. Թեոդոսիոս կայսեր կտակով Հռոմեական կայսրությունը բաժանվեց երկու մասի՝ արևմտյան և արևելյան: Արևելահռոմեական կայսրության կազմի մեջ մտան Բալկանյան թերակղզին, Փոքր Ասիան, Հյուսիսային Միջագետքը, Հայաստանի մի մասը, Եգիպտոսը, Ղրիմ թերակղզու մի մասը: Արևմտահռոմեական կայսրության անկումից հետո Արևելահռոմեականը մնաց որպես երբեմնի միասնական կայսրության իրավահաջորդ: Այս պատճառով կայսրությունը շարունակում էին անվանել Հռոմեական: Միայն XIV դ. սկսեցին օգտագործել Բյուզանդիա (Բյուզանդիոն) անվանումը:

Արևմուտքի հետ համեմատած՝ Բյուզանդիան ուներ մի շարք առանձնահատկություններ: Այստեղ ապրում էին հույներ, հայեր, ասորիներ, հրեաներ, եգիպտացիներ, որոնք զարգացման մակարդակով ավելի բարձր էին, քան Արևմուտքի բնակիչները:

Բյուզանդիայի կազմի մեջ մտան բնակլիմայական առավել նպաստավոր պայմաններ և երկրագործական հին ավանդույթներ ունեցող տարածքներ: Հողը հիմնականում մշակում էին ազատ գյուղացիները, որոնք միավորված էին համայնքի մեջ:

V–VI դդ. Բյուզանդիայի քաղաքները անկում չապրեցին, ինչպես դա եղավ Արևմուտքում: Այս ժամանակաշրջանում արհեստագործությունը և առևտուրը Արևելքում վերելք էին ապրում: Բյուզանդիայում էին այնպիսի նշանավոր քաղաքներ, ինչպիսիք էին Կոստանդնուպոլիսը, Ալեքսանդրիան, Անտիոքը, Բեյրութը, Եփեսոսը: Արհեստագործությունը հիմնականում կենտրոնացված էր քաղաքներում:

Անցումը ավատատիրական հասարակության Բյուզանդիայում տեղի էր ունենում ներքին ճանապարհով: Ավատատիրական հարաբերությունները հաստատվում էին առանց խոր ճգնաժամի և ցնցումների, ինչպես եղավ Արևմուտքում: Բյուզանդիան բարբարոսների հարվածներից չկործանվեց, ուստի պետությունը կարողացավ օրենքներով կարգավորել անցումը ավատատիրության: Այս գործում մեծ էր **Հուստինիանոս կայսեր** (527–565 թթ.) դերը: Անտիկ շրջանից Բյուզանդիան ժառանգություն ստացավ հելլենականությունը, հռոմեականությունը և քրիստոնեությունը: Ավատատիրական հարաբերությունների ձևավորմանը զուգահեռ անհրաժեշտ էր դրանք հարմարեցնել նոր պայմաններին: Հուստինիանոս կայսրը իր առջև խնդիր դրեց այս ամենը միավորելու մեկ համակարգում և ստեղծելու միասնական պետություն, օրենսդրություն, դավանանք: Այս նպատակով նա ստեղծեց «Քաղաքացիական իրավունքի հավաքածու» օրենքների ժողովածուն: Բյուզանդիան դանդաղորեն դառնում էր ավատատիրական տիպի միապետություն:



Հուստինիանոս I

Պետությունը վաղ Բյուզանդիայում

Կայսերական իշխանությունը կազմակերպվում էր այնպես, ինչպես Հռոմեական կայսրությունում: Բարձրագույն օրենսդիր, ռազմական և դատական իշխանությունը պատկանում էր կայսրին: Նա իրեն հռչակեց քրիստոնյա աշխարհի առաջնորդ: V–VI դդ. Եվրոպայում և Առաջավոր Ասիայում չկար որևէ պետություն, որի միապետը հավակներ այդ դերին:

Կայսեր իշխանությունը ժառանգական չէր: Իշխանության անցումը պայմանավորված էր նաև Ծերակույտի դիրքորոշումից: Այդ պատճառով դեռևս կենդանության օրոք կայսրերը աշխատում էին իշխանությունը որդիներից մեկին փոխանցել:

Հսկայածավալ կայսրության կառավարումը կենտրոնացված էր կայսերական արքունիքում և բաժանված էր մի քանի տասնյակ գերատեսչությունների: Սրանցից կարևորագույններն էին հարկային, ռազմական և արտաքին հարաբերությունները կարգավորող գերատեսչությունները:

Պետության կառավարման գործում մեծ դեր էր խաղում կայսեր կից սրբազան խորհուրդը: Նրա մեջ մտնում էին կայսրին առավել նվիրված մարդիկ:

Պետության տարածքը բաժանված էր պրովինցիաների, որտեղ քաղաքացիական և ռազմական իշխանությունները տարանջատված էին: Կայսրը նշանակում էր պրովինցիայի կառավարչին, որը տեղում իրականացնում էր վարչական, դատական և ֆինանսական գործառույթներ: Ռազմական իշխանությունը կայսեր նշանակած զորահրամանատարի ձեռքում էր: Ի տարբերություն Արևմտահռոմեական կայսրության, որտեղ բանակը կազմավորվում էր վարձկանության սկզբունքով, Բյուզանդիայում այն հավաքագրվում էր հիմնականում ազատ գյուղացիներից: Սա թույլ էր տալիս հաճախ հավաքել մեծաքանակ բանակ: Հզոր էր նաև բյուզանդական ռազմական նավատորմը, որը մրցակից չուներ Սև և Միջերկրական ծովերում: Բյուզանդական արագընթաց նավերը, որոնք բաղկացած էին 200–300–հոգանոց անձնակազմից, անհրաժեշտության դեպքում ծովափնյա շրջաններ էին տեղափոխում հեծյալ և հետևակ զինվորներ: Դրա շնորհիվ Բյուզանդիան ոչ միայն պաշտպանվում էր բարբարոսական արշավանքներից, այլև նվաճողական պատերազմներ վարում:

Քրիստոնեական եկեղեցու կազմակերպումը

381 թ. քրիստոնեությունը հռչակվեց Հռոմեական կայսրության պետական կրոն: Նույն թվականին Կոստանդնուպոլսի երկրորդ տիեզերական ժողովում պատրիարքական աստիճան ստացավ Կոստանդնուպոլսի աթոռը և Հռոմից հետո դասվեց երկրորդ տեղում. «Կոստանդնուպոլիսը նոր Հռոմն է»: Այսպես Կոստանդնուպոլսի աթոռը գերիշխող դիրք ստացավ Արևելքի մյուս պատրիարքությունների շարքում: Այս կարգը իր վերջնական հաստատումը ստացավ Քաղկեդոնի չորրորդ տիեզերական ժողովում (451 թ.): Այսպես Կոստանդնուպոլսի պատրիարքության ենթակայության տակ հայտնվեցին Բյուզանդիայի տարածքում գտնվող բոլոր եկեղեցիները, բացի Ասորիքից (Անտիոք) և Եգիպտոսից (Ալեքսանդրիա): Բալկանյան թերակղզում միայն Իլիրիայի թեմն էր ենթարկվում Հռոմի պապին:

Արևելքում, բացի բյուզանդական եկեղեցուց, կային նաև այլ եկեղեցիներ, մասնավորապես հայկական, եգիպտական (ղպտիական) և ասորական, որոնք չէին ընդունում Կոստանդնուպոլսի պատրիարքության գերակայությունը:

Բյուզանդիան Հուստինիանոսից հետո

Հուստինիանոսի վարած պատերազմների արդյունքում Բյուզանդիային միացվեցին Իտալիան, Հյուսիսային Աֆրիկան, Հարավարևելյան Իսպանիան: Երկարատև պարսկա–բյուզանդական պատերազմների արդյունքում կայսրությանը հաջողվեց թույլ չտալ, որ պարսիկները մոտենան Սև և Միջերկրական ծովերին: Սակայն նրա կառավարման վերջին տարիներին Բյուզանդիան սկսեց թուլանալ, որը կապված էր ավատատիրական հարաբերությունների ձևավորման հետ: Համայնքի ներսում տեղի ունեցող սոցիալական շերտավորման արդյունքում գյուղացիների մի մասը դառնում էր հողազուրկ և ի վիճակի չէր հարկեր վճարելու կամ զինվորական ծառայություն կատարելու: Ամայանում էին շատ գյուղեր և քաղաքներ: Անկում էին ապրում արհեստագործությունը և առևտուրը:

Հուստինիանոսի հաջորդների օրոք Բյուզանդիան սկսեց կորցնել նվաճված տարածքները: **568 թ.** գերմանական ցեղերը՝ լանգո-

ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

բարդները, գրավեցին Հյուսիսային Իտալիան: Բյուզանդիայի ձեռքին մնաց միայն **Հռավենա քաղաքը:** Բալկանյան թերակղզու վրա անընդհատ արշավում էին ավարները, սլավոնները, բուլղարները: Չնայած տարածքային մեծ կորուստներին՝ Բյուզանդիան չկործանվեց: Սկսված սոցիալ–տնտեսական և քաղաքական վերափոխումների արդյունքում Բյուզանդիայում ձևավորվեց միջնադարյան հասարակություն:

Բյուզանդիայի զարգացման առանձնահատկությունների շնորհիվ ձևավորվեց քաղաքակրթության նոր՝ բյուզանդական տարատեսակը: Ինչպես Արևմտյան Եվրոպայում, այնպես էլ Բյուզանդիայում տնտեսական կյանքի կենտրոնը դառնում էր գյուղը: Գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման հիմնական ձևը գյուղացիական տնտեսությունն էր: Սոցիալական շերտավորման արդյունքում գյուղում առաջանում էին հարուստ գյուղացիներ, որոնք գնում էին աղքատացած համայնականների հողերը և այն մշակելու համար օգտագործում էին վարձու աշխատանք: Հողազուրկ կամ սակավահող գյուղացիները տարբեր պայմաններով հող էին վարձակալում և դառնում կախյալ մարդիկ:

Բարբարոսական արշավանքները, կայսերական իշխանության թուլացումը, առևտրի և արհեստագործության անկումը հասցրին քաղաքների քայքայմանը: Սակայն մի շարք քաղաքներ՝ Կոստանդնուպոլիսը, Տրապիզոնը, Եփեսոսը, պահպանվեցին և շարունակեցին ծաղկում ապրել: Վաղ միջնադարում քաղաքային կյանքի առկայությունը բյուզանդական միջնադարի կարևոր առանձնահատկություններից էր, որով նա տարբերվում էր Արևմտյան Եվրոպայից: Բյուզանդիայում ձևավորված ավատատիրական հարաբերությունների մյուս կարևոր առանձնահատկությունը կապված էր խոշոր հողատիրության հետ: Բյուզանդիայում այն մեծ տարածում չգտավ, ինչպես Արևմտյան Եվրոպայում: Խոշոր հողատիրությունը կենտրոնացած չէր մեկ շրջանում, այլ ցրված էր կայսրության տարբեր շրջաններում: Հողային սեփականության իրավունքի հիման վրա Բյուզանդիայում չձևավորվեց աստիճանակարգություն՝ սենյոր–վասալ սկզբունքով: Այստեղ կար մեկ աստիճան՝ կայսր–վասալ: Խոշոր հողատերերը պետական հարկերից չէին ազատվում: Նրանք իրենց տիրույթներում չէին ստանում նաև դատական իշխանություն, քանզի արդարադատության բարձրագույն իշխանությունը պատկանում էր կայսրին:

Արաբա–բյուզանդական հակամարտությունը

Պարսկա–բյուզանդական երկարատև պատերազմների և ավատատիրական հարաբերությունների սկզբնավորման հետ կապված՝ Բյուզանդիան հայտնվել էր ճգնաժամի մեջ: Այդ ժամանակ էլ պատմության ասպարեզ մտան նոր վտանգավոր թշնամիներ՝ արաբները: **637 թ. Յարմուկ գետի** ափին արաբները ծանր պարտության մատնեցին բյուզանդացիներին և սկսեցին կայսրության արևելյան պրովինցիաների նվաճումը: Շուտով արաբները գրավեցին Պաղեստինը, Ասորիքը, Հյուսիսային Միջագետքը, Եգիպտոսը, Հյուսիսային Աֆրիկան: Հուստինիանոս կայսեր ժամանակաշրջանի հետ համեմատած՝ կայսրության տարածքը կրճատվեց երեք անգամ: Արաբները ստեղծեցին նաև ռազմական ուժեղ նավատորմ, որի օգնությամբ գերիշխող դիրք գրավեցին Միջերկրական ծովում: Սա հնարավորություն տվեց նրանց մի քանի անգամ ցամաքից և ծովից շրջապատելու Կոստանդնուպոլիսը:

Արաբական նվաճումների հետևանքով Բյուզանդիան զրկվեց կենսական նշանակություն ունեցող տարածքներից: Արևելյան պրովինցիաների կորուստը հանգեցրեց նրան, որ այստեղ ապրող հայերի, ասորիների դերը կայսրության կյանքում նվազում էր: Մյուս կողմից՝ համապատասխանաբար ուժեղանում էր հույների դերը: Հաշվի առնելով այս իրավիճակը՝ Հերակլես կայսրը լատիներենի փոխարեն հունարենը դարձրեց պաշտոնական լեզու: Լատիներեն **կայսր** տիտղոսի փոխարեն սկսեցին օգտագործել հունարեն **վասիլևսը (բասիլևս)**:

Ռազմավարչական բարեփոխումները

Մինչև արաբական արշավանքները կայսրության տարածքը բաժանված էր պրովինցիաների: Արաբներից կրած պարտությունները ստիպեցին վերանայել և փոխել ձևավորված պրովինցիալ կառավարման համակարգը և վարչական բաժանումը: Անհրաժեշտ էր տեղում իշխանությունը կենտրոնացնել մեկ մարդու ձեռքում: Նախ վերափոխեցին պրովինցիաների սահմանները և կազմեցին վարչական նոր միավոր, որը կոչվեց **թեմ**: Թեմում ռազմական և վարչական իշխանությունը հանձնվեց մեկ մարդու, որը կոչվում էր **ստրատիգոս**: Նրան էր ենթարկվում նաև թեմի դատավորը:

Թեմում հավաքագրվող զորքը հիմնականում բաղկացած էր գյուղացի զինվորներից, որոնք կոչվում էին **ստրատիոտներ**: Բանակ էին զորակոչվում ունևոր գյուղացիները, որոնք կկարողանային ռազմական հանդերձանք և ձի գնել, եթե ցանկանում էին ծառայել հեծելազորում: Ստրատիոտի ընտանիքը պետք է ունենար վարձու աշխատողներ, որոնք հողը կմշակեին այն ժամանակ, երբ նա մեկներ պատերազմ կամ ռազմական վարժանքների: Զինվորական ծառայություն կատարելու համար հաճախ պետությունն էր գյուղացուն հող տալիս: Ստրատիոտի հողը համարվում էր արտոնյալ, քանզի ազատվում էր բոլոր հարկերից, բացի հողահարկից:

Առաջին թեմերը ստեղծվեցին **Հերակլես կայսեր** օրոք Փոքր Ասիայում: Դրանք էին Արմենիակը, Անատոլիկը: Հետագայում թեմեր ստեղծվեցին նաև Բալկանյան թերակղզում: Թեմական կարգը հնարավորություն տվեց Բյուզանդիային կանգնեցնելու արաբներին, ապա անցնելու հակահարձակման: 718 թ. բյուզանդացիները պարտության մատնեցին շուրջ մեկ տարի մայրաքաղաքը պաշարած արաբներին:

Ռազմավարչական բարեփոխումների արդյունքում Բյուզանդիայում ձևավորվեց քաղաքական նոր խավ՝ ռազմաթեմական ավագանին: Այն կազմված էր ստրատիգոսներից և խոշոր հողատերերից: Սրանց հաջողվեց 717 թ. կայսերական գահը հանձնել Անատոլիկի թեմի ստրատիգոս **Լևոն III-ին** (717–741): Իշխանության վերաբաշխման համար պայքար սկսվեց թեմական և մայրաքաղաքային ավագանու միջև, որի ձեռքին էր մինչ այդ գտնվում իշխանությունը: Կայսերական իշխանությունը ամրապնդելու համար Լևոն III–ը փորձեց օգտագործել սրանց միջև եղած հակասությունները: Սրվել էին նաև պետության և եկեղեցու փոխհարաբերությունները: Եկեղեցին թուլացնելու, կենտրոնական իշխանությունը ամրապնդելու համար սկսված պայքարն ընդունեց գաղափարական շարժման ձև՝ ընդդեմ սրբապատկերների պաշտամունքի:

Սրբապատկերների պաշտամունքը (պատկերապաշտություն) բյուզանդական եկեղեցում մեծ տարածում ուներ: Նրանց միջոցով եկեղեցիները և վանքերը մեծ եկամուտներ էին ստանում: 726 թ. Լևոն III–ը հանդես եկավ սրբապատկերների պաշտամունքի դեմ (պատկերամարտություն): Նրանց պաշտամունքը արգելվեց: Պատկերամարտական գաղափարները թափանցեցին հասարակության մեջ: Սկսեցին բռնագրավել եկեղեցական հողերը և հարստությունները: Շատ վանքեր փակվեցին: Վանականներին պարտադրում էին զինվորական ծառայություն կատարել: Բռնազավթած հողերի և հարստությունների մի մասը դարձան պետական սեփականություն, և պատկերամարտ կայսրերը այն օգտագործեցին բանակը մեծացնելու համար: Շարժումը շարունակվեց մինչև 843 թ., երբ սրբապատկերների պաշտամունքը նորից թույլատրվեց:

Ամփոփում: *Արևելահռոմեական կայսրությունը (Բյուզանդիա) խուսափեց արևմտյան կայսրության ճակատագրից: Իսկ VI դարում այն Հուստինիանոսի բարեփոխումների և ակտիվ արտաքին քաղաքականության շնորհիվ, նույնիսկ ժամանակավորապես վերանվաճեց Արևմտյան կայսրության տարածքի զգալի մասը: Սակայն Բյուզանդիայի վերելքը ավարտվեց արաբների արշավանքների հետևանքով:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշեք Հռոմեական կայսրության՝ երկու մասերի բաժանվելու գործընթացը: Ո՞ր տարածքներն էր ընդգրկում Բյուզանդիան: Վերհանեք Բյուզանդիայի հասարակական կյանքի առանձնահատկությունները V–VI դարերում: Ինչո՞ւ Բյուզանդիայի անցումն ավատատիրական հարաբերություններին համեմատաբար հեշտ տեղի ունեցավ, քան Արևմուտքում: Ո՞ր կայսրը կարևոր դեր խաղաց այդ գործում:
2. Ներկայացրեք վաղ Բյուզանդիայի պետական կառավարման համակարգը:
3. Ինչպե՞ս ձևավորվեց քրիստոնեական եկեղեցու կառույցը Բյուզանդիայում: Արևելքի եկեղեցիներից որո՞նք Կոստանդնուպոլսի պատրիարքի գերակայությունը չէին ընդունում:
4. Փորձեք բնութագրել բյուզանդական քաղաքակրթությունը, նշեք տարբերությունները Արևմուտքից:
5. Ի՞նչ հետևանքներ ունեցան արաբական նվաճումները Բյուզանդիայի համար VII դարի կեսերին: Ինչո՞ւ հունարենը դարձավ կայսրության պաշտոնական լեզու:
6. Ի՞նչ նպատակով իրականացվեցին վարչական և ռազմական բարեփոխումները կայսրությունում: Բացատրեք **թեմ** և **ստրատիոտ** հասկացությունների իմաստը:
7. Ներկայացրեք ռազմավարչական բարեփոխումների արդյունքները: Ձեր կարծիքով՝ պատկերամարտական շարժումը նշանակություն ունեցա՞վ պետության ամրապնդման գործում:

§ 10. ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

Մակեդոնական վերածնունդը

Ռազմավարչական բարեփոխումները, պատկերամարտական շարժումը, ավատատիրական հարաբերությունների ձևավորումը նախապատրաստեցին կայսրության վերելքը, որը սովորաբար անվանում են Մակեդոնական (Հայկական) վերածնունդ: Այն ժամանակագրական առումով համընկնում է հայկական ծագումով **Մակեդոնական արքայատան** կառավարման ժամանակաշրջանի (867–1056 թթ.) հետ: Վերելք ապրեցին գյուղատնտեսությունը, արհեստագործությունը և առևտուրը:

Կայսրության տարածքում գոյություն ուներ հողի սեփականության երեք ձև՝ պետական, մասնավոր և համայնական: Սոցիալական շերտավորման արդյունքում աղքատացած գյուղացիները իրենց մասնավոր սեփականություն համարվող հողերը վաճառել էին կամ գրավ դրել: Սրանք ի վիճակի չէին ռազմական ծառայություն կատարելու, և բանակի թվաքանակը կրճատվում էր: Սա անհանգստացնում էր Մակեդոնական արքայատան կայսրերին: Նրանք փորձեցին օրենսդրական ճանապարհով կարգավորել գյուղացիների ռազմական պարտավորությունները: Հող ունեցող գյուղացիները մտցվեցին հատուկ ցուցակների մեջ: Սահմանվում էր, որ որոշակի հող ունեցող գյուղացին պետք է կատարի հեծյալ, իսկ ավելի պակասը՝ հետևակ զինվորական ծառայություն: Ստրատիոտները իրավունք չունեին վաճառելու կամ նվիրելու իրենց հողերը:

IX դ. կեսերից Բյուզանդիայում սկսվեց նաև քաղաքների վերելքը: Իրենց գոյությունը պահպանած քաղաքների կողքին առաջացան նոր քաղաքներ: Քաղաքային բնակչության հիմնական զբաղմունքը արհեստն ու առևտուրն էին: Արհեստավորներն ու առևտրականներն ըստ մասնագիտության միավորվում էին հատուկ կազմակերպությունների՝ **կոլեգիաների** մեջ:

Ավատատիրական տիպի միապետության հաստատմանը զուգահեռ կայսրությունում ձևավորվում էր կառավարման նոր համակարգ: Այն զգալիորեն բարդացել էր: Մակեդոնական արքայատան կառավարման տարիներին գերատեսչությունների քանակը հասել էր 60–ի: Ֆինանսական կառավարումը երեք գերատեսչությունների ձեռքին էր, որոնցից կարևորը հարկայինն էր: Մեծ դեր էր խաղում նաև արտաքին հարաբերությունների գերատեսչությունը:

Բարսեղ (Վասիլ) II

Իր գոյությունը պահպանել էր նաև Ծերակույտը, սակայն այն մնացել էր որպես հռոմեական ժառանգություն, քանի որ կառավարման համակարգում ոչ մի դեր չէր խաղում:

Պետության կառավարման գործում կարևոր էր կայսեր կից արքունական խորհրդի դերը:

Մակեդոնական կայսրերը որոշակի հաջողությունների հասան արտաքին քաղաքականության բնագավառում: Կայսրության ամենավտանգավոր թշնամիները շարունակում էին մնալ արաբները և Բալկանյան թերակղզում հաստատված բուլղարները: Արաբական խալիֆայության թուլացման հետևանքով Բյուզանդիան կարողացավ վերագրավել Հյուսիսային Միջագետքը, Ասորիքը, Պաղեստինը և Փոքր Ասիայի արևելյան շրջանները: Օգտվելով արևելյան սահմաններում տիրող հան-

Կոստանդին և Մեթոդիոս

գիստ իրավիճակից՝ **Բարսեղ (Վասիլ) II կայսրը** (976–1025) նվաճեց նաև Բուլղարական թագավորությունը: Ամբողջ Բալկանյան թերակղզին մինչև Դանուբ գետը կրկին մտավ կայսրության կազմի մեջ: Բյուզանդիան կարողացավ գրավել նաև Հայաստանի և Վրաստանի մի մասը:

Բացի ռազմական գործողություններից, մակեդոնական կայսրերը որոշեցին կենսագործել պատրիարք **Փոթիոսի** մշակած ծրագիրը: Նա գտնում էր, որ կայսրության սահմանները անվտանգ դարձնելու համար անհրաժեշտ էր այնտեղ բնակվող ոչ քրիստոնյա ժողովուրդներին դարձնել քրիստոնյա: Այս նպատակով Բուլղարիա, Մեծ Մորավիա, Ռուսիա ուղարկվեցին բազմաթիվ քարոզիչներ: Մորավիա ուղարկած քարոզիչներին գլխավորում էին բյուզանդական մշակույթի նշանավոր գործիչները՝ եղբայրներ **Կոստանդինը** (Կիրիլ) և **Մեթոդիոսը:** Նրանք հարավային, ապա արևելյան սլավոնների համար այբուբեն ստեղծեցին: Քրիստոնեությունը բյուզանդական դավանանքով ընդունեցին Բուլղարիայում և Ռուսիայում:

Բյուզանդիայի թուլացումը

Մակեդոնական արքայատան կառավարման վերջին շրջանում Բյուզանդիան կրկին անկում ապրեց: XI դ. 30–80–ական թվականներին կայսրությունում գահակալեց 10 կայսր, որոնցից 6–ը գահընկեց եղան: Այս ծանր պայմաններում Բյուզանդիայի համար հայտնվեցին նոր թշնամիներ՝ Արևելքում՝ թյուրք–սելջուկները, իսկ Բալկանյան թերակղզում՝ պեչենեգները:

Այդ ժամանակ տեղի ունեցավ ևս մեկ իրադարձություն, որը խոր հետք թողեց կայսրության և հույն ժողովրդի ճակատագրի վրա: Օգտվելով կայսրության թուլացումից՝ պապականությունը իր ենթակայության տակ վերցրեց Հարավային Իտալիայում գտնվող հունական եկեղեցին, որը հանդիպեց հույների դիմադրությանը: 1054 թ. Կոստանդնուպոլիս ժամանած պապի դեսպանները պահանջեցին, որ Կոստանդնուպոլսի պատրիարքը հրաժարվի Բուլղարիայի և Իլիրիայի եկեղեցիներից: Ստանալով բացասական պատասխան՝ նրանք բանադրեցին պատրիարքին: Վերջինս իր հերթին բանադրեց դեսպաններին: Այսպես քրիստոնեական եկեղեցին բաժանվեց:

XI դ. երկրորդ կեսին կայսրության ճակատագիրը որոշվում էր Արևելքում: **1071 թ. Մանազկերտի ճակատամարտում** թյուրք–սելջուկները պարտության մատնեցին բյուզանդացիներին: Գերի ընկավ **Ռոմանոս IV Դիոգենես կայսրը:** Սելջուկները գրավեցին Հայաստանը և ամբողջ Փոքր Ասիան: Այստեղ էլ նրանք հիմնեցին իրենց պետությունը՝ **Իկոնիայի սուլթանությունը:** Նույն ժամանակ նորմանները գրավեցին Բյուզանդիայի վերջին տիրույթները Հարավային Իտալիայում: Կայսրության դրությունը օրհասական էր: Պեչենեգները մոտեցել էին Բոսֆորի նեղուցի եվրոպական ափերին, իսկ սելջուկները՝ ասիականին:

Ամփոփում: *Բյուզանդիան IX–XI դարերում ապրեց վերելքի շրջան, որը հայտնի է Մակեդոնական (Հայկական) վերածնունդ անունով: Կայսրությունը հաջողություններ ունեցավ տնտեսական, հոգևոր–մշակութային և արտաքին–քաղաքական ուղղություններում: Սակայն XI դ. երկրորդ կեսին Բյուզանդիան կրկին անկում ապրեց:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Թվարկե՛ք կայսրության վերելքի նախադրյալները Մակեդոնական (Հայկական) արքայատան օրոք:
2. Մակեդոնական արքայատան կայսրերը ի՞նչ ներքին և արտաքին հաջողություններ ունեցան:
3. Ո՞րն էր պատրիարք Փոթիոսի մշակած ծրագրի նպատակը: Ի՞նչ արդյունքներ տվեց այն:
4. Պարզաբանե՛ք XI դ. երկրորդ կեսին Բյուզանդիայի թուլացման պատճառները:

§ 11. ՎԱՂ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Բյուզանդական մշակույթի առանձնահատկությունները

Ավատատիրական հարաբերությունների հաստատմանը զուգահեռ Բյուզանդիայում սկսեց ձևավորվել նաև վաղ միջնադարի մշակույթը: Այն մեծ ազդեցություն թողեց եվրոպական մշակույթի զարգացման վրա: Այսօր էլ աշխարհում ապրող քրիստոնյաների կեսը բյուզանդական մշակույթի ժառանգորդներ են: Բյուզանդական մշակույթը, ի տարբերություն արևմտաեվրոպական ավատատիրական մշակույթի, ուներ մի շարք առանձնահատկություններ:

Արևմտահռոմեական կայսրության անկումից հետո նրա տարածքները զբաղեցնող բարբարոսական ցեղերը չկարողացան յուրացնել հռոմեական մշակույթը, և այն երկար ժամանակ մոռացության մատնվեց: Բյուզանդիայում պահպանվեց անտիկ մշակույթը, և այն ոչ թե մոռացվեց, այլ հարմարեցվեց միջնադարի պայմաններին: Բացի անտիկ հունահռոմեական մշակույթից, բյուզանդական մշակույթը իր մեջ ներառեց նաև կայսրության մեջ մտնող ժողովուրդների (հայեր, ասորիներ, եգիպտացիներ) մշակույթներից որոշ տարրեր: Սակայն, ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի, որտեղ ստեղծվեցին միջնադարյան մշակույթի մի քանի տիպեր (ազգային մշակույթներ), Բյուզանդիայում ձևավորվեց **մշակութային մեկ տիպ՝ բյուզանդական:** Ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի, որտեղ վաղ միջնադարի մշակույթի հիմնական կենտրոնները վանքերն էին, Բյուզանդիայում մեծ էր նաև քաղաքների դերը: Բյուզանդիայի քաղաքները մնում էին որպես կրթության և մշակույթի կենտրոններ: Անտիկ հունահռոմեական մշակույթի ավանդների հիման վրա քաղաքներում զարգանում էր ճարտարապետությունը, կերպարվեստը: Բյուզանդական առևտրականները առևտուր էին անում կայսրության սահմաններից շատ հեռու և ծանոթանում տարբեր մշակույթների հետ:

Կրթական համակարգը

Միջնադարում ինչպես Եվրոպայում, այնպես էլ Բյուզանդիայում կրթական համակարգը միասնական ծրագիր չուներ: Կրթական գործի կազմակերպումը, դասավանդվող առարկաների մի մասը Բյուզանդիան ժառանգեց անտիկ աշխարհից: Այստեղ պահպանվել էին անտիկ կրթության հին կենտրոնները՝ **Աթենքը, Ալեքսանդրիան, Անտիոքը:** Այստեղ գործող դպրոցների մի մասը դարձան եկեղեցական և վանքապատկան դպրոցներ: Եկեղեցին աշխատում էր անտիկ կրթական ժառանգությունը վերափոխել և հարմարեցնել քրիստոնեության պահանջներին: **529 թ.** Հուստինիանոս կայսեր հրամանով փակվեց հեթանոսական մշակույթի վերջին օջախը՝ Աթենքի բարձրագույն դպրոցը:

Դպրոցները բաժանվում էին երկու աստիճանի՝ **տարրական** և **միջնակարգ:** Առաջին աստիճանում երեխաները սովորում էին քերականություն, ճարտասանություն, դիալեկտիկա (տրամախոսություն): Տարրական դպրոցներում երեխաներին սովորեցնում էին գրել, կարդալ, հաշվել: Երկրորդ աստիճանում սովորեցնում էին հանրահաշիվ, աշխարհագրություն, երաժշտություն, աստղագիտություն:

Բյուզանդիայում գոյություն ունեին վճարովի և անվճար դպրոցներ: Վերջինիս թվին էին պատկանում վանական, եկեղեցական և քաղաքային դպրոցները:

Պատմագրությունը

Վաղ միջնադարի բյուզանդական մշակույթում մեծ էր պատմագրության դերը: Այստեղ հունահռոմեական պատմագրության ավանդույթը կենսունակ էր և դրվեց ձևավորվող բյուզանդական պատմագրության հիմքում: Հունահռոմեական պատմագրության հեղինակությունը այնքան մեծ էր, որ բյուզանդական պատմիչները աշխատում էին նմանվել իրենց նախորդներին: Արևմտյան Եվրոպայում շարադրված պատմական երկերի հետ համեմատած՝ բյուզանդական պատմագրության վրա քրիստոնեության ազդեցությունը թույլ էր:

Վաղ Բյուզանդիայի առավել աչքի ընկնող պատմիչներից էին **Պրոկոպիոս Կեսարացին,**

Աստվածածնոր պատկերը. Ս. Սոֆիայի տաճար

Ագաթիոս Միրինեյացին, Թեոֆիլակտոս Սիմոկատացին: Այս պատմիչները իրենց աշխատություններով փակում են անտիկ պատմագրության վերջին էջը: Սրանցից ամենանշանավորը Հուստինիանոսի ժամանակակից քաղաքական գործիչ, շարադրվող դեպքերի ականատես **Պրոկոպիոս Կեսարացին է:** Իր «Պարսիկների, վանդալների և գոթերի հետ Հուստինիանոսի պատերազմների պատմությունը» աշխատության մեջ նա մանրամասն շարադրել է Հուստինիանոսի պատերազմները նախկին Հռոմեական կայսրությունը իր տարածքային ամբողջականության մեջ վերականգնելու համար: Այս և «Կառույցների մասին» աշխատության մեջ նա փառաբանում է կայսրին, նրան ներկայացնում որպես արդարամիտ քրիստոնյա կառավարող: Սակայն իր «Գաղտնի պատմություն» աշխատության մեջ, որ գրվել էր մտերիմների համար, կայսրին ներկայացնում է որպես դաժան բռնակալ, որը մեղավոր է կայսրության բոլոր դժբախտությունների համար:

Քրիստոնեությունը մշակեց պատմական նյութի շարադրման նոր ժանր, որը դարձավ միջնադարի պատմագրության սեփականությունը: Դա ժամանակագրությունն էր, որն առաջացավ III–IV դդ.: Այս ժանրի հիմնադիրը **Եվսեբիոս Կեսարացի**ն էր: Ժամանակագրության մեջ դեպքերը և իրադարձությունները սովորաբար շարադրում էին ըստ տարիների: Այստեղից էլ նրա անվանումը՝ տարեգիրք:

Գրականությունը և արվեստը

Վաղ միջնադարում մեծ վերելք ապրեց նաև բյուզանդական գրականությունը: Այստեղ ձևավորվեց երկու հիմնական ուղղություն: Հունահռոմեական գրականության ավանդները պահպանվեցին և հարմարեցվեցին միջնադարի պայմաններին:

Քրիստոնեության ազդեցության տակ վաղ միջնադարում ձևավորվեց նաև եկեղեցական գրականություն:

III–VI դդ. մեծ զարգացում էին ապրում անտիկ գրականությունից ժառանգած ժանրերը՝ սիրային քնարերգությունը, նամակները, ճառերը: Քրիստոնեությունը գրականություն բերեց ևս երկու ժանր՝ վարքագրությունը և եկեղեցական պոեզիան: Առաջինը դառնում է բյուզանդական գրականության առաջատար ժանրերից մեկը: Վարքագրության թեման եկեղեցու կողմից «սրբացված» անհատի կենսագրությունն է: Կրոնական բնույթի թեմաները միահյուսված էին պատմական դեմքերի և իրադարձությունների հետ:

Եկեղեցական պոեզիայի (օրհներգություն) թեման Աստվածաշունչն էր: Այստեղից վերցված փոքր հատվածը դառնում է պոեմի կամ բանաստեղծության հիմք: Եկեղեցական պոեզիայի նշանավոր դեմքը **Ռոմանոս Քաղցրաերգիչն** էր (VI դ.): Նա գրեց շուրջ 1000 օրհներգություն:

Դրվագներ Ս. Սոֆիայի տաճարից



Վաղ միջնադարում վերելք է ապրում նաև ճարտարապետությունը: Բյուզանդական ճարտարապետները IV–V դդ. մշակում են քաղաքների կառուցման նոր հատակագիծ: Քաղաքի կենտրոնում հրապարակն էր, որի շուրջ կառուցում էին քաղաքի մայր եկեղեցին, հասարակական և վարչական շինությունները: Հրապարակից ճառագայթաձև տարածվում էին փողոցները, որոնք քաղաքը բաժանում էին թաղամասերի:

Բարձր զարգացման է հասնում եկեղեցական ճարտարապետությունը: Հին Հունաստանում տաճարը համարվում էր աստվածների բնակատեղի, և այնտեղ մտնելու իրավունք ունեին միայն քրմերը: Կրոնական արարողության ժամանակ ժողովուրդը հավաքվում էր տաճարին կից հրապարակում: Քրիստոնյա հավատացյալները հավաքվում էին տաճարում: Այդ պատճառով փոխվում էին տաճարների ձևը և կառուցվածքը: Քրիստոնեական տաճարները ավելի մեծ էին կառուցվում, քանի որ արարողությունների ժամանակ ժողովուրդը հավաքվում էր ներսում:

Բյուզանդական եկեղեցական ճարտարապետության նշանավոր հուշարձանը Կոստանդնուպոլսի **Սուրբ Սոֆիայի տաճարն** էր: Այն կառուցվել է **532–537 թթ.** Հուստինիանոս կայսեր հրամանով: Նրա կառուցմանը մասնակցել է շուրջ 10 հազար մարդ: Տաճարը պսակված է հսկայական գմբեթով, որի տրամագիծը շուրջ 32 մ է: Երկու կողմից աստիճանաբար կենտրոնական գմբեթին հարում են կիսագմբեթները: Կենտրոնական գմբեթն ունի 40 պատուհան, որտեղից ներթափանցող լույսերը ապահովում են տաճարի ներսի լուսավորությունը:

Բյուզանդիայում ավելի վաղ, քան Արևմտյան Եվրոպայում եկեղեցիների և պալատների հատակն ու պատերը սկսեցին զարդարել խճանկարներով: Խճանկարում պատկերը ստացվում էր գունավոր փոքր քարերի և ապակիների համադրումից: Հետագայում մեծ տարածում գտավ նաև որմնանկարչությունը: Բյուզանդական արվեստում ևս երկար ժամանակ պահպանվում էին անտիկ հունահռոմեական արվեստից ժառանգած ավանդները: Կոստանդնուպոլսի կայսերական մեծ պալատի հատակը զարդարող խճանկարներում ներկայացված են հիմնականում աշխարհիկ թեմաներ: Հետագայում գերակշռություն են ստանում Աստվածաշնչի թեմաները: Եկեղեցիների և տաճարների ներսում խճանկարները և որմնանկարները արվում էին որոշակի կանոններով: Գմբեթի պատերին պատկերում էին Հիսուս Քրիստոսին հրեշտակների հետ, իսկ նրանից ներքև՝ Մարիամ Աստվածածնին: Որոշ տաճարներում Մարիամ Աստվածածնից ներքև պատկերում էին ավետարանների հեղինակներին՝ Մատթեոսին, Մարկոսին, Ղուկասին և Հովհաննեսին:

Բյուզանդական սրբանկարչություն

Վաղ բյուզանդական արվեստում մեծ տարածում ստացավ սրբանկարչությունը (սրբապատկեր): Հարթ փայտի կտորի վրա պատկերում էին Քրիստոսին, Մարիամին և Աստվածաշնչից վերցված այլ կերպարների:

Վաղ միջնադարում բյուզանդական մշակույթը ամենազարգացածն էր Եվրոպայում: Եվրոպայի տարբեր երկրներից մեծ թվով պատանիներ գալիս էին Կոստանդնուպոլիս՝ մաթեմատիկա, իրավունք, բժշկություն ուսանելու:

Ամփոփում: *Վաղ միջնադարում Բյուզանդիայում ձևավորվեց մի շարք առանձնահատկություններ ունեցող մշակույթ: Պահպանվեց անտիկ մշակույթը և հարմարեցվեց հասարակական նոր պայմաններին: Կրթական համակարգը ձևավորվեց անտիկ շրջանի ավանդույթների հիման վրա: Մեծ էր պատմագրության դերը վաղ միջնադարյան բյուզանդական մշակույթի մեջ, առաջացավ նաև նոր ժանր՝ ժամանակագրությունը: Վերելք ապրեցին նաև գրականությունն ու արվեստը:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհանեք բյուզանդական մշակույթի առանձնահատկությունները: Անտիկ կրթական ո՞ր կենտրոններն էին պահպանվել Բյուզանդիայում: Ե՞րբ և ո՞ւմ օրոք փակվեց հեթանոսական վերջին մշակութային օջախը:
2. Ի՞նչ տիպի դպրոցներ կային, և որտե՞ղ էին դրանք գործում: Ի՞նչ առարկաներ էին ուսուցանում դպրոցներում:
3. Բյուզանդական պատմագրության վերելքի հիմքում ի՞նչն էր դրված: Թվարկե՛ք վաղ միջնադարի պատմիչներին: Ի՞նչ աշխատություններ է գրել Պրոկոպիոս Կեսարացին. ներկայացրե՛ք դրանց թեմատիկան: Ե՞րբ է առաջացել պատմագրության ժամանակագրություն ուղղությունը, ո՞վ էր դրա հիմնադիրը:
4. Գրականության մեջ ի՞նչ հիմնական ուղղություններ առաջացան: Թվարկե՛ք գրական ժանրերը: Ո՞վ էր եկեղեցական պոեզիայի նշանավոր հեղինակը:
5. Ճարտարապետության ո՞ր ուղղությունները զարգացան վաղ Բյուզանդիայում: Արվեստի ո՞ր ճյուղերը զարգացան այս շրջանում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ

ՀԻՆ ԾՐՋԱՆ

Համմուրապիի օրենսգիրքը
(հատվածներ)

Համմուրապիի սյունը

1) Եթե դատավորը վճիռ է կայացրել, տվել է կնքված փաստաթուղթ, սակայն հետո փոխել է իր վճիռը, նրանք կապացուցեն, որ դատավորը փոխել է վճիռը, և նա պիտի վճարի այդ դեպքի համար նախատեսված գումարի տասներկուպատիկը: Այնուհետև նրանք նրան կզրկեն դատավորի պաշտոնից, և նա այլևս չի նստի դատավորների հետ միասին:

2) Եթե ազատ մարդը գողանա տաճարի կամ պետության ունեցվածքը, ապա այդ մարդը պիտի սպանվի: Նա, ով նրա ձեռքից գողացված բարիք կվերցնի, նույնպես պիտի սպանվի:

3) Եթե ազատ մարդը օգնել է պետական ստրուկին և ստրկուհուն կամ մասնավոր ստրուկին և ստրկուհուն փախչել քաղաքի դարպասից, ապա նա պիտի սպանվի:

4) Եթե ազատ մարդը ծառ է կտրել ուրիշ ազատ մարդու այգում, առանց տիրոջ գիտության, ապա նա նրան պիտի կես մինա արծաթ վճարի:

5) Եթե ազատ մարդը ցանկանում է արծաթ, ոսկի կամ որևէ այլ բան տա ուրիշ մարդու պահպանելու համար, ապա նա պիտի վկային ցույց տա ամբողջը, կազմակերպի պայմանագիրը, հետո միայն տա պահպանության:

6) Եթե ազատ մարդու կինը սպանել է ամուսնուն ուրիշ մարդու համար, այդ կնոջը պիտի ցցի հանել:

7) Եթե ազատ մարդը հանի ազնվականի աչքը, ապա նրա աչքը պիտի հանել:

8) Եթե բժիշկը վիրահատի ազատ մարդուն բրոնզե դանակով, և ազատ մարդը մահանա, կամ եթե վիրահատի նրա ակնաբիբը և վնասի նրա աչքը, ապա բժշկի ձեռքը պիտի կտրել:

Թութմոս III–ի ասիական արշավանքը
(հատվածներ)

Թութմոս III–ը Ամոն աստծու առջև

Փարավոնը խորհուրդ հրավիրեց իր հաղթական զորքի հետ և ասաց հետևյալը. «Քադեշի այդ խղճուկ թշնամին եկել և մտել է Մեգիդդո: Այս պահին նա այնտեղ է: Նա հավաքել է իր շուրջը Եգիպտոսին հավատարիմ բոլոր երկրների իշխաններին, նաև նրանց, ովքեր Նախարինայում են, Միտաննիում, Խուրրիում, Կոդեում, իրենց ձիերի, հետևակ զորքի և մարդկանց հետ. ինչպես հաղորդել են, նա ասել է, թե՝ ես կսպասեմ Մեգիդդոյում՝ փարավոնի դեմ կռվելու համար...»:

Այնուհետև փարավոնը առաջնորդեց իր զորքին, որը լավ պատրաստված էր: Նա չհանդիպեց գեթ մեկ թշնամու: Նրանց հարավային թևը Տաանախում էր, այն դեպքում, երբ հյուսիսային թևը Քինա հովտի հարավում էր ... Փարավոնը հասավ Մեգիդդո հարավից՝ Քինա գետի ափի մոտ յոթ ժամ երթից հետո: Փարավոնի համար ճամբար խփվեց և զորքին ասվեց հետևյալը. «Պատրաստվե՛ք: Ձենքերդ պատրաստ, քանի որ առավոտյան պիտի մարտնչեք այդ խղճուկ թշնամու դեմ...»:

Առավոտյան փարավոնը նստեց իր ոսկեզօծ մարտակառքը, ինչպես Հոր աստվածը, իսկ նրա հայր Ամոն աստվածը նրա ձեռքերն ամրացրեց .... Փարավոնը հաղթեց՝ իր զորքի գլուխն անցած: Երբ նրանք տեսան հաղթանակող փարավոնին, սարսափահար փախան դեպի Մեգիդդո: Նրանք լքեցին իրենց ձիերը և ոսկեզօծ ու արծաթազօծ մարտակառքերը:

Այնուհետև նրանց ձիերն ու ոսկեզօծ և արծաթազօծ մարտակառքերը բռնվեցին որպես հեշտ ավար: Վերցվեց նաև խղճուկ թշնամու վրանը: Հետո ամբողջ զորքը իր տուրքը մատուցեց Ամոնին, որը հաղթանակ էր պարգևել իր որդուն:

Գայոս Սվետոնիոս Տրանքվիլլոս
Հուլիոս Կեսարի մասին



Հուլիոս Կեսար

Հետո նա անդրադարձավ պետական գործերի կարգավորմանը: Նա նորոգեց օրացույցը: Քրմերի մեղքով, ովքեր կամայականորեն ներմուծում էին ամիսներ և օրեր, օրացույցը այնպիսի անկանոն վիճակում էր, որ բերքահավաքը ընկնում էր ամռան, իսկ խաղողաքաղը՝ աշնան վրա: Արևի շարժման համապատասխան, նա սահմանեց 365 օր, իսկ այնտեղ ներդրվող ամսվա փոխարեն մտցրեց մեկ հավելյալ օր՝ չորս տարին մեկ անգամ:

Նա լրացրեց Ծերակույտը: Հին պատրիկներին ավելացրեց նորերին, մեծացրեց պրետորների, էդիլների, քվեստորների և նույնիսկ կրտսեր պաշտոնյաների քանակը: Նրանք, ովքեր զրկվել էին ցենզորի պաշտոնից կամ դատապարտվել էին կաշառք տալու համար, վերականգնվեցին իրենց իրավունքներում: Նա ընտրությունները կիսեց ժողովրդի հետ: Բացառությամբ կոնսուլներից, թեկնածուների կեսը ընտրվում էր ժողովրդի կամքով, իսկ մյուս կեսը նշանակվում էր Կեսարի կողմից: Նա նրանց նշանակում էր մի համառոտ գրության միջոցով. «Դիկտատոր Կեսարը այսինչ տրիբունին: Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում այսինչ մարդուն, որպեսզի նա ձեր ընտրությամբ ստանա այսինչ պաշտոնը»: Նա թույլ տվեց պաշտոն զբաղեցնել նաև այն անձանց որդիներին, ովքեր պրոսկրիպցիաների ժամանակ մահապատժի էին ենթարկվել:

Բացի այդ, նա 80000 քաղաքացիների բնակեցրեց գաղութներում: Ցանկանալով լրացնել քաղաքի նոսրացած բնակչությունը՝ նա հրատարակեց օրենք, ըստ որի՝ զինծառայության մեջ չգտնվող 20 տարեկանից բարձր և 40 տարեկանից ցածր քաղաքացին իրավունք չուներ հեռանալ Իտալիայից 3 տարուց ավելի ժամկետով:

Բոլոր նրանց, ովքեր Հռոմում զբաղվում էին բժշկությամբ, նաև դասավանդում էին արվեստ, նա տվեց հռոմեական քաղաքացիություն, որպեսզի նրանք հաճույքով բնակություն հաստատեն քաղաքում և ուրիշներին օրինակ ծառայեն:

Նա նույնիսկ ծերակուտական խավից վտարում էր նրանց, ովքեր դատապարտված էին եղել դրամաշորթության համար: Նա առանձնահատուկ խստությամբ էր հետևում շքեղությունը սահմանափակող օրենքներին:

Նա ամեն օր ավելի խոշոր և բազմաթիվ պլաններ էր նախանշում մայրաքաղաքի բարեկարգման, ամրացման և տերության ընդարձակման համար: Առաջին հերթին կառուցեց Մարս աստծո տաճարը, որպիսին երբևէ չէր եղել: Այդ նպատակով պետք է հողով ծածկվեր այն լիճը, որտեղ նա կազմակերպում էր ծովամարտ: Նա նախատեսում էր կարգավորել քաղաքացիական

օրենսգիրքը՝ մի քանի գրքում ներառելով վիթխարի քանակությամբ գոյություն ունեցող օրենքներից ամենալավերը և օգտակարները, բացել որքան հնարավոր է ավելի հարուստ գրադարաններ՝ հունալեզու և լատինալեզու: Նա ցանկանում էր չորացնել Պոմպտինյան ճահիճները, վերացնել Ֆուցինյան լիճը, ճանապարհ գցել Վերին ծովից Ալպյան լեռներով մինչև Տիբր գետը, Իսթմոսյան պարանոցով ջրանցք բացել, հնազանդեցնել Թրակիա և Պոնտոս ներխուժած դակերին, իսկ այնուհետև արշավել պարթևների դեմ Փոքր Հայքի վրայով:

Հինվորներին նա գնահատում էր ոչ թե բնավորության, ծագման և հարստության, այլ խիզախության համար, և նրանց հետ վարվում էր հավասարապես պահանջկոտ և ներողամտաբար: Ոչ միշտ և ամենուրեք էր նա նրանց պահում խիստ կարգապահության պայմաններում, այլ միայն՝ երբ հակառակորդը մոտ էր գտնվում:

Ապիանոս.
«Քաղաքացիական պատերազմները»
(հատվածներ)



Վիճաբանություններ սենատում

Կեսարի մահից հետո կրկին սկսվեցին խոշոր երկպառակությունները: Դրանք աճում էին, աճում և հասան արտակարգ խոշոր չափերի: Տեղի էին ունենում սպանություններ, արտաքսումներ, պրոսկրիպցիաներ, որոնք մահվան էին դատապարտում սենատորներին և, այսպես կոչված, հեծյալներին, և դրանք հիմնականում կատարվում էին երկու կուսակցությունների կողմից միաժամանակ... Վերջիվերջո գործը հասավ նրան, որ Հռոմում իշխանությունը (կարծես այն մասնավոր սեփականություն էր) իրար մեջ բաժանեցին երեք այրեր՝ Անտոնիոսը, Լեպիդոսը և նա, ով նախկինում կրում էր Օկտավիոս անունը և Կեսարի ազգականն էր՝ Կեսարի կտակի համաձայն. Օկտավիոսը նրա կողմից որդեգրվել էր և դրա հետևանքով վերանվանվեց Կեսար: Իշխանության բաժանման ժամանակ, բնականաբար, այդ երեք այրերը շուտով բախվեցին միմյանց: Կեսարը, որ գերազանցում էր Անտոնիոսին և Լեպիդոսին խելքով և փորձով, սկզբում վերջինից խլեց Աֆրիկան, որը նա ստացել էր վիճակահանությամբ, իսկ Ակցիումի ճակատամարտից հետո իշխանությունից զրկեց Անտոնիոսին, որը տարածվում էր Սիրիայից մինչև Հոնիական ծով:

Հերոդոտոս
Պարսիկների սովորույթների մասին

Վերոհիշյալ աստվածներին պարսիկները զոհեր են մատուցում հետևյալ կերպ: Երբ նրանք ուզում են զոհ մատուցել, ո՛չ զոհարան են պատրաստում, ո՛չ կրակ բորբոքում, ո՛չ հեղում կատարում, ո՛չ սրինգ օգտագործում, ո՛չ պսակ, ո՛չ էլ զոհաբերման գարի: Եթե նրանցից որևէ մեկը կամենա զոհ մատուցել այդ աստվածներից մեկին, ապա նա զոհաբերվելիք անասունին բերում է բաց տեղ և կոչում աստծուն, հաճախ իր գլխանոցը մրտենու ճյուղերով զարդարած: Ընդունված չէ, որ զոհ մատուցողը միայն իր համար բարիքներ աղերսի. նա աղոթում է բոլոր պարսիկների համար, քանի որ ինքը ևս պարսիկների թվին է պատկանում:

Նրանք բոլոր օրերից առավել պատվում են յուրաքանչյուրի ծննդյան օրը: Այդ օրը նրանք անհրաժեշտ են համարում առավել ճոխ սեղան բացել, քան մյուս օրերին: Այդ օրը հարուստները մատուցում են փռի մեջ խորոված ամբողջական եզ, ձի, ուղտ կամ էշ, իսկ աղքատները՝ մանր անասուններ: Նրանք ճաշ քիչ են օգտագործում, բայց առատորեն մատուցում են աղանդեր

Զոհաբերության ծիսակարգ. բարձրաքանդակ Պերսեպոլիսից

ոչ միանգամից, այլ հաջորդաբար: Ուստի պարսիկները ասում են, թե հելլենները ուտելուց վեր են կենում քաղցած, քանի որ ճաշից հետո չեն մատուցում ոչ մի կարգին աղանդեր: Նրանք սովորություն ունեն կարևորագույն գործերը քննարկել գինի խմելիս, իսկ այդ պայմաններում ընդունված որոշումը տանուտերը հաջորդ օրը առաջարկում է նրանց նորից հաստատել, և եթե սթափ վիճակում ևս նրանք հավանություն տան որոշմանը, այդ դեպքում կատարում են այն, եթե ոչ, ապա հրաժարվում են այդ որոշումից. և, ընդհակառակը, սթափ վիճակում ընդունված որոշումը նրանք դարձյալ քննարկում են խմած վիճակում:

Քաջ կռվելը մեծագույն առաքինություն է նրանց համար. այնուհետև նրանք մեծ բարիք են համարում ավելի շատ որդիներ ունենալը: Արքան

ամեն տարի նվերներ է ուղարկում բոլորից շատ երեխաներ ունեցողին, քանզի մեծաթիվ լինելը նրանք հզորություն են համարում: Երեխաներին հինգ տարեկան հասակից սկսած մինչև քսանամյա հասակը սովորեցնում են միայն երեք բան՝ ձիավարել, նետաձգություն և ճշմարտախոսություն: Մինչև հինգ տարեկան հասակը երեխան չի հանդիպում հորը, այլ մնում է կանանց մոտ:

Ես գովում եմ այդ սովորույթը. գովում եմ նաև այն, որ անգամ թագավորը իրավունք չունի որևէ մեկին մահվան ենթարկելու միայն մեկ հանցանքի համար, ոչ էլ պարսիկներից որևէ մեկը իրավունք ունի իր ծառաներից որևէ մեկին անբուժելի վնաս հասցնելու միայն մեկ հանցանքի համար, այլ կշռադատելուց հետո, եթե պարզվի, որ ծառայի հանցանքներն ավելի շատ են, քան նրա ծառայությունները, այնժամ տերը կարող է իր զայրույթը թափել: Նրանք ասում են, թե ոչ ոք իրենցից չի սպանել ո՛չ իր հորը, ո՛չ իր մորը:

Այն մասին, ինչ արգելված է իրենց անել, նրանք նույնիսկ չեն խոսում: Նրանք առավել ամոթալի են համարում ստելը և, հետո, պարտք անելը. և դա ունի իր պատճառները, մանավանդ որ պարտք վերցնողը, նրանց կարծիքով, ստիպված է լինում ստելու: Եթե քաղաքացիներից որևէ մեկը բորոտ է կամ հիվանդ սպիտակ ախտով, ապա նա չի մտնում քաղաք և չի շփվում մյուս պարսիկների հետ: Այս փորձանքը նրանք համարում են արևի հանդեպ մարդու կատարած որևէ հանցանքի հետևանք:

Չին կայսության մասին

(հատվածներ պատմիչ Սիմա Չյանի աշխատությունից)

Հրամայում եմ ժողովրդին հաշվառել հնգական և տասական ընտանիքներով, որոնք միմյանց հետ կկապվեն համապարտ երաշխավորությամբ: Նրան, ով չի տեղեկացնի հանցագործության մասին, երկու կես պետք է անել, իսկ նրան, ով կհայտնի, պարգևատրել այնպես, ինչպես, թշնամու գլուխը կտրողին: Հանցագործին թաքցնողին պատժել այնպես, ինչպես գերի ընկած թշնամուն:

Այն ընտանիքի հարկը, որտեղ երկուսից ավելի տղամարդ կա, և որտեղ տնտեսությունը բաժանված չէ նրանց միջև, կրկնապատկել: Յուրաքանչյուր ռազմական արժանիքի դիմաց մարդուն բարձրացնել մեկ աստիճանով: Նրանց, ովքեր կռվում են անձնական շահերից ելնելով, պատժել հանցագործությանը համապատասխան: Նրանց, ովքեր ջանասիրաբար զբաղվում են իրենց աշխատանքով, մեծ բերք են հավաքում, ավելի շատ մետաքս են պատրաստում, ազատել պարհակներից: Նրանց, ում տնտեսությունը եկամուտ չի բերում, ով ծուլանում և աղքատանում է, ունեցվածքը բռնագրավել, իսկ նրանց տալ ստրկության իրենց երեխաների և կանանց հետ:

Տոհմիկ ընտանիքների անդամներին, ովքեր ռազմական սխրանքներ չեն կատարում, հանել ազնվականության ցուցակներից: Սահմանվում է հստակ բաժանում տիտղոսների և աստիճանների միջև, խիստ հրամանա-

կարգ յուրաքանչյուր աստիճանի համար՝ մասնավոր հողերի, տների, ծառաների և հագուստի հարցում: Արժանիքներ ունեցողներին պատիվների արժանացնել, չունեցողներին թույլ չտալ շքեղություն նույնիսկ հարստության առկայության դեպքում:

Հրամանակարգի հրապարակումը

Ավագ Հան հարստության մասին

(Ք.հ. I դար)

Կայսր Լյու Բանի հրամանագիրը հայտարարում է.«Թագավորությունների կառավարիչների որդիները, որոնք մնում են Գուանչժունում, տասներկու տարով ազատվում են պարհակներից, իսկ ովքեր վերադառնում են տուն, ազատվում են վեց տարով: Նախկինում մարդիկ խմբերով փախչում էին լեռներ և ձահիձներ: Այսօր թագավորությունում արդեն կարգուկանոն է մտցվել: Բոլորին հրամայում եմ վերադառնալ իր շրջան, բոլորին վերադարձնել իրենց աստիճանները, դաշտերը և տները: Գրի առնված օրենքի հիման վրա աստիճանավորները պետք է սովորեցնեն ժողովրդին, այլ ոչ ծեծեն և խայտառակեն: Սովի պատճառով իրենց ստրկության վաճառած մարդկանց վերադարձնել և կրկին համարել ազատ: Թշնամական բանակների բոլոր հրամանատարներին և զինվորներին, ովքեր արդեն ներում են ստացել և նոր հանցանքներ չեն գործել, եթե չունեն աստիճան կամ հրամանատարից ցածր աստիճան ունեն, տալ հրամանատարի աստիճան: Նրանց, ովքեր ունեցել են հրամանատարից բարձր աստիճան, մեկ աստիճանով բարձրացնել:

Կայսրը հարգում է բարձր աստիճան ունեցող մարդուն կամ կառավարչին, սակայն նրանք երկար են կանգնում աստիճանավորի առջև և իրենց հարցի լուծումը չեն ստանում. դա անթույլատրելի է: Նախկինում Ցին թագավորությունում արքայական բանակի հրամանատարը հավասար էր մարզի

կառավարչին կամ նրա օգնականին: Ինչպե՞ս են համարձակվում աստիճանավորները այդպես վարվել: Չէ՞ որ արժանիքների դիմաց դաշտեր և տներ են ստանում: Իսկ այժմ մանր աստիճանավորները, ովքեր երբևէ չեն կռվել բանակում, բավարարել են իրենց անձնականը և չեն մտահոգվում արժանավոր մարդկանց մասին: Արքայի շահերի նկատմամբ այդպիսի դավաճանությունը, անձնական շահին հետամուտ լինելը նշանակում է, որ մարզերի և շրջանների կառավարիչները, ավագ աստիճանավորները նրանց վատ են սովորեցնում: Հրամայում եմ բոլոր աստիճանավորներին. «Բարձրագույն դասի ներկայացուցիչներին լավ ընդունել: Եթե ստուգումը հայտնաբերի իմ հրամանը խախտողների, նրանց խստորեն պատժել»:

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

Ագաթիոս

(VI դարի բյուզանդական հեղինակը ֆրանկների մասին)

Ֆրանկների ցեղը Իտալիայի մերձավոր հարևանն է: Կասկած չկա, որ նրանք պատկանում են հնուց այսպես կոչվող գերմանացիներին: Ապրում են Հռենոս գետի շրջակայքում և հարակից տարածքներում, տիրում են նաև Գալլիայի մեծ մասին, որը նախկինում նրանց չի պատկանել, այլ գրավվել է հետագայում: Նրանք տիրում են նաև Մասսալիա քաղաքին՝ հոնիացիների գաղութին. վերջինս մի ժամանակ բնակեցնում էին Վշտասպի որդի Դարեհի օրոք մարերի կողմից Ասիայից արտաքսված ֆոկիդացիները: Այժմ Մասսալիան հունականից վերածվել է բարբարոսական քաղաքի և, լքելով պապենական կառավարման համակարգը, օգտվում է իր տերերի օրենքներից. սակայն այժմ էլ նրա դրությունը քիչ է վատ նախկինից: Քանի որ ֆրանկները քոչվորներ չեն, ինչպես բարբարոսներից շատերը, այլ մեծ մասամբ օգտվում են հռոմեական քաղաքացիական կարգերից և այն օրենքներից, նույն կերպ են դատում պայմանագրերի, ամուսնության և աստվածների երկրպագման մասին: Նրանք բոլորը քրիստոնյաներ են և ամբողջությամբ նվիրված են քրիստոնեական կրոնին: Ֆրանկները քաղաքներում ունեն թե՛ կառավարիչներ, թե՛ հոգևորականներ: Տոնակատարությունները վարում են այնպես, ինչպես և մենք, և որպես բար-

Ֆրանկական զինվոր

բարոսական ցեղ՝ նրանք, իմ կարծիքով, շատ բարեկիրթ են և քաղաքակիրթ, մեզնից ոչնչով չտարբերվելով, բացի բարբարոսական հագուստից և լեզվի առանձնահատկություններից: Ես ապշում եմ նրանց հատուկ ուրիշ լավ հատկություններից, հատկապես միմյանց նկատմամբ արդար վերաբերմունքի և համաձայնության հարցերում: Նախկինում և իմ ժամանակ շատ անգամ նրանց մոտ իշխանությունը բաժանված էր կամ երեք, կամ ավելի մեծ թվով կառավարիչների միջև, սակայն երբեք, որքան հայտնի է, նրանք միմյանց դեմ պատերազմ չեն վարել և հայրենիքը ապականել համաքաղաքացիների արյամբ:

... Եթե կառավարիչների միջև որևէ վեճ է ծագում, ապա բոլորը շարվում են որպես թե ճակատամարտի համար՝ զինված, այնուհետև հավաքվում են մի տեղում: Կողմերը միմյանց տեսնելուն պես տեղնուտեղը դադարեցնում են թշնամությունը, գալիս են համաձայնության և առաջնորդներից պահանջում են լուծել վեճը՝ հիմնվելով ավելի շատ իրավունքի, քան ուժի վրա: Եվ եթե նրանք մերժում են, ապա պահանջում են, որպեսզի նրանք իրենք կռվեն և վտանգի ենթարկվեն: Քանզի բարոյական չէ և հակասում է պապենական սովորույթին, որպեսզի նրանց անձնական թշնամության պատճառով տուժի և սասանվի հասարակական շահը: Տեղնուտեղը նրանք դուրս են գալիս զորաշարքից, վայր են դնում զենքը, և վերականգնվում է խաղաղությունն ու բարեկամությունը, միմյանց հետ հարաբերությունները, և այդպիսով վերանում է վտանգը: Իսկ առաջնորդները հարկ եղած դեպքում բարեհամբույր են և համոզելի:

Անգլո-սաքսոնական ժամանակագրությունը Բրիտանական կղզիների բնակչության մասին

Բրիտանիա կղզին 800 մղոն երկարություն և 200 մղոն լայնություն ունի: Եվ կղզում հինգ ժողովուրդներ կան՝ անգլիացիներ, ուելսցիներ (կամ բրիտանացիներ), շոտլանդացիներ, պիկտեր և լատիններ: Առաջին բնակիչները բրիտներն էին, ովքեր եկել էին Արմորիկայից և բնակեցրել հարավը: Եվ պատահեց այնպես, որ պիկտերը եկան Սկյութիայից փոքրաթիվ երկար նավերով: Սկզբում ափ իջնելով Իռլանդիայի հյուսիսում՝ նրանք ասացին շոտլանդացիներին, որ պետք է այստեղ ապրեն: Բայց

իրենք չեն թողնի նրանց (շոտլանդացիներին) հեռանալ, քանի որ շոտլանդացիները նրանց ասել էին, որ բոլորը չեն կարող միասին ապրել: «Սակայն,– ասացին շոտլանդացիները,– այնուամենայնիվ մենք կարող ենք ձեզ

խորհուրդ տալ: Մենք արևելքում մեկ այլ կղզի գիտենք: Այնտեղ դուք կարող եք ապրել, եթե ցանկանաք: Եվ եթե որևէ մեկը խանգարի ձեզ, մենք կօգնենք, որպեսզի դուք այն ձեռք բերեք»: Եվ հետո պիկտերը գնացին այդ կղզու հյուսիս: Պիկտերը վերցրին շոտլանդացի կանանց՝ պայմանով, որ իրենց արքաները միշտ պետք է ընտրվեին կանանց գծով:

Արքունի արարողություն

(Լիուտպրանդ՝ իտալական թագավոր Բերենգարի դեսպանը, 949 թ.)

Կոստանդնուպոլսում կայսերական պալատին անմիջականորեն հարում է զարմանահրաշ փառահեղության ու գեղեցկության մի դահլիճ, որը հույներն անվանում են Մագնավրա կամ Ոսկյա պալատ: Կոստանդին կայսրը կարգադրել էր այն կարգի բերել՝ ընդունելու համար ինձ հետ միաժամանակ ժամանած իսպանական խալիֆի դեսպաններին և Լիուտֆրեդին, Մայնցից մի հարուստ վաճառականի, որն այն ժամանակ ուղարկվել էր գերմանական կայսրի կողմից: Կայսեր գահի առաջ կանգնած էր պղնձյա, բայց ոսկեզօծ մի ծառ, որի ճյուղերին թառել էին բազում տարբեր տեսակի թռչուններ՝ պատրաստված բրոնզից և նույնպես ոսկեզօծված: Թռչուններն արձակում էին յուրաքանչյուրն իր հատուկ մեղեդին, իսկ կայսեր գահավորակը այնպես հմտորեն էր պատրաստված, որ սկզբում թվում էր ցածր, համարյա գետնին հավասար, ապա՝ փոքր–ինչ ավելի բարձր, և վերջապես՝ օդում կախված: Վիթխարի գահը իբրև պահակներ շրջապատել էին պղնձյա կամ փայտյա, բայց համենայն դեպս ոսկեզօծված առյուծներ, որոնք կատաղաբար պոչերը զարկում էին գետնին, բացում երախները, շարժում լեզուն և բարձրաձայն մռնչյուն արձակում: Ես հենվեցի երկու ներքինիների ուսերին և այդպես բերվեցի ուղղակի նորին կայսերական մեծության առաջ: Իմ հայտնվելուն պես մռնչացին առյուծները, և թռչունները երգեցին յուրաքանչյուրն իր մեղեդին: Եվ ես ոչ վախ զգացի և ոչ էլ զարմանք, քանզի նախօրոք որոշ իրազեկ մարդկանց կողմից տեղեկացել էի այդ բոլոր բաներին: Այն բանից հետո, երբ ես, համաձայն սովորության, երրորդ անգամ խոնարհվեցի կայսեր առաջ՝ ողջունելով նրան, ես բարձրացրի գլուխս և տեսա կայսրին բոլորովին այլ հագուստով համարյա դահլիճի առաստաղի մոտ, այն դեպքում, երբ հենց նոր տեսել էի նրան գահի վրա՝ գետնից մի փոքր բարձրության վրա: Ես չէի կարողանում հասկանալ, թե դա ինչպես տեղի ունեցավ. երևի այն վեր էր բարձրացվել մեքենայի օգնությամբ: Նա ոչ մի բառ չարտասանեց, իսկ եթե ուզենար էլ արտասանել, ապա արարողության այդպիսի ընդհատումը կհամարվեր վերին աստիճանի անվայելուչ բան: Բերենգարի կյանքի և առողջության մասին ինձ հարցրեց լոգոֆետը: Պատասխանելով նրան՝ ըստ սովորույթի՝ թողեցի ընդունելության դահլիճը և ետ գնացի իմ հյուրանոցը:

ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ք.ա. 10000–5500 թթ.	Նեոլիթի (նոր քարի դար) ժամանակաշրջանը
Ք.ա. IX–VII հազ.	Վաղ երկրագործական կենտրոնների առաջացումը Հայկական լեռնաշխարհում և Միջագետքում
Ք.ա. IV հազ. երկրորդ կես	Առաջին պետությունների կազմավորումը Եգիպտոսում և Հարավային Միջագետքում
Ք.ա. IV հազ. վերջ	Պետականությունների ձևավորումը Առաջավոր Ասիայում
Ք.ա. XXXIV–XXXIII դարեր	Եգիպտական նոմերի միավորումը և Վերին ու Ստորին Եգիպտոսի թագավորությունների կազմավորումը
Ք.ա. IV–III հազ.	Վաղ պետականությունների ձևավորումը և հիերոգլիֆային գրի հայտնագործումը Չինաստանում
Ք.ա. XXXI–XXIX դարեր	Վաղ թագավորությունը Եգիպտոսում
Ք.ա. մոտ 3000 թ.	Ինդոսյան գրի ստեղծումը
Ք.ա. III հազ. սկիզբ	Սեմալեզու ցեղերի ներթափանցումը Միջագետք
Ք.ա. III հազ. սկիզբ	Խուռիական ցեղերի ներթափանցումը Հյուսիսային Միջագետք և Հյուսիսային Սիրիա
Ք.ա. XXVIII – XXVII դարեր	Հայկական լեռնաշխարհի առաջին վաղ պետական կազմավորման՝ Արատտայի մասին հիշատակությունները
Ք.ա. XXVIII–XXIII դարեր	Հին թագավորության դարաշրջանը Եգիպտոսում
Ք.ա. 2600–1900 թթ.	Խառապպայի մշակույթի ծաղկումը
Ք.ա. 2330–2295 թթ.	Շումերի քաղաքական միավորումը Աքքադի պետության գլխավորությամբ. Աքքադի թագավորության հիմնադիր Սարգոնի գահակալումը
Ք.ա. 2109 թ.	Կուտիների վտարումը Միջագետքից
Ք.ա. XXI–XVI դդ.	Միջին թագավորության դարաշրջանը Եգիպտոսում
Ք.ա. 2003 թ.	Ուրի պաշարումը և գրավումը էլամցիների կողմից
Ք.ա. II հազ. սկզբներ	Հնդարիական ցեղերի ներթափանցումը Հայկական լեռնաշխարհից Իրան և Հնդկաստան
Ք.ա. 1792–1750 թթ.	Բաբելոնիայի վերելքը Համմուրապի արքայի օրոք
Ք.ա. XVII–XVI դարեր	Կրետեի քաղաքական միավորումը Կնոսոսի գլխավորությամբ
Ք.ա. XVII–XVI դարեր	Աքայացիների ներթափանցումը Հունաստան
Ք.ա. XVI դ.	Առաջին խոշոր պետության ստեղծումը Չինաստանում Ին հարստության գլխավորությամբ
Ք.ա. XVI–XI դարեր	Նոր թագավորության դարաշրջանը Եգիպտոսում
Ք.ա. մոտ 1540–1517 թթ.	Փարավոն Յահմոս I–ի գահակալումը
Ք.ա. 1540–1530 թթ.	Մուրսիլիս I–ի գահակալումը
Ք.ա. XVI դ.	Միտաննի թագավորության հիմնումը
Ք.ա. 1531 թ.	Բաբելոնի գրավումը Մուրսիլիս I–ի կողմից
Ք.ա. 1508–1493 թթ.	Թութմոս I–ի գահակալությունը
Ք.ա. XV–XIII դարեր	Պետությունների ձևավորումը Հնդկաստանում
Ք.ա. 1468–1434 թթ.	Եգիպտոսի աննախադեպ վերելքը Թութմոս III–ի օրոք
Ք.ա. XV դ. կես	Կրետեի պետության անկումը
Ք.ա. մոտ 1450 թ.	Խեթական գահի անցումը Թուդխալիաս II–ին
Ք.ա. 1352–1336 թթ.	Ամենհոտեպ IV–ի գահակալումը
Ք.ա. մոտ 1318–1290 թթ.	Մուրսիլիս II–ի գահակալումը
Ք.ա. 1279–1213 թթ.	Եգիպտոսի հզորացումը Ռամզես II–ի օրոք
Ք.ա. 1274 թ.	Քադեշի ճակատամարտում խեթերի տարած հաղթանակը Ռամզես II–ի նկատմամբ
Ք.ա. մոտ 1265–1240 թթ.	Խաթթուսիլիս III–ի գահակալումը
Ք.ա. 1263–1234 թթ.	Սալմանասար I–ի գահակալումը
Ք.ա. 1259 թ.	Ռամզես II–ի և Խաթթուսիլիս III–ի միջև հաշտության պայմանագրի կնքումը

Ք.ա. 1233–1197 թթ.	Թուկուլթի–Նինուրտա I–ի գահակալումը
Ք.ա. XII դ.	Փյունիկյան մեծ գաղութացումը
Ք.ա. XII դ.	Իսրայելական միության ձևավորումը Պաղեստինում
Ք.ա. 1158 թ.	Էլամի արքա Շուտրուկ–Նախունտե I–ի ներխուժումը Բաբելոնիա
Ք.ա. 1114–1076 թթ.	Ասորեստանի կարճատև վերելքը Թիգլաթպալասար I–ի օրոք
Ք.ա. XI–IV դարեր	Ուշ թագավորության դարաշրջանը Եգիպտոսում
Ք.ա. 1046–249 թթ.	Չժոու հարստության դարաշրջանը
Ք.ա. մոտ 1000–965 թթ.	Իսրայելի միասնական պետության թագավոր Դավիթի գահակալումը
Ք.ա. մոտ 1000 թ.	Հին պարսկական ցեղերի ներթափանցումը Հարավային Իրան
Ք.ա. մոտ 965–928 թթ.	Սողոմոն թագավորի գահակալումը
Ք.ա. 884–858 թթ.	Նոր ասորեստանյան տերության հզորացումը Աշուրնաձիրպալ II–ի օրոք
Ք.ա. 859–580–ական թթ.	Վանի (Ուրարտու) թագավորությունը
Ք.ա. IX դ. վերջ	Պոլիսների ձևավորումը Հունաստանում
Ք.ա. VIII–VI դարեր	Հունական մեծ գաղութացումը
Ք.ա. 776 թ.	Համահունական (օլիմպիական) խաղերի սկզբնավորումը
Ք.ա. 753–510 թթ.	Թագավորության շրջանը Հռոմում
Ք.ա. 744–727 թթ.	Թիգլաթպալասար III–ի գահակալումը
Ք.ա. 721–705 թթ.	Սարգոն II–ի գահակալումը
Ք.ա. VIII դ. վերջ	Խաթթիի նվաճումը Ասորեստանի կողմից
Ք.ա. 612 թ.	Նինվեի գրավումը և Ասորեստանի անկումը
Ք.ա. 605–562 թթ.	Նաբուգոդոնոսոր II–ի գահակալումը
Ք.ա. 597 թ.	Երուսաղեմի գրավումը բաբելոնյան զորքերի կողմից
Ք.ա. 594 թ.	Սոլոնի բարեփոխումները Աթենքում
Ք.ա. 587 թ.	Երուսաղեմի երկրորդ գրավումը Նաբուգոդոնոսոր II–ի կողմից
Ք.ա. 558–529 թթ.	Կյուրոս II Մեծի գահակալումը
Ք.ա. 556–539 թթ.	Նաբոնիդի գահակալումը
Ք.ա. 539 թ.	Բաբելոնիայի գրավումը Կյուրոս Մեծի կողմից
Ք.ա. 525 թ.	Եգիպտոսի նվաճումը Աքեմենյան Կամբիզ արքայի կողմից
Ք.ա. 522–486 թթ.	Դարեհ I–ի գահակալումը
Ք.ա. VI դ. վերջ	Տիրանիայի ավարտը Աթենքում
Ք.ա. 499 թ.	Հոնիական պոլիսների ապստամբությունը պարսիկների դեմ
Ք.ա. 492 թ.	Պարսից բանակի արշավանքը դեպի Հունաստան
Ք.ա. 490 թ.	Մարաթոնի ճակատամարտը
Ք.ա. 486–465 թթ.	Քսերքսես I–ի գահակալումը
Ք.ա. 481 թ.	Իսթմոսյան միության ստեղծումը
Ք.ա. 480 թ.	Պարսիկների երկրորդ արշավանքի սկիզբը դեպի Հունաստան
Ք.ա. 479 թ.	Հույների հաղթանակը պարսիկների նկատմամբ Պլատեայի ճակատամարտում
Ք.ա. 478 թ.	Դելոսյան միության ստեղծումը
Ք.ա. 450–449 թթ.	Տասներկու տախտակների օրենքների ընդունումը Հռոմում
Ք.ա. 449 թ.	Հաշտության պայմանագրի կնքումը պարսից արքայի և Աթենքի դեսպան Կալլիասի միջև. հույն–պարսկական պատերազմների ավարտը
Ք.ա. 431–404 թթ.	Պելոպոնեսյան պատերազմները
Ք.ա. 421 թ.	Նիկիասի հաշտության պայմանագրի կնքումը
Ք.ա. 415 թ.	Աթենական նավատորմի արշավանքի սկիզբը դեպի Սիցիլիա
Ք.ա. 404 թ.	Կյուրոս Կրտսերի ապստամբությունը Արտաքսերքսես II–ի դեմ
Ք.ա. 390 թ.	Հռոմի պաշարումը գալլերի կողմից
Ք.ա. 359–336 թթ.	Մակեդոնիայի արքա Ֆիլիպպոս II–ի գահակալումը
Ք.ա. 343–290 թթ.	Սամնիտական պատերազմները

Ք.ա. 338 թ.	Քերոնեայի ճակատամարտը
Ք.ա. 336–330 թթ.	Դարեհ III–ի գահակալումը
Ք.ա. 334 թ.	Գրանիկոսի ճակատամարտը
Ք.ա. 333 թ.	Դարեհ III–ի պարտությունը Իսսոսի ճակատամարտում
Ք.ա. 332 թ.	Եգիպտոսի նվաճումը Ալեքսանդր Մակեդոնացու կողմից
Ք.ա. 331 թ.	Արբելայի (Գավգամելայի) ճակատամարտում Դարեհ III–ի պարտությունը
Ք.ա. 331 թ.	Միջագետքի գրավումը և Պարսից տերության կործանումը
Ք.ա. 329–327 թթ.	Բակտրիայի և Սոգդիանայի հպատակեցումը Մակեդոնացու կողմից
Ք.ա. 323 թ.	Ալեքսանդր Մակեդոնացու մահը
Ք.ա. 301 թ.	Ալեքսանդր Մակեդոնացու տերության տրոհման ավարտը. հելլենիստական պետությունների ձևավորումը
Ք.ա. 280 թ.	Պյուռհոսի բանակի մուտքը Իտալիա
Ք.ա. 275 թ.	Բենեվենտումի ճակատամարտը. Պյուռհոսի վերադարձը Էպիրոս
Ք.ա. 268–231 թթ.	Մաուրյան պետության հզորացումը Աշոկայի օրոք
Ք.ա. 265 թ.	Վոլսինիումի գրավումը. Հռոմի կողմից Իտալիայի նվաճման ավարտը
Ք.ա. 264–241 թթ.	Պունիկյան առաջին պատերազմը
Ք.ա. 246–210 թթ.	Ցին Շի Հուանդի կայսեր գահակալությունը
Ք.ա. 218–202 թթ.	Պունիկյան երկրորդ պատերազմը
Ք.ա. 202 թ.	Լյու Բանի հռչակումը կայսր
Ք.ա. 201 թ.	Փիլիպոս V–ի պարտությունը Քիոսի ծովամարտում
Ք.ա. 197 թ.	Կինոսկեֆալեի ճակատամարտում հռոմեացիների հաղթանակը
Ք.ա. 190 թ.	Մագնեսիայի ճակատամարտը
Ք.ա. 171–138 թթ.	Պարթևստանի վերելքը Միհրդատ I–ի օրոք
Ք.ա. 168 թ.	Հռոմեացիների կողմից Մակեդոնիայի հպատակեցումը
Ք.ա. 149–146 թթ.	Պունիկյան երրորդ պատերազմը
Ք.ա. 140–87 թթ.	Ու Դի կայսեր գահակալությունը
Ք.ա. 91–89 թթ.	Քաղաքացիական պատերազմը Հռոմում
Ք.ա. 89–85 թթ.	Միհրդատյան առաջին պատերազմը. Դարդանոսի պայմանագրի կնքումը
Ք.ա. 83–81 թթ.	Միհրդատյան երկրորդ պատերազմը
Ք.ա. 82–79 թթ.	Սուլլայի դիկտատուրան
Ք.ա. 74–63 թթ.	Միհրդատյան երրորդ պատերազմը
Ք.ա. 60 թ.	Առաջին եռապետության կազմավորումը
Ք.ա. 59 թ.	Հուլիոս Կեսարի ընտրվելը կոնսուլ
Ք.ա. 58 թ.	Հելվետների հնազանդեցումը Կեսարի կողմից
Ք.ա. 53 թ.	Հռոմեացիների պարտությունը Խառանի ճակատամարտում
Ք.ա. 52 թ.	Վերցինգետորիքսի ապստամբության սկիզբը Հարավային Գալլիայում
Ք.ա. 52 թ.	Պոմպեոսի ընտրվելը կոնսուլ
Ք.ա. 49 թ.	Կեսարի բանակի մուտքը Հռոմ
Ք.ա. 44 թ.	Կեսարի հռչակումը ցմահ դիկտատոր
Ք.ա. 43 թ.	Երկրորդ եռապետության կազմավորումը
Ք.ա. 36 թ.	Գայոս Օկտավիանոսի հռչակումը ցմահ տրիբուն
Ք.ա. 31 թ.	Ակցիումի ծովամարտը
Ք.ա. 19 թ.	Օգոստոսի հռչակումը ցմահ կոնսուլ
Ք.ա. 12 թ.	Գերագույն հոգևոր իշխանության հանձնումը Օգոստոսին
Ք.հ. 8 թ.	Իշխանության զավթումը Վան Մանի կողմից. Մին հարստության հիմնումը Չինաստանում
54–68 թթ.	Ներոն կայսեր գահակալումը
69–79 թթ.	Վեսպասիանոս կայսեր գահակալումը

98–117 թթ.	Տրայանոս կայսեր գահակալումը
161–180 թթ.	Մարկոս Ավրելիոսի գահակալումը
226 թ.	Սասանյանների հեղաշրջումը Պարթևստանում
284–305 թթ.	Դիոկղետիանոսի գահակալումը
306–337 թթ.	Կոստանդիանոս Մեծի գահակալությունը
313 թ.	Միլանի հրովարտակի հրապարակումը
325 թ.	Առաջին տիեզերական ժողովի գումարումը Նիկեայում
330 թ.	Բյուզանդիոնի հռչակումը Հռոմեական կայսրության մայրաքաղաք
IV–VII դարեր	Ժողովուրդների մեծ գաղթի դարաշրջանը
375 թ.	Գոթերի ջախջախումը հոների կողմից
378 թ.	Ադրիանապոլսի ճակատամարտում գոթերի հաղթանակը
380–415 թթ.	Գուպտաների պետության հզորացումը Չանդրագուպտա II–ի օրոք
381 թ.	Քրիստոնեության հռչակումը Հռոմեական կայսրության պետական կրոն
395 թ.	Հռոմեական կայսրության բաժանումը երկու մասի
410 թ.	Հռոմի գրավումն ու ավերումը վեստգոթերի կողմից
431 թ.	Երրորդ տիեզերական ժողովի գումարումը Եփեսոսում
451 թ.	Քաղկեդոնի եկեղեցաժողովի հրավիրումը
451 թ.	«Ժողովուրդների ճակատամարտը» Կատալաունյան դաշտում
476 թ.	Արևմտյան Հռոմեական կայսրության կործանումը
486 թ.	Սուասոնի ճակատամարտը
500 թ.	Ֆրանկների թագավորության առաջացումը
527–565 թթ.	Հուստինիանոս I–ի գահակալումը
568 թ.	Հյուսիսային Իտալիայի գրավումը լանգոբարդների կողմից
637 թ.	Բյուզանդացիների պարտությունը արաբներից Յարմուկի ճակատամարտում
717–741 թթ.	Լևոն III կայսեր գահակալումը Բյուզանդիայում
726–843 թթ.	Պատկերամարտական շարժումը Բյուզանդիայում
732 թ.	Արաբների պարտությունը Պուատիեի ճակատամարտում
751 թ.	Պիպին Կարճահասակի հռչակումը թագավոր
756 թ.	Հռոմի պապի աշխարհիկ պետության ստեղծումը
768–814 թթ.	Կարլոս Մեծի գահակալումը
800 թ.	Կարլոս Մեծի թագադրումը որպես կայսր
812 թ.	Կարլոս Մեծի կայսրության ճանաչումը Բյուզանդիայի կողմից
843 թ.	Կարլոս Մեծի կայսրության բաժանումը նրա ժառանգների միջև. Վերդենի բաժանքը
867–1056 թթ.	Մակեդոնական (Հայկական) արքայատոհմի գահակալումը Բյուզանդիայում
911 թ.	Կարոլինգյան արքայատոհմի վերացումը Գերմանիայում
919–936 թթ.	Հենրիխ I–ի գահակալումը
936–973 թթ.	Օտտոն I–ի գահակալումը Գերմանիայում
955 թ.	Հունգարների պարտությունը գերմանացիներից Լեխ գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտում
962 թ.	Օտտոն I–ի երկրորդ արշավանքը դեպի Իտալիա. Սրբազան հռոմեական կայսրության ստեղծումը
976–1025 թթ.	Վասիլ (Բարսեղ) II–ի գահակալությունը
1054 թ.	Քրիստոնեական եկեղեցու մեծ բաժանումը կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիների
1071 թ.	Բյուզանդացիների պարտությունը Մանազկերտի ճակատամարտում
1122 թ.	Վորմսի համաձայնագրի (կոնկորդատ) ստորագրումը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 4
«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5
1. Պատմության աղբյուրները 5
2. Համաշխարհային պատմական գործընթացը. քաղաքակրթություն 5
3. Քաղաքակրթության ակունքներում. նորքարիդարյան (նեոլիթյան) հեղափոխություն 8

ՀԻՆ ԾՐՋԱՆ

ԲԱԺԻՆ Ա. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԹԵՄԱ 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ 12
§ 1. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ԵՎ ՇՈՒՄԵՐՈՒՄ 12
Պետականության սկիզբը Եգիպտոսում 12
Եգիպտոսի Վաղ թագավորությունը 12
Միջագետքը քաղաքակրթության շեմին 13
Շումերի քաղաք–պետությունները 14
§ 2. ԱՐԵՎԵԼԱՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ ՔԱՂԱՔ–ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 17
Առաջին քաղաք–պետությունները 17
Սիրիայի և Փյունիկիայի պետությունները 17
Միտանին 18
Արևելամիջերկրածովյան ավազանը Ք.ա. X–VI դարերում 19
§ 3. ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՎԱՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 21
Խառապպայի քաղաքակրթությունը 21
Հնդկաստանը արիական ցեղերի տիրապետության շրջանում 21
Առաջին պետությունները Չինաստանում 23

ԹԵՄԱ 2. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԵԼՔԸ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ 25
§ 1. ՀԱՄԱԵԳԻՊՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 25
Հին թագավորություն 25
Միջին թագավորություն 25
Նոր թագավորություն 26
Էխնաթոնի կրոնաքաղաքական բարեփոխումները 26
Ռամզես II–ի կառավարումը 27
Ուշ թագավորությունը 28
§ 2. ՄԻՋԱԳԵՏՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ 30
Աքքադ 30
Ուրի III հարստությունը 31
§ 3. ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ 34
Հին խեթական թագավորությունը 34
Խեթական տերությունը 35
Խեթական տերության տրոհումը 36
§ 4. ԱՍՈՐԵՍՏԱՆԸ Ք.Ա. III–I ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ 38
Ասորեստանյան պետության ծնունդը 38
Միջին ասորեստանյան պետությունը 39
Նոր ասորեստանյան տերությունը 39
§ 5. ԲԱԲԵԼՈՆԻԱՆ Ք.Ա. II–I ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ 42
Բաբելոնիան ամորեացիների և կասիտների օրոք 42

Նորբաբելոնյան թագավորության կազմավորումն ու վերելքը . . . 43
Բաբելոնիան հետագա արքաների օրոք . . . 44
§ 6. ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿԸ Ք.Ա. III–I ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ . . . 46
Էլամը Ք.ա. III–I հազարամյակներում . . . 46
Պարսիկները Աքեմենյան տերության կազմավորումից առաջ . . . 48
Աքեմենյան առաջին արքաները . . . 48
Աքեմենյան տերության թուլացումը և անկումը . . . 49

ԲԱԺԻՆ Բ. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԹԵՄԱ 3. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ . . . 51
§ 1. ՀՈՒՆԱՍՏԱՆԸ ԿՐԵՏԵ–ՄԻԿԵՆՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ . . . 51
Մինոսյան Կրետեն . . . 51
Միկենյան աշխարհը . . . 52
Կրետե–միկենյան դարաշրջանի ավարտը. Տրոյական պատերազմը . . . 54
§ 2. ՊՈԼԻՍ . . . 56
Հոմերոսյան դարաշրջանը . . . 56
Պոլիսի կազմավորումը . . . 56
Տիրանիա . . . 58
§ 3. ԱԹԵՆՔ ԵՎ ՍՊԱՐՏԱ . . . 60
Աթենական պետականության սկիզբը . . . 60
Սոլոն . . . 60
Կլիսթենեսի բարեփոխումները . . . 61
Սպարտա . . . 61
Պոլիսային համակարգի քաղաքական առանձնահատկությունները . . . 63

ԹԵՄԱ 4. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԵԼՔԸ ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ . . . 65
§ 1. ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԵՎ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՌԱՋԻՆ ԲԱԽՈՒՄԸ . . . 65
Հոնիական Հունաստանը . . . 65
Պարսիկների առաջին երկու արշավանքները . . . 65
Պարսիկների երրորդ արշավանքը . . . 66
Պատերազմների ավարտը . . . 67
§ 2. ԱԹԵՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍԿԵԴԱՐԸ . . . 69
Աթենական ծովային միությունը . . . 69
Աթենքի և Սպարտայի պայքարը գերիշխանության համար . . . 69
Աթենքը Պերիկլեսի օրոք . . . 70
§ 3. ՊԵԼՈՊՈՆԵՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ . . . 73
Պատերազմի առաջին փուլը. Արքիդամոսյան պատերազմը . . . 73
Սիցիլիական արշավանքը . . . 74
Դեկելեյան պատերազմը. պատերազմների ավարտը . . . 74
§ 4. ՎԱՂ ՀՌՈՄԸ . . . 77
Հին Իտալիայի բնակիչները . . . 77
Իտալիայի էտրուսկյան պետությունները . . . 77
Արքայական Հռոմը . . . 78
Վաղ Հռոմի սոցիալական և քաղաքական կարգը . . . 79
Սերվիոս Տուլլիոսի բարեփոխումները . . . 79
§ 5. ՀՌՈՄԸ Ք.Ա. V–III ԴԱՐԵՐՈՒՄ: ԻՏԱԼԻԱՅԻ ՆՎԱՃՈՒՄԸ . . . 81
Հռոմի քաղաքական կարգը . . . 81
Իտալիայի նվաճումը . . . 82
§ 6. ՀՌՈՄԸ՝ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎԻ ԱՎԱԶԱՆԻ ԳԵՐԻՇԽՈՂ . . . 85
Մակեդոնական երկրորդ պատերազմը . . . 85
Պատերազմ Սելևկյան պետության դեմ . . . 85
Մակեդոնիայի և Հունաստանի նվաճումը . . . 86
§ 7. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՃԳՆԱԺԱՄԸ . . . 89
Սուլլայի դիկտատուրան . . . 89

Առաջին եռապետությունը 89
Հուլիոս Կեսարի դիկտատուրան 90
Երկրորդ եռապետությունը 91
§ 8. ՊՐԻՆՑԻՊԱՏ. ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ I–II ԴԱՐԵՐՈՒՄ 94
Հանրապետությունից միապետություն 94
Հռոմը Հուլիոս–Կլավդիոսների և Ֆլավիոսների օրոք 96
Անտոնինոսների հարստությունը, հռոմեական ծավալապաշտության ավարտը 97

ԲԱԺԻՆ Գ. ՀԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԹԵՄԱ 5. ՀԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 99
§ 1. ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ 99
Ազատ բնակչություն 99
Կախյալ բնակչություն 100
Սեփական–օտար հարաբերակցությունը 100
§ 2. ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ԲԱՐԲԱՐՈՍԱԿԱՆ ԾԱՅՐԱԳԱՎԱՌԸ 102
Կենտրոն և բարբարոսական ծայրագավառ 102
Քաղաքակրթության տարածումը 103
«Քույր» քաղաքակրթություններ 104

ԹԵՄԱ 6. ՀՈԳԵՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹ 106
§ 1. ԳԻՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 106
Գիրը 106
Գրականությունը 108
§ 2. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ 110
Բժշկագիտությունը 110
Մաթեմատիկան և աստղագիտությունը 110
Իրավական միտքը 112
Փիլիսոփայություն և պատմագիտություն 112
§ 3. ԿՐՈՆԸ 115
Արևելյան երկրներ 115
Հունահռոմեական աշխարհ 117
Բազմաստվածության ավարտը. համաշխարհային կրոններ 118
§ 4. ԱՐՎԵՍՏ 120
Եգիպտոս 120
Միջագետք 121
Աքեմենյան Իրան 122
Հունահռոմեական աշխարհ 122

ԲԱԺԻՆ Դ. ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՎԱՐՏԸ

ԹԵՄԱ 7. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ 126
§ 1. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ 126
Հունաստանի նվաճումը Մակեդոնիայի կողմից 126
Աքեմենյան տերության նվաճումը 126
Հելլենիստական պետությունները 127
Հելլենիզմ 128
§ 2. ՀՌՈՄԸ ԵՎ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ 130
Հռոմի ներթափանցումը Առաջավոր Ասիա 130
Հռոմի քաղաքականությունը Արևելքում 130
§ 3. ՀՌՈՄԸ ԵՎ ԵՎՐՈՊԱՆ 133
Հուլիոս Կեսարի գալլական արշավանքը 133

Հռոմի քաղաքականությունը Արևմտյան Եվրոպայում 133
Արևմտյան Եվրոպան կայսրության շրջանում 135

ԹԵՄԱ 8. ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՎԱՐՏԸ 137
§ 1. ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ III–V ԴԱՐԵՐՈՒՄ 137
Պրինցիպատից դոմինատ 137
Բարբարոսները երկու կայսրությունների սահմաններին 139
§ 2. ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ 142
Պարթևական պետությունը 142
Հնդկաստանը մաուրյան հարստության շրջանում 143
Չինաստանը Ցին կայսրության շրջանում 144
§ 3. ԲԱՐԲԱՐՈՍԱԿԱՆ ԵՎՐՈՊԱՆ 147
Կելտեր 147
Գերմանացիներ 147
Եվրոպայի մյուս ժողովուրդները 149
Եվրոպական քաղաքակրթության սկիզբը 149
§ 4. ՉԻՆԱՍՏԱՆԸ ԵՎ ՀՆԴԿԱՍՏԱՆԸ ՆՈՐ ՀԱՋԱՐԱՄՅԱԿԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ 152
Չինաստանը Հան հարստության օրոք 152
Գուպտաների տերությունը 154
Հնդկաստանի մշակույթը Գուպտաների օրոք 155

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

ԲԱԺԻՆ Ա. ԱՆՑՈՒՄ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ

ԹԵՄԱ 1. ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 158
§1. ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ 158
Միջնադարյան քաղաքակրթության ձևավորման ուղիները 158
Հռոմեական և բարբարոսական քաղաքակրթությունների համադրումը 158
Միջնադարյան քաղաքակրթության ձևավորման ներքին ճանապարհը 160
Միջնադարյան քաղաքակրթության տարատեսակները 160
§ 2. ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 162
Սոցիալական միջավայրի կազմակերպումը 162
Հասարակության սոցիալական կառուցվածքը 163
Ավատատիրական աստիճանակարգությունը 163
Ասպետություն 164
§ 3. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ 166
Թագավորական իշխանության կազմակերպումը 166
Ֆրանկական թագավորությունը 166
Սալիական դատաստանագիրքը 169
§ 4. ՊԱՅՔԱՐ ԱՐԵՎՄՏԱՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 171
Կարլոս Մարտելի ռազմական բարեփոխումները 171
Կարլոս Մեծի պատերազմները 171
Կարլոս Մեծի կայսրությունը 172
Կարոլինգյան վերածնունդը 172
Վերդենի դաշնագիրը 173
§ 5. ՍՐԲԱԶԱՆ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ 175
Գերմանական թագավորության ծնունդը 175
Սրբազան հռոմեական կայսրություն 175
Կայսերական եկեղեցին 176
Օտտոնյան վերածնունդը 178
§ 6. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ 180
Քրիստոնեության տարածումը Արևմտյան Եվրոպայում 180

Հավատո հանգանակը . . . 181
Ուսմունք փրկության մասին . . . 182
Վանքերը . . . 182
§ 7. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ . . . 184
Եկեղեցու կառույցը . . . 184
Պապականության առաջացումը . . . 184
Եկեղեցիների բաժանումը . . . 186
Եկեղեցին Արևմտյան Եվրոպայի սոցիալ–քաղաքական կյանքում . . . 186
§ 8. ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ . . . 188
Կրթական համակարգը . . . 188
Պատմագրությունը . . . 188
Գրականությունը . . . 189
Վաղ միջնադարի մարդու աշխարհընկալումը . . . 189
§ 9. ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ V ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ IX ԴԱՐԻ ԿԵՍԵՐԸ . . . 192
Բյուզանդական կայսրության կազմավորումը . . . 192
Պետությունը վաղ Բյուզանդիայում . . . 192
Քրիստոնեական եկեղեցու կազմակերպումը . . . 193
Բյուզանդիան Հուստինիանոսից հետո . . . 193
Արաբա–բյուզանդական հակամարտությունը . . . 195
Ռազմավարչական բարեփոխումները . . . 196
§ 10. ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ . . . 198
Մակեդոնական վերածնունդը . . . 198
Մակեդոնիայի թուլացումը . . . 199
§ 11. ՎԱՂ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ . . . 201
Բյուզանդական մշակույթի առանձնահատկությունները . . . 201
Կրթական համակարգը . . . 201
Պատմագրությունը . . . 201
Գրականությունը և արվեստը . . . 202

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ . . . 205